Էջմիածին



Գ

2017

ՎԴ. ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Մաքրպ

2017
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ



ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

«Էջմիածին»
կրօնագիտական և հայագիտական հանդէս

Խմբագրակազմ
Գլխաւոր խմբագիր՝ **Արսէն Բոբոխեան**

Խմբագիրներ՝
Ոսկան քահանայ Յովհաննիսեան, Արփինէ Զանթիկեան,
Լիլիթ Յակոբեան

Տեխնիկական խմբագիր՝
Անգելինա Ալեքսանեան

Լեզուաոճական խմբագիր՝ **Վազգէն Սաֆարեան**

Խմբագրական խորհուրդ

Վահան եպիսկոպոս Յովհաննիսեան *(Ֆրանսիա)*, **Անուշաւան եպիսկոպոս Ժամկոչեան** *(Երևանի պետական համալսարան, Աստուածաբանութեան ֆակուլտէտ)*, **Գէորգ եպիսկոպոս Սարոյեան** *(Գէորգեան հոգևոր ճեմարան (աստուածաբանական համալսարան)*, **Շահէ ծայրագոյն վարդապետ Անանեան** *(Գէորգեան հոգևոր ճեմարան (աստուածաբանական համալսարան)*, **Զաքարիա ծայրագոյն վարդապետ Բաղումեան** *(Գէորգեան հոգևոր ճեմարան (աստուածաբանական համալսարան)*, **Դանիէլ վարդապետ Ֆընտըգեան** *(ԱՄՆ Հայոց Արևելեան թեմ)*, **Գարեգին վարդապետ Համբարձումեան** *(Գէորգեան հոգևոր ճեմարան (աստուածաբանական համալսարան)*, **Հրաչ սարկաւագ Սարգիսեան** *(Գէորգեան հոգևոր ճեմարան (աստուածաբանական համալսարան)*, **Գէորգ Տէր-Վարդանեան** *(Մաշտոցի անուան Մատենադարան, Գէորգեան հոգևոր ճեմարան (աստուածաբանական համալսարան)*, **Դաւիթ Գիւրջինեան** *(Երևանի Վ. Բրյուսովի անուան պետական լեզուահասարակագիտական համալսարան, Գէորգեան հոգևոր ճեմարան (աստուածաբանական համալսարան)*, **Անահիտ Աւագեան** *(Գէորգեան հոգևոր ճեմարան (աստուածաբանական համալսարան)*, **Գոհար Մուրադեան** *(Մաշտոցի անուան Մատենադարան)*, **Ազատ Բոզոյեան** *(«Վաչէ և Թամար Մանուկեան Մատենադարան», ՀՀ ԳԱԱ Արևելագիտութեան ինստիտուտ)*, **Ալեքսան Յակոբեան** *(ՀՀ ԳԱԱ Արևելագիտութեան ինստիտուտ)*, **Մհեր Նաւոյեան** *(Երևանի պետական կոնսերվատորիա)*, **Աննա Արևշատեան** *(Երևանի պետական կոնսերվատորիա)*, **Արամ Մարտիրոսեան** *(Ֆրանսիա, Փարիզ-Նանտերի համալսարան)*, **Իզաբէլ Էօժէ** *(Ֆրանսիա, Մոնպելիէի համալսարան)*, **Աննա Շիրինեան** *(Իտալիա, Բոլոնիայի համալսարան)*

"Etchmiadzin"
Review of Religious Studies and Armenology

Editorial staff
Editor in chief - **Arsen Bobokhyan**

Editors
Fr. Voskan Hovhannisyan, Arpine Chantikyan, Lilit Hakobyan

Technical editor - **Angelina Aleksanyan**

Linguistic-stylistic editor - **Vasken Safaryan**

Editorial Board

Bishop Vahan Hovannisian *(France)*, **Bishop Anushavan Zhamkochyan** *(Yerevan State University, Faculty of Theology)*, **Bishop Kevork Saroyan** *(Kevorkian Theological Seminary (Theological University)*, **Proto-Archimandrite Shahe Ananyan** *(Kevorkian Theological Seminary (Theological University)*, **Proto-Archimandrite Zakaria Baghumyan** *(Kevorkian Theological Seminary (Theological University)*, **Archimandrite Daniel Findikyan** *(USA, Eastern Armenian Diocese)*, **Archimandrite Karekin Hambardzumyan** *(Kevorkian Theological Seminary (Theological University)*, **Deacon Hratch Sarkissian** *(Kevorkian Theological Seminary (Theological University)*, **Gevorg Ter-Vardanyan** *(Matenadaran, Kevorkian Theological Seminary (Theological University)*, **Davit Gyurjinyan** *(Yerevan Brusov State University of Languages and Social Sciences, Kevorkian Theological Seminary (Theological University)*, **Anahit Avagyan** *(Kevorkian Theological Seminary (Theological University)*, **Gohar Muradyan** *(Matenadaran, Yerevan)*, **Azat Bozoyan** *("Vatche and Tamar Manoukian Library", Institute of Oriental Studies, National Academy of Sciences of the Republic of Armenia)*, **Alexan Hakobyan** *(Institute of Oriental Studies, National Academy of Sciences of the Republic of Armenia)*, **Mher Navoyan** *(Yerevan State Conservatory)*, **Anna Arevshatyan** *(Yerevan State Conservatory)*, **Aram Martirosian** *(France, University of Paris-Nanterre (Université Paris-Nanterre)*, **Isabel Augé** *(France, University of Montpelier (Université Paul Valery-Montpellier)*, **Anna Sirinian** *(Italy, University of Bolognia (Universitá di Bologna)*

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ԼՅՈՒԹԵՐԱԿԱՆ-ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՒ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆՎԻՐԱՊԵՏԵՐԻՆ

(19-22 մարտ, 2017 թ.)

Սույն թվականի մարտի 19-ին սկսվեց Նորին Սուրբ Օծություն Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի միջեկեղեցական այցը Ֆինլանդիա: Նորին Սրբությունն իր միջեկեղեցական այցելությունը կատարում էր Ֆինլանդիայի Լյութերական-Ավետարանական Եկեղեցու պետ՝ Տուրկուի արքեպիսկոպոս Կարի Մեկկինենի և Ֆինլանդիայի Օրթոդոքս Եկեղեցու պետ, համայն Ֆինլանդիայի և Կարելիայի արքեպիսկոպոս Լեոյի պաշտոնական հրավերի շրջանակներում: Նորին Սրբության պաշտոնական պատվիրակության կազմում էին Գերաշնորհ Գևորգ եպս. Սարոյանը (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարձրագույն ուսումնական հաստատությունների վերատեսուչ), Հոգեշնորհ Տ. Շահե Ծ. վրդ. Անանյանը (Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու), Հոգեշնորհ Տ. Տիրան վրդ. Պետրոսյանը (Կենտրոնական Եվրոպայի և Սկանդինավյան երկրների հայրապետական պատվիրակ), Հոգեշնորհ Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանը (Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանի տեսուչ) և Հոգեշնորհ Տ. Աղան աբդ. Երնջակյանը (Նորին Սրբության գավազանակիր): Պատվիրակությանն ուղեկցում էր նաև Շողակաթ հեռուստաընկերության գլխավոր օպերատոր Տիար Սուրեն Տեր-Գրիգորյանը:

Մարտի 19-ին՝ ժամը 11:30-ին, Հայաստանյայց Եկեղեցու պաշտոնական պատվիրակության ինքնաթիռը Երևան-Մոսկվա-Հելսինկի չվերթով վայրէջք կատարեց Հելսինկիի Վաանտա օդակայանում: Այստեղ Նորին Սրբությանն ու նրան ուղեկցող պատվիրակությանը պաշտոնապես դիմավորեցին Ֆինն Լյութերական-Ավետարանական Եկեղեցու պետ, արքեպիսկոպոս Կարի Մեկկինենը, Միջազգային հարաբերությունների պատասխանատու Վերապատվելի դոկտոր Կիմմո Կերինենը, արքեպիսկոպոսի աստվածաբանական

հարցերով խորհրդական, միջեկեղեցական պատասխանատու Վերապատվելի դոկտոր Միկա Պայյունենը, Ֆինլանդիայում Նորին Սրբության և նրան ուղեկցող պատվիրակության պաշտոնական կցորդ-պատասխանատու Վերապատվելի Տիմո Ռոսքվիստը, ինչպես նաև Շվեդիայում և Ֆինլանդիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Տիար Արտակ Ապիտոնյանը:

Նույնը օրը երեկոյան Հելսինկիի Լյութերական-Ավետարանական Եկեղեցու Մայր տաճարի սրահում տեղի ունեցավ նաև Վեհափառ Հայրապետի և նրան ուղեկցող պատվիրակության հանդիպումը Ֆինլանդիայի նորակազմ հայ համայնքի հետ: Կենտրոնական Եվրոպայի և Սկանդինավիայի երկրների Հայրապետական պատվիրակը, հանուն Ֆինլանդիայի հայ համայնքի, իր որդիական շնորհակալության ու բարիգալստյան խոսքն ուղղեց Վեհափառ Հայրապետին՝ ընդգծելով այն դրական տեղաշարժերն ու զարգացումները, որ տեղի էին ունեցել Ֆինլանդիայի հայորդյաց կյանքում վերջին մի քանի տարիներում:

Ֆինլանդիայի հայ համայնքի հետ հանդիպման համար իր ուրախությունը հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ հատկապես կարևորելով համայնքի կազմակերպվածության ու համախմբման ոգին: Վեհափառ Հայրապետն իր խոսքում մասնավորապես ասաց. «Գոհունակություն է Հայրապետիս համար՝ տեսնելու, որ այսօր արդեն Ձեր կողքին են ոչ միայն եկեղեցականներն ու ձեր հովիվները, այլև հայրենի իշխանությանց ներկայացուցիչները՝ ի դեմս մեծարգո դեսպան Տիար Արտակ Ապիտոնյանի: …Մեր մաղթանքն է, որ դուք մոտ ապագայում ևս կարողանաք համախմբվել ու կազմակերպվել՝ պահպանելու համար ձեր հայ քրիստոնեական ինքնությունը՝ ազգային արժեքների ու մայրենի լեզվի հանդեպ նախանձախնդրությունը փոխանցելով ձեր զավակներին»:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը, օրհնելով հայ համայնքի ներկայացուցիչներին, նաև լսեց նրանց առաջարկները և պատասխանեց ներկաների հարցերին:

Հաջորդ օրը՝ մարտի 20-ին՝ առավոտյան ժամը 10:00-ին, տեղի ունեցավ Նորին Սրբության պաշտոնական հանդիպումը Տուրկուի արքեպիսկոպոս, Ֆինլանդիայի Լյութերական-Ավետարանական Եկեղեցու պետ Կարի Մեկկինենի հետ Հելսինկիի Լյութերական-Ավետարանական Մայր տաճարում: Վեհափառ Հայրապետին ու նրան ուղեկցող պատվիրակությանը բարի գալուստ մաղթելով՝ արքեպիսկոպոս Կարի Մեկկինենը հատկապես կարևորեց Հայ Առաքելական և Ֆինն Լյութերական-Ավետարանական Եկեղեցիների միջև ձևավորված եղբայրական ջերմ հարաբերություններն ու հետագա նոր հեռանկարների զարգացումը: Ներկա ֆինն հավատացյալներին ու հոգևորականներին իր խոսքն ուղղեց նաև Ամենայն Հայոց Հայրապետը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՏՈՒՐԿՈՒԻ ԵՒ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՅՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՐԻ ՄԵԿԿԻՆԵՆԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ԱՂՈԹՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

(Ֆինլանդիա, Հելսինկի, Ավետարանական-Լյութերական Մայր տաճար, 20 մարտի, 2017 թ.)

«Քանզի ամենեքին որդիք Աստուծոյ էք
Հաւատովք ի Յիսուս Քրիստոս»
(Գաղ. Գ. 26-27):

Սիրեցյա՛լ եղբայր ի Քրիստոս, Ֆինլանդիայի Եկեղեցու արքեպիսկոպոս Կարի Մեկկինեն,

Սիրելի՛ քույրեր ու եղբայրներ,

Քրիստոսի մեծ առաքյալներից Ս. Պողոսի այս խոսքերն արտացոլում են եղբայրական այն ջերմ և հյուրընկալ մթնոլորտը, որով ամենքս այսօր հաղորդակից ենք դառնում միմյանց՝ համատեղ աղոթքով: Քրիստոնեությունն իր ձևավորման առաջին իսկ օրերից Քրիստոսին հավատացողներին ու համայն մարդկությանը կապեց եղբայրսիրության և միմյանց հարգելու սրբազան պատգամով՝ իբրև Աստծո և Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի հավատով ու սիրով միացած հոգևոր եղբայրներ:

Այսօր փառք և գոհություն ենք մատուցում առ Բարձրյալ Տերը, որ կրկին առիթ ընծայեց Մեզ՝ այցելելու ձեր գեղեցիկ երկիրը՝ հրավերով Ձեր և Ֆինլանդիայի Օրթոդոքս Եկեղեցու առաջնորդ, Կարելիայի և համայն Ֆինլանդիայի արքեպիսկոպոս Լեոյի՝ իբրև մեր Եկեղեցիների միջև հաստատված սիրո և եղբայրական հարաբերությունների վկայություն: Մենք խորին գոհունակությամբ ենք վերհիշում տասներեք տարի առաջ կատարած մեր այցը Ֆինլանդիա և փառք ենք բարձրացնում առ Բարեգութն Աստված, որ մեր Եկեղեցիների եղբայրական հարաբերությունները շարունակում են զորանալ ու ամրապնդվել: Ի Քրիստոս սիրով Մեր օրհնությունն ու Մեր ժողովրդի ջերմ ողջույնն ենք բերում այս սուրբ տաճարում աղոթքի կանգնած բարեպաշտ հավատացյալներին, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներին, այստեղ ապրող մեր Եկեղեցու զավակներին:

Սիրելինե՛ր, Ֆինլանդիայի Ավետարանական-Լյութերական և Հայ Առաքելական Եկեղեցիները վերջին ժամանակներում են արձանագրել իրենց բարեկամական հարաբերությունները, որոնց ջերմության վկայությունն են Գերաշնորհ արքեպիսկոպոս Յուկկա Պարմայի և Տուրկուի ներկայիս արքեպիսկոպոս Կարի Մեկկինենի այցելությունները Սուրբ Էջմիածին: Մենք հավատում ենք, որ մեր Եկեղեցիների սերտացող հարաբերությունները նոր հեռանկարներ ու հնարավորություններ են բացելու՝ միասնաբար գործելու և աշխարհում վկայելու մեր Տեր Հիսուս Քրիստոսի Ավետարանը, ամրապնդելու մեր երկրների ու ժողովուրդների եղբայրական հարաբերությունները, նպաստելու մարդկության խաղաղ ու բարօր գալիքի կերտմանը: Հիրավի, մի ենք մեզ ստեղծող ու նախախնամող Հայր Աստծով, մեր փրկության համար մարդեղացած, խաչված և հարություն առած մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսով և մեր բոլոր մարտահրավերների ու դժվարությունների մեջ մեզ մխիթարող և առաջնորդող Սուրբ Հոգով:

Այսօր, երբ աշխարհը կանգնած է տնտեսական, մարդասիրական ու բնապահպանական ճգնաժամերի, ազգային-կրոնական հակամարտությունների և օրեցօր ավելացող անհանդուրժողականության, ահաբեկչությունների, եղեռնական ոճիրների ցավալի փաստերի առաջ, Մենք խորապես մտահոգված ենք մարդկության կյանքին սպառնացող վտանգներով, հրատապ լուծման կարոտ մարտահրավերներով, ինչպես և Մերձավոր Արևելքում տիրող ծանր իրավիճակով: Այդ տարածաշրջանում իսլամական ծայրահեղական խմբավորումների կողմից սանձազերծած պատերազմական գործողությունների պատճառով նվազում է քրիստոնյաների պատմական ներկայությունը, որոնց թվում են նաև հայկական համայնքներն Իրաքում և Սիրիայում:

Հայ Եկեղեցին միջեկեղեցական և միջկրոնական երկխոսության ճանապարհով իր կարելին է ներդնում հակամարտությունների օջախներում խաղաղության ու կայունության ամրապնդման, մարդասիրական արժեքները հարգելու և ապահով ու ստեղծարար կյանքն անխաթար պահելու կամքի զորացման համար, ինչպես և հնարավորինս օգնություն հասցնում պատերազմական իրավիճակներից տուժածներին, փախստականներին: Մեր Եկեղեցու խաղաղարար գործունեությունը ծավալվում է նաև Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործում: Այսօր Ղարաբաղի Մեր ժողովուրդը Ադրբեջանի կողմից հրահրվող ամենօրյա պատերազմի վտանգի ներքո, շրջափակման պայմաններում հաճախ իր զավակների արյան գնով է պաշտպանում իր ազատ կյանքը և անկախությունը

Հիրավի, մի ենք մեզ ստեղծող ու նախախնամող Հայր Աստծով,
մեր փրկության համար մարդեղացած, խաչված և հարություն առած
մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսով և մեր բոլոր մարտահրավերների ու
դժվարությունների մեջ մեզ մխիթարող և առաջնորդող Սուրբ Հոգով
(Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոս)

Փորձություններով ու նահատակություններով լեցուն իր պատմության ողջ ընթացքում
Հայ Եկեղեցին մշտապես իրագործել է քրիստոնեական միության և եղբայրսիրության պատգամը՝
շեշտելով «միութիւն ի կարեւորս եւ սէր յամենայնի» քրիստոնեական սկզբունքը
(Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոս)

պատմական իր հայրենիքի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության: Այս հիմնախնդրի կարգավորման գործում գնահատելի են Ֆինլանդիայի ջանքերը, որը եղել է ԵԱՀԿ Մինսկի խմբի առաջին համանախագահներից մեկը, ինչպես նաև այս գործընթացում ներգավված ֆինն դիվանագետների գործունեությունը:

Սիրելինե՛ր, Մենք մեծապես կարևորում ենք Ֆիննն և Հայ Եկեղեցիների համագործակցությունը, ըստ առաքյալի խոսքի՝ «Եւ զլուխ ամենայնի՝ զի համամիտք իցէք, համակարիք, եղբայրասէրք...» (Ա. Պետ. Գ. 8): Եղբայրական այս հավատով ու սիրով է, որ այցի ենք եկել ձեզ՝ բերելով Մեր և հավատացյալ մեր ժողովրդի աղոթքները, մեր սրբավայրերի օրհնությունն ու մեր նահատակների բարեխոսությունը Ֆինլանդիայի հողին ու աստվածասեր ժողովրդին: Հայցում ենք, որ Աստված բարգավաճ ու բարօր պահի ձեզ, Իր շնորհի ներքո՝ Ֆինլանդիայի Ավետարանական-Լյութերական Եկեղեցու հոգևոր դասը, նրա բարեջան առաջնորդներին՝ ի դեմս Ֆինլանդիայի և Տուրկուի արքեպիսկոպոս Գերաշնորհ Կարի Մեկկինենի՝ պարգևելով արևշատ կյանքի երկար օրեր և արդյունավետ ծառայություն Տիրոջ Խոսքի անդաստանում:

Մեր հանդիպման և միասնական աղոթքի առիթով գնահատանքի և շնորհակալության Մեր խոսքն ենք ուղղում Ֆինլանդիայի Լյութերական և Ուղղափառ քույր Եկեղեցիներին՝ հանձինս Ձեր, սիրեցյալ եղբայր, և Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցու առաջնորդ Լեո արքեպիսկոպոսի, Ֆինլանդիայի բարեխնամ իշխանություններին մեր ժողովրդի զավակների հանդեպ դրսևորվող բարյացակամության ու բարեկամության համար, որ արտահայտությունն է մերձավորի հանդեպ տերունապատվեր սիրո պատգամի՝ վկայված ֆիննն բարեպաշտ ժողովրդի ողջ պատմության ընթացքին և մարդասիրության, որն առաջնորդել է Ֆինլանդիայի Ավետարանական-Լյութերական Եկեղեցուն միսիոներական առաքելության՝ աշխարհի տարբեր երկրներ:

Այս հոգենորոգ պահին Մենք աղոթք ենք բարձրացնում քաղաքական ու տնտեսական խնդիրներից ու հակամարտություններից ալեկոծվող աշխարհի խաղաղության համար, որպեսզի մարդկությունը կարողանա կառուցել իր բարօր ու ապահով ապագան: Թող Երկնավոր Տերն ամրապնդի ու զորացնի եղբայրական ազնիվ զգացումներն ու սերն Իր Սուրբ Եկեղեցում, շնորհ և օրհնություն բաշխի Իր Անվանը հավատացող բոլոր քրիստոնյաներին՝ ի պայծառություն Ընդհանրական մեկ և միասնական Սուրբ Եկեղեցու, այժմ և հավիտյանս. ամեն:

Պաշտոնական խոսքերից ու պատգամների փոխանակումից հետո երկու եկեղեցապետերի հանդիսապետությամբ տեղի ունեցավ նաև համատեղ միջեկեղեցական աղոթք՝ նվիրված աշխարհում և մասնավորապես Մերձավոր Արևելքում ու Լեռնային Ղարաբաղում խաղաղության հաստատմանը:

Մարտի 21-ին՝ առավոտյան ժամը 10:15-ին, Նորին Սրբությունն ու նրան ուղեկցող պաշտոնական պատվիրակությունը Հելսինկիի Վաանտա օդակայանից մեկնեցին Արևելյան Ֆինլանդիա՝ Կուոպիո քաղաք, որը Ի. դարի կեսից համարվում է Կարելիայի և Ֆինլանդիայի Օրթոդոքս Եկեղեցու ավանդական կենտրոնը: Կուոպիոյի օդակայանում Նորին Սրբությանը եղբայրական ջերմ ողջագուրմամբ դիմավորեց Կարելիայի և համայն Ֆինլանդիայի արքեպիսկոպոս Լեոն իրեն ուղեկցող ոչ մեծ շքախմբով՝ Նորին Սրբության՝ Արևելյան Ֆինլանդիա այցի համակարգող ավագ սարկավագ Բարեշնորհ Յիրկի Հարկոնեն, Բարձրաշնորհ Լեո արքեպիսկոպոսի քարտուղար Բարեշնորհ Կայ սարկավագ Ապպելբերգ և Կուոպիոյի Օրթոդոքս կենտրոնական թանգարանի տնօրեն մեծազնիվ Տիկ. Թերեզա Տոյնցի:

Օդակայանից Նորին Սրբությունն ու հայրապետական շքախումբն ուղևորվեցին Կուոպիոյի Օրթոդոքս կենտրոն՝ Լեո արքեպիսկոպոսի նստավայր՝ մասնավոր այցելությամբ լինելով նաև Կուոպիոյի Օրթոդոքս կենտրոնական թանգարանում, որտեղ ներկայացված էին հատկապես ԺԶ.-ԺԹ. դարերի կարելիական օրթոդոքս համայնքներից ու վանքերից բերված թանգարանային արժեքավոր նմուշներ:

Նույն օրը երեկոյան Նորին Սրբությունն արքեպիսկոպոս Լեոյի հետ այցելեց Արևելյան Ֆինլանդիայի ամենանշանավոր վանքերից Նոր Վալաամի վանքը (հիմն. 1940 թ.): Այստեղ երկու եկեղեցապետերին դիմավորեց և որդիական իր ջերմ բարիգալստյան խոսքը փոխանցեց վանքի վանահայր Հոգեշնորհ Սերգիյ վարդապետը: Այնուհետև երեկոյան ժամերգության և համատեղ աղոթքից հետո Բարձրաշնորհ Լեո արքեպիսկոպոսը բարի գալուստ մաղթեց Նորին Սրբությանը՝ շեշտելով Հայոց Եկեղեցու առաքելական հնագույն ծագումն ու բերած ավանդն ընդհանրական քրիստոնեական ընտանիքից ներս, կարևորելով նաև Հայաստանյայց Առաքելական և Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցիների միջև ձևավորված ջերմ եղբայրական հարաբերությունների հեռանկարների ու զարգացումների միասնական, համատեղ ջանքերով կերտումը: Բարձրաշնորհ արքեպիսկոպոսն այնուհետև հրավիրեց Նորին Սրբությանը՝ իր հայրապետական պատգամը փոխանցելու ներկա վանականներին ու հավատացյալներին:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԿԱՐԵԼԻԱՅԻ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԼԵՈՅԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ԱՂՈԹՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

(Ֆինլանդիա, Նոր Վալաամի վանք, 21 մարտի, 2017 թ.)

«Փութալ պահել զմիաբանութիւն հոգւոյն յօդիւ խաղաղութեան, մի մարմին և մի հոգի, որպէս և կոչեցարուք ի մի յոյս կոչման ձերոյ»
(Եփես. Դ. 3-4):

Սիրեցյա՛լ եղբայր ի Քրիստոս, Կարելիայի և համայն Ֆինլանդիայի արքեպիսկոպոս Լեո,

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ,

Քրիստոնեական միության մասին աստվածաշնչյան այս պատգամով այսօր ողջունում ենք ձեզ բոլորիդ՝ բերելով ձեզ օրհնություն բիբլիական Արարատի լանջերին աստվածային տեսիլքով 1700 տարի առաջ հաստատված Հայոց Եկեղեցու հոգևոր կենտրոնից՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից: Առ Աստված գոհաբանությամբ է լցված Մեր հոգին՝ ևս մեկ անգամ, 13 տարի անց, այցելել Ֆինլանդիայի օրհնյալ երկիր և աղոթք բարձրացնել երկինք մեր հոգևոր եղբոր՝ Կարելիայի և համայն Ֆինլանդիայի արքեպիսկոպոս Լեոյի և նրա հավատացյալ հոտի հետ: Քաղցրությամբ ենք հիշում Ձեր այցը, սիրեցյա՛լ եղբայր, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին 2006 թվականին: Մենք, ինչպես և այսօր, միասնաբար աղոթեցինք հանուն մեր Եկեղեցիների պայծառության, մեր ժողովուրդների բարօրության, աշխարհի խաղաղության և մարդկության ապահով կյանքի:

Սիրելի՛ հավատակից քույրեր և եղբայրներ, այս օրերին Քրիստոսի Եկեղեցին, Մեծ Պահքի ընթացքում, նախապատրաստվում է մեր Տիրոջ հրաշափառ ու հաղթական Հարությանը: Եվ ահա դեպի Ս. Զատիկ այս ճամփորդության ընթացքին մենք ևս մեկ անգամ առիթ ունենք Ֆինլանդիայի աստվածօրհնյալ հողի վրա աղոթքով միասնաբար խորհելու քրիստոնեական միության ու սիրո վկայության մասին՝ իբրև պատգամ առնելով Պողոս առաքյալի՝ Եփեսացիներին ուղղված խոսքերը. «Փութալ պահել զմիաբանութիւն հոգւոյն յօդիւ խաղաղութեան, մի մարմին և մի

հոգի, որպէս և կոչեցարուք ի մի յոյս կոչման ձերոյ»: Փորձություններով ու նահատակություններով լեցուն իր պատմության ողջ ընթացքում Հայ Եկեղեցին մշտապես իրագործել է քրիստոնեական միության և եղբայրության պատգամը՝ չեշտելով «միութիւն ի կարևորս և սէր յամենայնի» քրիստոնեական սկզբունքը:

Աշխարհն այսօր կքած է բազմաթիվ խնդիրների և մարտահրավերների ծանրությունից, դրանց լուծման հրամայականների առաջ նորանոր քայլեր են գործադրվում՝ համատեղելու տարբեր պետությունների, ժողովուրդների և միջազգային կառույցների ջանքերը՝ հանուն համերաշխ, արդար և ապահով աշխարհի: Այսօր նահանջ են ապրում հոգևոր-բարոյական արժեքները, անտեսվում՝ քրիստոնեական ավանդական ընկալումները, որոնց պահպանման համար հրամայական է միավորումը Եկեղեցիների ջանքերի՝ Ավետարանի ճշմարտությամբ շաղախելու մարդկանց կյանքը: Մենք ամենքս, իբրև քրիստոնյաներ, կոչված ենք մեկ հույսի, որ է Քրիստոսի բերած փրկությունը, և միայն այս միասնական հույսի, հավատի և սիրո մեջ կարող ենք զգալ մեկս մյուսի ցավն ու դժվարությունները, միայն այս կերպ կարող ենք հարատևել Հիսուս Քրիստոսի պարգևած հաղթական հարության մեջ: Մեր օրերում, ինչպես Մերձավոր Արևելքում, այնպես և աշխարհի տարբեր կողմերում ծայրահեղական ուժերի կողմից սանձազերծված պատերազմական գործողություններն ու ահաբեկչությունները աշխարհը կանգնեցրել են հումանիտար աղետի և բազում խնդիրների առաջ: Նման ցավալի իրողությունները պահանջում են բոլոր հավատացյալների ջանքերի և աղոթքների համատեղում, միասնական մոտեցում՝ փոխըմբռնման ոգին ու համագործակցության ուղիները զորացնելու և կրոնական քողով սքողված հակամարտություններն ու դրանցից ծնվող հասարակական աղետները կանխարգելելու համար:

Հայ Եկեղեցին պատմության ընթացքում մշտապես իր առաքելության կարևորագույն մասն է համարել ժողովուրդների միջև խաղաղ համակեցության, փոխհանդուրժողականության ու փոխըմբռնման հաստատմանն ուղղված գործընթացներին իր մասնակցությունը: Տասնամյակներ ի վեր անհանգիստ է նաև մեր տարածաշրջանը: Լեռնային Ղարաբաղում մեր ժողովուրդը շարունակ ենթարկվում է Ադրբեջանի ռազմական հարձակումներին: Պաշտպանելով հայրենի երկրում ազատ ապրելու իր իրավունքը, մեր ժողովուրդը ձգտում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդական ջանքերով հասնել Ղարաբաղյան հարցի խաղաղ կարգավորմանը: Ցավոք, Ադրբեջանը ռազմատենչ հայտարարություններով, զի-

նուժի սադրիչ գործողություններով չի թաքցնում խնդիրը ռազմական ճանապարհով լուծելու իր ցանկությունը: Հակամարտության առաջին օրվանից Հայ Եկեղեցին, հավատարիմ իր խաղաղասիրական առաքելությանը, երկխոսություն է սկսել Ադրբեջանի հոգևոր առաջնորդների հետ: Իբրև պատերազմի և արհավիրքի ցավը կրող ժողովուրդ՝ Մեր ցանկությունն է, որ շուտափույթ խաղաղություն հաստատվի ողջ աշխարհում, և չլինեն սգացող այրիներ, որբացած զավակներ և որդեկորույս մայրեր, որպեսզի ամենքն ապրեն ապահով, խաղաղ և երջանիկ կյանքով:

Այս մտածումներով և մաղթանքով Մեր ջերմեռանդ աղոթքն ենք վերառաքում առ Բարձրյալն Աստված՝ խնդրելով, որ օրհնի Ֆինլանդիայի Հանրապետությունը և այս հյուրընկալ երկրի բարեսիրտ ժողովրդին՝ շնորհելով հարատև առաջընթաց և բարօրություն:

Մեր այցը, սիրեցյալ եղբայր, գեղեցիկ առիթ է ընծայում Մեզ Մեր սրտի ջերմ զգացումները և շնորհակալությունը հայտնելու Ձեզ և հավատավոր Ձեր հոտին՝ Ֆինլանդիայում ապրող մեր ժողովրդի զավակների հանդեպ դրսևորած ազնիվ ու բարյացակամ վերաբերմունքի համար:

Թող Տերն օժտի մեզ Իր սիրո շնորհով ու զորացնի ճշմարտության Իր Հոգով և միության մեջ հույսով ամուր պահպանի ու առաջնորդի Իր Սուրբ Եկեղեցին:

Հաջորդ օրը՝ մարտի 22-ին, Վեհափառ Հայրապետն ու նրան ուղեկցող շքախումբը ծանոթացան վանքի առօրյային, մշակութային-վանական զանազան ձեռնարկներին ու կառույցներին: Այնուհետև Նորին Սրբությունն ու նրան ուղեկցող պաշտոնական պատվիրակությունն ուղևորվեցին Կուոպիոյից մոտավորապես 150 կմ հեռավորության վրա գտնվող արևելաֆիննական մյուս կարևոր քաղաք՝ Յոհենսու, որտեղ, Արևելյան Ֆինլանդիայի համալսարանի ղեկավարության հրավերով, Վեհափառ Հայրապետը համալսարանի Օրթոդոքս աստվածաբանական միացյալ դպրոցում ներկայացնելու էր դասախոսություն հետևյալ խորագրով՝ «Կամ արդյոք իսլամական աշխարհի վերաբերյալ հայկական մասնավոր ընկալում»: Դասախոսության մեջ Նորին Սրբությունը կենտրոնացավ հիմնականում իսլամական աշխարհի հետ հայ ժողովրդի և Հայ Առաքելական եկեղեցու խաղաղ համակեցության և երկխոսության օրինակներին ու պատմական փորձառությանը, այնուհետև պատասխանեց ներկաների հարցերին:

Դասախոսությանը ներկա էին նաև Կարելիայի և Համայն Ֆինլանդիայի արքեպիսկոպոս Լեոն, աստվածաբանական դպրոցի դասախոսներ և ուսանողներ:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՕՐԹՈԴՈՔՍ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԴՊՐՈՑՈՒՄ

(Ֆինլանդիա, Յոհենսու, 22 մարտի, 2017 թ.)

Սիրեցյա՛լ հոգևոր եղբայր ի Քրիստոս, արքեպիսկոպոս Լեո,

Բարձրաշնո՛րհ, գերաշնո՛րհ և հոգեշնո՛րհ հայրեր, սիրելի՛ ուսանողներ ու ներկաներ.

Մեծ ուրախություն է Մեզ համար հանդես գալ Արևելյան Ֆինլանդիայի համալսարանի Օրթոդոքս աստվածաբանական այս դպրոցի պատկառելի լսարանի առաջ: Ֆինլանդիայի քույր Եկեղեցիներին մեր այցելության այս վերջին օրն ահավասիկ եզրափակվում է աստվածաբանական մտքի ու կրթության այս օջախում, որտեղ կերտվում են Քրիստոսի խոսքի ու Ավետարանի սպասավորները:

Ա. Մեր զեկույցի թեման խորագրված է՝ «Կա՞ արդյոք իսլամական աշխարհի վերաբերյալ հայկական մասնավոր ընկալում». Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի ողջ պատմությունը, ըստ էության, հավատի համար վկայության մի օրինակ է: Դեռևս քրիստոնեությունն ընդունելուց տասներկու տարի անց՝ 313 թ., ըստ քրիստոնեական պատմագրության հայր Եվսեբիոս Կեսարացու՝ հայերը մարտնչեցին ու պայքարեցին իրենց քրիստոնեական հավատի համար ընդդեմ Արևելյան Բյուզանդական կայսրության համագահակալ Մաքսիմիանոս Դաժայի: Այնուհետև, ողջ Դ. ու Ե. դարերն անցան հավատի վկայության ու քրիստոնեական արժեքների պաշտպանության համար պայքարի հունով: Եվ այդ իմաստով վճռորոշ եղավ 451 թվականը, երբ Հայ Եկեղեցին ու ժողովուրդը, իբրև մեկ հոգի ու մեկ մարմին, ճակատամարտ տվեցին կրոնափոխություն պարտադրող զրադաշտական պարսից զորքի դեմ Ավարայրի դաշտում: Պատմական այս իրադարձությունը հատկորոշվեց նաև նույն այդ պայքարի արձանագրող-պատմիչ Եղիշեի բանաձևով՝ «քրիստոնեությունը մեր մաշկի գույնն է»:

Բ. Ահա քրիստոնեական հավատի համար այսպիսի պատմությամբ և փորձառությամբ է, որ հայ ժողովուրդն առաջին անգամ առերեսվեց Է. դարում դեռ նոր-նոր ձևավորված իսլամական աշխարհի հետ: Կարևոր է

նշել, որ հենց առաջին տարիներից Հայ Եկեղեցու գահակալներն ու իշխանները կարողացան հանդուրժողականության և փոխճանաչման համաձայնագիր կնքել արաբների հետ՝ այդպիսով Քրիստոնյա Արևելքում տալով իսլամական աշխարհի հետ համակեցության առաջին օրինակներից մեկը: Կարևոր է հատկապես պատմական այն փաստը, որ իսլամի հիմնադիր Մուհամեդ մարգարեից սկսած՝ Երուսաղեմի Հայոց Պատրիարքությանը արաբ խալիֆաները պարբերաբար տրամադրել են կրոնական ազատ պաշտամունքի և կալվածքների տնօրինման առանձնաշնորհումներ և հրովարտակներ: Մեր ժողովուրդը պատմության ընթացքում դարավոր փոխհարաբերություններ է ունեցել իսլամական հարևան պետությունների հետ և երբեմն եղել նաև իսլամական տերությունների գերիշխանության ներքո: Այդ ժամանակաշրջանում համակեցությունը ոչ միշտ է անցել անվրդով ընթացքով: Այն դեպքում, երբ իսլամի բուն ոգին խեղաթյուրվել է և քաղաքականացվել՝ ծառայելով շահադիտական նպատակների, հայ ժողովուրդն ապստամբել է՝ նույն Ե. դարի քրիստոնեական պայքարի «վասն հավատոյ և վասն հայրենեաց» կարգախոսի համաձայն: Եվ այստեղ է, որ մենք կարևոր ենք համարում անելու առաջին ամփոփումը: Իսլամի հետ երկխոսության ու համակեցության խախտման և վտանգման առաջին կարևոր պատճառը իսլամի քաղաքականացումն է, նրա կրոնական բուն ոգու և խաղաղասիրական դրսևորման աղավաղումը: Ինչպես քրիստոնեությունը, այնպես էլ իսլամը միատարր չէ՝ ներառելով բազմաթիվ հարանվանություններ ու շարժումներ՝ երբեմն հոգևորի ու կրոնականի մասին բավական տարբեր մոտեցումներով ու մեկնաբանություններով: Եվ շատ հաճախ, ցավոք, նմանատիպ բազմազանությունը բերում է իսլամի մասին սխալ պատկերացումների և կարծրատիպերի առաջացման:

Քաղաքական ու պատմական զարգացումների հետևանքով իսլամի հետ առնչությունները բավականին տևական են եղել հայ ժողովրդի կյանքում: Այդ հարաբերությունների ընթացքում առաջ են եկել նաև իսլամ-քրիստոնյա երկխոսության առանձին երևույթներ, երբ հայ և իսլամ աստվածաբանների կողմից կազմակերպվում էին աստվածաբանական բանավեճեր ու քննարկումներ: Այդ երևույթն արդեն սկիզբ առավ ԺԱ. դարից, երբ հայ նշանավոր իշխան, աստվածաբան ու մատենագիր Գրիգոր Մագիստրոսն ու մուսուլման գիտնական Մանուչեն իրենց բանավեճի արդյունքում միջնադարյան Հայաստանում ստեղծեցին քրիստոնեության և իսլամի միջև կրոնական բանավեճի ու երկխոսության մշակույթը: Այս

ամենը, իհարկե, ուներ խիստ շեշտված ջատագովական բնույթ, սակայն, իբրև միջնադարյան իսլամ հասարակարգում առաջացած իրողություն, առաջատար երևույթ էր: Դրան նպաստում էր նաև հայ քրիստոնյա և իսլամ բնակչության դարավոր համակեցության գործոնը: Այսպես, օրինակ, մի շարք խոշոր քաղաքներում՝ մայրաքաղաքներ Դվինում և Անիում, Սպահանում և Հալեպում եկեղեցիներն ու իսլամական մզկիթները գործել են կողք-կողքի, նույնիսկ միևնույն թաղամասում: Այսօր էլ Հայաստանի մայրաքաղաք Երևանի կենտրոնական մասում գտնվում է Կապույտ մզկիթը, որը վերջին տարիներին կրկին նորոգվել է և Հայաստանում բնակվող մահմեդականների համար ծառայում է որպես աղոթատեղի, պաշտամունքի վայր: Նաև իսլամական բարեկամ պետություններում իշխանությունները բարեհոժարությամբ արտոնում են հայկական եկեղեցիների, հայ համայնքների գործունեությունը, հողատարածք և օժանդակություն են տրամադրում նոր եկեղեցիների կառուցման համար: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ իսլամի կրոնական-աստվածաբանական ճիշտ ընկալումը, պատմական փորձառության ծիրից ներս, կարող է նպաստավոր հող ստեղծել՝ առողջ, հանդուրժողական կրոնական երկխոսության ու համագործակցության համար՝ քրիստոնեության և իսլամի միջև:

Գ. Մեր այս զեկույցի շրջանակներում մենք կամենում ենք անդրադառնալ մի կարևոր իրողության ևս, որ է՝ պատմության ընթացքում իսլամի ազգայնացման գործընթացը: Ձեզ ծանոթ են այն ցավալի ու աղետալի հալածանքները, որ հայ ժողովուրդն ու Հայոց Եկեղեցին կրեցին Օսմանյան կայսրության մեջ հատկապես ԺԹ. դարավերջին և Ի. դարասկզբին: 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո Օսմանյան Թուրքիայում հաստատվեցին, այսպես կոչված, հանրապետական կարգեր: Իսլամի կրոնական բովանդակությունն այս ժամանակաշրջանում ամբողջությամբ ազգայնացվեց՝ ծառայելով իբրև կրոնաքաղաքական ենթահող երիտթուրքական իշխանությունների համար՝ Մեծ Թուրան կամ Թյուրքալեզու բոլոր ազգերին մեկ տերության մեջ համախմբելու զավթողական ծրագրի շրջանակներում: Կրոնն իբրև քաղաքական շղարշ օգտագործելու այս արատավոր մոտեցման անմիջական հետևանք դարձավ Ի. դարի առաջին ցեղասպանությունը՝ հայ ազգաբնակչության կոտորածը Թուրքիայում՝ առաջին աշխարհամարտի տարիներին ու դեռ դրանից հետո էլ՝ 1915-1923 թթ.: Հայերը կոտորվում էին քրիստոնյա և հայ լինելու պատճառով: Այս երևույթն ուղիղ համեմատական էր քաղաքականացված կրոնական

այն մոտեցմանը, որով իրենց ծածուկ հաշվարկներն էին իրականացնում երիտթուրքական իշխանությունները: Եվ իր հերթին, ուղղակի հակասության մեջ էր իսլամական այն երկրների, մասնավորապես Մերձավոր Արևելքում, եղբայրական մոտեցման հետ, որի արդյունքում Ցեղասպանությունից հետո տասնյակ հազարավոր գաղթական հայեր ապաստան գտան Սիրիայի, Պարսկաստանի, Լիբանանի, Իրաքի, Եգիպտոսի և իսլամական աշխարհի այլ երկրների ժողովուրդների և իշխանությունների կողմից: Կարող ենք վստահաբար նշել, որ պատմական այս օրինակներն իրար հակադրում են իսլամի սխալ, քաղաքականացված ընկալումը դրա մյուս՝ կրոնական բարեպաշտությամբ ու Ղուրանի պատվիրանների գործադրմամբ ապրված իսլամական մշակույթին: Այս եղբայրական ջերմ վերաբերմունքի արդյունքում ձևավորվեցին և առ այսօր խաղաղ ու բարօր կյանք ունեն Մերձավոր Արևելքի մեր համայնքները, որոնցից Սիրիայինը և Իրաքինը ներկայում դիմագրավում են իսլամական կրոնական-ծայրահեղական խմբավորումների կողմից սանձազերծած պատերազմի արհավիրքները: Արաբական շատ երկրների հյուրընկալ հողում հայորդիները կարողացան իրենց նպաստը բերել տեղի հասարակական-քաղաքական, մշակութային, տնտեսական ու գիտական կյանքի զարգացմանը՝ շատ հաճախ զբաղեցնելով նաև ղեկավար պատասխանատու պետական ու քաղաքական պաշտոններ: Այսօր էլ Մերձավոր Արևելքում հայ ժողովրդի զավակները շարունակում են ապրել նույն եղբայրական մթնոլորտում՝ իրենց մուսուլման հայրենակիցների հետ օրավուր զորացնելով այդ երկրներում կրոնական հանդուրժողականության և երկխոսության ոգին: Եվ այս առումով, անշուշտ, դատապարտելի են քրիստոնեական ու իսլամական կրոնների դարավոր խաղաղ համակեցությունը վտանգող քաղաքականացված ծայրահեղ իսլամական ռազմական խմբավորումների ու միավորումների գործողությունները Մերձավոր Արևելքում, որոնք սպառնում են իսպառ ոչնչացնել թե՛ քրիստոնյա-իսլամ համայնքների համակեցության դարավոր ավանդույթը և թե՛ քրիստոնեական պատմական ներկայությունը տարածաշրջանում:

Դ. Ժամանակակից աշխարհում, երբ ակտիվ կերպով զարգանում ու զորանում են միջեկեղեցական ու միջկրոնական երկխոսությունները, տարբեր կրոնների ու կրոնական մշակույթների միջև առավել կարևորվում են համընդհանուր գործակցության եզրերը, ի հակակշիռ առկա աստվածաբանական տարբերությունների, Իսլամի հետ երկխոսության

ու համակեցության հայ քրիստոնեական պատմական փորձառությունը կարող է մեծ նպաստ բերել: Պատմության նորագույն ժամանակաշրջանում Հայ Եկեղեցին, իսլամական աշխարհում սփռված իր տարբեր համայնքներով ու դաղութներով, միշտ էլ ակտիվ մասնակցություն է ունեցել միջկրոնական, հատկապես իսլամ-քրիստոնեություն երկխոսության զարգացմանը: Հատկանշական են Մերձավոր Արևելքի մի շարք երկրների իսլամ կրոնական առաջնորդների ու ղեկավարների այցերը Հայաստան՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Հայոց Եկեղեցու նվիրապետների փոխադարձ այցելություններն իսլամական աշխարհի տարբեր կրոնապետերին ու ղեկավարներին: Կարևոր է այս առումով նաև այն, որ ներկայումս Արցախա-Ադրբեջանական զինված հակամարտության շրջանակներում մեր կողմից, մեր դահակալության առաջին իսկ օրերից սկսած (2000 թ., 24 նոյեմբերի), ԱՊՀ միջկրոնական խորհրդի շրջանակներում, ինչպես նաև Ռուս Ուղղափառ Եկեղեցու նվիրապետների միջնորդությամբ պարբերաբար կազմակերպվել են եռակողմ հանդիպումներ Կովասի մուսուլմանների հոգևոր առաջնորդի հետ: Այդ հանդիպումներում ընդգծվել է, որ հակամարտությունը կրոնական բնույթ չի կրում, և հորդոր է ուղղվել հակամարտող կողմերին՝ զերծ մնալու կրոնական թշնամանքի որևէ դրսևորումից ու խաղաղ բանակցությունների ճանապարհով հասնել դրա լուծմանը:

Ե. Վերոբերյալ պատմական օրինակներն ու վերլուծությունները մեզ թույլ են տալիս Իսլամի ընկալման համայնապատկերի մեջ կատարելու հետևյալ եզրափակիչ դիտարկումները.

1. Կրոնական-բարեպաշտական ճշմարիտ ապրումն է այն միակ ենթահողը, որի վրա կարող է հաստատվել առողջ ու կառուցողական երկխոսությունը քրիստոնեության և իսլամի միջև:

2. Ներկա ժամանակաշրջանում կրոնական տարբեր հակամարտությունները, որոնց կենտրոնում իսլամի վերաբերյալ ծայրահեղ մեկնությունն է, արդյունք են իսլամական կրոնական մշակույթի և սկզբունքների կեղծ ու քաղաքականացված մոտեցումների:

3. Իսլամական և քրիստոնեական աշխարհների համակեցության արդի խնդիրը պահանջում է տարբեր քրիստոնյա ժողովուրդների, մասնավորապես Մերձավոր Արևելքում ապրող քրիստոնեական եկեղեցիների՝ իսլամի հետ ունեցած համակեցության և երկխոսության պատմության մանրակրկիտ ուսումնասիրություն: Միայն այդ կերպ է հնարավոր

առանձին, մասնավոր պատկերացումներից գնալու դեպի իսլամի հետ համակեցության միասնական և ընդհանուր պատկերի:

4. Վերջին տասնամյակներում Մերձավոր Արևելքի և աֆրիկյան երկրներից միլիոնավոր ներգաղթյալների ներկայությունը եվրոպական պետություններում կենսական անհրաժեշտություն է դարձնում ներհասարակական երկխոսությունը հյուրընկալ ժողովրդի և տվյալ երկրում ձևավորված մուսուլման համայնքների միջև՝ ապահովելու համար փոխըմբռնումն ու համերաշխ համակեցությունը և իսլամական համայնքների՝ օրինահարգությամբ ու օրինապահությամբ կեցությունը հյուրընկալ երկրներում՝ հիմնված քաղաքացիական իրավունքի և խղճի ազատության սկզբունքի վրա:

5. Արդի տեղեկատվության և լրատվության անընդհատ զարգացող պայմաններում անհրաժեշտ է իսլամի մասին ունենալ իրական, մասնագիտական ու ճշգրիտ պատկերացում՝ խուսափելու համար շատ հաճախ մակերեսային տեղեկատվության ստեղծած կարծրատիպերից ու մոտեցումներից:

Հավարտ դասախոսության Նորին Սրբությունը և հայրապետական պաշտոնական պատվիրակությունը հյուրընկալվեցին աստվածաբանական դպրոցի տնօրեն պրոֆ. Մատի Կոտիրանայի և դասախոսապրոֆեսորական անձնակազմի կողմից:

Նույն օրը՝ երեկոյան, Ամենայն Հայոց կաթողիկոսն ու նրան ուղեկցող պաշտոնական պատվիրակությունը Յոհենսույի օդակայանից Հելսինկի-Մոսկվա-Երևան չվերթով վերադարձան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ միջեկեղեցական եղբայրության ու ջերմ հարաբերությունների համար արտասանված խոսքերի և աղոթքների, հանդիպումների ու միջոցառումների հաճելի հուշերով և տպավորություններով:

Հահե Ծ. վրդ. Անանյան
Միջեկեղեցական հարաբերությունների
բաժնի պատասխանատու

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԴԻՎԱՆԱՊԵՏ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԶԵԿՈՒՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎՈՒՄ

(Մարտի 7-9, 2017 թ.)

Տեղեկագիրը պատրաստված է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 51 ներքին կառույցների, 32 թեմերի ու Հայրապետական 2 պատվիրակությունների* տրամադրած տեղեկությունների հիման վրա:

1. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվետու տարում Նորին Սրբությունն ընդունել է պետական, եկեղեցական տարբեր բարձրաստիճան պատվիրակությունների, հասարակական, մշակութային գործիչների և ուխտավոր բազմաթիվ հավատացյալների:

ա. Ընդունելություններ

Հունվարի 14-ին Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունել է Մայր Աթոռի Սոցիալական ծառայությունների գրասենյակի կողմից 2015 թ. դեկտեմբերին իրականացրած «Ուրախ Ամանոր սահմանում» ծրագրի մասնակիցներին:

Հունվարի 17-ին՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության նախագահ տիար Պերճ Սեդրակյանին:

Հունվարի 27-ին՝ ՀՀ ՔՈՒ Հոգևոր առաջնորդության սպասավորներին՝ գլխավորությամբ ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի և ՀՀ ՔՈՒ հոգևոր առաջնորդ Գերշ. Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի (տե՛ս էջ 20):

Փետրվարի 1-ին՝ Վրաստանի Հանրապետության Պաշտպանության նախարար Թինաթին Խիդաշելիի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ Պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Դավիթ Տոնոյանի և ՀՀ ՔՈՒ հոգևոր փոխառաջնորդ Հոգշ. Տ. Մովսես աբեղա Սարգսյանի:

Փետրվարի 8-ին՝ Հայաստանի Հանրապետությունում իր դիվանագիտական առաքելությունն ավարտող Հնդկաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Սուրեշ Բաբու Թադիպանենիին:

---

* Զեկույցում արտացոլված չեն Դամասկոսի Հայոց թեմի, ինչպես նաև Հնդկաստանի ու Ծայրագույն Արևելքի Հայրապետական Պատվիրակության գործունեության տվյալները՝ Մայր Աթոռ չներկայացնելու պատճառով:

Փետրվարի 9-ին՝ Սերբիայի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Մայա Գոյկովիչի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Էդուարդ Շարմազանովի:

Փետրվարի 15-ին՝ Հայաստանի Հանրապետությունում իր դիվանագիտական առաքելությունն ավարտող Վրաստանի արտակարգ և լիազոր դեսպան Թենգիզ Շարմանաշվիլիին:

Փետրվարի 20-ին՝ Հռոմի Կաթոլիկ համալսարանի Ա. Ջեմելլի հիմնադրամի պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԺ պատգամավոր Խոսրով Հարությունյանի:

Նույն օրը՝ Իրանի Իսլամական Հանրապետության Մշակույթի և իսլամական կապերի կազմակերպության նախագահ, ԻԻՀ նախագահի խորհրդական Աբուզար Էբրահիմի Թորքամանին:

Մարտի 2-ին՝ Ռուսաստանի Դաշնության առողջապահության նախարար Վերոնիկա Սկվորցովային՝ ուղեկցությամբ Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարար Արմեն Մուրադյանի:

Մարտի 10-ին՝ Շիրակի նորանշանակ մարզպետ Հովսեփ Սիմոնյանին և Շիրակի թեմի առաջնորդ Գերշ. Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանին:

Մարտի 13-ին՝ Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյանին: Հանդիպմանը ներկա էր նաև Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Գերշ. Տ. Վարդան եպիսկոպոս Նավասարդյանը:

Մարտի 23-ին՝ Հունգարիայի Պիտեր Պազմանի անվան Կաթոլիկ համալսարանի ռեկտոր պրոֆ. Սուրոմի Սաբոլչին, դասախոսներին և ուսանողներին՝ ուղեկցությամբ Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր պրոֆ. Ռուբեն Միրզախանյանի:

Մարտի 23-ին՝ Քուվեյթի Արդարադատության, կրոնական կալվածքների և իսլամական հարցերով նախարար Յակուբ Աբդ ալ-Մոհսեն ալ-Սանիեի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ Արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանի և Քուվեյթում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Ֆադեյ Չարչողլյանի:

Մարտի 30-ին՝ Արդյունաբերողների և գործարարների միջազգային կոնգրեսի խորհրդի նախագահության անդամներին՝ ուղեկցությամբ Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության նախագահ Արսեն Ղազարյանի:

Ապրիլի 1-ին՝ Երկրապահ կամավորականների միության (ԵԿՄ) վարչության անդամներին՝ գլխավորությամբ ԵԿՄ վարչության նախագահ, գեներալ-լեյտենանտ Մանվել Գրիգորյանի:

Ապրիլի 15-ին՝ բժշկության և հարակից ոլորտների զարգացման գործում Նոբելյան մրցանակի արժանացած Ահարոն Չեխանովերին, Ադա Յոնաթին, Դեն Շեխտմանին և Էյ-իչի Նեգիշին՝ ուղեկցությամբ Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ռեկտոր պրոֆ. Միքայել Նարիմանյանի և ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Գերագույն հոգևոր խորհրդի անդամ Վիլեն Հակոբյանի:

Ապրիլի 19-ին՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներից Հայաստան ժամանած «Հովնանյան» դպրոցի սաներին և պաշտոնեության ներկայացուցիչներին՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի բարերար Տիար Հրաչ Թուֆայանի:

Ապրիլի 21-ին՝ Ռամկավար ազատական կուսակցության անդամներին, որոնք Հայաստան էին ժամանել կուսակցության երկրորդ համագումարի առիթով:

Ապրիլի 24-ին՝ «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» երկրորդ գլոբալ ֆորումին մասնակցելու նպատակով Հայաստան ժամանած Կիպրոսի ներկայացուցիչների պալատի պատգամավոր, ԵԱՀԿ ԽՎ-ում Կիպրոսի պատվիրակության ղեկավար Սոֆոկլիս Ֆիտիսին ու Կիպրոսի համալսարանի ռեկտոր Կոստանդինոս Խրիստոֆիդեսին՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Էդուարդ Շարմազանովի:

Ապրիլի 25-ին՝ ի ծնե հաշմանդամություն ունեցող և մանկական ուղեղային կաթվածով տառապող աշտարակաբնակ Դավիթ և Հասմիկ Խաչատրյաններին: Արագածոտնի ու Կանադայի հայոց թեմերի համատեղ պայմանավորվածությամբ և աջակցությամբ անհրաժեշտ բժշկական աջակցություն ստանալու նպատակով Կանադա մեկնելուց առաջ երեխաները եկել էին՝ ստանալու Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությունը:

Ապրիլի 27-ին՝ Մայր Աթոռի հովանու ներքո գործող «Էօրնեկեան» հանրակրթական դպրոցի աշակերտական խորհրդին՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Գերշ. Տ. Վարդան եպիսկոպոս Նավասարդյանի:

Մայիսի 6-ին՝ «Պլեներ Հայաստան-2016» խորագրով գեղանկարչության միջազգային սիմպոզիումի մասնակիցներին՝ ուղեկցությամբ Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր պրոֆ. Ռուբեն Միրզախանյանի և ՀՊՄՀ Կերպարվեստի ամբիոնի վարիչ, ՀՀ ժողովրդական նկարիչ պրոֆեսոր Փարավոն Միրզոյանի:

Մայիսի 11-ին՝ Արմավիրի թեմի առաջնորդ Գերշ. Տ. Սիոն եպիսկոպոս Ադամյանին և Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրի Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի տնօրեն Կարեն Արիստակեսյանին:

Մայիսի 12-ին՝ «Եկեղեցիների համատեղ գործողություն» համադաշնության (ACT Alliance) ղեկավար խորհրդի անդամներին՝ ուղեկցությամբ խորհրդի անդամ, ԵՀԽ «Հայաստանյան Կլոր սեղան» բարեգործական միջեկեղեցական հիմնադրամի տնօրեն դոկտ. Կարեն Նազարյանի:

Մայիսի 15-ին՝ Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Ալեքսեյ Սեմյոնովի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր պրոֆ. Ռուբեն Միրզախանյանի:

Մայիսի 16-ին՝ «Քրիստոսի խաղաղություն» (Pax Christi) միջազգային կաթոլիկ կազմակերպության Ավստրիայի մասնաճյուղի գլխավոր քարտուղարության ներկայացուցիչներին և անդամներին:

Մայիսի 19-ին՝ Գերմանիայից Հայաստան ժամանած Տրիերի կաթոլիկ թեմի ուխտավորներին:

Մայիսի 20-ին՝ Մոսկվայի Պատրիարքության Ուկրաինայի Ուղղափառ Եկեղեցու՝ Ուկրաինայի Զինված ուժերի և զորամիավորումների հետ համագործակցության Սինոդալ բաժնի նախագահ, Աստվածաբանական կանոնական հանձնախմբի նախագահ Բելոցերկովի և Բոգուսլավի միտրոպոլիտ Ավգուստինի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ ՋՈՒ հոգևոր առաջնորդ Գերշ. Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի:

Մայիսի 22-ին՝ Սիրիայից և Իրաքից Հայաստան ժամանած Ասորի Ուղղափառ Եկեղեցու շուրջ 50 ուխտավորների՝ ուղեկցությամբ Մեծ Բրիտանիայի Ասորի Ուղղափառ Եկեղեցու առաջնորդ Մար Աթանաս եպիսկոպոսի:

Մայիսի 23-ին՝ ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի ռեկտորատի պրոֆեսորադասախոսական անձնակազմին և ուսանողներին՝ ռեկտոր Արսեն Լոքյանի գլխավորությամբ:

Մայիսի 24-ին՝ Հայաստանի Հանրապետությունում Ավստրալիայի նորանշանակ դեսպան Պիտեր Մարտին Թեշին (նստավայրը՝ Մոսկվա):

Մայիսի 29-ին՝ Օրլովի նահանգապետ տիար Վադիմ Պոտոմսկուն և Ռուս Ուղղափառ Եկեղեցու վանական վարդապետ Իլիյ Նոզդրինին՝ ուղեկցությամբ Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Հայոց թեմի բարերար Սամվել Մովսիսյանի:

Մայիսի 30-ին՝ Հայաստանում աշխատանքային այցով գտնվող Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության նախագահ տիար Պերճ Մեդրակյանին:

Նույն օրը՝ Ռամկավար ազատական կուսակցության (ՌԱԿ) կենտրոնական վարչության նորընտիր անդամներին՝ գլխավորությամբ վարչության ատենապետ Սերխիո Նահապետյանի:

Մայիսի 31-ին՝ Իրանի Իսլամական Հանրապետության Արդարադատության նախարար Մուսթաֆա Փուր Մոհամմադիի գլխավորած պատվիրակությանը:

Հունիսի 1-ին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից սահմանված Հայրապետական կրթաթոշակին այս տարի ներկայացված Հայաստանի բուհերի երեք ուսանողների՝ ուղեկցությամբ ՀՀ Կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյանի և Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի (ՔԴԿ) տնօրեն Գերշ. Տ. Վարդան եպիսկոպոս Նավասարդյանի:

Հունիսի 14-ին՝ Հայաստանի Հանրապետությունում Ղազախստանի Հանրապետության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Թիմուր Ուրազանին:

Նույն օրը՝ «Գլոբալ բրիդջիզ» միջազգային կազմակերպության անդամներին՝ ուղեկցությամբ ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Բերնհարդ Մաթիաս Քիսլերի:

Հունիսի 15-ին՝ ՀՀ-ում Նիդեռլանդների Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Իոս Դաումային (նստավայրը՝ Թբիլիսի):

Հունիսի 16-ին՝ Ս. Վլադիմիր Ուղղափառ ճեմարանի (ԱՄՆ) տեսուչ Արժանապատիվ դոկտոր Ջոն քահանա Բեռին՝ ուղեկցությամբ Ս. Ներսես հայկական ընծայարանի (ԱՄՆ) տեսուչ Արժանապատիվ Տ. Մարտիրոս ավագ քահանա Չևյանի:

Հունիսի 19-ին՝ Բուշ-դյու-Ռոն Նահանգային խորհրդի նախագահ Մարտին Վասալի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ «Բարձունք 5165» կազմակերպության նախագահ Ռոբերտ Ազիլազյանի (Ֆրանսիա)։

Հունիսի 22-ին՝ Արգենտինայի Ազգային բանկի նախագահ Կառլոս Մելքոնյանին՝ ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյանի ուղեկցությամբ։

Հուլիսի 6-ին՝ Մարսելի համազգային դպրոցի և Փարիզի «Դպրոցասեր» վարժարանի թվով 26 աշակերտների՝ ուղեկցությամբ ֆրանսիաբնակ բարերար Սարգիս Պետոյանի։

Հուլիսի 8-ին՝ Հայաստանի Հանրապետությունում Հունաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան պարոն Իոաննիս Տայիսին։

Հուլիսի 10-ին՝ Մասաչուսեթսի Վուսթըր քաղաքից ժամանած ուխտավորներին՝ ուղեկցությամբ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միաբան Հոգշ. Տ. Սահակ ծայրագույն վարդապետ Եմիշյանի։

Նույն օրը՝ ԱՄՆ Հայոց Արևելյան թեմի ավելի քան 30 ուխտավորների՝ ուղեկցությամբ Բոստոնի Ս. Երրորդություն եկեղեցու հոգևոր հովիվ Արժանապատիվ Տ. Վազգեն քահանա Կուզույանի և Մինեսոտայի Ս. Սահակ եկեղեցու հոգևոր հովիվ Արժանապատիվ Տ. Թադեոս քահանա Բարսեղյանի։

Հուլիսի 11-ին՝ Նիժնի Նովգորոդի և Արզամասի Գեորգի միտրոպոլիտին՝ ուղեկցությամբ Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանի։

Հուլիսի 21-ին՝ ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի անդամ Ջիմ Կոստային՝ ուղեկցությամբ Ֆրեզնոյում Հայաստանի Հանրապետության պատվո հյուպատոս Պերճ Աբգարյանի։

Նույն օրը՝ Անտիոքի Ուղղափառ Եկեղեցու Զահլեի միտրոպոլիտ Անտոնիոս Ալսորուն՝ ուղեկցությամբ Հայաստանի Հանրապետությունում Լիբանանի արտակարգ և լիազոր դեսպան Ժան Մաքարոնի և բարերար Նիկոլա Աբոֆայիսայի։

Հուլիսի 26-ին՝ ԱՄՆ Արևելյան Հայոց թեմի ուխտավորներին՝ ուղեկցությամբ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգևոր հովիվ Արժանապատիվ Տ. Կոմիտաս քահանա Ջոհրաբյանի։

Օգոստոսի 7-ին՝ ԱՄՆ Հայոց Արևելյան թեմի ուխտավորներին՝ ուղեկցությամբ Նյու Յորքի Ս. Նահատակաց եկեղեցու հոգևոր հովիվ Արժանապատիվ Տ. Աբրահամ քահանա Մանուկյանի։

Նույն օրը՝ «Պաղեստինյան կայսերական ուղղափառ ընկերություն» միջազգային հասարակական կազմակերպության նախագահ Սերգեյ Ստեպաշինի գլխավորած պատվիրակությանը։

Օգոստոսի 30-ին՝ Գերմանա-հայկական ֆորումի պատվիրակությանը՝ գլխավորությամբ ֆորումի նախագահ, Գերմանիայի Բունդեսթագի պատգամավոր Ալբերտ Վայլերի։

Սեպտեմբերի 2-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին է այցելել Ճապոնիա-Հայաստան խորհրդարանական բարեկամության լիգայի նախագահ Սեիշիրո Էտոյի գլխավորած պատվիրակությունը։

Սեպտեմբերի 13-ին՝ Մայր Աթոռում սեպտեմբերի 11-15-ը անցկացվող Արևելյան ծեսի ուսումնասիրության ընկերության 6-րդ միջազգային գիտաժողովի մասնակիցներին:

Սեպտեմբերի 17-ին՝ Ֆրանսիայից ժամանած բժիշկների խմբին՝ ուղեկցությամբ դոկտ. Ժան Պիեռ Բերբերյանի:

Սեպտեմբերի 20-ին՝ Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական առաքելությունն ավարտող Իսրայելի արտակարգ և լիազոր դեսպան Շմուել Մեիրոմին:

Սեպտեմբերի 22-ին՝ Կանադայի Հայոց թեմի ուխտավորներին՝ ուղեկցությամբ առաջնորդ Գերշ. Տ. Աբգար եպիսկոպոս Հովակիմյանի:

Սեպտեմբերի 23-ին՝ Հայաստանի Հանրապետությունում Վրաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Գիորգի Սագանելիձեին:

Սեպտեմբերի 25-ին՝ Արգենտինայի Հայոց թեմի տիկնանց միության անդամներին:

Նույն օրը՝ Արցախի Քարվաճառի շրջանի հինգ գյուղերից 24 դպրոցականների՝ ուղեկցությամբ Դադիվանքի վանահայր՝ Արժանապատիվ Տ. Հովհաննես քհն. Հովհաննիսյանի, որոնց Հայոց Հայրապետը սեպտեմբերի 6-9-ը Արցախ կատարած այցի ժամանակ հրավիրել էր Մայր Աթոռ:

Նույն օրը՝ Արգենտինայի Մխիթարյան վարժարանի սաներին՝ ուղեկցությամբ մայրենի լեզվի ուսուցչուհի տիկ. Ձեփյուռ Տիսչեկենյանի:

Սեպտեմբերի 26-ին՝ Հայաստանում իր ծառայությունը ավարտած Քենթրբերիի Արքեպիսկոպոսի պատվիրակ և անգլիկան համայնքի հոգևոր սպասավոր Հայր Ջոն Բարքրին:

Հոկտեմբերի 3-ին՝ Հայաստանի Հանրապետության Առողջապահության նորանշանակ նախարար Լևոն Ալթունյանին՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի «Իզմիրլյան» բժշկական կենտրոնի գործադիր տնօրեն Արմեն Չարչյանի:

Նույն օրը՝ Ուրուգվայի Արևելյան Հանրապետության համալսարանի ռեկտոր Ռոբերտո Մարկարյանի գլխավորած պատվիրակությանը:

Հոկտեմբերի 4-ին՝ Գերմանիայի Բունդեսթագի փոխխոսնակ Յոհաննես Ձինգհամերի և «Կարդինալ Հյոֆներ» միության նախագահ Կառլ Շիվեռլինգի գլխավորած պատվիրակությանը:

Նույն օրը՝ Հայաստանի Հանրապետության Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նորանշանակ նախարար Վահան Մարտիրոսյանին:

Հոկտեմբերի 5-ին՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոնի պատվիրակությանը:

Հոկտեմբերի 10-ին՝ Հայաստանի Հանրապետությունում Հունաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Նաֆսիկա Նենսի Էվա Վրայլային:

Նույն օրը՝ 2015 թ. մարտին ղարաբաղա-ադրբեջանական զորքերի շփման գծում ադրբեջանական կողմի սադրիչ գործողությունների ժամանակ ծանր վիրավորում ստացած ավագ լեյտենանտ Սարգիս Գաբրիելյանին՝ ուղեկցությամբ

ՀՀ ՋՈՒ հոգևոր առաջնորդ Գերշ. Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի և Հնդկահայոց հոգևոր հովիվ Հոգշ. Տ. Մովսես աբեղա Սարգսյանի:

Հոկտեմբերի 11-ին՝ Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նորանշանակ նախարար Վիգեն Սարգսյանին՝ ուղեկցությամբ ՀՀ ՋՈՒ հոգևոր առաջնորդ Գերշ. Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի:

Հոկտեմբերի 14-ին՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Արթուր Դավթյանին:

Հոկտեմբերի 16-ին՝ 14-րդ ‹‹IEEE EWDTS 2016՝ Արևելք-Արևմուտք. նախագծում և թեստ›› միջազգային գիտաժողովի մասնակիցներին՝ ուղեկցությամբ գիտաժողովի նախագահ, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Երվանդ Զորյանի:

Հոկտեմբերի 17-ին՝ Հայաստանի Հանրապետության Մշակույթի նորանշանակ նախարար տիար Արմեն Ամիրյանին:

Հոկտեմբերի 23-ին՝ Մալթայի Ինքնիշխան Մարտական Ուխտի իշխան և մեծ վարպետ Ֆրա Մեթյու Ֆեստինգի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Վատիկանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Միքայել Մինասյանի և ՀՀ-ում Մալթայի Ինքնիշխան Մարտական Ուխտի արտակարգ և լիազոր դեսպան Ժան-Միշել Ուղուրլյանի:

Դեկտեմբերի 5-ին՝ նորաօծ ինը քահանաների Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Գերշ. Տ. Հովնան եպիսկոպոս Հակոբյանի առաջնորդությամբ:

Դեկտեմբերի 6-ին՝ Վրաց Ուղղափառ Եկեղեցու Ախալքալաքի և Կումուրդոյի միտրոպոլիտ Նիկոլոզին՝ ուղեկցությամբ Սամցխե-Ջավախքի և Ծալկայի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Հոգշ. Տ. Բաբկեն վարդապետ Սալբիյանի:

Դեկտեմբերի 8-ին՝ Հայաստանի Հանրապետությունում Հնդկաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Յոգեշվար Սանգվանին:

Դեկտեմբերի 13-ին՝ ՌԴ պետական Էրմիտաժի տնօրեն Միխայիլ Պիոտրովսկուն:

բ. Այցելություններ

Ապրիլի 4-ին Նորին Սրբությունը այցելել է ՀՀ ՊՆ կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ՝ տեսակցելու և իր հայրապետական օրհնությունն ու զորակցությունը բերելու ապրիլյան պատերազմի օրերին վիրավորված զինծառայողներին:

Ապրիլի 13-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Հայաստան ժամանած Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը եկեղեցական և աշխարհական շքախմբով մեկնել են Արցախ՝ իրենց զորակցությունը բերելու ԼՂՀ իշխանություններին, արցախահայությանը և հայրենյաց պաշտպան զինվորներին: Հաջորդ օրը Գարեգին Բ. Ամենայն Հայոց և Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսների նախագահությամբ Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցում կատարվել է Հանրապետական մաղթանք Արցախի ապահովության և խաղաղության համար:

Օգոստոսի 16-18-ը Նորին Սրբությունը, ուղեկցությամբ Գերշ. Տ. Եզրաս արք. Ներսիսյանի, հայրապետական այցով մեկնել է Հնդկաստանի Հանրապետություն՝ Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարան:

Սեպտեմբերի 6-8-ը՝ Արցախում ԳՀԽ գումարման առիթով գտնվելու օրերին, Վեհափառ Հայրապետը ԳՀԽ անդամների հետ, ուղեկցությամբ ՊԲ նախարարի տեղակալ՝ գեներալ-մայոր Վարդան Բալայանի, այցելել է ԼՂՀ Պաշտպանության բանակի N զորամաս և մարտական դիրքեր, ուր հանդիպում է ունեցել հրամանատարական կազմի և զինվորների հետ՝ հայրապետական իր օրհնությունը բաշխելով առաջնագծում իրենց ծառայությունն իրականացնող ՊԲ հրամանատարներին և զինվորներին:

Սեպտեմբերի 23-ին Վեհափառ Հայրապետն այցելեց Էջմիածնի և Երևանի ծննդատներ՝ հայրապետական իր օրհնությունը բաշխելու նորածիններին ՀՀ անկախության 25-րդ տարեդարձի առիթով:

Հոկտեմբերի 18-ին Վեհափառ Հայրապետը «Դեսպաններ առանց սահմանների» ծրագրի շրջանակներում այցելել է Հայաստանի Հանրապետությունում Լիբանանի Հանրապետության դեսպանատուն և հանդիպում ունեցել ՀՀ-ում հավատարմագրված օտարերկրյա դեսպանների և դիվանագիտական առաքելությունների ղեկավարների հետ:

Նոյեմբերի 21-23-ը Վեհափառ Հայրապետը Հայրապետական շքախմբով այցելել է Մոսկվա՝ մասնակցելու Մոսկվայի և Համայն Ռուսիո Կիրիլ Ա. Պատրիարքի ծննդյան 70-ամյակի առիթով կազմակերպված միջոցառումներին:

2. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ, ՆԱՄԱԿՆԵՐ

Անցյալ տարի հրապարակվել է Հայրապետական 38 կոնդակ. որոնցից 2-ը՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ», 18-ը՝ «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ», 19-ը՝ «Սուրբ Ներսես Շնորհալի» շքանշանների տվչության և 1 կոնդակ Աստվածաշնչի տպագրության 350-ամյակի առիթով:

Շնորհվել են Հայրապետական 71 օրհնության գրեր, խոսքեր են հղվել ազգային և պետական տոների (10 ուղերձ), միջեկեղեցական հանդիպումների և մի շարք հանդիսությունների, միջոցառումների ու գիտաժողովների առիթով:

2016 թվականի ընթացքում Դիվանատանը ստացվել է 3998 նամակ և պատրաստվել ու առաքվել է 2951-ը:

3. ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐ

Նախորդ տարում շարունակվել են Ամենայն Հայոց Կաթողիկոսության բնականոն հարաբերությունները Նվիրապետական Աթոռների հետ:

2016 թվականին Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը երկիցս ժամանել է Հայաստան՝ ապրիլին Արցախ այցելելու և սեպտեմբերին՝ ՀՀ Անկախության 25-րդ տարեդարձին նվիրված միջոցառումներին մասնակցելու համար:

Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արք. Մութաֆյանի հիվանդության պայմաններում 2016 թ. հոկտեմբերի 20-ին Կ. Պոլսի կրոնական ընդհանուր համագումար-ժողովը որոշում է կայացրել հանգստի կոչել Ամենապատիվ Պատրիարքին՝ Պատարագի համապատասխան հատվածում հիշատակելով նրան որպես «ի Հանգստեան կոչեցեալ Պատրիարքն Հայոց Թուրքիոյ...»: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը շարունակել է հետևել Կ. Պոլսի պատրիարքությունում ընթացող զարգացումներին՝ պարբերաբար հաղորդակցվելով պատրիարքական ընդհանուր փոխանորդ Գերշ. Տ. Արամ արք. Աթեշյանի հետ, ով տարբեր առիթներով պարբերաբար այցելել է Հայաստան:

Երուսաղեմի Հայոց Պատրիարքության հետ ևս շարունակվել է հաղորդակցությունը՝ ի նպաստ Սուրբ Տեղյաց պահպանության: Անցած տարի Երուսաղեմի Հայոց Պատրիարքի խնդրանքին ընդառաջ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ Գերագույն Հոգևոր Խորհուրդը որոշել է աջակցել Երուսաղեմի Հայոց Պատրիարքությանը Տիրոջ Սուրբ Գերեզմանի նորոգության հարցում: Նկատի ունենալով, որ անհրաժեշտ գումարը պետք է ապահովեին 3 եկեղեցիները (ՀԱԵ, ՀՈՒԵ և ԿԵ), Մայր Աթոռը Երուսաղեմի Հայոց Պատրիարքության հաշվեհամարին է փոխանցել հայկական կողմից պահանջվող 1 մլն եվրո մասնաբաժինը:

Մայր Աթոռը, հայրենի իշխանությունների հետ գործակցաբար, Երուսաղեմի Հայոց Պատրիարքի դիմումի հիման վրա աջակցել է նաև Պատրիարքության ՀՀ քաղաքացի հանդիսացող միաբանների և ուսանողների պարտադիր զինվորական ծառայության տարկետման տրամադրմանը:

Երուսաղեմի Հայոց Պատրիարքության և Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության հետ համագործակցությունը արդյունավետ է եղել նաև Ազգային-Եկեղեցական ժողովի կազմակերպիչ և Եկեղեցու կառավարման բարձրագույն մարմինների կանոնադրությունների մշակման հանձնախմբի կազմակերպման, ինչպես նաև ԱԵԺ և ԳՀԽ կանոնադրությունների նախագծերի մշակման աշխատանքներում:

4. ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐ ԵՒ ՊԱՇՏՕՆԵՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եկեղեցականության թիվը տարեսկզբին եղել է 753, որոնցից 52-ը՝ արքեպիսկոպոս և եպիսկոպոս, 51-ը՝ ծայրագույն վարդապետ և վարդապետ, 35-ը՝ աբեղա, 480-ը՝ քահանա, 138-ը՝ սարկավագ:

Անցյալ տարվա ընթացքում ձեռնադրվել են 19 ամուսնացյալ և 2 կուսակրոն քահանաներ, 31 սարկավագներ: Տարբեր պատճառներով կարգալույծ են հռչակվել 7 եկեղեցականներ (3 ամուսնացյալ և 4 կուսակրոն քահանաներ):

2016 թվականին դրսում ուսանող՝ Մայր Աթոռի միաբանների թիվը համալրվել է ևս 2-ով, ովքեր ուսումնառության են առաքվել Իտալիայի և Գերմանիայի կրթական հաստատություններ:

Անցնող տարում Մայր Աթոռի բաժիններում և ենթաբաժիններում աշխատել է 930 անձ:

5. ԵԿԵՂԵՑԻ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եկեղեցի-պետություն հարաբերությունները 2016 թ. ևս ընթացել են համագործակցության ոգով՝ մշակութային, կրթական, օրենսդրական, սոցիալական ոլորտներում:

Հայրենի իշխանության ներկայացուցիչները մասնակցել են Սուրբ Ծննդյան և Սուրբ Հարության տոնների առիթով մատուցված Հայրապետական Պատարագներին: Հայոց Բանակի տոնի առիթով մատուցված Ս. Պատարագին ներկա է գտնվել ՀՀ Զինված ուժերի հրամանատարական և սպայական կազմը՝ Պաշտպանության նախարարի գլխավորությամբ:

Ապրիլի 4-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Հայրենիքի և հայրենյաց պաշտպան զինվորների համար կատարվել է միասնական աղոթք, որին մասնակցել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը:

ՀՀ պետական իշխանությունների հետ համատեղ կազմակերպվել է Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի այցը Հայաստան, որի շրջանակներում ՀՀ պետական պաշտոնյաները, ՀՀ նախագահի գլխավորությամբ, մասնակցել են Ս. Էջմիածնում մատուցված Հայրապետական Պատարագին, Երևանում տեղի ունեցած խաղաղության էկումենիկ աղոթքին, Զվարթնոց օդանավակայանում Հռոմի Պապի դիմավորման և հրաժեշտի արարողություններին:

Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակի առիթով Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում կատարվել է Հանրապետական մաղթանք՝ հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ու Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի և ներկայությամբ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի, ՀՀ ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանի, ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանի: Անկախության 25-ամյակին նվիրված Զորահանդեսին մասնակցել են նաև ՀՀ Զինված ուժերում սպասավորող զնդերեցները:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպումներ է ունեցել ՀՀ նախագահի, ՀՀ վարչապետի, ինչպես նաև նորանշանակ նախարարների հետ՝ քննարկելով ազգային-եկեղեցական մի շարք հարցեր:

ՀՀ իշխանությունների հետ համագործակցության արդյունքում՝ ՀՀ Կրթության և գիտության, ինչպես նաև Մշակույթի նախարարությունների կողմից կրթական հաստատություններում և գրադարաններում կազմակերպվել են Սրբոց Վարդանանց և Սրբոց Թարգմանչաց տոներին նվիրված միջոցառումներ:

ՀՀ Արդարադատության նախարարության հետ շարունակվել են Եկեղեցուն հուզող և օրենսդրական լուծումներ պահանջող մի շարք նախագծերի մշակման աշխատանքները:

2016 թ. ընթացքում ինքնակամ շինության կարգավիճակ ունեցող մի շարք եկեղեցիներ ձևակերպվել են Մայր Աթոռի անունով: Սույն գործընթացը շարունակվում է:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ մի շարք եկեղեցականներ ընդգրկվել են ՀՀ պետական տարբեր հանձնախմբերում՝ Եկեղեցու դիրքորոշումը ներկայացնելու և հանձնախմբերի աշխատանքներին մասնակցելու համար: Մայր Աթոռը ներկայացուցիչներ է ունեցել նաև ազգային-եկեղեցական զանազան հոբելյանների ու հիշատակությունների առիթներով ստեղված պետական հանձնախմբերում:

6. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Անցյալ տարի բնականոն կերպով շարունակվել է նաև Եկեղեցու ժողովական կյանքը:

Այսպես.

1. 2016 թ. գումարվել են Գերագույն Հոգևոր Խորհրդի 4 ընդլայնված ժողովներ (փետրվար 16-20, հունիս 28-30, սեպտեմբեր 6-9, հոկտեմբեր 29-ից նոյեմբեր 3), որոնցից սեպտեմբեր 6-9-ի Գերագույն Հոգևոր Խորհրդի ժողովը առաջին անգամ գումարվել է Արցախում, իսկ հոկտեմբեր 29-ից նոյեմբեր 3-ը՝ ԱՄՆ Հայոց Արևելյան թեմում:

2. Մայր Աթոռում գումարվել են նաև հայաստանյան թեմական առաջնորդների և Մայր Աթոռի պաշտոնավարող եպիսկոպոսների ամենամյա հավաքներ:

3. Մայիսի 26-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի է ունեցել քահանայից ավանդական ամենամյա հավաքը, որի ընթացքում Վեհափառ Հայրապետի կողմից որոշ քահանաներ արժանացել են լանջախաչի և ծաղկյա փիլոնի:

Բացի հիշյալ ժողովները, գումարվել են նաև Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից ստեղծված հանձնախմբերի և խորհուրդների ժողովներ:

2016 թվականին գումարվել են Թեմական կանոնադրությունների լրամշակման և խմբագրման հանձնախմբի՝ 24, Կարգապահական հանձնախմբի՝ 3, Վարդապետական և Ծայրագույն վարդապետական թեզերի պաշտպանության հանձնախմբի՝ 4, Եկեղեցու կառավարման բարձրագույն մարմինների կանոնադրությունների մշակման հանձնախմբի՝ 7, Ճարտարապետաշինարարական խորհրդի՝ 3, Մայր Աթոռի Միջեկեղեցական աստվածաբանական խորհրդի՝ 1 և շաբաթական երկու անգամ Վանական խորհրդի նիստեր:

7. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ - ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔ

Անցյալ տարի մեր Սուրբ Եկեղեցին շարունակել է իր առաքելությունն իրականացնել նաև հասարակական և հոգևոր-մշակութային ոլորտներում:

Հունվարի 24-ին Վեհափառ Հայրապետի օրհնությամբ Գևորգյան հոգևոր ճեմարանում տեղի է ունեցել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան, Քահանայից պատրաստության լսարանի պատասխանատու Հոգշ. Տ. Ներսեհ վարդապետ Խալաթյանի՝ գեղանկարի և գրաֆիկայի անհատական ցուցահանդեսի բացման արարողությունը, որի շրջանակներում ներկայացվել են 45 նկարներ:

Փետրվարի 28-ին Վեհափառ Հայրապետի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Ռուբեն Սևակ» թանգարանում տեղի է ունեցել ոգեկոչման հանդես՝ նվիրված Ռուբեն Սևակի հիշատակին:

Մարտի 31-ին օրհնությամբ Վեհափառ Հայրապետի և օժանդակությամբ Աֆոն Սուրբ լեռան ռուսական սրբավայրերի աջակցման բարեգործական հիմնադրամի՝ Մայր Աթոռի «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանում տեղի է ունեցել «Ավանդական արժեքներ. ժամանակակից հասարակության զարգացման հոգևոր-բարոյական ուղենիշերը» խորագրով միջազգային գիտաժողովը:

Ապրիլի 18-20-ը Ծաղկաձորի Գրողների տանը Վեհափառ Հայրապետի օրհնությամբ, Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի նախաձեռնությամբ, ԵՀԽ Կլոր Սեղան հիմնադրամի և ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի օժանդակությամբ տեղի է ունեցել «Երբ ԵՍ-ը դառնում է ՄԵՆՔ» խորագրով եռօրյա համաժողովը: Այն ընթացել է «Հոգևոր աջակցություն ընտանիքներին» ծրագրի շրջանակում, որի նպատակն է դպրոցներում ծնողների և աշակերտության հետ քահանաների հանդիպումների միջոցով ուղենշել ընտանեկան հիմնախնդիրների հաղթահարման միջոցները և տարաբնույթ ճգնաժամերից խուսափելու հոգևոր ճանապարհը: Համաժողովին մասնակել են շուրջ 30 հոգևորականներ, ՔԴԿ աշխատակիցներ և հյուրեր:

Մայիսի 21-ին «Թանգարանների գիշեր» միջոցառման շրջանակներում Վեհափառ Հայրապետի օրհնությամբ Մայր Աթոռի «Ռուբեն Սևակ» թանգարանում տեղի է ունեցել գեղանկարիչ Վ. Սուրենյանցի «Աստվածամայրը Մանկան հետ» սրբապատկերի ցուցադրումը:

Նույն օրը Մայր Աթոռի «Ռուբեն Սևակ» թանգարանում ներկայացվել է բանախոսություն՝ «Օրհնություն նորանկախ Հայաստանին» խորագրով: Բանախոսն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արխիվի և Թանգարանների տնօրեն Արժանապատիվ Տ. Ասողիկ քահանա Կարապետյանը:

Նույն օրը Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի ավանդատուն-թանգարանում բացվել է «Օրհնություն նորանկախ Հայաստանին» խորագրով ցուցահանդեսը:

Ցուցահանդեսին ներկայացվել են՝

ա. Անկախության հռչակման և առաջին տարիների գործընթացների հետ կապված Կաթողիկոսական դիվանի վավերագրեր և նյութեր,

բ. Երանաշնորհ Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետի գրասեղանի Եռագույն դրոշակը,

գ. Ամենայն Հայոց Կաթողիկոսներին տրված նորանկախ Հայաստանի պետական պարգևները,

դ. Հայոց Եկեղեցու «Ս. Գրիգոր Լուսավորիչ» բարձրագույն շքանշանի երկու տարբերակ՝ պատրաստված երջանկահիշատակ Տ. Տ. Գևորգ Ե. Սուրենյանց և Տ. Տ. Գևորգ Զ. Չորեքչյան Հայրապետների գահակալության տարիներին:

Մայիսի 24-ին Նորին Սրբության նախագահությամբ Գևորգյան հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի է ունեցել մեծարման ցերեկույթ՝ նվիրված Գևորգյան հոգևոր ճեմարանի դասախոսներ Արժանապատիվ Տ. Եղիշե

ավագ քահանա Սարգսյանին, Պարգև Շահբազյանին ու բ.գ.դ. պրոֆեսոր Պետրոս Բեդիրյանին:

Հունիսի 13-17-ը անցկացվել է կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների համաժողով (տե՛ս էջ 40):

Հունիսի 19-ին Վեհափառ Հայրապետը մասնակցել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածքում Մայր Աթոռի, Բուշ-դյու-Ռոն նահանգի վարչական խորհրդի նախագահ Ժան-Նոել Գերինիի և «Բարձունք 5165» ֆրանսահայ բարեգործական կազմակերպության համատեղ ջանքերով հիմնադրված «Էջմիածին 13» ֆրանսիական դիսպանսերի 10-ամյակին նվիրված միջոցառմանը:

Հուլիսի 13-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հանդիսությունների դահլիճում Վեհափառ Հայրապետի օրհնությամբ տեղի է ունեցել «Ոսկե ծիրան» միջազգային ամենամյա կինոփառատոնի համար նախատեսված «Եղիցի լույս» մրցանակի հանձնման արարողությունը: Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից սահմանված պատվավոր մրցանակը շնորհվել է անվանի կինոռեժիսոր Ռոման Բալայանին:

Սեպտեմբերի 14-ին Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ տեղի է ունեցել Աշտարակի Հայորդյաց տան բացման արարողությունը: Այն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո գործող յոթերորդ Հայորդյաց տունն է և հիմնադրվել է «Գուլամիրյան» հիմնադրամի միջոցներով:

Սեպտեմբերի 20-ին՝ ՀՀ անկախության 25-ամյակի առիթով, Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում կատարվել է Հանրապետական մաղթանք (տե՛ս էջ 29): Սեպտեմբերի 24-ին՝ Ս. Գևորգ զորավարի տոնին, Նորին Սրբության նախագահությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի դահլիճում տեղի է ունեցել հանդիսություն:

Սեպտեմբերի 29-ին Նորին Սրբության հանդիսապետությամբ և ՀՀ Կրթության ու գիտության նախարար տիար Լևոն Մկրտչյանի մասնակցությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի հանդիսությունների սրահում տեղի է ունեցել «Լավագույն ուսուցիչ» ամենամյա մրցույթի 2016 թ. հանդիսավոր մրցանակաբաշխությունը:

Հոկտեմբերի 6-8-ը՝ Սրբոց Թարգմանչաց տոնին ընդառաջ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսչության և «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանի տնօրինության նախաձեռնությամբ Մայր Աթոռում անցկացվել է «Սուրբ Գրքի հայերեն թարգմանությունն ու հրատարակությունը պատմության հոլովույթում» խորագրով միջազգային գիտաժողովը՝ նվիրված Աստվածաշնչի հայերեն տպագրության 350-ամյակին:

Հոկտեմբերի 17-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանում տեղի է ունեցել «Անցյալի պահպանություն՝ հանուն ապագայի» խորագրով հայկական գրադարանների միջազգային չորրորդ համաժողովի հանդիսավոր բացումը, որը նվիրված էր հայերեն Աստվածաշնչի առաջին տպագրության 350-ամյակին:

Նոյեմբերի 22-ին Մոսկվայի Քրիստոս Ամենափրկիչ տաճարի եկեղեցական ժողովների դահլիճում Նորին Սրբությունը ներկա է գտնվել Մոսկվայի և Համայն

Ռուսիո Կիրիլ Ա. Պատրիարքի ծննդյան 70-րդ հոբելյանական տարեդարձի առիթով կազմակերպված պաշտոնական համերգին:

8. ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2016 թվականի կարևորագույն իրադարձությունը, թերևս, Հռոմի Ֆրանցիսկոս Պապի այցն էր Հայաստան: Այս առիթով տեղի են ունեցել մի շարք միջեկեղեցական և մշակութային միջոցառումներ:

Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապը Հայաստան է ժամանել Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի և ՀՀ նախագահի հրավերով հունիսի 24-26-ը:

Այցի խորագիրն էր՝ «Այց առաջին քրիստոնյա երկիր»:

Այցի ընթացքում անցկացվել են հետևյալ միջոցառումները.

• Բարիգալստյան՝ Հրաշափառի արարողություն Մայր Աթոռում

• Քաղաքավարական այց ՀՀ նախագահին և հանդիպում ՀՀ հասարակական տարբեր ոլորտների ներկայացուցիչների հետ

• Հանդիպում Մայր Աթոռի եպիսկոպոսաց դասի հետ

• Առանձնազրույց Հռոմի Պապի և Վեհափառ Հայրապետի միջև

• Այց Ծիծեռնակաբերդ

• Հռոմի Պապի կողմից մատուցված Սուրբ Պատարագ Գյումրիի հրապարակում

• Այց Գյումրիի Սուրբ Յոթ Վերք հայ առաքելական և Սրբոց Նահատակաց կաթոլիկ եկեղեցիներ

• Էկումենիկ արարողություն և Խաղաղության աղոթք Հանրապետության հրապարակում

• Հայրապետական Սուրբ Պատարագ Բաց Խորանում

• Էկումենիկ ճաշկերույթ

• Հանդիպում Հայ Եկեղեցու բարերարների հետ

• Համատեղ հայտարարության ստորագրում Մայր Աթոռում

• Աղոթք Խոր Վիրապի վանքում:

Հրավիրյալների մասնակցություն.

Հռոմի Պապի պատվիրակությունը բաղկացած էր 45 հոգուց:

Միջոցառումներին մասնակցել են Մայր Աթոռի 44 եպիսկոպոսներ և 5 առաջնորդական տեղապահ վարդապետներ, ինչպես նաև՝ ներկայացուցիչներ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունից:

Միջոցառումներին մասնակցություն են բերել 145 բարերարներ և թեմական 40 պատվիրակներ:

Հավատացյալների մասնակցություն.

Մոտավոր հաշվարկներով հրապարակային միջոցառումներին մասնակցել են՝

Հրաշափառի արարողություն՝ 4000 մարդ,

Գյումրի քաղաքում մատուցված Ս. Պատարագ՝ 20-22.000,

Հանրապետության հրապարակում կատարված Էկումենիկ աղոթք՝ մինչև 45.000,

Կիրակնօրյա Ս. Պատարագ՝ շուրջ 17.000 մարդ, որոնցից 2.000-ը հրավիրյալներ, 8.000 ուխտավորներ և երիտասարդներ և 5-7.000 քաղաքացիներ:

Լուսաբանում.

Հավատարմագրված լրագրողներ՝ 600, որոնցից 300-ը արտասահմանյան լրատվամիջոցների ներկայացուցիչներ են:

Հռոմի պապի այցի մանրամասներին անդրադարձած հեղինակավոր լրատվամիջոցներն են՝ “Associated Press”, “Reuters”, “Deutsche Welle”, BBC, “Agence France-Presse” գործակալությունները, CNN, RT, “Euronews”, “France 24”, “Al Jazeera” հեռուստալիքները, “Washington Post”, “New York Times”, “Guardian”, “Independent”, “Wall Street Journal” թերթերը և հարյուրավոր այլ ԶԼՄ-ներ ամբողջ աշխարհից:

Անդրադարձներ ըստ երկրների՝

Իտալիա 50 և ավելի,

Գերմանիա 20 և ավելի,

Ֆրանսիա 20 և ավելի,

Ռուսաստան 20 և ավելի,

Իրան, Եգիպտոս, Լիբանան և Սիրիա 30 և ավելի,

Թուրքիա 40 և ավելի:

Մայր Աթոռի տեղեկատվական կենտրոնի կողմից նախապատրաստվել են Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ հարցազրույցներ “Al Mayadeen” արաբական հեռուստաընկերությանը, լիբանանյան HEBDO ամսագրին, «Ֆրանկֆուրտեր Ալմայնե ցայթունգե» թերթին և իտալական SIR լրատվական գործակալությանը:

Ապահովվել է տեղական հեռուստաընկերություններով ուղիղ եթեր հեռարձակվող միջոցառումների մեկնաբանությունը:

Այցի առիթով եկեղեցականների կողմից տրվել են 40-ից ավելի հարցազրույցներ տեղական և արտասահմանյան լրատվամիջոցներին:

Այցի օրերին Արժ. Տ. Վահրամ քհն. Մելիքյանը մասնակցել է երեք ճեպազրույցների և պատասխանել լրագրողների հարցերին:

Ընթացիկ իրադարձությունների վերաբերյալ հրապարակվել են 10 հաղորդագրություններ:

Ֆրանցիսկոս պապի այցելությունից զատ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը շարունակել է միջեկեղեցական ոլորտում իր բնականոն գործունեությունը:

Այսպես՝

Մայիսի 7-9-ը Վեհափառ Հայրապետը այցելել է Վատիկան, հանդիպում ունեցել Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի հետ: Այցի ընթացքում քննարկվել են Հայ և Կաթոլիկ Եկեղեցիների գործակցությանն առնչված հարցեր, և Նորին Սրբության կողմից Ֆրանցիսկոս Պապին ուղղվել է 2015 թվականին Հայաստանում Ցեղասպանության հիշատակի արարողություններին մասնակցելու հրավեր: Քննարկվել են նաև Վատիկանում ապրիլի 12-ին կազմակերպվող հիշատակի արարողությունների հետ կապված հարցեր:

Հունվարի 27-ից փետրվարի 3-ը Հնդկաստանի Կերալա քաղաքում տեղի ունեցած Կաթոլիկ և Հին Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների միջև պաշտոնական աստվածաբանական երկխոսության միացյալ միջազգային համաժողովին Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ներկայացրել են Գերշ. Տ. Հովակիմ եպս. Մանուկյանը և Հոգշ. Տ. Շահե վրդ. Անանյանը: Համաժողովի մասնակիցներն առանձին հանդիպումով քննարկել են ընդհանուր խնդիրներ, որի ժամանակ Գերշ. Տ. Հովակիմ եպս. Մանուկյանը ներկայացրել է Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով Մայր Աթոռում կազմակերպվելիք միջոցառումները, ինչպես նաև անդրադարձել Ամենայն Հայոց Կաթողիկոսի գործունեությանը՝ որպես Եկեղեցիների համաշխարհային խորհրդի համանախագահի:

Մարտի 31-ից ապրիլի 3-ը Մշակույթի դիվանագիտական ինստիտուտ միջազգային կազմակերպության՝ «Աջակցություն միջազգային խաղաղությանը միջկրոնական երկխոսության միջոցով» խորագիրը կրող գիտաժողովին Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ներկայացրել է Գերշ. Տ. Արմաշ եպս. Նալբանդյանը:

Մայիսի 13-14-ը Ժնևում «Կրոնները հանուն խաղաղության» միջկրոնական գագաթնաժողովին մասնակցել է Տ. Արմաշ եպս. Նալբանդյանը:

Հուլիսի 2-8-ը Ժնևում Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնական կոմիտեի հանդիպմանը մասնակցել է Գերշ. Տ. Վիգեն արք. Այքազյանը և տիկին Փոլա Տեր-Մաթոյանը:

Սեպտեմբերի 3-5-ը Ֆրեյզինգում (Գերմանիա) տեղի ունեցած՝ “Renovabis” կազմակերպության «Եկեղեցի, ԶԼՄ-ներ, հասարակական կարծիք» խորագրով միջազգային 18-րդ համագումարին Մայր Աթոռ Ս. էջմիածինը ներկայացրել են Գերշ. Տ. Մկրտիչ եպս. Պողոշյանը և տիար Կարեն Նազարյանը:

Սեպտեմբերի 3-6-ը Իտալիայի Բոզե վանքում տեղի ունեցած «Երանի խաղաղարարներին» խորագրով կոնֆերանսին Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ներկայացրել է Տ. Ադամ քին. Մակարյանը:

Սեպտեմբերի 7-9-ը Անտվերպում՝ Սան Էջիդիոյի «Խաղաղությունը ապագայում» խորագրով գագաթնաժողովին մասնակցել է Գերշ. Տ. Բագրատ եպս. Գալստանյանը:

Հոկտեմբերի 29-ին Գևորգ Զ. Չորեքչյանի անունը կրող շենքում տեղի է ունեցել «Քաղաքացիական հասարակության դերը հակամարտությունների խաղաղ կարգավորման գործընթացում» խորագրով կլոր սեղան-քննարկում:

Նոյեմբերի 18-19-ը Վիեննայում տեղի է ունեցել «Սիրիայում և Իրաքում տիրող իրավիճակը և կրոնների երկխոսությունն ու դրա անհրաժեշտությունը» խորագրով հանդիպում, որին մասնակցել է Տ. Արմաշ եպս. Նալբանդյանը:

Դեկտեմբերի սկզբին տեղի է ունեցել Եկեղեցիների եվրոպական կոնֆերանսի Ղեկավար մարմնի «Կրոնական փոքրամասնությունների հալածանքը Մերձավոր Արևելքի տարածաշրջանում» խորագրով հերթական նիստը: Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ժողովին ներկայացնում էր ԵԵԿ-ի ղեկավար մարմնի անդամ Գերշ. Տ. Եզնիկ արք. Պետրոսյանը:

Վերոհիշյալներից զատ, Մայր Աթոռի ներկայացուցիչները մասնակցություն են ունեցել միջեկեղեցական բազում այլ ժողովների:

9. ՀՈԳԵՎՈՐ-ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայր Աթոռի հոգևոր-կրթական հաստատություններում ընդհանուր թվով ուսանում են 243 սաներ, որից՝ 100-ը Գևորգյան հոգևոր ճեմարանում, 79-ը՝ Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցում, 34-ը՝ Հառիճավանքի Թրբանճյան ընծայարանում, 30-ը՝ Քահանայից պատրաստման եռամյա լսարանում: Գևորգյան հոգևոր ճեմարանում սովորում է նաև ազգությամբ սերբ 1 ուսանող:

Մայր Աթոռի հոգևոր-կրթական հաստատությունների վերատեսուչն է Գերշ. Տ. Գևորգ եպս. Սարոյանը: Գևորգյան հոգևոր ճեմարանի տեսուչն է Հոգշ. Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանը:

ա. *Գևորգյան հոգևոր ճեմարանում* ուսանում է 100 սան: Ճեմարանում դասավանդում է 69 դասախոս. նրանցից 42-ը աշխարհական են (9 դոկտոր, 21 թեկնածու, 6 մագիստրոս, 6-ը գիտական աստիճան չունեն), իսկ 27-ը՝ հոգևորական (3 թեկնածու, 18 մագիստրոս, 1 բակալավր, 5-ը գիտական աստիճան չունեն):

Անցյալ տարվա հոկտեմբերի 7-ին ՀՀ ԿԳՆ կողմից Գևորգյան հոգևոր ճեմարանին շնորհվել է ասպիրանտական կրթություն իրականացնելու արտոնագիր, որով ճեմարանն անցել է եռաստիճան կրթական համակարգի: Աշխատանքներ են տարվում 2017-2018 ուստարվա սկզբին ասպիրանտուրայի դասընթացներն սկսելու ուղղությամբ: ԳՀՃ բակալավրիատի շրջանավարտները, պետական քննության հետ մեկտեղ, արդեն պաշտպանում են նաև ավարտական աշխատանք:

Անցյալ տարում ևս շարունակվել է լույս տեսնել Գևորգյան հոգևոր ճեմարանի էլեկտրոնային պարբերականը, որտեղ հրապարակվել են ճեմարանի սաների հեղինակած գիտահանրամատչելի և քարոզչական բնույթի ստեղծագործություններ, ինչպես նաև ներկայացվել են ճեմարանական լուրերը:

Ճեմարանականների համար կազմակերպվել են համերգներ և դասախոսություններ՝ աստվածաբանական, հայագիտական, պատմաբանասիրական և այլ թեմաներով: Սաները նաև առիթ են ունեցել մասնակցելու արտաճեմարանական հանդիպումների:

բ. *Քահանայից պատրաստման լսարանի* տեսուչն է Հոգշ. Տ. Ներսեհ վարդապետ Խալաթյանը:

Քահանայից պատրաստման լսարանում ուսանում է 30 սան:

Անցյալ տարում ուսումն ավարտել են Գ. լսարանի 5 սաներ: Նրանցից 2-ը հոկտեմբերի 23-ին ձեռնադրվել են ամուսնացյալ քահանա և ծառայության նշանակվել Հայաստանյայց Եկեղեցու թեմերում:

գ. *Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցի* տեսուչն է Հոգշ. Տ. Հարություն աբդ. Կիրակոսյանը: Դպրանոցում ուսանում է 79 սան:

Դպրանոցում դասավանդում են 31 դասախոսներ՝ 8 հոգևորական և 23 աշխարհական, (3 դոկտոր, 15 թեկնածու, 7 մագիստրոս, 6-ը աստիճան չունեն): Դասերին զուգահեռ կազմակերպվել են տարբեր դասախոսություններ, ուխտագնացություններ, միջոցառումներ և հանդիպումներ երիտասարդական միություն-

ների, ուսանողների, հոգևոր, հասարակական և մշակութային գործիչների հետ: Դրանցից հատկապես առանձնանում են՝

Հունիսի 27-ին Վազգենյան հոգևոր դպրանոցի սաները Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Հռոմի Ֆրանցիսկոս Պապի՝ Խոր Վիրապի վանք կատարած այցելության ժամանակ հանդես են եկել մի քանի հոգևոր երգերի կատարումներով:

Հուլիսի 4-ին Վազգենյան հոգևոր դպրանոցում հյուրընկալվել են Նյու Յորքի Ս. Վլադիմիր օրթոդոքս ճեմարանի տեսուչ Տիար Ջոն Բեհրն ու Նյու Յորքի Ս. Ներսես ճեմարանի տեսուչ արժ. Տ. Մարտիրոս ավագ քհն. Չևյանը: Հյուրերը ներկայացրին իրենց ճեմարանները, որից հետո պատասխանեցին դպրանոցի սաների հարցերին:

Հոկտեմբերի 10-ին Աստվածաշնչի հայերեն տպագրության 350-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցում կազմակերպվել է բանախոսություն՝ «Հայերեն Աստվածաշնչի քննական բնագրի պատրաստման փորձեր» թեմայով, որով հանդես է եկել Գերմանիայի Էռլանգենի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի դեկան պրոֆեսոր Խաչիկ Գազերը:

դ. Հառիճի Թորբանճյան ընծայարանի տեսուչն է Հոգշ. Տ. Նշան աբդ. Հմայակյանը: Ընծայարանում դասավանդում են 22 դասախոսներ՝ 5 հոգևորական (բոլորն էլ մագիստրոս) և 17 աշխարհական: Ընծայարանն ունի 34 սան: Ծրագրային առարկաների ուսուցմանը զուգահեռ սաները սերտում են նաև քրիստոնեական, հոգևոր երաժշտություն և հոգևոր այլ առարկաներ:

10. ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Անցյալ տարում Մայր Աթոռը շարունակել է քարոզչական ընդգրկուն գործունեություն իրականացնել ազգային մեր կյանքի տարբեր ոլորտներում՝ հանրակրթության, երիտասարդության շրջանում, հայորդյաց տներում, զինված ուժերում և քրեակատարողական հիմնարկներում, ինչպես նաև իր հովանու ներքո գտնվող Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե, Խոր Վիրապ, Սևանա և Գեղարդա վանքերում, Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում:

ա. Հանրակրթական ոլորտ

ա.1 Նախադպրոցական

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արևադաշտի «Էօրնեկեան» մանկապարտեզը շարունակել է իր բնականոն գործունեությունը:

Մանկապարտեզում աշխատում են 3 մանկավարժներ, 11 վարչական և ուսումնաօժանդակ աշխատակիցներ: Մանկապարտեզ հաճախում են 2,5-5 տարեկան 45 սաներ՝ 25 աղջիկ և 20 տղա, գործում է 2 խումբ:

Առօրյա գործունեությանը զուգահեռ կազմակերպվել են միջոցառումներ՝ նվիրված Սուրբ Ծննդին, ՀՀ Բանակի օրվան, Տյառնընդառաջին, Մայրության և գեղեցկության տոնին, Ծաղկազարդին, Սուրբ Հարությանը, Համբարձմանը և աշնանը:

Մանկապարտեզում կատարվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ, ձեռք են բերվել տեխնիկական և ուսումնական նյութեր, կրթադաստիարակչական գրականություն:

Բացի «Էօրնեկյան» մանկապարտեզից՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը իր ծառայությունն է բերել ՀՀ տարածքում գործող այլ նախադպրոցական հաստատություններում:

Այսպես՝

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում շարունակվել են ձևավորվել հոգևոր անկյուններ, մանկավարժներին տրամադրվել են եկեղեցական տոներին նվիրված միջոցառումների սցենարներ՝ խրախուսելով եկեղեցական տոների նշումը մանկապարտեզներում: ՔԴԿ աշխատակիցները մասնակցել են մանկապարտեզներում կազմակերպվող տարաբնույթ միջոցառումներին՝ հատկապես Ս. Ծնունդին, Ծաղկազարդին և Ս. Հարությանը նվիրված ցերեկույթներին, որոնք ավանդաբար նշվում են գրեթե բոլոր նախադպրոցական ուսումնական հաստատություններում:

ՀՀ մի քանի տարածաշրջաններում կազմակերպվել են սեմինարներ և հոգևոր զրույցներ մանկապարտեզների տնօրենների, դաստիարակների և ծնողների համար, ինչպես նաև կատարվել են մանկապարտեզների օրհնության կարգեր:

ա.2 Միջնակարգ

«Էօրնեկեան» հանրակրթական դպրոցը անցյալ տարում ևս շարունակել է իր բնականոն գործունեությունը:

«Էօրնեկյան» հանրակրթական դպրոցի ընթացիկ գործունեությունը կազմակերպվել է հոգաբարձուների խորհուրդի կողմից՝ հաստատված աշխատանքային պլանի համաձայն: Տարեսկզբին դպրոցում ձևավորվել է 17 դասարան՝ 254 աշակերտով. նոր ուսումնական տարվա սկզբին ձևավորվել է 18 դասարան՝ 282 աշակերտով: Տարվա ընթացքում դպրոցում աշխատել են 41 մանկավարժներ և 18 ուսումնաօժանդակ աշխատողներ:

«Ձինիշյան հիշատակի հիմնադրամի» աջակցությամբ 2016 թ. հուլիսի 25-ից մինչև օգոստոսի 1-ը դպրոցի 57 աշակերտներ և 9 մանկավարժ-ջոկատավարներ ընդգրկվել են Հանքավանի «Ձեփյուռ» ամառային ճամբարում, որին մասնակցել են նաև Երևանի Գևորգ Էմինի անվան թիվ 182 ավագ դպրոցի աշակերտներն ու մանկավարժները:

Դպրոցի աշակերտներից 30-ը սոցիալապես անապահով են: Աշակերտները Մայր Աթոռից սոցիալական օգնություն են ստացել:

Տարվա ընթացքում աշակերտները մասնակցել են մի շարք հանրապետական և միջազգային հեղինակավոր մրցույթների, փառատոների և ֆորումների՝ դպրոց բերելով բազմաթիվ դիպլոմներ, պատվոգրեր, մեդալներ և մրցանակներ: Իրականացվել են բազմաթիվ միջոցառումներ՝ հայրենագիտական ճամփորդություններ, հեռուստամրցույթներ, բանավեճեր, կինոդիտումներ, քննարկումներ, սպորտլանդիաներ, հյուրընկալումներ, ցուցահանդեսներ, ցուցապաստառների մրցույթներ: Մեծ Պահքի շրջանում աշակերտները մանկավարժների և ծնողների

հետ Էջմիածնի Ս. Աստվածածին Եկեղեցում մասնակցել են խոկման արարողությանը: Աշակերտները դասարանային հերթականությամբ Մայր Տաճարում մասնակցել են նաև կիրակնօրյա Ս. Պատարագներին:

ՀՀ տարածքում գործող հանրակրթական դպրոցներում Մայր Աթոռը շարունակել է իր գործունեությունը:

Այսպես՝

ՀՀ դպրոցներում անցկացվել է Հայ Եկեղեցու պատմություն առարկայի օլիմպիադան, որի հանրապետական փուլի մասնակից բոլոր 115 աշակերտներին և մրցանակակիրներին տրամադրվել են հոգևոր գրականություն և պատվոգրեր:

Հոգևորականներն ու ՔԴԿ աշխատակիցները պարբերական հանդիպումներ են ունեցել ավագ դասարանների աշակերտների և նրանց ծնողների հետ, կազմակերպվել են նաև թեմատիկ սեմինարներ Հայ Եկեղեցու Պատմության առարկայի ուսուցիչների հետ: Իբրև ծրագրային նոր ուղղություն՝ իրականացվել են փորձի փոխանակման հանդիպումներ՝ նպատակ ունենալով ծրագրի հաջողության մասին իրազեկել այլ շահագրգիռ անձանց:

Ծրագրի շրջանակներում կայացել են կլոր սեղան-քննարկումներ՝ ընտանեկան խնդիրներով զբաղվող պետական կառույցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ներգրավմամբ, պատրաստվել են երեք տեսանյութեր, որոնք վերաբերում են ընտանեկան ներդաշնակ հարաբերություններին:

Մեծ Պահքի շրջանում իրականացվել են այցելություններ մի քանի տարածաշրջաններ և խոկման արարողություններ՝ Հայ Եկեղեցու պատմության ուսուցիչների մասնակցությամբ:

2016-2017 ուստարում ՀՀ հանրակրթական դպրոցներում Հայոց եկեղեցու պատմություն առարկան փորձաշրջանով ներդրվել է ՀՀ 83 դպրոցների 2-4-րդ դասարաններում, որոնց աշակերտները ապահովվել են Հայ Եկեղեցու պատմության դասագրքերով: Առարկան դասավանդող ուսուցիչների համար պարբերաբար կազմակերպվել են սեմինարներ՝ նրանց փոխանցելու համապատասխան գիտելիքներ և հմտություններ առարկայի դասավանդումը հաջողությամբ իրականացնելու համար: Հայ Եկեղեցու պատմություն առարկան տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչների մասնակցությամբ ապրիլին երկու հանդիպմամբ կազմակերպվել է քննարկում և իրականացվել գնահատում:

Աստվածաշնչի հայերեն տպագրության 350-ամյակի առիթով ՔԴԿ տարածաշրջանային պատասխանատուների համակարգմամբ ՀՀ մի շարք տարածաշրջաններում կազմակերպվել են դասախոսություններ, համաժողովներ, քննարկումներ և ցուցահանդեսներ ուսուցիչների և աշակերտների մասնակցությամբ:

Ուսումնական տարվա ընթացքում ՔԴԿ աշխատակիցները մասնակցել են դպրոցներում տարբեր առիթներով կազմակերպված գրական, գեղարվեստական և հոգևոր միջոցառումների, ինչպես նաև անցկացրել են հանդիպումներ մանկավարժների և աշակերտների հետ:

Կալկաթայի հայոց մարդասիրական ճեմարանի նախապատրաստական դասարանից մինչև 10-րդ դասարանի աշակերտները 42-ն են (15 աղջիկ և 27 տղա), որոնցից 36-ը Հայաստանից են, 4-ը՝ Իրանից և 2-ը՝ Հնդկաստանից:

Անցյալ տարի ճեմարանի ուսուցչական կազմը համալրվել է նոր անդամներով: Այստեղ շարունակում են դասավանդել Հայաստանից ժամանած ուսուցիչներ:

Անցած տարում կրթօջախն ապրել է իր բնականոն կյանքով, իրականացվել են շինարարական-վերանորոգչական աշխատանքներ:

Անցյալ տարվա ընթացքում ճեմարանում իրականացվել են տարաբնույթ միջոցառումներ՝ խթանելով աշակերտների գեղագիտական դաստիարակությունն ու զարգացումը: Այս նպատակով կազմակերպվել են նաև ուխտագնացություններ և հիշարժան հանդիպումներ:

Ինչպես վերը նշեցինք, հոկտեմբերի 6-ին Նորին Սրբության հանդիսապետությամբ տեղի է ունեցել Դավթյան օրիորդաց դպրոցի նոր մասնաշենքի հիմնարկեքի արարողությունը:

ա.3 Կիրակնօրյա

“World Vision” բարեգործական կազմակերպության աջակցությամբ 2016 թ. հունիսի 13-17-ը Աղվերանում իրականացվել է կիրակնօրյա կրթօջախների ուսուցիչների՝ Ս. Պատարագի խորհրդին նվիրված հնգօրյա համաժողով, որին մասնակցել են շուրջ 100 մանկավարժներ: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել է ուխտագնացություն դեպի ԺԲ. դարի՝ Զորուտի վանքի Ս. Աստվածածին խոնարհված եկեղեցի, ուր մատուցվել է Սուրբ և Անմահ Պատարագ:

Անցյալ տարի Տավուշի թեմում շարունակվել են իրականացվել «Մեկ համայնք, մեկ դպրոց» ծրագրի՝ ուսուցիչների վերապատրաստման դասընթացները:

բ. Քարոզչություն երիտասարդության շրջանում

Անցյալ տարի Հայ Եկեղեցու Երիտասարդաց Միավորումը (ՀԵԵՄ), որ համախմբում է թեմական երիտասարդական խորհուրդներին, կազմակերպել է տարբեր գիտաժողովներ և ուխտագնացություններ Հայաստանի սրբավայրեր: Մասնակցություն է ունեցել տարբեր բարեգործական, հասարակական միջոցառումներին, շարունակել է իրականացնել «Ճանաչենք մեր Եկեղեցին» ծրագիրը: Միաժամանակ շարունակվել է ՀԵՀԵՄ կանոնադրության նախագծի լրամշակումը:

Հռոմի Ֆրանցիսկոս Պապի՝ Հայաստան այցելության շրջանակներում գրասենյակի նախաձեռնությամբ թեմական և համալսարանական բազմաթիվ երիտասարդներ ներգրավվել են միջոցառումներում:

գ. Հայորդյաց տներ

Մայր Աթոռի քարոզչությունն իրականացվել է նաև 7 Հայորդյաց տների (Էջմիածին, Աշտարակ, Գյումրի, Վանաձոր, Երևանում՝ Նորք, Մալաթիա և Արաբկիր) և Մանրանկարչության արվեստի կենտրոնի միջոցով:

Էջմիածնի հայորդյաց տուն՝ 30 դասարան, որոնցում ուսանել է 600 սան.

Գյումրու հայորդյաց տուն՝ 7 դասարան, որոնցում ուսանել է 178 սան.
Աշտարակի հայորդյաց տուն՝ 14 դասարան, 310 սան.
Վանաձորի հայորդյաց տուն՝ 12 դասարան, 350 սան.
Նորքի հայորդյաց տուն՝ 34 դասարան և 5 համույթ, 791 սան.
Մալաթիայի հայորդյաց տուն՝ 17 դասարան, 351 սան.
Արաբկիրի հայորդյաց տուն՝ 24 դասարան, 549 սան.
Մանրանկարչության արվեստի կենտրոն՝ 3 դասարան, 60 սան:

Հայորդյաց տներում, ուր հաճախել են շուրջ 3067 երեխաներ, կազմակերպվել են բազմաբնույթ մեծ և փոքր միջոցառումներ, ցուցահանդեսներ, համույթների մենահամերգներ, հանդիսություններ, մրցույթներ և այլ միջոցառումներ: Սաները հանդես են եկել բազմապիսի միջոցառումներով՝ նվիրված ազգային-եկեղեցական և պետական տոներին:

Տարվա ընթացքում բոլոր հայորդյաց տներում միասին իրականացվել է 266 միջոցառում:

դ. ՀՀ Զինված Ուժեր

ՀՀ Զինված ուժերում (ԶՈՒ) ծառայում են թվով 51 հոգևոր սպասավորներ՝ 1 եպիսկոպոս, 2 աբեղա, 11 քահանա և 38 սարկավագ: ՀՀ ԶՈՒ հոգևոր սպասավորությունը արդյունավետ կազմակերպելու նպատակով գումարվում են եռամսյա ժողովներ, որտեղ հոգևոր սպասավորները կիսվում են իրենց խնդիրներով և ստանում նոր հանձնարարականներ:

Ս. Ծննդյան և Աստվածահայտնության տոնին հաջորդող օրերին՝ հունվար ամսվա ընթացքում, Մայր Աթոռի ջրօրհնյաց խաչը տարվել է Հայաստանի և Արցախի զորամասեր, որով օրհնվել են ողջ սահմանները: Զինվորներին Ս. Ծննդյան տոնի խորհրդին հաղորդակից դարձնելու նպատակով կատարվել են տոնական միջոցառումներ և ջրօրհնյաց արարողություններ:

ՀՀ ԶՈՒ հոգևոր առաջնորդության խնդրանքին ընդառաջ՝ Հայաստանի աստվածաշնչային ընկերությունը հաշվետու տարում ևս հրատարակել և տրամադրել է Նոր Կտակարաններ և «Աստվածաշնչի պատգամը. Աստվածաշնչային ընթերցումներ զինվորի համար» (Ս. Էջմիածին, 2013թ.) գիրքը, որը զորակոչերին զուգահեռ, ըստ նորակոչիկների թվաքանակի, բաշխվել են զորամասերում: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ՀՀ զինված ուժերն ապահովել վերոնշյալ հոգևոր գրականությամբ: Գրքերը տրվել են սպաներին ու ենթասպաներին՝ որպես անձնական, իսկ զինվորներին կողապահարանների քանակով՝ որպես զորամասի գույք՝ նպատակ ունենալով ՀՀ զինված ուժերի զորամասերում անձնակազմին ամրացնել քրիստոնեաբարոյական սկզբունքներով, նրանց մեջ ամրապնդել ճշմարիտ քրիստոնեական հավատը:

Հունվարի 27-ին ՀՀ զինված ուժերի բարձրագույն սպայական կազմը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մասնակցել է Ս. Պատարագին: Հայոց բանակի կազմավորման տոնի կապակցությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական սրբատառ կոնդակով «Ս. Ներսես Շնորհալի» հայրապետական շքանշանով պարգևատրվել են բարձրաստիճան սպաներ:

Հունվարի 28-ին Հայոց բանակի կազմավորման օրվա կապակցությամբ բոլոր զորամասերում կատարվել են տոնական միջոցառումներ, որին հավուր պատշաճի իրենց մասնակցությունն են բերել զորամասերի հոգևորականները:

2016 թվականի հունվար ամսից շարունակվել է Հայաստանի հանրային ռադիոյի օժանդակությամբ ձայնագրվող «Ձայն զորականաց»՝ հոգևոր թեմաներով ռադիոհաղորդաշարը՝ ՀՀ Զինված ուժերի զորամասերի ռադիոեթերի համար: Այդ ռադիոհաղորդումները պատրաստվում են ամբողջ տարվա համար և նախատեսված են շաբաթը մեկ կամ երկու անգամ զորամասերի ռադիոկապով եթեր հեռարձակվել:

2016 թ. փետրվարի 1-5-ը Լյուբլյաննայում տեղի ունեցած ՆԱՏՕ-ի և Եվրոպական բանակի հոգևոր առաջնորդների 27-րդ միջազգային կոնֆերանսին մասնակցել է ՀՀ ԶՈՒ հոգևոր առաջնորդ Գերշ. Տ. Վրթանես եպս. Աբրահամյանը:

Փետրվար ամսվա ընթացքում Սրբոց Ղևոնդյանց քահանայից և Ս. Վարդանանց տոների կապակցությամբ զորամասերում կազմակերպվել են միջոցառումներ:

Մարտ ամսին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի է ունեցել 2016 թվականի ՀՀ ԶՈՒ հոգևոր սպասավորների առաջին եռամյա ժողովը, որտեղ բանակային կորպուսների և միավորումների Ավագ գնդերեցները հանդես են եկել հաշվետու զեկույցով, այնուհետև քննարկվել են հաջորդ եռամյակի ընթացքում կատարվելիք ծրագրային հարցերը:

Մարտի 20-27-ն ընկած ժամանակահատվածում տարբեր զորամասերի զինվորականներ և զինվորներ, հոգևոր սպասավորների առաջնորդությամբ, զորամասերին մոտ գտնվող եկեղեցիներում մասնակցել են Ծաղկազարդի, Ավագ Շաբաթվա և Զատկի արարողություններին:

Մարտի 28-ին Պաշտպանության նախարարությունում տեղի է ունեցել կոնֆերանս «ՀՀ ԶՈՒ կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումները, առկա խնդիրներն ու դրանց լուծման ուղիները» թեմայով, որին մասնակցել է Գերշ. Տ. Վրթանես եպս. Աբրահամյանը:

ՀՀ Պաշտպանության նախարարության հետ համատեղ պատրաստվել է աղանդավորության, ինչպես նաև ենթամշակույթների ազդեցության տակ գտնվող զինծառայողների հայտնաբերման և նրանց հետ տարվող համալիր աշխատանքների ծրագիր՝ համագործակցելով տեղական ինքնակառավարման մարմինների, հանրակրթական դպրոցների, իրավապահ մարմինների և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմերի հոգևորականների հետ՝ նպատակ ունենալով մանրակրկիտ ուսումնասիրել զինապարտների նախազորակոչային ցուցակներում գրանցվածների կրոնական ուղղվածությունը, բացահայտել աղանդավորներին, ենթամշակույթների ներկայացուցիչներին, աղանդների քարոզչության ազդեցության տակ գտնվողներին:

Ապրիլյան քառօրյա պատերազմի ընթացքում ՀՀ ԶՈՒ գնդերեցները եղել են առաջնագծում իրենց զինվորի կողքին, ինչպես նաև պատերազմից հետո կազմակերպվել են մի շարք բարեգործական ծրագրեր՝ ի նպաստ զոհվածների և վիրավորների ընտանիքների:

Մայիսի 5-9-ը, ԼՂՀ-ում մայիսյան եռատոնի առիթով կազմակերպված միջոցառումների շրջանակում, հայոց բանակի պահապան Աշոտ Երկաթի Ս. Խաչը տարվել է սահմանային զորամասեր, և մարտական դիրքերում կատարվել է օրհնության կարգ:

Մայիսի 15-21-ը ՀՀ ԶՈՒ հոգևոր առաջնորդությունը հյուրընկալել է Մոսկվայի պատրիարքության, Ուկրաինայի Ուղղափառ Եկեղեցու՝ Ուկրաինայի զինված ուժերի և զորամիավորումների հետ համագործակցության Սինոդալ բաժնի նախագահ մետրոպոլիտ Ավգաճինի գլխավորած պատվիրակությանը:

Մատուռ կամ եկեղեցի ունեցող զորամասերում բանակի քահանաների մասնակցությամբ կատարվել են ժամերգություններ և Ս. Պատարագներ:

Սեպտեմբերի 5-ին ՊՆ վարչական համալիրում տեղի է ունեցել հանդիպում ՀՀ ԶՈՒ հոգևոր սպասավորների և Անգլիայից ժամանած բրիտանական բանակի հոգևոր սպասավորներ Ջերեմի Քլարքի և Ջեն Ռանսոմի միջև:

Սեպտեմբերի 21-ին ՀՀ Զինված ուժերի հոգևոր առաջնորդության գնդերեցները և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանները մասնակցել են ՀՀ անկախության 25 ամյակին նվիրված զորահանդեսին:

Բանակում ծառայող գնդերեցները պարբերաբար մասնակցել են ՀՀ պաշտպանության նախարարությունում և ԼՂՀ պաշտպանության բանակում անցկացվող խորհրդակցություններին:

Տարվա ընթացքում ԶՈՒ հոգևոր առաջնորդը այցելել է զորամասեր, որտեղ ծառայություն են իրականացնում գնդերեցները, մոտիկից ծանոթացել նրանց ծառայությանը, ինչպես նաև մասնակցել կարևոր միջոցառումներին:

Տարեվերջը ՀՀ զինված ուժերի ծառայության մեջ նշանավորվել է Վեհափառ Հայրապետի և ՀՀ նախագահի՝ սահմանային զորամաս այցելությամբ:

ե. Քրեակատարողական հիմնարկներ

Քրեակատարողական 11 հիմնարկում հոգևոր սպասավորություն են բերում 7 հոգևորականներ՝ 1 աբեղա, 5 քահանա, 1 սարկավագ:

Ըստ նախապես կազմված ծրագրի՝ յուրաքանչյուր ՔԿ հիմնարկ կատարվել է շաբաթվա կտրվածքով առնվազն մեկ, առավելագույնը երեք այցելություն: Բանտային կառույցներում հոգևոր առաքելությունն իրականացվել է Մայր Աթոռի ՔԿ հիմնարկների հոգևոր սպասավորության բաժնի երկու և թեմական ինը հոգևորականներով:

«Արմավիր» ՔԿ հիմնարկի երկրորդ տեղամասում, ձեռամբ Տ. Արտակ եպս. Տիգրանյանի, օծվել է Ս. Պայծառակերպություն մատուռը՝ նախատեսված ազատազրկված 200 անձանց և աշխատակիցների համար: Միաժամանակ կատարվել են Ս. Մկրտության և Ս. Պսակի արարողություններ, որոնց նախորդել են նախապատրաստական աշխատանքներ: Ազգային և եկեղեցական տոներին մատուցվել են պատարագներ, և կատարվել են արարողություններ:

Դատապարտյալների կամ նրանց հարազատների կողմից Վեհափառ Հայրապետին հասցեագրված ավելի քան 21 նամակներ ստացել են համապատասխան արձագանք:

ՔԿ հիմնարկների մեկուսարանները և գրադարանները որպես գույք ստացել են ՀՀ Աստվածաշնչային ընկերության պատրաստած «Նոր Կտակարան» և «Սաղմոսներ» հրատարակությունը: Բոլոր հիմնարկները պարբերաբար ստացել են «Քրիստոնյա Հայաստան», «Շողակն», իսկ «Վանաձոր» ՔԿ հիմնարկը՝ նաև «Հայրենիք և եկեղեցի» երկշաբաթաթերթերի բոլոր համարները: Դատապարտյալներին և աշխատողներին բաժանվել են գրպանի աղոթագրքեր, սրբապատկերներ և փայտյա օրհնված խաչեր: Գրականությամբ (մոտ 150 գիրք) ապահովվել է «Արմավիր» ՔԿ հիմնարկի նորաոծ Ս. Պայծառակերպություն մատուռի գրադարանը: Գրականությամբ համալրվել են նաև մյուս հիմնարկների գրադարանները (մոտ 100 գիրք):

2016 թ. Մայր Աթոռ են դիմել 43 նախկին դատապարտյալ զանազան խնդրանքներով՝ հոգևոր խնամքի, աշխատանքի տեղավորման, նյութական օժանդակության, իրավաբանական խնդիրներով, որոնց ցուցաբերվել է աջակցություն ըստ կարելվույն:

զ. Վանքապատկան եկեղեցական կառույցներ

Անցյալ տարում իրենց հոգևոր գործունեությունն են իրականացրել Ս. Խոր Վիրապի, Ս. Հռիփսիմեի, Ս. Գայանեի, Ս. Շողակաթի, Ս. Գեղարդավանքի և Ս. Սևանավանքի վանական համալիրները, Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցին և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ս. Վարդան և Ս. Հովհաննես մատուռ-մկրտարանը: Կառույցներում կանոնավորապես կատարվել են ծիսապաշտամունքային արարողություններ: Վանքերում բազմամարդ ուխտագնացություններով և մասունքների դուրս բերումով մատուցվել է Ս. Պատարագ, և մեծ շուքով նշվել են տվյալ սրբերի հիշատակության օրերը:

Մայր Աթոռում, հիշյալ վանքերում և Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցում անցնող տարվա ընթացքում արձանագրվել են 5343 մկրտություն և 1793 պսակադրություն.

Ս. Խոր Վիրապ՝ մկրտվել է 856 հոգի, կատարվել է 258 պսակադրություն:

Ս. Հռիփսիմե՝ մկրտվել է 474 հոգի, կատարվել է 469 պսակադրություն:

Ս. Գայանե՝ մկրտվել է 671 հոգի, կատարվել է 755 պսակադրություն:

Ս. Շողակաթ՝ մկրտվել է 184 հոգի, կատարվել է 64 պսակադրություն:

Ս. Գեղարդավանք՝ մկրտվել է 882 հոգի, կատարվել է 121 պսակադրություն:

Ս. Սևանավանք՝ մկրտվել է 208 հոգի, կատարվել է 59 պսակադրություն:

Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցի՝ մկրտվել է 224 հոգի, կատարվել է 67 պսակադրություն:

Ս. Վարդան և Ս. Հովհաննես մատուռ-մկրտարան՝ մկրտվել է 1844 հոգի:

Ս. Գայանե վանքում այսօր ապրում և իրենց օգտակար ծառայությունն են բերում 5 միանձնուհիներ:

է. Հրատարակչական

Հավատացյալների հոգևոր կարիքները հոգալու նպատակով՝ համապատասխան գրականության լույս ընծայումով արդյունավետ քարոզչություն է իրականացնում Մայր Աթոռի Հրատարակչական բաժինը:

Անցյալ տարում բաժնի կողմից իրականացվել են օտար լեզուներից և գրաբարից թարգմանությունների, եկեղեցագիտական, հայագիտական, մեկնողական գրականության, ինչպես նաև քրիստոնեական բարոյագիտական, ուսուցողական գրքույկների հրատարակություններ: Հրատարակվել են՝ «Թիֆլիսի Հայկական Մուղնու Սուրբ Գևորգ և Սուրբ Նշան եկեղեցիները» (Արմեն Ասատրյան), «Սալավենի օրագիրը» (թրգմ.՝ Պ. Շահբազյան), «Խորհրդատետր Սրբոց Պատարագի ըստ ծիսի Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Հայաստանեայց» (հրատ. Արտակ եպս. Տիգրանյան), «Վարդապետք Հայոց Հիւսիսային կողմանց» (թրգմն. Հրաչ Բայրամյան), «Ուսումն Ս. Գրոց (Ներածութիւն)։ Նախաձեռնարկ հոգևոր դպրանոցների և Ս. Գրքի ընթերցասերների համար», «Սուրբ Հայրերի վարքն ու կենցաղավարությունը» (թրգմ.՝ Շահե ծ. վրդ. Անանյան, Սիրանուշ Գրիգորյան, Վաղարշակ Թանգամյան), Ерванд Отьян, Проклятые годы. 1914-1919 (Личные воспоминания) (թրգմ.՝ Հ. Մաղոյան) և այլն: Անցյալ տարում տպագրության է հանձնվել 16 անուն գիրք:

Առավել լայն լսարանի համար քարոզչություն է իրականացվում «Էջմիածին» ամսագրի, «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթի, ինչպես նաև համացանցի, հեռուստա-ռադիո հաղորդաշարերի, «Շողակաթ» ու «Լույս» հեռուստաընկերությունների միջոցով:

Է.1 «Էջմիածին» կրոնագիտական-հայագիտական հանդես

«Էջմիածին» կրոնագիտական-հայագիտական հանդեսը 2016 թվականին պատշաճ կերպով անդրադարձել է օրվա կարևորագույն խնդիրներին, եկեղեցական բոլոր տոներին ու արարողություններին, հովվապետական այցելություններին, հոբելյաններին: Ամսագրում տպագրվել են կրոնագիտական, հայագիտական, պատմաբանասիրական տասնյակ արժեքավոր հոդվածներ:

Հանդեսը հանգամանորեն անդրադարձել է նաև Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու համար մեծ կարևորություն ունեցող Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի Հայաստան այցին:

Պարբերաբար տպագրվել են Հայրապետական կոնդակներն ու օրհնության գրերը, պաշտոնական հաղորդագրությունները, հոգևորականների քարոզները, գրախոսություններն ու հաղորդումները:

Հաշվետու տարում հանդեսում տպագրվել են միջնադարյան արժեքավոր մի շարք անտիպ բնագրեր, մեկնություններ, մատենագիտական նյութեր, ինչպես նաև հնագիտական պեղումների, եկեղեցական վիմագրության և որմնանկարչության մասին հոդվածներ:

Է.2. «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթ

«Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթը 2016 թվականին կանոնավոր կերպով լույս է ընծայել տարվա բոլոր 24 համարները:

Պարբերաբար տպագրել է Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի տրամադրած բոլոր լրատվական նյութերը, Վեհափառ Հայրապետի պատգամներն ու ուղերձները, թեմերի, ՔԴԿ-ի տրամադրած նյութերը, տոնախոսականներ, քարոզչական նյութեր և այլն: Թերթի համարներում շարունակաբար տպագրվել

են կրոնական, գրականագիտական, լեզվաբանական, պատմական, արվեստաբանական ու հրապարակախոսական բազում հոդվածներ, որոնց թվում՝ նաև մեծ Եղեռնին վերաբերող նյութեր և գիտական ուսումնասիրություններ: Զգալի են եղել օտարագիր հայ գրողներին և նրանց ստեղծագործություններին անդրադարձած գրականագիտական հոդվածները:

ը. Տեղեկատվական համակարգ

2016 թ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տեղեկատվական համակարգի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

• Պատրաստվել է 254 հաղորդագրություն և 244 մամուլի տեսություն Ամենայն Հայոց Կաթողիկոսի համար,

• Հայաստանի Հանրային ռադիոյով հեռարձակվել է «Ավետիս» երիտասարդական ծրագրի 55 ռադիոհաղորդում,

• Կազմակերպվել է 19 հարցազրույց տարբեր կայքերի և հեռուստաընկերությունների կողմից,

• ՋԼՄ-ների աջակցությամբ լուսաբանվել են Մայր Աթոռում անցկացված՝ Աստվածաշնչի տպագրության 350-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովը, գրադարանների միջազգային համաժողովը, Ցեղասպանության միջազգային օրվա հիշատակի արարողությունը, մտավորականներին շքանշանների հանձնման արարողությունը, ինչպես նաև Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Էջմիածնի և Երևանի ծննդատներ,

• Ապահովվել է հոգևորականների մասնակցությունը մի շարք մամուլի ասուլիսներին, ռադիո և հեռուստահաղորդումներին:

Կատարվել են նաև Կաթողիկոսական գրասենյակի և Դիվանատան կողմից նկարահանումների դիմումների, գրությունների և հանդիպումների թարգմանության հետ կապված տարբեր հանձնարարականներ:

ը.1. «Շողակաթ» հեռուստաընկերություն

Անցյալ տարի «Շողակաթ» հեռուստաընկերությունը շարունակել է եթեր հեռարձակվել Հոգևոր-մշակութային հեռուստաընկերություն ՓԲԸ հեռուստալիքով, որը եթերի ընդգրկման ծավալով երկրորդն է հանրապետությունում: «Շողակաթ» հեռուստաընկերության հաղորդումները եթեր են հեռարձակվել օրական 18 ժամ:

Շարունակվել են պատրաստվել և եթեր հեռարձակվել «Շողակաթ» հեռուստաընկերության հիմնական բոլոր հաղորդաշարերը, նաև՝ պետականաշինության գործում, երկրի մշակութային ու կրթական կյանքում, հասարակական կյանքի տարբեր ոլորտներում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու և հոգևոր դասի մասնակցությունը լուսաբանող վավերագրական տեսաֆիլմեր: Առանձին տեսաֆիլմեր են պատրաստվել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու աշխարհասփյուռ թեմերի և բարերարների մասին:

Հոգևոր հաղորդումների հիմնական մաս են կազմել եկեղեցական կյանքի լրատվությունը, եկեղեցական կառույցների գործունեության ներկայացումը, հոգևոր քարոզչությունը, ծեսերը մեկնող և եկեղեցու պատմությունը ներկայացնող

ճանաչողական ծրագրերը, քարոզխոսությունը և հավատացյալների վկայությունները:

Անցյալ տարի պատրաստվել և եթեր են հեռարձակվել 74 մասից բաղկացած «Մարկոսի ավետարան» շարքի վերջին 14 հաղորդումները, որին եթերացանցում փոխարինել է նոր՝ «Համատես Ավետարաններ» շարքը: Ավետարանի քարոզչության շրջանակում պատրաստվել և հեռարձակվել է «Գործք Առաքելոց» չորս մասից բաղկացած հաղորդաշար:

բ.2. «Լույս» հեռուստաընկերություն

«Լույս» հեռուստաընկերությունն աշխատել է շուրջօրյա և նկարահանել սեփական արտադրության մեկ հաղորդաշար՝ «Ոչ միայն հացիվ» խորագրով: Նկարահանվել է 48 հաղորդում՝ ընդհանուր 19 ժամ տևողությամբ: Հաղորդաշարի հիման վրա Տեր Ադամ քահանա Մակարյանը հրատարակել է նույնանուն մեկհատորյակ:

Հեռուստաընկերությունը հեռարձակել է նաև «Բանբեր» լրատվական ծրագիրը և մամուլի ամենօրյա տեսությունը: Ըստ այդմ՝ տարվա կտրվածքով սեփական արտադրության հաղորդումների ծավալը կազմել է շուրջ 135 ժամ:

Մնացյալ եթերաժամը լրացվել է «Շողակաթ» հեռուստաընկերության սեփական արտադրանքով և տրամադրած ֆիլմերով, հաղորդաշարերով, համերգային և այլ ծրագրերով:

բ. 3. Համացանց

Գրասենյակը զբաղվել է Հայ Եկեղեցու պաշտոնական կայքով և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Facebook-ի, YouTube-ի և Twitter-ի էջերով: Հաղորդագրություններն այժմ հասանելի են երեք լեզվով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն:

Կայքն անընդհատ վերանայվում և թարմացվում է, կայքի բաժինները և ծրագրերը ևս պարբերաբար վերանայվում և փոփոխությունների են ենթարկվում: Անցնող տարում ուշադրության կենտրոնում էին եպիսկոպոսների կենսագրությունները, ավելացվել են տեսանյութերն ու լուսանկարները, ինչպես նաև թարմացվել է մնացյալ տեղեկատվությունը: Կայքէջի նյութերը թարգմանվում են ռուսերեն, և բաժինը կբացվի, երբ պատրաստ լինեն դրանց գոնե 51%:

Facebook-յան էջի հետևորդների թիվն ավելացել է 6.439-ով՝ դառնալով 43.319: 2015 թ. համեմատ աճը կազմում է 28%: Ապրիլյան քառօրյա պատերազմից անմիջապես հետո նկատելի էր հետևորդների թվի նվազում: Հուլիսյան դեպքերից հետո էջի հետևորդների թիվը սկսել է աճել:

11. «ՎԱՉԵ ԵՎ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ» ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Մատենադարանն իր աշխատանքային գործընթացում որդեգրել է հիմնական ուղղություններ, ըստ որոնց՝ գրադարանային ոլորտի աշխատանքներն ուղղված են եղել ընթերցողների սպասարկմանը, գրականության ձեռքբերմանը, գրքերի քարտագրմանն ու հաշվառմանը, համակարգված և հեղինակային քարտարանների ստեղծմանը, սխալ դասակարգված գրքերի ճշտմանը:

Անցյալ տարում ավարտվել են «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանում առկա գրականության էլեկտրոնային քարտարանի ստեղծման ուղղությամբ կատարվող աշխատանքները, որի միջոցով հնարավոր է դարձել գրքերի էլեկտրոնային փնտրումը:

Մատենադարանն արդյունավետ համագործակցում է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության մատենադարանի, Կ. Պոլսի Հայոց Պատրիարքության հրատարակչական բաժնի, Փարիզի «Հայկական Առաքելական Եկեղեցու գրադարան»-ի, ՀՀ ազգային գրադարանի, Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի, ՀՀ ԳԱԱ-ի, ՀՀ ազգային արխիվի, ԵՊՀ-ի, Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարանի արխիվային բաժնի և այլ գրադարանների հետ, որոնց ֆոնդերից լուսանկարված նյութերից ստեղծվում են էլեկտրոնային առանձին թղթապանակ-ծրարներ: Անցած տարում գրքափոխանակության շրջանակներում համագործակցություն է սկսվել Ռուս Ուղղափառ Եկեղեցու Մոսկվայի հոգևոր ակադեմիայի հետ:

Անցյալ տարում Մատենադարանի ողջ աշխատակազմը իր ջանքերն է ներդրել Մայր Աթոռում իրականացված բոլոր այն միջոցառումներին, որոնք նվիրված էին Սուրբ Գրքի հայերեն առաջին տպագրության 350-ամյակին:

Մատենադարանը 2016 թ., թեև ոչ լիարժեք, սկսել է իր թանգարանային գործունեությունը: Մատենադարանի ցուցասրահներում ներկայացվել է հայ գիրքը թեմատիկ հետևյալ բաժանմամբ՝ «Գիրքը Սուրբ Էջմիածնում», «Հայ հնատիպ գիրքը» և «Թեմատիկ փոփոխվող ցուցադրություն»:

2016 թ. Ս. Էջմիածնի մատենադարանի և ՀՀ ազգային գրադարանի համագործակցության շնորհիվ ավարտվել է «Արարատ» ամսագրի թվայնացված համարների հոդված առ հոդված նկարագրումը, իսկ «Էջմիածին» ամսագրի՝ նույն ուղղությամբ տարվող աշխատանքները դեռ ընթացքի մեջ են:

12. ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Անցյալ տարում Վարչատնտեսական բաժինը համակարգված աշխատանքներ է իրականացրել՝ քննարկումներ կատարելով կապալառու կազմակերպությունների հետ, պայմանագրեր է կնքել, շինաշխատանքների համար անհրաժեշտ ապրանքներ ներկրել Հայաստան, կազմակերպել պահեստներն անհրաժեշտ գույքով համալրելու աշխատանքները՝ ապահովելով Մայր Աթոռի կենսագործունեությունը:

Վարչատնտեսական բաժնի համակարգմամբ Մայր Աթոռի ճարտարապետաշինարարական բաժնի կողմից իրականացվել են եկեղեցաշինական մեծ ծավալի աշխատանքներ: Մասնավորապես իրականացվել են նախագծային աշխատանքներ, նորոգություններ, կառուցվել են նոր շենքեր ու շինություններ: Մեծաթիվ աշխատանքներ ընթացքի մեջ են: Ավարտին են հասցվել հին Վեհարանը, Բաց Խորանի սալահատակը, Հառիճի վանական համալիրի վեհարանը և վեհարանի դահլիճը, Խոր Վիրապ վանքի Ս. Աստվածածին եկեղեցու և Ջանգակատան վերականգնման աշխատանքները:

Հայ Եկեղեցու աշխարհասփյուռ թեմերում նախորդ տարում օծվել են թվով 24 եկեղեցիներ, որոնցից 1-ը Արարատյան Հայրապետական թեմում, 1-ը՝ Շիրակի թեմում, 2-ը՝ Գուգարաց թեմում, 3-ը՝ Սյունյաց թեմում, 1-ը՝ Արագածոտնի թեմում, 2-ը՝ Գեղարքունյաց թեմում, 1-ը՝ Տավուշի թեմում, 1-ը՝ Արթիկի թեմում, 2-ը՝ Արցախի թեմում, 2-ը՝ Վիրահայոց թեմում, 1-ը՝ Ռուսաստանի և Նախիջևանի Հայոց թեմում, 2-ը՝ Հարավային Ռուսաստանի Հայոց թեմում, 1-ը՝ Իրաքի Հայոց թեմում, 2-ը՝ ԱՄՆ Հայոց Արևմտյան թեմում:

Մայր Աթոռի ճարտարապետաշինարարական բաժնի կողմից անցյալ տարում ավարտին են հասցվել 5, և ընթացքի մեջ են 9-ը նախագծային, ավարտվել են 7, իսկ ընթացքի մեջ են 18 շինարարական աշխատանքներ:

13. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռի Սոցիալական ծառայության կենտրոնի նպատակը հանրային կյանքի բարելավումն է, հնարավոր բոլոր միջոցներով աջակցություն ցուցաբերելը ազգաբնակչության առավել կարիքավոր, խոցելի խմբերին (փախստականներ կամ տեղահանվածներ, սիրիահայեր, իրաքահայեր, ազատամարտիկներ, զոհված զինվորների ընտանիքներ, հաշմանդամներ, ծնողազուրկ երեխաներ, տարեցներ, ուսանողներ և հիվանդներ):

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը տարբեր ծրագրերի միջոցով աջակցություն է ցուցաբերել 820.000.000 (ութ հարյուր քսան միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով:

Դրամական աջակցություն է ցուցաբերվել 643 ընտանիքների (մոտավոր 2400 անձանց)՝ 117.387.008 (հարյուր տասնյոթ միլիոն երեք հարյուր ութսունյոթ հազար ութ) ՀՀ դրամի չափով, ընդ որում՝

1. 85.772.142 (ութսունհինգ միլիոն յոթ հարյուր յոթանասուներկու հազար հարյուր քառասուներկու) ՀՀ դրամ բաշխվել է ապրիլյան պատերազմի ընթացքում զոհված ու վիրավորված զինծառայողների և այդ ընթացքում սահմանապահ զինվորների կարիքավոր ընտանիքներին:

2. 7.200.000 (յոթ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ է տրամադրվել մայրերին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից սեպտեմբերի 23-ին Էջմիածնի ու Երևանի հանրապետական հիվանդանոցների ծննդատներ կատարած այցելությունների ժամանակ:

3. 5.600.000 (հինգ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ է տրամադրվել սիրիական ճգնաժամի հետևանքով Հայաստանում հաստատված սիրիահայ կարիքավոր 112 ընանիքի:

4. 9.489.700 (ինը միլիոն չորս հարյուր ութսունինը հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ է Արա Հովնանյանի կողմից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջոցով փոխանցվել Անուշ Մանուկյանի ընտանիքին:

5. 1.140.166 (մեկ միլիոն քառասուն հազար հարյուր վաթսունվեց) ՀՀ դրամ տրամադրվել է զինվորի աչքերի բուժման համար:

6. 8.185.000 (ութ միլիոն հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամ բաշխվել է անցյալ տարվա ընթացքում Մայր Աթոռ դիմած 158 կարիքավորների:

Վերոնշյալից բացի, անցյալ տարում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, Սոցիալական ծառայության գրասենյակի միջոցով, նաև իրային աջակցություն է ցուցաբերել շուրջ 6.500 (վեց հազար հինգ հարյուր) անձանց՝ 63.697.931 (վաթսուներեք միլիոն վեց հարյուր ինսունյոթ հազար ինը հարյուր երեսունմեկ) ՀՀ դրամի չափով, այսպես՝

• *«Ծաղկազարդը Մայր Աթոռում»* ծրագրի շրջանակներում 300 անապահով երեխաների տրամադրվել են գրենական պիտույքներ, Աստվածաշնչեր, գիշերազգեստներ: Ծրագրի ընդհանուր արժեքն է եղել 1.950.690 (մեկ միլիոն ինը հարյուր հիսուն հազար վեց հարյուր ինսուն) ՀՀ դրամ:

• *«Աջակցություն ապրիլյան պատերազմի հետևանքով տեղահանվածներին»* ծրագիրն իրագործվել է ԵՀԽ Հայաստանյան «Կլոր սեղան» հիմնադրամի հետ համագործակցաբար, որի շրջանակներում 23.293.800 (քսաներեք միլիոն երկու հարյուր ինսուներեք հազար ութ հարյուր) ՀՀ դրամի չափով հումանիտար օգնություն է ցուցաբերվել ապրիլյան պատերազմի հետևանքով իրենց բնակավայրերից տեղահանված շուրջ 3.300 արցախցիների:

• *«Արցախի սահմանները պահող զինվորների ընտանիքներին՝ Բարձունք «5165» ծրագրով»* ֆրանսահայ բարերար Ռոբերտ Ազիլազյանի կողմից N231/07/2015 հաշիվ ապրանքագրով Մայր Աթոռ փոխանցված 23.442.686 (քսաներեք միլիոն չորս հարյուր քառասուներկու հազար վեց հարյուր ութսունվեց) ՀՀ դրամի չափով զգեստները (գրեթե ամբողջությամբ կանացի) փոխանցվել են «Բարձունք 5165» բարեգործական կազմակերպությանը՝ զինվորների ընտանիքներին բաշխելու համար:

• *«Անկախության 25-ամյակի առիթով այցելություն ծննդատներ»* ծրագրի ընթացքում Վեհափառ Հայրապետի կողմից դրամական օգնության հետ միասին՝ 1.080.450 (մեկ միլիոն ութսուն հազար չորս հարյուր հիսուն) ՀՀ դրամի չափով, երեխաներին նվիրվել են մանկական Աստվածաշնչեր և հագուստներ:

• *«Սուրբ Ծննդյան ժպիտ անծանոթ փոքրիկին»* 2016 թ. դեկտեմբերին ԵՀԽ Հայաստանյան «Կլոր սեղան» հիմնադրամի հետ իրականացրած ծրագրի շրջանակներում 4.821.100 (չորս միլիոն ութ հարյուր քսանմեկ հազար հարյուր) ՀՀ դրամի չափով հավաքագրված նվերները տրամադրվել են Գյումրիի, Վանաձորի և Սիսիանի անապահով 200 ընտանիքների:

• *«Աջակցություն դատապարտյալների ընտանիքներին»* ծրագրի շրջանակներում իրային և գումարային օգնություն են ստացել մի շարք դատապարտյալների ընտանքիներ՝ ընդհանուր առմամբ 600.000 (վեց հարյուր հազար) դրամի չափով: Բացի այդ, դատապարտյալների 100 երեխաների տրամադրվել են տոմսեր՝ մասնակցելու Հայորդյաց տների ամանորյա և սուրբծննդյան տոնական միջոցառումներին:

• Կատարվել են նաև 9.709.205 (ինը միլիոն յոթ հարյուր ինը հազար երկու հարյուր հինգ) ՀՀ դրամի չափով իրային այլ նվիրատվություններ:

Այսպես՝

2016 թ. ապրիլյան պատերազմից հետո Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենյան Հայոց Կաթողիկոսի հրավերով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գլխավորությամբ

և Մայր Աթոռի թեմերի մասնակցությամբ կազմակերպված հանգանակությունների արդյունքում 1.000.000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլար գումար է փոխանցվել Արցախի կառավարության հատուկ հաշվեհամարին՝ ի զորակցություն արցախահայության:

Իրենց բնականոն գործունեությունն են շարունակել Մալաթիայի, Արաբկիրի, Նորքի, Էրեբունու, Վանաձորի բարեգործական ճաշարանները, «Նագաշյան մանուկների տուն» երեխաների աջակցության կենտրոնը:

Ճաշարաններից յուրաքանչյուրում օրական սնունդ է ստանում 200 անձ: «Նագաշյան մանուկների տուն» երեխաների աջակցության կենտրոնում խնամվում են 17 դեռահաս և 4 մանկահասակ աղջիկներ: Աշխատանքներ են տարվում ևս մի քանիսին ընդգրկելու համար:

2016 թվականին «Իզմիրլյան» բժշկական կենտրոնը շարունակել է ծավալել իր գործունեությունը՝ անհրաժեշտ բժշկական օգնություն ցուցաբերելով հիվանդներին: Բժշկական կենտրոնում խոցելի խավերին զեղչեր տրամադրելուց բացի, հաշվետու տարում բժշկախորհրդատվական օգնություն ցուցաբերելու նպատակով ստեղծվել է բուժկենտրոնի մասնագետներից կազմված արտագնա բժշկական խումբ, որը այցելել է ՀՀ մարզեր և Արցախ: Գեղարքունիքի մարզում կենտրոնի բժիշկները զննել են շուրջ 650 քաղաքացու, որոնցից 62-ը հետագայում բուժում են ստացել «Իզմիրլյան» բժշկական կենտրոնում: Ստեփանակերտի հանրապետական հիվանդանոցում բժշկական կենտրոնի մասնագետների կողմից զննվել է 1200 քաղաքացի, և կատարվել է օրթոպեդիկ բարդ 5 վիրահատություն:

14. ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Ամենայն Հայոց Կաթողիկոսության կանոնական տարածքներում գործում է 33 թեմ և 3 Հայրապետական պատվիրակություն: Սույն հաշվետվության մեջ արտացոլված չեն Դամասկոսի Հայոց թեմի և Հնդկաստանի ու Ծայրագույն Արևելքի Հայրապետական պատվիրակության գործունեության տվյալները:

Այսպիսով, համաձայն ներկայացված տվյալների՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսության կանոնական տարածքներում գործում է 605 եկեղեցի ու վանք, որոնցում անցած տարում ընդհանուր առմամբ կատարվել է 35.181 մկրտություն և 10.255 պսակադրություն: Ծուխի և ծխական առաքելության վերաբերյալ տեղեկություններ ներկայացրած 27 թեմերի և 1 Հայրապետական պատվիրակության տվյալներով՝ գործում է 808 ծուխ:

Ըստ 23 թեմերի և 2 Հայրապետական պատվիրակության տրամադրած տվյալների՝ թեմերի հովանու ներքո գործում են 258 կիրակնօրյա դպրոցներ:

Թեմերը 2016 թվականին իրականացրել են հոգևոր-քարոզչական, սոցիալական, կրթամշակութային բազմաբնույթ ծրագրեր: Թեմերի հոգևոր սպասավորներն այցելել են մանկախնամ և ծերախնամ կենտրոններ, դպրոցներ, հիվանդանոցներ, քրեակատարողական հիմնարկներ, իսկ քարոզչադաստիարակչական կենտրոնները կազմակերպել են Սուրբ Գրքի սերտողություններ, դասախոսություններ, գիտաժողովներ, եկեղեցասիրաց երիտասարդաց միությունների հա-

վաքներ, երգչախմբեր, դպրոցական և համալսարանական միջոցառումներ ու հոգևոր թեմայով մրցույթներ, հրատարակվել են գրքեր ու քարոզթերթիկներ: Ապրիլյան քառօրյա պատերազմի զոհերի հիշատակին տարբեր համայնքներում կանգնեցվել և օծվել են խաչքարեր, բացվել հուշարձաններ: Հեռուստառադիոալիքներով հեռարձակվել են հոգևոր բովանդակությամբ հաղորդաշարեր, լույս են տեսել թեմերի պաշտոնական թերթեր:

Տարեցտարի ընդլայնվող սոցիալական ծրագրերի շրջանակներում թեմերում գործող հիմնադրամների միջոցներով սոցիալական աջակցություն է ցուցաբերվել անապահով ընտանիքներին, հաշմանդամներին, ծնողազուրկ երեխաներին, ծերախնամ կառույցներին, բանտարկյալներին ու զոհված զինծառայողների ընտանիքներին: Սոցիալական ոլորտում համագործակցությունը շարունակվել է պետական կառույցների, բարեգործական հիմնադրամների ու հասարակական կազմակերպությունների հետ:

Ստորև առանձնաբար ներկայացված է յուրաքանչյուր թեմի գործունեության ամփոփ պատկերը.

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄ

Առաջնորդական փոխանորդն է Գերշ. Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը:

Հաշվետու ժամանակահատվածում թեմի հոգևոր-քարոզչական գործունեության շրջանակներում կատարվել են այցելություններ ավելի քան 95 դպրոցներ, տասնյակ մանկապարտեզներ, ուսումնական և մշակութային կենտրոններ, հիվանդանոցներ, ծնունդատներ, ծերանոցներ, մանկատներ, կազմակերպվել են ուխտագնացություններ (թվով 231), հսկումներ և քարոզխոսություններ, հոգևոր զրույցներ, հոգևոր երգերի ուսուցումներ, ցուցահանդեսներ, բանախոսություններ, ազգային-եկեղեցական տոների առթիվ իրականացվել են բազմաթիվ ծրագրեր և միջոցառումներ: «Կանա» քրիստոնեական կրթական կենտրոնը կազմակերպել է քրիստոնեական մանկական, Ս. Մկրտությանը և Ս. Պսակին պատրաստվող անձանց համար դասընթացներ:

Քարոզչություն է իրականացվել թեմի qahana.am կայքի և սոց. ցանցի միջոցով, ԱՀԹ «Շողակն Արարատյան» և «Մանանա» ռադիոհանդեսներով:

Հաշվետու տարում թեմի կողմից իրականացված սոցիալական ծրագրերի արդյունքում բարոյական և նյութական օգնություն է ցուցաբերվել բազմազավակ, միայնակ, հաշմանդամ, ծնողազուրկ և կարիքավոր մոտ 2500 անձի, բազմակողմանի օժանդակություն է տրամադրվել մոտ երեք տասնյակ խոցելի կազմակերպությունների ու հաստատությունների, իրականացվել է «Մենք մեր զինվորի կողքին ենք» ծրագիրը, աջակցություն է ցուցաբերվել Արցախին, «Ծնողազուրկ երեխաների օգնության հիմնադրամին»: Հիշյալ ծրագրերի իրականացման ընթացքում թեմը համագործակցել է միջազգային և տեղական հասարակական կառույցների ու անհատ բարերարների հետ:

Թեմում գործում է 33 եկեղեցի և 35 ծուխ, հոգևոր սպասավորություն է իրականացնում 49 քահանա: Անցյալ տարի օծվել է Շաղափ համայնքի մատուռը:

Հաշվետու ժամանակամիջոցում թեմում կատարվել է 9844 մկրտություն և 2802 պսակադրություն: Գործում է 5 Տիկնանց միություն (թվով՝ 60 անդամ), 25 Երիտասարդաց միություն (թվով՝ 320 անդամ), 14 կիրակնօրյա դպրոց՝ 1073 աշակերտներով, և Կրթադաստիարակչական կենտրոն:Հաշվետու տարում հրատարակվել են թեմի «Շողակն Արարատյան» պաշտոնական երկշաբաթաթերթը և 5 անուն գիրք:

ՇԻՐԱԿԻ ԹԵՄ

Թեմական առաջնորդն է Գերշ. Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանը:

2016 թ. շարունակվել են հեռուստա-ռադիո հաղորդումների հեռարձակումները, թեմը ակտիվ քարոզչություն է իրականացրել նաև համացանցով:

Սոցիալ-կրթական կենտրոնի միջոցով հաշվետու ժամանակահատվածում անցկացվել են սոցիալական ուղղվածության կրթական, խորհրդատվական և աջակցության ծրագրեր:

Թեմում գործում է 28 եկեղեցի ու վանք, ծուխերի թիվը 19-ն է, սպասավորում է 19 քահանա:

Հաշվետու տարում օծվել է Շիրակավանի եկեղեցին, աշխատանքներ են կատարվել Գյումրու Ս. Ամենափրկիչ, Մարալիկի, Հայկաձորի, Մարմաշենի, Կրասարի, Բյուրակնի, Բանդիվանի եկեղեցիներում:

Անցյալ տարի թեմում գրանցվել է 1457 մկրտություն և 718 պսակադրություն:

Գործում է 11 կիրակնօրյա դպրոց՝ 260 սաներով, գործում է ՔԴԿ կայքը, որը լուսաբանում է բոլոր միջոցառումները:

Եկեղեցիների երիտասարդաց միությունների նախաձեռնությամբ կազմակերպվել են միջոցառումներ, ցուցահանդեսներ, խոկումներ, խոնարհված եկեղեցիների մաքրման աշխատանքներ, ուխտագնացություններ, հոգևոր վրանային ճամբար, երիտասարդական-ուսանողական շաբաթ, անհատական զարգացման դասընթաց-հանդիպումներ:

Հաշվետու տարում անխափան լույս է ընծայվել «Ս. Յոթվերք» ամսաթերթը (համացանցային տարբերակով ևս):

ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄ

Թեմական առաջնորդն է Գերշ. Տ. Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանը:

Հաշվետու տարում այցելություններ են կատարվել մանկատներ, ծերախնամ կենտրոններ, հիվանդանոցներ, քրեակատարողական հիմնարկներ, անցկացվել են Աստվածաշնչի ուսուցման դասընթացներ, դասախոսություններ, կազմակերպվել են ուխտագնացություններ:

Թեմապատկան «Ծիծեռնակ» ճամբարում ամառային հանգիստ է կազմակերպվել անապահով ընտանիքների 858 երեխաների համար: «Ձեռք մեկնիր» բարեգործական ծրագրի շրջանակներում բարոյական և նյութական օգնություն է ցուցաբերվել 285 ընտանիքների: Անհրաժեշտ օժանդակություն է տրամադրվել ապրիլյան քառօրյա պատերազմում զոհված զինծառայողների ընտանիքներին: Սոցիալական ծրագրերի իրականացման գործում ակտիվ ներգրավված են թեմի 12 երիտասարդաց միությունները՝ 250 անդամներով:

Գործում է 31 եկեղեցի ու վանք, 107 ծուխ, սպասավորում է 18 հոգևորական:

Անցյալ տարում վերաօծվել է 2 եկեղեցի՝ Լեռնահովտի և Բազում ու Ազնվաձոր համայնքներում, ավարտվել է Քարինջ, Դարբաս և Մղարթ համայնքների եկեղեցիների վերակառուցումը, աշխատանքներ են կատարվել Սանահինի, Քոբայրի վանական համալիրներում, Ստեփանավանի, Կուրթանի, Ջրաշենի, Աքորիի համայնքների եկեղեցիներում:

Անցյալ տարի թեմում կատարվել է 1017 մկրտություն և 500 պսակադրություն:

Թեմի հովանու ներքո գործում է 9 կիրակնօրյա դպրոց՝ 263 աշակերտներով:

ԱՐՄԱՎԻՐԻ ԹԵՄ

Թեմակալ առաջնորդն է Գերշ. Տ. Սիոն եպիսկոպոս Ադամյանը:

2016 թվականի ընթացքում թեմի հոգևոր սպասավորները այցելություններ են կատարել դպրոցներ, մանկապարտեզներ, կիրակնօրյա վարժարաններ, ծննդատներ, հիվանդանոցներ, կազմակերպվել են ուխտագնացություններ, Հայ եկեղեցու պատմություն առարկան դասավանդող ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ: Մարզի հանրակրթական դպրոցներում և աշակերտների ծնողների հետ իրականացվել է «Աջակցություն ընտանիքներին» ծրագիրը, տեղական հեռուստալիքով հեռարձակվել են հոգևոր հաղորդումներ: Թեմն իրականացրել է սոցիալական ծրագրեր՝ հոգևոր և նյութական աջակցություն ցուցաբերելով սոցիալապես անապահով ընտանիքներին:

Թեմում գործում է 25 եկեղեցի, սպասավորում է 21 հոգևորական:

Հաշվետու տարում շարունակվել են Ակնաշեն և Ակնալիճ համայնքների եկեղեցիների կառուցման աշխատանքները:

Անցյալ տարի կատարվել է 1710 մկրտություն և 410 պսակադրություն:

Գործում է թվով 14 կիրակնօրյա վարժարան, որոնք հաշվետու տարում ավելացել են 3-ով (ընդհանուր՝ 883 սան): Թեմում գործում են նաև հոգևոր-մշակութային, կրթական կենտրոններ, երիտասարդաց միություններ և բարեգործական կազմակերպություն:

ՍՅՈՒՆՅԱՑ ԹԵՄ

Առաջնորդական տեղապահն է Հոգշ. Տ. Մակար վարդապետ Հակոբյանը:

Հաշվետու տարում թեմի հոգևոր սպասավորները այցելություններ են կատարել դպրոցներ, քոլեջներ, բարձրագույն ուսումնական հաստատություններ, քրեակատարողական հիմնարկներ, ծերանոցներ, կազմակերպվել են ուխտագնացություններ, հոգևոր դասընթացներ: Առանձին հանդիպումներ են կազմակերպվել հասարակության առավել խոցելի խմբերի հետ: Բարոյական և նյութական աջակցություն է ցուցաբերվել ապրիլյան քառօրյա պատերազմի զոհերի և վիրավորների ընտանիքներին:

Շարունակվել է համագործակցությունը «World Vision» կազմակերպության, «ԵԱՀԿ» գրասենյակի և խնամքի կենտրոնի հետ:

Տեղական հեռուսատատեսությամբ հեռարձակվել է «Կանթեղ» հոգևոր հաղորդաշարը:

Գործում է 25 եկեղեցի ու վանք, սպասավորում է 9 հոգևորական:

Հաշվետու տարում վերաօծվել են Արծվանիկի, Շիկահողի, Սևաքարի եկեղեցիները, ավարտվել են Լորի Ծառու Ս. Հովհաննես եկեղեցու վերանորոգման աշխատանքները, աշխատանքներ են կատարվել Վահանավանքում և Տաթևի վանական համալիրում, Գորիս, Կապան, Քաջարան, Մեղրի քաղաքների, Փոքր Թաղ, Տեղ, Լոր, Գեղանուշ, Սրաշեն համայնքների եկեղեցիներում, որոշ համայնքներում տեղադրվել են խաչքարեր:

Անցյալ տարի կատարվել է 1082 մկրտություն և 160 պսակադրություն:

Թեմում գործում է 3 կիրակնօրյա դպրոց, 9 երգչախումբ, կայացման փուլում են երիտասարդաց և տիկնանց միությունները:

Շարունակվել է «Սյունյաց Կանթեղ» թերթի հրատարակությունը:

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԹԵՄ

Թեմական առաջնորդն է Գերշ. Տ. Մկրտիչ եպիսկոպոս Պողոշյանը:

Հաշվետու տարում հոգևոր հովիվներն այցելել են մարզի զորամասեր, դպրոցներ, մանկապարտեզներ, մշակութային կենտրոններ: Պարբերաբար կազմակերպվել են Ավետարանի ուսուցման և քարոզխոսության դասընթացներ, ուխտագնացություններ, տեղի է ունեցել հոգևոր երգի փառատոն:

Անցյալ տարվա ընթացքում թեմի հովանու ներքո գործող «Նկանակ» ՍՊԸ-ն սոցիալապես անապահով 10 ընտանիքների ամեն օր տրամադրել է հաց: Թեմի բարերարների միջոցներով նյութական օժանդակություն է ցուցաբերվել քառօրյա պատերազմի օրերին զոհված զինծառայողների ընտանիքներին:

Գործում է 29 եկեղեցի ու վանք, թվով 91 ծուխ: Թեմում սպասավորում է 13 քահանա: Հաշվետու տարում վերակառուցվել և վերաօծվել է Նորաշենի Ս. Աստվածածին եկեղեցին, ավարտվել են Շենավանի և Ղազարավանի, ընթացքի մեջ են Ձորագլխի, Քասաղի, Աստվածընկալի եկեղեցիների շինարարական աշխատանքները: Աշտարակի Ս. Մարիանե եկեղեցու բակում տեղադրվել է խաչքար՝ Արցախյան հերոսամարտում զոհվածների հիշատակին:

Անցյալ տարի կատարվել է 1084 մկրտություն և 717 պսակադրություն:

Թեմի հովանու ներքո գործում են «Խրիմյան» կրթօջախը (65 սան), «Սուրբ Մարիանե» սոցիալական կենտրոնը, իրականացվում են «Լույս մանկանց» և «Պատանյաց» ծրագրերը:

Գործում են երիտասարդաց միություններ, 1 կիրակնօրյա դպրոց (450 երեխա):

Հաշվետու տարվա ընթացքում ստեղծվել է Արագածոտնի թեմի պաշտոնական կայքէջը: Հրատարակվել է 6 անուն գիրք:

ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄ

Թեմական առաջնորդն է Գերշ. Տ. Առաքել արքեպիսկոպոս Քարամյանը:

Հաշվետու տարում թեմում իրականացվել են բազմաբնույթ միջոցառումներ, կազմակերպվել են ուխտագնացություններ, ցուցահանդեսներ, սեմինարներ Հայ եկեղեցու պատմության և նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժների համար, տեղի են ունեցել հանդիպումներ կրթօջախների

ծնողական խորհուրդների հետ: Ապրիլյան քառօրյա պատերազմի օրերին թեմի տարբեր համայնքներում տեղի ունեցած ոգեկոչման արարողությունների ընթացքում կազմակերպվել են նաև հանգանակություններ՝ ի նպաստ զոհված և վիրավոր զինծառայողների ընտանիքների:

Գործում է 27 եկեղեցի ու վանք, ծառայություն է իրականացնում 19 քահանա: Ընթացքի մեջ են Նոր Գյուղ, Եղվարդ, Բյուրեղավան և Քասախ համայնքների եկեղեցիների շինարարական աշխատանքները:

Անցյալ տարի թեմում կատարվել է 2888 մկրտություն և 815 պսակադրություն:

Գործում է 14 կիրակնօրյա դպրոց, աշակերտների ընդհանուր թիվը 1595 է: Հաշվետու տարում թեմում տպագրվել է 4 անուն գիրք և ամենամյա եկեղեցական օրացույց:

ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ԹԵՄ

Առաջնորդական տեղապահն է Հոգշ. Տ. Կիրակոս վարդապետ Դավթյանը:

2016 թվականի ընթացքում թեմի հոգևորականաց դասը շարունակել է այցելությունները համայնքներ, հոգևոր-քարոզչական և դաստիարակչական բնույթի զրույցներ անցկացրել հանրակրթական դպրոցներում, մշակույթի ու արվեստի օջախներում և կրթարաններում, մասնակցել է ապրիլյան քառօրյա պատերազմի և Հայոց ցեղասպանության նահատակների հիշատակին նվիրված խաչքարերի օծման և բացման արարողությունների, նախաձեռնել է ուխտագնացություններ և այցեր սոցիալապես անապահով ու զոհված զինվորների ընտանիքներին:

Ապրիլյան քառօրյա պատերազմից հետո թեմի հոգևոր դասի մի շարք ներկայացուցիչներ, առաջնորդական տեղապահի հետ միասին, եղել են զորամասերում և դիրքերում՝ սահմանապահ զինվորներին ցուցաբերելով հոգևոր-բարոյական և նյութական աջակցություն: Անհրաժեշտ չափի դրամական ու նյութական օգնություն է տրամադրվել շուրջ 100 կարիքավոր ընտանիքի, ևս 150 ընտանիքի օգնություն է հատկացվել «World Vision» բարեգործական կազմակերպության աջակցությամբ:

Թեմում գործում է 28 եկեղեցի ու վանք, սպասավորում է 10 քահանա:

2016 թվականին օծվել են Մարտունու Ձորագյուղ և Ճամբարակի Գետիկ համայնքների եկեղեցիները: Ավարտվել է Իշխանավանքի եկեղեցական համալիրի ու Ճամբարակի եկեղեցու կառուցումը, աշխատանքներ են իրականացվել Սարուխան և Մարտունի համայնքների եկեղեցիներում:

Անցյալ տարի կատարվել է 485 մկրտություն և 235 պսակադրություն:

Թեմի հովանու ներքո գործում է 3 կիրակնօրյա դպրոց՝ 190 աշակերտներով:

Հաշվետու տարում վերահրատարակվել է Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցի «Տեղագիր Գեղարքունի Ծովազարդ գավառի» գիրքը:

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ԹԵՄ

Թեմակալ առաջնորդն է Գերշ. Տ. Աբրահամ արքեպիսկոպոս Մկրտչյանը:

2016 թվականին կազմակերպվել են այցելություններ դպրոցներ, մանկապարտեզներ, հոգևոր բովանդակությամբ ցուցահանդեսներ, բանախոսություն-

ներ, Աստվածաշնչի ուսուցման դասընթացներ, խոկումներ, ուխտագնացություններ, երիտասարդական հավաքներ, կրթական-մշակութային խմբակներ, քարոզչություն է իրականացվել թեմի կայքէջի միջոցով: Թեմն իրականացրել է սոցիալական ծրագրեր՝ ի նպաստ Արցախի բանակի, հաշմանդամների, սոցիալապես անապահով և բազմազավակ ընտանիքների:

Թեմում գործում է 12 եկեղեցի և վանք, 46 ծուխ, սպասավորում է 7 հոգևորական: Հաշվետու տարում մասնակի վերանորոգման աշխատանքներ են կատարվել թեմի Խաչիկ, Մարտիրոս համայնքների եկեղեցիներում և Նորավանքում, որոշ համայնքներում տեղադրվել են խաչքարեր:

Անցյալ տարի թեմում կատարվել է 364 մկրտություն և 145 պսակադրություն:

Գործում է 2 կիրակնօրյա դպրոց և 3 երիտասարդաց միություն:

Հաշվետու տարում տպագրվել է 1 անուն գիրք:

ՏԱՎՈՒՇԻ ԹԵՄ

Թեմական առաջնորդն է Գերշ. Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստանյանը:

Հաշվետու տարում այցելություններ են կատարվել դպրոցներ, մանկապարտեզներ, ուսումնական կենտրոններ, զորամասեր, կազմակերպվել են ուխտագնացություններ, ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ, իրականացվել է նաև «Լույս մանկանց» ծրագիրը:

Վերակազմակերպվել է թեմի երիտասարդաց միությունը, որի ջանքերով կյանքի է կոչվել «Հաղարծնի շաբաթ» ծրագիրը: Աշխատանք է տարվում քաղաքային համայնքներից զատ ստեղծելու նաև գյուղական համայնքների երիտասարդաց միություններ: Ստեղծվել են առաջնորդարանի մամուլի և տեղեկատվության կենտրոնը, թեմի կայքէջը, տեղական հեռուստատեսությամբ շարունակաբար հեռարձակվել է «Աստվածաշունչը մեր կյանքում» հաղորդաշարը:

Թեմում գործում է 21 վանք ու եկեղեցի, 60 ծուխ, սպասավորում է 11 հոգևորական:

Հաշվետու տարում օծվել է Նոյեմբերյանի Կողբ համայնքի եկեղեցին, տեղի է ունեցել Դիլիջանի եկեղեցու հողօրհնեքի արարողությունը: Ընթացքի մեջ են Հաղթանակ և Այգեհովիտ համայնքների եկեղեցիների շինարարական աշխատանքները:

Անցյալ տարի կատարվել է 1409 մկրտության և 140 պսակադրություն:

Գործում է 43 կիրակնօրյա դպրոց՝ կից արհեստագործական խմբակներով, 2 սոցիալ-կրթական կենտրոն (ընդհանուր թվով՝ 2100 սան), 5 երիտասարդաց միություն (116 հոգի), թեմական մանկապատանեկան և երիտասարդական երգչախումբ:

Հրատարակվել է «Հաղարծին վանական համալիր» աշխատությունը:

ԱՐԹԻԿԻ ԹԵՄ

Առաջնորդական տեղապահն է Գերշ. Տ. Նարեկ վարդապետ Ավագյանը:

2016 թվականի ընթացքում այցելություններ են կատարվել մանկապարտեզներ, դպրոցներ և այլ կրթօջախներ, քրեակատարողական հիմնարկ, զորամաս,

կազմակերպվել են միջոցառումներ, ուխտագնացություններ: Ապրիլյան պատերազմի օրերին թեմի հոգևորականների անմիջական նախաձեռնությամբ կազմակերպվել են սննդի և այլ պարագաների հավաքագրում և տեղափոխում Արցախ, թեմի հոգևոր դասը մասնակցություն է ունեցել Արթիկում ջրհեղեղից տուժածների տների մաքրման աշխատանքներին: Իրականացվել են «Պարգևենք ուրախ ամանոր» և «Ձմեռ Պապ» բարեգործական ծրագրերը: ԵՀԽ «Կլոր սեղան» հիմնադրամի և թեմի միջոցներով բարոյական ու նյութական օժանդակություն է ցուցաբերվել սոցիալապես անապահով 120 ընտանիքների:

Թեմում գործում է 17 եկեղեցի ու վանք, 24 ծուխ, սպասավորում է 5 քահանա:

Հաշվետու տարում թեմում օծվել է Սարալանջ գյուղի Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցին: Նոր Կյանք համայնքի եկեղեցում կատարվել են վերանորոգչական աշխատանքներ, Լմբատավանքում տեղադրվել է խաչքար: Ընթացքի մեջ են Սարատակ և Հայկասար համայնքների եկեղեցիների շինարարական աշխատանքները:

Անցյալ տարի կատարվել է 522 մկրտություն և 162 պսակադրություն:

Թեմում գործում են երիտասարդաց միություններ և կիրակնօրյա դպրոցներ: Գործում է նաև «Լույս մանկանց» հայ-դանիական ծրագիրը: Առաջիկայում նախատեսվում է ավելացնել կիրակնօրյա դպրոցների թիվը:

ԱՐՑԱԽԻ ԹԵՄ

Թեմական առաջնորդն է Գերշ. Տ. Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը:

Հաշվետու տարում կազմակերպվել են ուխտագնացություններ, աջակցություն է ցուցաբերվել երկկողմանի ծնողազուրկ, կարիքավոր և զոհված զինծառայողների ընտանիքներին: Ապրիլյան քառօրյա պատերազմի օրերին թեմի բոլոր ծառայողները եղել են առաջնագծում:

Անցյալ տարի օծվել են Հադրութի շրջանի Կատարո վանքի Ս. Աստվածածին և Քարագլուխ համայնքի համանուն եկեղեցիները: Ամբողջովին վերանորոգվել են Մարտակերտի Ճանկաթաղ և Մարտունու Մուշկապատ համայնքների եկեղեցիները, ընթացքի մեջ են Ստեփանակերտի Մայր տաճարի, Ճարտար, Շեխեր, Ծաղկաշեն, Ցոր համայնքների եկեղեցիների շինարարական աշխատանքները: Վերանորոգչական աշխատանքներ են իրականացվել Գանձասարի վանքում, Դադիվանքում: Մարտունու շրջանի Ս. Ներսես եկեղեցուն կից կառուցվել են երիցատան և կիրակնօրյա դպրոցի շենքեր:

Գործում է 49 եկեղեցի և 12 ծուխ, սպասավորում է 11 հոգևորական:

Հաշվետու տարում կատարվել է 815 մկրտություն և 129 պսակադրություն:

Թեմի հովանու ներքո գործում են երիտասարդաց միություն, մանկապատանեկան մշակույթի կենտրոն, քարոզչական կենտրոն, եկեղեցասիրաց տիկնանց միություն:

Անցյալ տարի հրատարակվել են «Անեծքից դեպի օրհնություն» եռալեզու գիրքը, եկեղեցական օրացույցներ, գրքույկներ:

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմական առաջնորդն է Գերշ. Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:

Հաշվետու տարում կազմակերպվել են ուխտագնացություններ, համերգներ, ցուցահանդեսներ, դասախոսություններ, գրական և հիշատակի երեկոներ, մրցույթներ, շարունակական այցելություններ են կատարվել մանկատներ, ծերանոցներ ու բանտեր, կազմակերպվել են եկեղեցական երգչախմբեր, բակային ճամբարներ, նյութական օգնություն է հատկացվել անապահով ընտանիքներին: Արցախի քառօրյա պատերազմից տուժածներին օգնելու նպատակով կազմակերպվել է հանգանակություն:

Թեմում գործում է 57 եկեղեցի և ծուխ, սպասավորում է 17 հոգևորական: Ընթացիկ տարում հիմնովին վերանորոգվել և վերաօծվել են Ախալքալաքի շրջանի Սուլդա և Վաչիան համայնքների եկեղեցիները:

Անցյալ տարի կատարվել է 1447 մկրտություն և 473 պսակադրություն:

Գործում են 6 կիրակնօրյա դպրոց, 3 նախակրթարան, ևս 3 կրթամշակութային և երիտասարդական կենտրոններ:

Թեմի մամլո և լրատվության բաժնի կողմից լուսաբանվում է թեմական կյանքը:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմական առաջնորդն է Գերշ. Տ. Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանը:

Հաշվետու ժամանակահատվածում պարբերաբար կազմակերպվել են Սուրբ Գրքի ուսուցումներ և հոգևոր զրույցներ, խոկումներ, գիտաժողովներ, գրքերի շնորհանդեսներ, տարաբնույթ միջոցառումներ, այցելություններ են կատարվել քրեակատարողական հիմնարկներ, հիվանդանոցներ, դպրոցներ, ծերանոցներ: Թեմում գործունեություն է ծավալվում նաև միջեկեղեցական հարաբերություններում (հանդիպումներ, բանախոսություններ, կոնֆերանսներ, էկումենիկ արարողություններ և այլն): Առաջնորդանիստ եկեղեցուն կից գործում է նաև սոցիալական օգնության բաժինը, որն իրականացնում է բարեգործական ծրագրեր: Տարեցտարի ընդլայնվող սոցիալական ծրագրերի շրջանակներում հոգևոր և նյութական աջակցություն է ցուցաբերվել անապահով ընտանիքներին, հաշմանդամներին, ծնողազուրկ և հիվանդ երեխաներին, ծերախնամ կառույցներին, բանտարկյալներին:

Թեմում գործում է 36 եկեղեցի և 80 ծուխ, սպասավորում է 34 հոգևորական:

Անցյալ տարի օծվել է Տվերի Ս. Հարություն եկեղեցին, Օրենբուրգ և Սուրգուտ քաղաքներում կատարվել են հիմնօրհնեքի արարողություններ, ընթացքի մեջ են 19 եկեղեցիների կառուցման աշխատանքները:

Հաշվետու տարում թեմում կատարվել է 4060 մկրտություն և 1257 պսակադրություն:

Թեմի հովանու ներքո գործում են 18 հայորդյաց տուն, կիրակնօրյա դպրոցներ, երիտասարդաց միություններ:

Անցյալ տարում անխափան լույս է տեսել թեմի պաշտոնական ամսաթերթը, պաշտոնական կայքում և սոցիալական ցանցերում լուսաբանվել է թեմի գործունեությունը: Հրատարակվել են 5 անուն գիրք, օրացույցներ:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմակալ առաջնորդն է Գերշ. Տ. Մովսես եպիսկոպոս Մովսեսյանը:

Հաշվետու տարում կազմակերպվել են Սուրբ Գրքի, հոգևոր ու ազգային երգերի, պարի ուսուցումներ, կիրակնօրյա դպրոցների մանկավարժների վերապատրաստման դասընթաց, հոգևոր և գրական երեկոներ, գիտաժողովներ, դասախոսություններ, ուխտագնացություններ, այցելություն հիվանդանոցներ, սոցիալական աջակցություն է ցուցաբերվել անապահով ընտանիքներին:

Թեմում գործում է 23 եկեղեցի և 13 մատուռ, սպասավորում է 25 քահանա:

Հաշվետու տարում օծվել են Անապայի Ս. Գևորգ եկեղեցին և Արմավիրի նույնանուն մատուռը:

Ընթացիկ տարում կատարվել է 4701 մկրտություն և 810 պսակադրություն: Եկեղեցիներին կից գործում են 18 կիրակնօրյա դպրոց, մշակութային-ստեղծագործական կենտրոններ, մի շարք ծուխերում՝ տիկնանց միություններ:

Գործում է եկեղեցասեր երիտասարդական միությունը, որն ունի ծխական մասնաճյուղեր: Թեմի հովանու ներքո իր գործունեությունն է ծավալում «Հայ մանուկների իրավունքների պաշտպանության միություն»-ը, որը պետական աջակցությամբ և բարերարների մեկենասությամբ իրականացնում է սոցիալական, վերականգնողական, իրավական աջակցության և բժշկական մի շարք ծրագրեր:

Հրատարակվել են քարոզթերթիկներ ու գրքեր, աղոթագրքեր, թերթեր, ամսագրեր, պատմական թեմայով գրքույկներ, հոգևոր-քարոզչական գործունեություն է ծավալվել նաև թեմի պաշտոնական կայքէջի միջոցով:

ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմակալ առաջնորդն է Գերշ. Տ. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանը:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են Սուրբ Գրքի սերտողության դասընթացներ, քարոզխոսություններ, գիտաժողովներ, ցուցահանդեսներ, այցելություններ ծերանոցներ և մանկատներ, ամառային ճամբարներ, ուխտագնացություններ: Իրականացվել են սոցիալական բնույթի մի շարք ձեռնարկներ՝ բարոյական և նյութական օգնություն հատկացնելով կարիքավոր երեխաներին, կիրակնօրյայի և մանկապարտեզի սաներին, թերհասների մանկատանը, կարիքավոր հաշմանդամների կազմակերպությանը:

Թեմում գործում է 9 եկեղեցի և 25 ծուխ, սպասավորում է 11 քահանա: 5 եկեղեցի և 1 մատուռ գտնվում են վերանորոգման փուլում: Տեղադրվել և օծվել են խաչքարեր՝ նվիրված Հայոց ցեղասպանությանը և հայրենյաց պաշտպաններին:

Անցյալ տարի կատարվել է 451 մկրտություն և 79 պսակադրություն:

Գործում է 9 կիրակնօրյա դպրոց, 3 երիտասարդաց միություն և 2 տիկնանց միություն:

Հայ գրատպության 400-ամյակին ընդառաջ՝ Լվովում իրականացվել են բազմաթիվ միջոցառումներ, այդ թվում՝ գրքերի տպագրություններ, շնորհանդեսներ և այլ հանդիսություններ: Թեմում հրատարակվել են «Ուրարտու» և «Արագած» ամսաթերթերը:

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ, ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Թեմական առաջնորդը և Հայրապետական պատվիրակն է Գերշ. Տ. Վահան եպիսկոպոս Հովհաննիսյանը:

Թեմի և պատվիրակության հոգևոր իշխանության ներքո գործող եկեղեցական համայքներում, զանազան օժանդակ մարմինների մասնակցությամբ, կազմակերպվել են Սուրբ Գրքի սերտողության և քրիստոնեական դասընթացներ, դասախոսություններ, ուխտագնացություններ, կլոր սեղաններ և այլն:

Շարունակվել է համագործակցությունը էկումենիկ, պետական և համայնքային կառույցների, բարեսիրական, մարզական ու մշակութային կազմակերպությունների հետ:

Թեմում և Հայրապետական պատվիրակության տարածքում գործում է 17 եկեղեցի և 23 ծուխ, սպասավորում է 33 հոգևորական:

Անցյալ տարի կատարվել է 672 մկրտություն և 265 պսակադրություն:

Գործում է 5 կիրակնօրյա դպրոց և 2 մեկօրյա վարժարան, 14 երիտասարդաց միություն և 15 տիկնանց միություն:

2016 թվականին թեմը հրատարակել է եռալեզու աղոթագիրք՝ աշխատասիրությամբ Տ. Հուսիկ քհն. Սարգսյանի: Մի շարք ծուխերում հրատարակվել են եկեղեցական օրացույցներ, ամենամսյա թերթեր՝ տպագիր կամ համացանցային տարբերակով:

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԵՎ ԻՌԼԱՆԴԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմական առաջնորդն է Գերշ. Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը:

Հաշվետու տարում անցկացվել են Սուրբ Գրքի սերտողություններ, կազմակերպվել են դասախոսություններ և բանախոսություններ, ուխտագնացություններ: Թեմը շարունակել է համագործակցությունը էկումենիկ, պետական և համայնքային կառույցների, հասարակական ու մշակութային միությունների հետ:

Նախատեսվում է ստեղծել «Friends of Etchmiadzin» հիմնադրամը՝ Մայր Աթոռի ծրագրերին օժանդակելու նպատակով: Թեմն ակտիվորեն քարոզչություն է իրականացրել համացանցով:

Գործում է 3 եկեղեցի և 5 ծուխ, սպասավորում է 4 հոգևորական:

Անցյալ տարի թեմում կատարվել է 45 մկրտություն և 9 պսակադրություն:

Թեմի հովանու ներքո գործում են տիկնանց միություններ, շաբաթօրյա և կիրակնօրյա դպրոցներ, երիտասարդաց միություն, ինչպես նաև ACT UK հիմնադրամը, որը ֆինանսավորում է առաջնորդարանի, երբեմն էլ՝ ծուխերի ծրագրերը:

Անցյալ տարի անգլերենով հրատարակել է Ս. Գրիգոր Նարեկացու աղոթամատյանը:

ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Առաջնորդական տեղապահն է Հոգշ. Տ. Խորեն վարդապետ Առաքելյանը:

Հաշվետու տարում կազմակերպվել են Աստվածաշնչի սերտողության դասընթացներ, ուխտագնացություններ, բարոյական և նյութական աջակցություն է ցուցաբերվել անտուններին, փախստականներին: Շարունակական են եղել կրոնական և պետական մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներն ու փոխադարձ այցելությունները:

Գործում է 1 եկեղեցի և 2 ծուխ: Թեմի միակ հոգևոր սպասավորը առաջնորդական տեղապահն է:

2016 թվականի ընթացքում կատարվել է 17 մկրտություն և 7 պսակադրություն:

Թեմում գործում է Երիտասարդաց միությունը՝ 40 անդամներով, ինչպես նաև «Էջմիածնասեր տիկնանց միությունը»:

ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմակալ առաջնորդն է Գերշ. Տ. Տաթև եպիսկոպոս Հակոբյանը:

Հաշվետու տարում իրականացվել են քարոզչական, մշակութային, հոգևորդաստիարակչական, եկեղեցաշինական և բազում այլ ծրագրեր: Թեմում գործունեություն է ծավալվում նաև միջեկեղեցական հարաբերություններում (հանդիպումներ, կոնֆերանսներ, էկումենիկ արարողություններ և այլն):

Թեմն իրականացրել է սոցիալական ծրագրեր՝ ի նպաստ միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ, առողջական խնդիրներ ունեցող և մանկատներում կամ որևէ կազմակերպության հոգածության ներքո գտնվող երեխաների: Թեմի հոգևոր կյանքի աշխուժացման նպատակով կազմակերպվել են ուխտագնացություններ:

Անցյալ տարի սկսվել և ընթացքի մեջ են թեմի անշարժ և շարժական ամբողջ ունեցվածքի ցուցակագրման, ինչպես նաև թանգարանի նորոգման ու բարեկարգման աշխատանքները: 2016 թվականին դատական գործընթացների արդյունքում վերադարձվել են թեմին պատկանող 5 կալվածքներ՝ Բաբադագ, Յաշ և Թուլչա քաղաքներում:

Թեմում գործում է 10 եկեղեցի և 2 վանք, 10 ծուխ, սպասավորում է 6 քահանա:

Հաշվետու տարում ամբողջությամբ նորոգվել ու վերականգնվել է Սուչավայի Ս. Սիմեոնի Կարմիր աշտարակը, բարեկարգվել է եկեղեցու բակը, Հաճկատար վանքին կից կառուցվել է հովվատուն:

2016 թվականին կատարվել է 11 մկրտություն և 5 պսակադրություն:

Գործում է 1 կիրակնօրյա դպրոց, 1 կիրակնօրյա մանկապարտեզ, 1 տիկնանց միություն և 1 երիտասարդաց միություն:

Թեմում հրատարակվել է 2 անուն գիրք:

ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմական առաջնորդն է Հոգշ. Տ. Իսահակ վարդապետ Պողոսյանը:

Հաշվետու տարում կազմակերպվել են Ս. Պատարագի ուսուցման դասընթացներ, միջեկեղեցական, պետական ու հասարակական կառույցների ներկայացուցիչների հետ հանդիպումներ, բարոյական և նյութական աջակցություններ հիվանդներին ու կարիքավորներին: Իրականացվել է «Խոսենք հայերեն» ծրագիրը:

Աշխատանքներ են տարվում կիրակնօրյա դպրոցներում մայրենի լեզվի ուսուցմանը զարկ տալու, դեպի հայրենիք ուխտագանցությունները հաճախակի դարձնելու, թանգարանները խնամելու և նորերը հիմնադրելու ուղղությամբ: Ընթացքի մեջ են թեմում առկա եկեղեցական սրբությունները գույքագրելու, հավաքածու «հանրագիտարանի» և մեծ օրացույցի, եռալեզու պատարագամատույցի տպագրության աշխատանքները, ինչպես նաև թեմի պատմության համապարփակ աշխատությունը:

Թեմում գործում է 11 եկեղեցի և 13 ծուխ, սպասավորում է 8 քահանա:

Անցյալ տարի կատարվել է 69 մկրտություն և 21 պսակադրություն:

Հրատարակվել է «Հիսուս Քրիստոսի ծնունդը» մանկական պատկերազարդ գիրքը:

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմական առաջնորդն է Գերշ. Տ. Գարեգին արքեպիսկոպոս Բեկչյանը:

Հաշվետու տարում կազմակերպվել են Սուրբ Գրքի սերտողության խմբակներ, ամառային ճամբարներ, միջեկեղեցական հավաքներ: Թեմում հետևողական աշխատանք է տարվում դպրաց ու սարկավագաց դասերի ծիսական և աստվածաբանական գիտելիքների խորացման ուղղությամբ, կազմակերպվում են սեմինարներ: Եկեղեցական բոլոր համայնքներում ուրբաթ և շաբաթ օրերին կրոնի ու հայոց լեզվի կանոնավոր դասընթացներ են անցկացվում:

Թեմում գործում է 3 եկեղեցի և 15 ծուխ, սպասավորում է 5 հոգևորական:

Անցյալ տարի թեմում կատարվել է 95 մկրտություն և 49 պսակադրություն:

Գործում է 5 կիրակնօրյա դպրոց:

ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Առաջնորդական տեղապահն է Հոգշ. Տ. Գուսան վարդապետ Ալճանյանը:

Հաշվետու տարում թեմում կազմակերպվել են Սուրբ Գրքի սերտողության, հայոց լեզվի ուսուցման դասընթացներ, դասախոսություններ, հսկումներ, էկումենիկ արարողություններ, հոգևոր երգերի համերգ, ցուցահանդես, օժանդակություն է հատկացվել Արցախին:

Թեմում գործում է 1 եկեղեցի և 3 ծուխ, սպասավորում է 2 հոգևորական:

Գործում է 1 կիրակնօրյա դպրոց՝ 35 սաներով, 1 երիտասարդաց միություն՝ 30 երիտասարդներով, 1 տիկնանց միություն:

Անցյալ տարի կատարվել է 24 մկրտություն և 8 պսակադրություն:

ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄ

Թեմական առաջնորդն է Գերշ. Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը:

Հաշվետու տարում թեմում իրականացվել են կրոնական սեմինարներ, խոկումներ, դասախոսություններ, Սուրբ Գրքի սերտողություններ, հոգևոր զրույցներ, գիտաժողովներ, գրքերի շնորհանդեսներ, հեռարձակվել են հեռուստա-ռադիոհաղորդումներ, թողարկվել են տեսաերիզներ, այցելություններ են կատարվել հիվանդանոցներ, դպրոցներ, կազմակերպվել է շուրջ 500 երեխաների ամառային հանգիստը ճամբարներում:

Թեմում գործունեություն է ծավալվում նաև միջեկեղեցական հարաբերություններում (հանդիպումներ, բանախոսություններ, կոնֆերանսներ, էկումենիկ արարողություններ և այլն):

2016 թվականին թեմը սոցիալական ոլորտում իրականացրել է առողջապահական, կրթական, բարեսիրական, ինչպես նաև համայնքների զարգացմանը, ՀՀ-ում աղքատության հաղթահարմանն ու երեխաների բարեկեցությանը նպաստող ծրագրեր:

Թեմում գործում է 46 եկեղեցի, 61 ծուխ, սպասավորում է 62 հոգևորական:

Գործում է 34 կիրակնօրյա վարժարան:

Անցյալ տարի կատարվել է 384 մկրտություն և 127 պսակադրություն:

ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄ

Թեմական առաջնորդն է Գերշ. Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը:

Հաշվետու տարում թեմը կազմակերպել է կրոնական սեմինարներ, խոկումներ, դասախոսություններ, Սուրբ Գրքի սերտողություններ, եղբայրական ծառայության ծրագրեր, ամառային ճամբարներ, հեռարձակվել են հեռուստա-ռադիոհաղորդումներ:

Թեմը նախատեսում է հետագայում ընդլայնել սոցիալական փոխօգնության և երիտասարդների հոգևոր ու ազգային դաստիարակության ծրագրերը: Քարոզչություն է իրականացվել թեմի կայքէջի և սոց. ցանցի միջոցով:

Թեմում գործում է 24 եկեղեցի, 45 ծուխ և շուրջ 20 ծխական առաքելություն, սպասավորում է 24 հոգևորական:

Անցյալ տարի կառուցվել և օծվել են Ս. Առաքելոց և Ս. Կիրակոս եկեղեցիները: Տարեցների համար կառուցվել է բնակարանային համալիր:

Ընթացքի մեջ է երկու նոր եկեղեցիների կառուցումը, ինչպես նաև գործող եկեղեցիներին կից նոր կալվածքներ են ձեռք բերվել:

Գործում է 40 կիրակնօրյա վարժարան՝ երկու հազարից ավելի աշակերտությամբ:

Հրատարակվել է 4 անուն գիրք:

ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմական առաջնորդն է Գերշ. Տ. Աբգար եպիսկոպոս Հովակիմյանը:

Հաշվետու տարում կազմակերպվել են Աստվածաշնչի սերտողության դասընթացներ և զանազան միջոցառումներ:

Թեմում գործում է 11 եկեղեցի և ծուխ, 5 ծխական առաքելություն, սպասավորում է 9 քահանա:

Անցյալ տարի թեմում կատարվել է 101 մկրտություն և 62 պսակադրություն:

Թեմի հովանու ներքո գործում են 5 կիրակնօրյա դպրոց՝ շուրջ 300 աշակերտով, Քրիստոնեական դաստիարակության կենտրոն, Հայ ընտանիքի օգնության ծառայություն, Ընտանիքի ծառայության, Հայաստանի երեխաների հիմնադրամ, Կանադահայոց երիտասարդաց առաքելություն, Երիտասարդաց ծառայության գրասենյակները, առաջնորդարանի ճամբարի և Կանադահայոց կատարողական արվեստների հանձնախմբերը, Հայ եկեղեցասեր տիկնանց կենտրոնական խորհուրդը և Առաջնորդարանի մնայուն հիմնադրամը:

2016 թվականին հրատարակվել է 2 անուն գիրք, թեմական եռալեզու տարեգիրք, եկեղեցական տոնացույց և Երեխաների հիմնադրամի օրացույց:

ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմական առաջնորդն է Գերշ. Տ. Գիսակ արքեպիսկոպոս Մուրադյանը:

Հաշվետու տարում անցկացվել են Աստվածաշնչի սերտողություններ, կրոնի և պատմության դասընթացներ, դասախոսություններ, այցելություններ են կատարվել հայկական վարժարաններ, ծերանոցներ ու հիվանդանոցներ:

Թեմում գործում է 5 եկեղեցի և ծուխ, սպասավորում է 5 հոգևորական:

Անցյալ տարի թեմում կատարվել է 114 մկրտություն և 23 պսակադրություն:

Թեմի հովանու ներքո գործում է 3 ամենօրյա և 1 կիրակնօրյա վարժարան, 5 տիկնանց միություն:

Թեմում հրատարակվում է «Ավետաբեր» ամսաթերթը:

ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմական առաջնորդն է Գերշ. Տ. Նարեկ եպիսկոպոս Բերբերյանը:

Հաշվետու տարում թեմում կազմակերպվել են Սուրբ Գրքի սերտողություններ և դասախոսություններ, երիտասարդաց երգչախումբ, շարունակվել են էկումենիկ սերտ հարաբերությունները տեղի Կաթոլիկ և Ասորի եկեղեցիների հետ:

2016 թվականին ստեղծվել է երիտասարդների խորհրդակցական մարմին, որի ջանքերով կազմակերպվել են հոգևոր-մշակութային մի շարք ձեռնարկներ:

Թեմում գործում է 2 եկեղեցի և ծուխ, սպասավորում է 2 քահանա:

Անցյալ տարի թեմում կատարվել է 43 մկրտություն և 20 պսակադրություն:

Գործում է ամենօրյա ազգային վարժարան՝ 110 աշակերտներով:

Հաշվետու տարում տեղի է ունեցել Սուրբ Գրքի պորտուգալերեն հրատարակության շնորհանդեսը:

ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմական առաջնորդն է Գերշ. Տ. Հակոբ արքեպիսկոպոս Գլնճյանը:

Հաշվետու տարում ծիսական արարողություններից և տարաբնույթ միջոցառումներից զատ, ամեն շաբաթ կազմակերպվել են կրոնի և Հայ եկեղեցու պատմության դասընթացներ թեմի հայկական վարժարանում:

Գործում է 1 եկեղեցի, թեմի միակ հոգևոր սպասավորը թեմական առաջնորդն է: Անցյալ տարի կատարվել է 16 մկրտություն և 2 պսակադրություն:

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմական առաջնորդն է Գերշ. Տ. Աշոտ եպիսկոպոս Մնացականյանը:

Հաշվետու տարում կազմակերպվել են կրոնի և քրիստոնեական դաստիարակության դասընթացներ, ուխտագնացություններ: Թեմի միջոցներով իրականացվում են կրթական, առողջապահական, բարեսիրական և սոցիալական օժանդակության տարբեր ծրագրեր:

Թեմում գործում է 5 եկեղեցի, 5 ծուխ և 3 մատուռ, սպասավորում է 3 հոգևորական:

Անցյալ տարի թեմում կատարվել է 14 մկրտություն և 4 պսակադրություն:

Գործում են 2 ազգային վարժարան և կիրակնօրյա դպրոց, 2 կրթական հիմնադրամ:

ԻՐԱՔԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմական առաջնորդն է Գերշ. Տ. Ավագ արքեպիսկոպոս Ասատուրյանը:

Հաշվետու տարում թեմի երիտասարդների համար կազմակերպվել են դասախոսություններ, Սուրբ Գրքի սերտողություններ: Սոցիալական ծառայության ոլորտում թեմի կողմից իրականացվել են անապահով ընտանիքներին նյութական օժանդակության հատկացման, ծերախնամության, բժշկական օգնության տրամադրման ծրագրերը: Թեմապատկան որոշ շենքեր անվճար հիմունքներով հատկացվել են կարիքավոր ընտանիքներին:

Թեմում գործում է 10 եկեղեցի և 2 ծուխ, սպասավորում է 8 հոգևորական:

2016 թվականի հոկտեմբերի 14-ին օծվել է Քերքուկի Ս. Աստվածածին եկեղեցին, ևս 1 եկեղեցու շինարարություն ընթացքի մեջ է: Եկեղեցիների կառուցումն ու վերանորոգումն իրականացվում է պետական միջոցներով:

Անցյալ տարի թեմում կատարվել է 37 մկրտություն և 19 պսակադրություն:

Թեմի հովանու ներքո շարունակում է հոգևոր-քարոզչական առաքելություն իրականացնել Հայ եկեղեցասիրաց կազմակերպությունը՝ 75 անդամներով: Պատերազմական իրավիճակի պատճառով դադարել է կիրակնօրյա դպրոցի գործունեությունը: Գործում են 1 մանկապարտեզ և 1 տարրական վարժարան՝ 91 սաներով: Դհոքի Ս. Ներսես Շնորհալի ամառային դպրոցում ուսանում են 65 աշակերտ:

ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ԵՎ ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Թեմական առաջնորդն է Գերշ. Տ. Հայկազուն եպիսկոպոս Նաջարյանը:

Հաշվետու տարում պարբերաբար կազմակերպվել են Սուրբ Գրքի սերտողություններ, այցելություններ համայնքներ, կրոնական և պետական մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներ, բազմաբնույթ միջոցառումներ, հոգևոր բնույթի հաղորդումներ են հեռարձակվել տեղական ռադիոալիքներով, թեմն իր մասնակցությունն է բերել միջեկեղեցական տարբեր ժողովներին:

Թեմում գործում է 3 եկեղեցի, սպասավորում է 5 հոգևորական:

Ընթացքի մեջ են թեմի առաջնորդարանի նոր մասնաշենքի շինարարական աշխատանքները, որոնք նախատեսվում է ավարտել 2017 թվականի դեկտեմբեր ամսին:

Հաշվետու տարում կատարվել է 120 մկրտություն և 45 պսակադրություն:

Գործում են տիկնանց և երիտասարդաց միություններ, կիրակնօրյա դպրոց:

Անխափան հրատարակվել են «Լոյս» և «Յոյս» պաշտոնաթերթերը:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԵՎ ՍԿԱՆԴԻՆԱՎԻԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայրապետական պատվիրակի պաշտոնակատարն է Հոգշ. Տ. Տիրան վարդապետ Պետրոսյանը:

Պատվիրակության հոգևոր իշխանության ներքո գործող եկեղեցական համայնքներում կազմակերպվել են Սուրբ Գրքի սերտողության դասընթացներ, հսկումներ, էկումենիկ արարողություններ, հոգևոր երգերի ուսուցումներ, հոգևոր զրույցներ, դասախոսություններ, տարաբնույթ միջոցառումներ:

Սոցիալական ծրագրերն ուղղվել են Արցախին, ինչպես նաև Հայաստանի հաշմանդամ երեխաներին ու երիտասարդներին:

Հայրապետական պատվիրակության տարածքում գործում է 5 եկեղեցի և 24 ծուխ, սպասավորում է 6 հոգևորական:

Հաշվետու տարում թեմի տարբեր համայնքներում տեղադրվել են խաչքարեր:

Անցյալ տարի կատարվել է 63 մկրտություն և 37 պսակադրություն:

Գործում է 16 կիրակնօրյա դպրոց՝ 435 աշակերտներով, երիտասարդաց և տիկնանց միություններ:

2016 թվականին հրատարակվել են եկեղեցական օրացույցներ:

ԿՐՕՆՅԱԳԻՏԱԿԱՆ

Տ. ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԴԱՏԱՎՈՐԻ ԿԻՐԱԿԻԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(26 մարտի, 2017 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Պարտ է յամենայն ժամ
կալ յաղօթս եւ մի ձանձրանալ»
(Ղուկ. ԺԸ. 1):

Սիրելի՛ հավատացյալ հայորդիներ,

Համայն քրիստոնյա աշխարհն արդեն շաբաթներ է, ինչ ոտք է դրել ապաշխարության ճանապարհին: Հոգևոր ինքնության և ինքնագիտակցության վերարժևորման երկար թվացող Մեծ պահքի այս ուխտագնացությունը մեզ առաջնորդեց՝ կայանելու հույսի և աղոթքի հանգրվանում. հարցադրումներով լի մի շրջան, երբ «ինչու»-ներն ավելի շատ են, քան «որովհետեւ»-ները:

Դժվարին էր ճանապարհը՝ վերապրումներով լի. դրախտ, արտաքսում, անառակ կյանք և զղջում: Միջընտանեկան հարաբերությունների վերլուծությամբ զգացինք Սիրող Հայր Աստծո ներողամտությունը: Միջանձնային հարաբերությունների քննությամբ ընկալեցինք սթափվող և նորոգվող մարդու հոգեբանությունը: Իսկ հիմա՞: Հիմա անձանձրույթ համառության և արատավոր եսասիրության ու անտարբերության մենամա՛րտն է, որ ավարտվեց հարատև աղոթքի, հավատի և համբերության արդար հաղթանակով:

Ազդու է մարդկային իրականությունից բերված պատումը և խորհրդածության առիթ ընծայող : Այրի մի կին կար, մենակ, անօգնական, չուներ ո՛չ դրամ, ո՛չ էլ ազդեցիկ ծանոթներ, որ աշխարհին հատուկ միջոցներով հասներ արդարադատության: Նրա միակ զենքը հավատքն

էր, համառությունը և չվհատվելու անսահման կարողությունը: Եվ կար մի դատավոր՝ ընչաքաղց և ագահ, իր իսկ վկայությամբ «եւ յԱստուծոյ ոչ երկնչիմ, եւ ի մարդկանէ ոչ ամաչեմ»: Թվացյալ անկաշառություն, մարդկային անբարոյականության և աստվածամերժության բացահայտ խոստովանություն, քանզի Աստծուց չի երկյուղում միայն նա, ով չի հավատում Նրա գոյությանը, իսկ մարդկանցից չի ամաչում նա, ում համար արժեքը ոչ թե մարդն է, այլ նրա բերած օգուտը: Ահա թե ումից էր արդար դատ ակնկալում այրին: Հայտնի չեն մանրամասները, թերևս կարեւոր էլ չեն: Արդա՞ր էր խնդրանքը կամ իրավացի՞ էր մերժումը՝ լռում է առակախոսը:

Հետաքրքրական է առակի բարույքը. «Իսկ Աստված արդարություն, վրեժխնդրություն չի՞ անի Իր այն ծառաներին, որոնք գիշեր և ցերեկ աղաղակում են. և նրանց հանդեպ միայն համբերատա՞ր կլինի: Այո՛, ասում եմ ձեզ, նրանց իսկույն արդարություն կանի...» (Ղուկ. ԺԸ. 7-8):

Վերիմաստավորելով մարդկային կյանքից վերցրած կենցաղային պարզ օրինակը և այն փոխաբերական իմաստով հարաբերակցելով մարդու բանականության, մտքի ու ոգու դատ ու դատաստանի իրականության հետ՝ Քրիստոս այս առակում ընդգծում է հակադարձությունը Աստծո և անիրավ դատավորի միջև: Եթե դատավորը որոշում է այրու խնդրանքը լսել եաաիիրությունից դրդված, որպեսզի ազատվի կնոջը լսելու տառապանքից, ապա Աստված այդ անում է անսահման մարդասիրությունից, որպեսզի պարգևի Իրենից խնդրվածը:

Այլ խոսքով, սիրելի՛ հավատացյալներ, Տերը մեզ վստահեցնում, խրատում և հորդորում է՝ առանց վհատվելու հանապազ աղոթել և համբերությամբ սպասել Աստծո արդարությանը, Նրա արդար դատին, քանզի ինչպես սաղմոսում է Դավիթը, «Արդարություն է անում Տերը, և իրավունք բոլոր զրկյալներին» (Սաղմ. ՃԳ. 6) կամ նաև ասվում է. «Նախանձոտ և վրեժխնդիր Աստված է Տերը և բարկության տեր, վրեժ առնող է Տերը Իր ոսոխներից» (Նաում Ա. 2):

Աստվածային արդարություն և արդարադատություն: Պարզ, սակայն ընդգրկուն հասկացություններ, որոնց վերաբերյալ մտածումները, վստահաբար, մտահոգում են մեզանից յուրաքանչյուրին՝ անկախ հասարակության մեջ մեր զբաղեցրած դիրքից, տարիքից և սեռից: Կյանքում բոլորս էլ երբեմն ստիպված ենք «դատավոր» լինել, գնահատել իրավիճակը, որոշել՝ ով է արդար, ով՝ մեղավոր: Դյուրին գործ չէ, և նման դեպքերում բոլորս էլ նեղն ենք ընկնում: Զհուսահատվենք հանկարծ,

չկրկնենք դատավորի պես. «եւ յԱստուծոյ ոչ երկնչիմ, եւ ի մարդկանէ ոչ ամաչեմ» (Ղուկ. ԺԸ. 4):

Քիչ չեն դեպքերը, երբ մենք ենք բողոքում անարդարությունից ու անարդարադատությունից, առանց անդրադառնալու, սակայն, այդ մեծ արժեքների պահպանության մեջ ունեցած մեր գործուն մասնակցությանը: Մինչ հարցնում ենք՝ «Ո՞ւր ես Աստված, ինչու՞ չես արձագանքում մեզ», մինչ խնդրում ենք. «Ով Տեր՝ վրեժխնդրության Աստված..., հայտնվի՛ր, բարձրացի՛ր, ով երկրի Դատավոր, հատուցում տուր ամբարտավաններին» (Սաղմ ՂԴ. 1-2), անդրադառնանք ու հարցնենք. «Իսկ մենք արդա՞ր ենք, մեր գործերն արդա՞ր են: Մեր խնդրանքը, մեր պահանջը արդա՞ր, տեղի՞ն և ժամանակի՞ն է»:

Իրավ: Երբեմն թվում է, թէ Աստված չի լսում մեր աղոթքը և կարծես ուշանում է մեզ պատասխանելիս: Վերցնո՛ւմ է սիրելիին, անկարելին կարելի չի՛ դարձնում: Կարծես թե Նա չի իրականացնում մեր խնդրանքները, և չենք ունենում այն, ինչ երազում ենք: Մինչդեռ մոռանում ենք մեզ հարցնել. «Իսկ մենք կատարո՞ւմ ենք Աստծո պատվիրաններն ու հորդորները: Մենք արդյոք չե՞նք հապաղում և ուշացնում մեր արդար արարքներն ու գործերը: Արդարացի՞ են արդյոք մեր պահանջները, մեր խնդրանքներն ու բողոքները «հապաղող» Աստծուն, երբ մե՛նք չենք կատարում Նրա պատվիրանները»: Աստված հազարամյակներ սպասեց, որպեսզի Իր արքայությունը հաստատվի երկրի վրա:

Այո՛, Աստված, ինչպես սիրող և իմաստուն ծնող, կարող է հապաղել մեր հավատքը գոտեպնդելու համար, քանզի հաճախ ժամանակը չէ, և պատրաստ չենք ստանալու, վերցնելու, քանզի եթե կորցնենք, ցավն ու հուսահատությունն ավելի մեծ են լինելու: «Աստված ներող է և ողորմությամբ հարուստ» (Սաղմ. ՁՁ. 5), բայց չի հանդուրժի հուսահատի ինքնասպանությունը: Թող չթվա, թե մենք լսելի չենք Աստծուն: Նա լսում է բոլորին՝ համբերությամբ, անձանձրույթ, «բոլորով սրտիւ» և անկեղծությամբ: Պետք չէ նաև մտածել, թե մենք մեր անդադար աղոթքներով կարող ենք անհանգստացնել Աստծուն: Ընդհակառակը, «պարտ է յամենայն ժամ կալ... յաղօթս եւ մի՛ ձանձրանալ», ոչ միայն ուղղել «ի խորոց սրտից խոսք ընդ Աստուծոյ», այլև կատարել գործեր «ի փառս Աստուծոյ»:

Որքան էլ զարմանալի է, աշխարհը շատ չի սիրում արդարություն, և արդարի համար դժվար է ապրել: «Շատ են արդարի նեղությունները», - ասում է Սաղմոսերգուն, սակայն, շտապում է սփոփել. «բայց Տերն

այդ ամենից փրկում է նրան» (Սաղմ. ԼԴ. 19): Ուստի, փորձություններով լեցուն այս աշխարհի մեջ համբերող և համբերատար, ինչու չէ, նաև մի քիչ համառ պետք է լինենք, որպեսզի Տիրոջ խոսքի համաձայն՝ «համբերությամբ փրկենք մեր հոգիները» (հմմտ. Ղուկ. ԻԱ. 19): Մեր աղոթքները պիտի լինեն մնայուն, լցված հույսով, հավատով և այն համոզումով, որ մեր ձայնը անպայման տեղ է հասնելու: «Հոբի համբերությունը լսել եք, և Տիրոջ՝ նրա համար արած վախճանը տեսաք, որ Տերը բազմագութ է եւ ողորմած»,- հիշեցնում է Հակոբոս առաքյալը (Հակ. Ե. 11): Համբերություն չունեցող մարդը չի կարողանում դիմանալ փորձություններին, տկարանում է հավատքի մեջ և հուսահատվում: Առանց հավատքի, առանց համբերության չենք կարող ժառանգել Քրիստոսի թագավորությունը: Ինչպես այրի կինը համբերությամբ շահեց իր դատը, այնպես էլ մենք համբերությամբ կարող ենք մեր փրկության դատը շահել, որովհետև «Ո համբերեսցէ իսպառ՝ նա կեցցէ» (Մատթ. Ժ. 22):

Եկե՛ք մեր արդարության պահանջատերը լինենք, Հակոբի նման կախվենք Տիրոջ փեշերից, «մինչև որ օրհնի» (հմմտ. Ծննդ. ԼԲ. 26) ու վերհիշենք. եթե այրի կնոջ համառությունը կոտրեց անիրավ դատավորի քարացած խիղճը և ստիպեց նրան անդրադառնալ խնդրանքին, ապա ինչպես կարող ենք մտածել, որ Արդար Դատավորը՝ Ամենակարող Աստված, չի իրականացնելու խնդրանքները նրանց, ովքեր ամեն օր դիմում են «Եղիցին կամք Քո»:

Այս օրերին, սիրելի՛ հավատացյալներ, մի կողմ դնենք մեր դատը: Մեր խնդրանքները, մեր համառությունը թող կարոտյալի և մերձավորի բարօրությանն ուղղվեն, հիվանդաց առողջության և ննջեցելոց արքայության մեր աղոթքը թող փափկացնի Ողորմած Աստծուն, երկրին հայոց, աշխարհին համայն անդորրության մաղթանքով Երկնավոր Տիրոջ խաղաղությունը անդադար հայցենք: Զինվորին հայոց բազկին զորություն և անսասանություն մաղթենք:

«Իսկ մեզ համա՞ր», - պիտի հարցնեք:

Մարդու, ի մասնավորի մեղավոր մարդու զգացական աշխարհը հարուստ է: Սրտից ելած մի խոսք, ապաշխարության մի կաթիլ արտասուք, մեղավորության գիտակցություն և այդ մեղքից Տիրոջ օգնությամբ ազատվելու անսահման ցանկություն... ահա թե ինչ է ուզում մեզանից Աստված: Խնդրենք, որ աղոթելու շնորհ տրվի մեզ և քաջություն՝ ըմբռնելու, որ զղջումը ապրումն է հոգեպես աճող անհատի, ով գիտակցում է սեփական վարքի, գործողությունների և կենսակերպի անարժանությու-

նը, որի հետևանքները կարող են լինել անկումներն ու դժբախտությունները: Անկեղծ լինենք ինքներս մեզ և Աստծո հետ ու կրկնենք Սուրբ Գրիգոր Նարեկացու հոգեպարար աղոթքը.

Արդարև լսեցիր դու, բարեգո՛ւթ, անսացիր, թագավո՛ր,
Ոնկնդրեցիր, կա՛նք և հույս, ի միտ առար, երկնավո՛ր,
Հարգեցիր, հզո՛ր, նկատեցիր, ծածկագե՛տ,
Տեսար, խնամակա՛լ, կարեկցեցիր, անպատո՛ւմ:
Կատարեցիր իսկապես բաղձանքն աղաչողների:
Ուստի, ողորմած, մարդասեր, օրհնյալ,
Քո կենդանատու կամքով թող որ միշտ
բարեբախտ լինի հոգիս մեղավոր,
Գովյա՛լ երկայնամիտ, քեզ վայել է
փառք հավիտյանս. ամեն:



ՆԻԿՈԼԱՅ ՍԵԼԵԶՆՅՈՎ

ԱՐԵՎԵԼՔԻ ԱՍՈՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ[1]

Հիմնական սկզբնաղբյուրների վերլուծություն դոգմայի
ձևավորման պատմության համատեքստում

Մար Տիմոթեոս Ա. Կաթողիկոս

Մար Տիմոթեոս Ա.-ի (780-823 թթ.) քրիստոսաբանական հայացքներն առավել հստակ են շարադրված պահպանված 59 գրվածքներից միայն երեք՝ ԼԳ., ԼԴ. և ԼԵ. թղթերում[2]: Նրա դավանության հիմնական տարրերը համակարգել և ծավալուն մեջբերումներով հետևողականորեն ուսումնասիրել է Մարտեն Ժյուժին իր «Արևելյան քրիստոնյաների դավանաբանական աստվածաբանությունը» աշխատության՝ «Տիմոթեոս Ա.-ի քրիստոսաբանությունը» գլխում[3]: Մար Տիմոթեոսի քրիստոսաբանական հայացքների ուսումնասիրման տեսանկյունից մեծ հետաքրքրություն է ներկայացնում նրա և ալ-Մահդի խալիֆի (775-785 թթ.) միջև 782 թ. տեղի ունեցած ջատագովական բնույթի երկխոսությունը[4]:

---

[1] Տես **Н. Селезнев**, Христология Ассирийской Церкви Востока. Анализ основных материалов в контексте истории формирования вероучения, Москва, 2002: Այս աշխատության երրորդ մասը տպագրվել է «Էջմիածին» ամսագրի 2016 թվականի Ե. համարում (էջ 9-23):

[2] Տես **O. Braun**, Der Katholikos Timotheos I und seine Briefe, Oriens Christianus I, 1901, էջ 138-152. հմմտ. **F. Briquel Chatonnnet**, **C. et F. Jullien**, **C. Moulin Paliard**, **M. Rashed**, Lettre du patriarche Timothée [I”] à Maranzekʰā, évêque de Ninive, Journal Asistique, t. 288, № 1, 2000, էջ 1-13:

[3] **M. Jugie**, Theologia dogmatic christianorum orientalium ab ecclesia catholica dissidentium, t. V, Paris, 1935, էջ 208-211՝ “De christologia Timothei I”:

[4] **A. Mingana**, The Apology of Timothy the Patriarch before the Caliph Mahdi, № 3, Woodbrooke Studies, Manchester, 1928, էջ 137-298. հմմտ. **H. Putman**, L’ Église et l’ Islam sous Timothée I (780-823). Étude sur l’ Église nestorienne au temps des premiers Abbassides avec nouvelle édition et traduction du dialogue entre Timothée et al-Mahdi, Beyrouth, 1975 (Recherches: l’ Institut de lettres Orientales de Beyrouth, Nouvelle Serie B., Orient Chretién, t. III):

Խալիֆի հետ ունեցած բանավեճի ընթացքում Հիսուս Քրիստոսի անձին հատկացրած ուշադրությունը բավականին նշանակալից է: Այդ նյութի վերաբերյալ երկխոսությունն սկսվում է խալիֆի կողմից առաջադրված ավանդական հետևյալ վիճահարույց հարցով. «Արդյո՞ք հնարավոր է, որ այդպիսի գիտնական մարդը, ինչպիսին կաթողիկոսն է, խոսելով Աստծո մասին՝ թույլ տա [իրեն] պնդել, թե Նա, որդի ունենալու նպատակով, մի ամբողջություն է կազմել կնոջ հետ»: Հնչած հարցի պատասխանում Մար Տիմոթեոսը հատկապես ընդգծում է հավիտենական և ժամանակի մեջ տեղի ունեցած ծնունդների միջև առկա տարբերությունները: Խալիֆն ընդունում է կուսական հղացման հնարավորությունը, քանի որ դրա մասին վկայություն կա նաև Ղուրանում[5], մինչդեռ նրա համար անընդունելի էր Հիսուս Քրիստոսի ծնունդից հետո Մարիամի կույս մնալու հանգամանքը: Այս առնչությամբ Արևելասասորական եկեղեցու կաթողիկոսը բարձրաձայնում է, որ Եվան նույնպես, ձևավորվելով Ադամից, որևէ վնաս չհասցրեց նրան: Ծառերը պտուղներ են տալիս, սակայն ո՛չ մի վնաս չեն կրում դրանից[6]:

Քրիստոսի ծնունդի հետ կապված հարցերը քննարկելուց հետո բանավիճող կողմերը կենտրոնանում են Նրա բնությունների հարաբերակցության խնդրի վրա, որի առնչությամբ Մար Տիմոթեոսը կիրառում է հետևյալ դասական պատկերը. «Քրիստոս զգեստավորվեց Մարիամից վերցրած մարդկային բնությամբ»[7]: Ալ-Մահդին բնական է համարում Քրիստոսի մեջ լիակատար երկվության պնդումը, որին Մար Տիմոթեոսը պատասխանում է՝ Նրա բնությունների միությունը յուրահատուկ կերպով չեշտադրելով: Համաձայնելով, որ Քրիստոսի մեջ կան երկու բնություններ՝ նա հաստատում է հետևյալ միտքը. «Կա մեկ Որդի և Քրիստոս, այլ ոչ երկու: Նա այլ կերպ է ծնվում Մարիամից, և այլ կերպ՝ Հայր Աստծուց: Այնուամենայնիվ, Որդին ու Քրիստոս մի՛ են, չնայած որ [Նա] ունի երկու ծնունդ: Նույն Քրիստոս,

---

[5] Ստորև ներկայացնում ենք վերոնշյալ վկայության համապատասխան հատվածը Ղուրանից. «Եվ այսպես ասացին հրեշտակները. «Ո՛վ Մարիամ, ճշմարիտ Աստվածը [Ալլահ] ընտրեց և մաքրեց քեզ՝ նախընտրելով բոլոր ազգերի կանանցից (Գ. 43)... Ո՛վ Մարիամ, հնազանդ եղիր քո Տիրոջը և ընկիր ծնկաչոք, երկրպագի՛ր միայն Աստծուն Նրան երկրպագողների հետ միասին (Գ. 44)... Ո՛վ Մարիամ, ահա Աստված քեզ բարի լուր է տալիս նրանից, որի անունը կլինի Մեսիա Հիսուս՝ Մարիամի որդի (Գ. 46)... և նա կխոսի ժողովրդի հետ օրրանում, իսկ հասակ առնելով՝ կլինի արդար մեկը (Գ. 47)»: Նա [Մարիամը] ասում է. «Ո՛վ Տեր, ինչպե՞ս կարող եմ որդի ունենալ, երբ ոչ մի տղամարդ չի դիպել ինձ» (Գ. 48)» (տես “The Holy Qur’ān: Āl-e-‘Imrān”, Arabic text and english translation, Tilford, 2004, էջ 58-59:

[6] Տես **A. Mingana**, նշվ. աշխ., էջ 18:

[7] Անդ, էջ 19:

որպես իր Հայր, ունի Աստծուն՝ ըստ բնության, և որպես Աստված՝ Հորը, քանզի Նա է Բանն Աստված, Աստված՝ ծնված Մարիամից»[8]*:*

«Եթե Քրիստոս մարգարեների կողմից ներկայացվել է որպես Աստծո ծառա, - հարցնում է խալիֆը, - ապա ինչպե՞ս պետք է այդ հանգամանքը համաձայնեցնել Նրա աստվածային պատվի հետ»[9]*: Ի պատասխան այս հարցին՝ Մար Տիմոթեոսը հակադարձում է՝ օրինակ բերելով ալ-Մահդի խալիֆի սիրելի որդու՝ Խարունի (նա, հակառակ ավագ եղբայր ունենալու հանգամանքին, հռչակվել էր գահաժառանգ) կյանքում տեղ գտած վերջին իրադարձություններից: 782 թ. նա աչքի է ընկնում Անատոլիայում Արաբական խալիֆայության կողմից Բյուզանդիայի դեմ կազմակերպված ռազմական գործողությունների ընթացքում: «Այդ առաքելությամբ արշավանքի գնալով, - ասում է Մար Տիմոթեոսը, - նա չդադարեց խալիֆի որդի լինելուց: Բյուզանդացիները կարող էին մտածել, որ իրենց դեմ մարտնչող Խարունը հասարակ զինվոր է միայն, քանի որ չգիտեին, թե ո՛ւմ որդին է նա, ո՛վ է նա՝ ըստ իր պատվի, բայց նրանք, որոնք ճանաչում էին նրան, հասկանում էին, որ նա արքայազն է և թագավորի որդի: Նույն կերպ և Քրիստոս, լինելով Որդին Բարձրյալի, իրականացնում է իր երկրային առաքելությունը՝ ծառայի կերպարանքով: Այսպիսով, մարգարեների նկարագրած պատկերը ներդաշնակ է թե՛ Աստվածորդու իրագործած առաքելության և թե՛ հրեական պատկերացումների հետ, որոնց միջավայրից էին նաև մարգարեները: Ավելին՝ այդ նույն մարգարեները խոսել են նաև Մեսիայի արժանիքների մասին՝ բոլոր մարդկանց որդիներից գեղեցկագույնը համարելով Նրան (հմմտ. Սաղմ. ԽԴ. 3), աշխարհի իշխան կոչելով Նրան (հմմտ. Ես. Թ. 6)*[10]*: Քրիստոսի աստվածային պատիվը վկայակոչված է սուրբգրային բազմաթիվ տեղիներով»*[11]*:*

Չի՞ կարելի արդյոք եզրակացնել, թե Աստված չարչարվել ու մահացել է Քրիստոսի մարմնում[12]*: Սույն հարցին Մար Տիմոթեոսի տված պատասխանն ավանդական է. «Դա անհնար է, չնայած որ հակոբիկյաններն ու մելքիտները համարձակվում են այդպես պնդել»*[13]*: «Աստվածորդու մարմինը ճաշակեց մահը», - պատասխանում է կաթողիկոսը՝ հերքելով Ղուրանում ամրագրված այն պատկերացումը, ըստ որի՝ Մեսիայի փո-*

[8] Անդ, էջ 20:
[9] Անդ, էջ 83:
[10] Անդ, էջ 84:
[11] Անդ, էջ 86:
[12] Անդ, էջ 87:
[13] Անդ:

խարեն խաչի վրա գամվել է մեկ ուրիշը[14]*, քանզի Նա, որպես Աստված, իհարկե, ենթակա չէ մահվան: Քրիստոսի խաչելության և չարչարանքների առնչությամբ Մար Տիմոթեոսը հավելում է, որ մարդկային բնության հետ միավորվելու պահին Աստված հաղորդեց նրան այն անկրությունը, որն արարված բնությունը նմանեցնում էր Արարչին*[15]*:*

Եթե Աստված մի՛ է, և Նա մարմնացել է, ըստ խալիֆի դատողության, նշանակո՞ւմ է արդյոք, որ խոսելով Որդու մարմնացման մասին՝ նկատի ունենք նաև, որ Հայրն ու Սուրբ Հոգին նույնպես մարմնացել են: Իր պատասխանում Մար Տիմոթեոսը կրկին բերում է համանման մի օրինակ. «Եթե խալիֆի խոսքը «պարուրված» է ձայնով, արդյո՞ք նշանակում է, որ նույնը տեղի է ունենում նրա հոգու և ոգու հետ: Լսելով ինչ-որ մեկի ձայնը՝ միևնույն ժամանակ չենք լսում նրա հոգին կամ գիտակցությունը, իսկ սա այն դեպքում, երբ ձայնի միջոցով արտահայտված խոսքն անբաժանելիորեն կապված է դրա հետ՝ ըստ էության»[16]*:*

Քրիստոսաբանական հարցերի համատեքստում ալ-Մահդին շոշափում է նաև Մարիամին վերաբերող որոշ հարցեր: Ըստ նրա՝ անմահություն շնորհելու ընդունակություն ունեցող Հիսուս ինչո՞ւ է թույլ տվել Իր մոր մահը[17]*: Տիմոթեոսի պատասխանում դիտարկված է մահվան վերաբերյալ ավանդական հայացքը՝ իբրև էության նորոգման գործընթացի անհրաժեշտ շրջափուլ: Ըստ Մար Տիմոթեոսի՝ «Մարիամը՝ Հիսուս Քրիստոսի մայրը, ում շնորհիվ բացվել է երկնքի արքայությունը, անկասկած, արժանի էր երկինք վերափոխվելու, սակայն դրա համար նա պետք է նախ ճաշակեր մահը»*[18]*:*

Ինչպես խալիֆի հետ ունեցած բանավեճի ողջ ընթացքում, նույնպես և իր Բ. նամակում Մար Տիմոթեոսն ընդգծում է առանցքային այն գաղա-

---

[14] Անդ, էջ 40: Այս գաղափարը (տե՛ս “The Holy Qur’ ān”, Դ. 157), ամենայն հավանականությամբ, Մուհամեդը փոխ է առել քրիստոնեության ծոցում ի հայտ եկած աղանդավորական ինչ-որ շարժումից (առավել մանրամասն տե՛ս **И. Крачковский**, Очерки по истории русской арабистики, Москва-Ленинград, 1950, էջ 156): Ալի իբն Մուհամեդ իբն Աբդալլահ ալ-Ֆահրին աղանդագիտական բնույթի իր աշխատության մեջ كتاب تلخيص البيان في ذكر فرق أهل الأديان /Китāб талхӣс ал-байāн фӣ зикр фирак ахл ал-адӣāн՝ «Այլ կրոնների հետևորդների հայտարարությունների համառոտ բացատրությունների գիրք», Москва, 1988, էջ 40, արաբ. բնագիր՝ էջ 41a) հիշատակում է Սիրիայում ու Եմենում բնակվող «իլլիհանիհա համայնքը», որի անդամները հերքում էին Քրիստոսի խաչելության և մահվան իրականությունը՝ հակադրվելով բոլոր քրիստոնյաներին, որոնք միաձայն էին այդ իրողությունների ընդունման հարցում:

[15] Տե՛ս **A. Mingana**, նշվ. աշխ., էջ 88:

[16] Անդ, էջ 27:

[17] Տե՛ս “The Holy Qur’ ān”, Գ. 43 (49), Ե. 110:

[18] Տե՛ս **A. Mingana**, նշվ. աշխ., էջ 52:

փարը, ըստ որի՝ Աստված իր էությամբ չէր կարող ընդունվել մարդկային սահմանափակ բնության կողմից: Մարդկային բնությունը չէր կարող կրել աստվածային բնությունը՝ ո՛չ կատարելապես, ո՛չ էլ մասնակիորեն[19]*:*

Իր եկեղեցու ավանդության հետ լիովին համաձայն՝ Մար Տիմոթեոսը կարծում է, որ աստվածային ու մարդկային բնությունները Քրիստոսի մեջ միավորվել են «բարեհաճության» միությամբ: Ավանդականորեն չընդունելով «Աստվածածին» (Θεοτόκος) եզրն ու «Աստված մահացավ» արտահայտությունը՝ Մար Տիմոթեոսը, սակայն, «հատկությունների հաղորդակցություն» հասկացությունը մեկնում է սահմանումներով, որոնք վերջինիս հաղորդում էին ծայրահեղ հստակություն: «Բանը մարմին եղավ՝ ըստ միության, - գրում էր նա, - Հիսուս Աստված է՝ ըստ բնության. ըստ միության՝ անվանումները փոխանցելի են բնությունից բնություն՝ Աստված մարդ է, մարդ Աստված է՝ գոյող և հայտնվող» (Caro Verbum fuit per unionem; Jesus Deus est secundum naturam, per unionem nomina transferuntur ad naturas: Deus homo, homo Deus sit et dicitur)[20]*:*

Մար Տիմոթեոսի պահպանված գրական ժառանգության մեջ նկատելի են ավանդության վերանայման ու լրացման, ինչպես նաև իր նախորդների երկերում առկա որոշ դրույթների վիճարկման փորձեր, որոնք, ըստ կաթողիկոսի, բավարար հստակությամբ չէին արտահայտում Եկեղեցու դավանանքը: Այսպես օրինակ՝ նա Հիսուսի մեջ բացառում էր բնական կրքերի առկայությունը, որոնց գոյությունն ընդունելուն հակված էր Թեոդորոս Մոպսուեստացին[21]*, կամ՝ հակառակ Մար Բաբային՝ մտածում էր, որ Մարիամի արգանդից մինչև խոսելու ունակության ձևավորումը Քրիստոս ուներ ազատ կամք և գիտակցություն, որոնք զարգացել են հետագայում*[22]*: Մար Տիմոթեոսը հստակեցնում է Նեստորի ու Նարսայի կողմից կիրառված՝ Քրիստոս մարդ-ծառայի պատկերը: Ըստ նրա՝ մարդկային բնությունը վերաբերում է Որդու դեմքով անձնավորված «knōmā (ܟܢܘܡܐ)»-ին այնպես, ինչպես ընդհանուրը՝ մասնավորին, ապա հավելում է, որ «ծառա» անվանումը վերաբերում է բնությանը, բայց ոչ Քրիստոսի մարդկային «knōmā»-ին: «Սուրբ Գրքում, - գրում է Մար Տիմո-*

[19] Տե՛ս **O. Braun**, Timothei patriarchae I epistulae (I), CSCO 74-75, Parisiis, 1914 (ասոր. բնագիր) = "Scriptores Syri" 30 (ասոր. բնագիր), 31 (լատ. թարգմ.), Romae, 1915, էջ 22 (լատ. թարգմ.), էջ 35 (ասոր. բնագիր - այսուհետ՝ "Timothei patriarchae I epistulae", I):

[20] Տե՛ս **M. Jugie**, նշվ. աշխ., էջ 211:

[21] Տե՛ս "Timothei patriarchae I epistulae" (I), թուղթ ԼԴ., էջ 120 (լատ. թարգմ.), էջ 176 (ասոր. բնագիր):

[22] Անդ, թուղթ ԼԴ., էջ 137 (լատ. թարգմ.), էջ 201 (ասոր. բնագիր):

թեոսը, - խոսվում է Քրիստոսի մարդկային «knōmā»-ի՝ որպես «ստրուկի կերպարանքի», բայց ոչ երբեք՝ որպես «ստրուկի» մասին»[23]*:*

Մար Տիմոթեոսի՝ հիմնականում Արիստոտելի սկզբունքների հիմամբ կառուցած հոգու մասին դատողություններն անուղղակի հարաբերվում են նրա քրիստոսաբանության հետ: Հոգին միավորված է մարմնի հետ, ուղղորդում և կենդանություն է հաղորդում նրան՝ վերջինիս պատշաճող բանականությամբ: Մարդը մի ամբողջություն է՝ կազմված մարմնից ու հոգուց, և չնայած հոգին անմահ է, այնուամենայնիվ, մարմնի հետ նրա ունեցած կապի խզման դեպքում, ըստ էության, դադարում է մարդու գոյությունը[24]*: Վերջին միտքը նկատելի է հատկապես Քրիստոսի բնությունների միության ու հոգու և մարմնի միասնության նույնացման համատեքստում: Մար Բաբայի նման Մար Տիմոթեոսը ևս հավատում էր, որ հոգին Աստծո կողմից ստեղծվում է պտղի վերջնական ձևավորման պահին, այսինքն՝ բեղմնավորման Խ. օրը: Համաձայն Մար Բաբայի պնդման՝ Բանի և մարդկային բնության միությունը տեղի է ունեցել հենց բեղմնավորման պահին, երբ Սուրբ Կույսը լսել է ավետման խոսքերը: Այդ ժամանակ Բանն Աստված մարմնավորվեց, իսկ Խ. օրը միավորվեց ձևավորվող մարմնում ի հայտ եկած հոգու հետ:*

Ինչ վերաբերում է կամքի ու ներգործության խնդրին՝ այստեղ Մար Տիմոթեոսը հանդես է գալիս որպես Արևելքի եկեղեցում ավանդական դարձած՝ կամքի միասնության դավանաբանական բանաձևի ջատագով: Քրիստոսի մեջ կա երկու բնություն՝ յուրաքանչյուրն իրեն հատուկ կատարյալ որակներով ու դրսևորումներով, սակայն կամքի առնչությամբ Նրա մեջ առկա է մեկ ներգործություն, և չկա ո՛չ մի տեսակի երկվություն: Եթե մտովի կարելի է տարբերակել յուրաքանչյուր բնությունից բխող կամքը, ընդ որում, աստվածային կամքը գերակայող և սահմանող է, իսկ մարդկային բնությունը ենթարկվում է աստվածայինին այնպես, ինչպես երաժշտական գործիքը՝ երաժիշտին, ապա միանշանակ կարելի է ասել, որ մեկ կամքի դավանությունը Մար Տիմոթեոսի երկերում նույնքան հստակ է, որքան Արևելքի ասորական եկեղեցու՝ մեկ դեմքի մասին ավանդական վարդապետությունը: Գոյաբանական մեկ դեմքի առկայությունը Քրիստոսի մեջ ենթադրում է սահմանող մեկ կամք, որն ընկալվում է ոչ որպես բնության դրսևորում, այլ՝ անձնական ընտրություն:

[23] Անդ, թուղթք ԼԴ.-ԼԶ., էջ 106-183 (լատ. թարգմ.), էջ 156-264 (ասոր. բնագիր):

[24] «Հետմահու գոյության վիճակում հոգին անգործունյա է, - Ափրահատի հետևողությամբ կարծում էր Մար Տիմոթեոսը, - քանի որ նրա բանական և ճանաչողական ունակությունները մի տեսակ թմբիրի մեջ են» (անդ, թուղթ Բ., ԺԴ., ԼԶ., էջ 32-35, 74, 181 (լատ. թարգմ.), էջ 50-56, 112-114, 262 (ասոր. բնագիր):

Բնութենապես արտահայտված երկու «knōmā»-ների դրսևորումների հստակ տարբերակման համատեքստում, որը թելադրված էր փրկչաբանական հայացքներով, ինչպես նաև դեմքի ու կամքի (ܟܝܢܘܡܐ - sḇyānā) առնչությամբ հիմք ընդունելով փրկչաբանական նախադրյալները՝ շեշտը դրվում է միության վրա: Բանն Աստծո կամքի գերակայումն այս պարագայում խորհրդանշում է ո՛չ միայն վերջինիս ամբողջական ընդունումը մարդկային բնության կողմից, այլ նաև Աստծո փրկչական գործունեության մեջ առկա սիրո հիմամբ «միախառնումը», որը լիովին հակադիր է Ադամի ընտրած ու մեղսագործության պատճառ դարձած «ինքնուրույնությանը»: Այս պարագայում երկու կամք ընդունելը հավասարազոր է Քրիստոսի մեջ առկա միության խաթարմանը: Կաթողիկոսը գրում է. «Մենք ոմանց նման (նկատի ունի քրիստոնեական այն համայնքները, որոնք դատապարտել են Արևելքի եկեղեցու որդեգրած ուսմունքը՝ ծանոթ. թարգմ.) Աստվածորդու մեջ չենք տարանջատում երկու կամք և երկու ներգործություն»[25]: Բացի այդ՝ միությունն ըստ կամքի (ܒܨܝܢܘܡܐ - bāsḇyānā), նրա ընկալմամբ, նշանակում էր, որ Աստված ընդունում է մարդկային բնությունն՝ չկորցնելով Իր գոյության որևէ հատկությունն՝ միևնույն ժամանակ ազատ սիրով միանալով նրան:

Փրկագործության տնօրինությունը նախաձեռնում է Աստված և ի գործ է դնում Իր արարչական սիրո ներգործությամբ: «Քրիստոս եկավ տիեզերքի ներքին միասնությունն ու վերջինիս՝ Աստծո հետ ունեցած կապը վերականգնելու նպատակով»: Ինչպես Թեոդորոսի հետևողությամբ պնդում է կաթողիկոսը՝ «Քրիստոս հակադրվում է Ադամին. Հոր հանդեպ ցուցաբերած հնազանդությամբ և ծառայի կերպարանք ընդունելով՝ Նա վերականգնում է անհնազանդությամբ ու մեծամտությամբ խաթարված ամեն բան»[26]:

Ամփոփելով իր Եկեղեցու քրիստոսաբանական առանձնահատկությունները՝ Մար Տիմոթեոսը հանգում է եզրակացության, ըստ որի՝ քրիստոնեական համայնքների միջև առկա դավանաբանական տարբերությունները վերաբերում են Քրիստոսի մեջ աստվածային ու մարդկային բնությունների միավորման ձևին: «Մենք միմյանցից բաժանված ենք Քրիստոսի աստվածության և Նրա մարդկության միջև տեղի ունեցած միության սահմանման [բնույթի] պատճառով, - գրում է նա Մծբինի եպիսկոպոս

---

[25] **J. Labourt**, De Timotheo I nestorianorum patriarcha (728-823) et christianorum orientalium conditione sub chaliphis abbasidis, Paris, 1904, էջ 18. հմմտ. **J. S. Assemanus**, Bibliotheca Orientalis, t. III, 2: De Syris Nestorianis, Romae, 1728, էջ 209:

[26] Տե՛ս **M. Jugie**, նշվ. աշխ., էջ 222:

Մարան-Զխային ուղղված իր թղթում, - այլ ոչ թե՝ մեր Տիրոջ աստվածային կամ մարդկային բնությունների հերքման պատճառով, քանզի ամենքս միաձայն ընդունում ենք, որ կատարյալ Աստված ու կատարյալ մարդ է մեր Փրկիչը: Եվ ոչ թե բուն միությունն է մեր միջև բռնկված վեճերի ու բախումների պատճառը, այլ՝ այդ միության կերպն ու դրա որակները»[27]*:*

Մծբինի Մետրոպոլիտ Մար Եղիա Բար Շինայա

Մար Եղիա Բար Շինայայի հեղինակած «Հավատի ճշմարտացիության ապացույցների գիրք» աստվածաբանական կարևորագույն աշխատությունը Վատիկանում պահվող արաբերեն եզակի ձեռագրի հիման վրա առաջին անգամ գերմաներենով 1886 թ. հրատարակել է Լ. Հորսթը[28]*: Նրա գրական ժառանգությունից հայտնի է նաև «Ջատագովութիւն քրիստոնեութեան» երկը, որը Աբու-լ-Քասիմ ալ-Հուսեյն իբն Ալի ալ-Մաղրիբ վեզիրի հետ հիջրայի 417 թ., այսինքն՝ Ք. հ. 1026/1027 թ. տեղի ունեցած վեց զրույցների գրառումն է: Վերոհիշյալ վեզիրն իր ճամփորդություններից մեկի ընթացքում ծանր հիվանդանում է, սակայն Արևելքի եկեղեցու վանականներից մեկի ձեռամբ բժշկվելով՝ սկսում է մեծ հետաքրքրություն ցուցաբերել քրիստոնեության նկատմամբ: Ե. Ռենոդոն*[29] *հատվածաբար հղումներ է կատարել այս աշխատությունից*[30]*, սակայն հեղինակին չփոթել է Եղիա Երուսաղեմացու հետ:*

Հարկ ենք համարում նշել նաև, որ կանոնական իրավունքի ոլորտին վերաբերող՝ Եղիա Մծբնեցու «Եկեղեցական սահմանումները» ամփոփված են Մար Աբդիշո Մծբնեցու կանոնական ժողովածուում: Նրա հեղինակած «Ասորերենի համառոտ քերականություն» աշխատությունը հրատարա-

---

[27] Տես **F. Briquel Chatonnnet**, **C. et F. Jullien**, **C. Moulin Paliard**, **M. Rashed**, նշվ. աշխ., էջ 7:

[28] **L. Horst**, Buch vom Beweis der Wahrheit des Glaubens, Colmar, 1886:

[29] Ճիզվիտների միաբանության անդամ, հայտնի արևելագետ և աստվածաբան Եվսեբիոս Ռենոդոն (1646-1720 թթ.) ապրել է Փարիզում ու տիրապետել 12 լեզվի: Նրա հայտնի աշխատություններից են՝ "Historia patriarcharum Alexandr. Jacovitarum", Paris, 1713, "Discours de patriacho Alexandrino", Paris, 1717, "Anciennes relations des Indes et de la Chine", Paris, 1718: Երկու հատորով հրատարակել է նաև քրիստոնեական ծիսական հնագույն բնագրերի մի հավաքածու ("Liturgiarum orientalium collectio", t. 1-2, Paris, 1715-1716), որը գիտական առումով լավագույն հրատարակությունն է համարվել մինչ Ի. դարը (սույն հեղինակի և նրա ծավալած գործունեության մասին առավել մանրամասն տես **C. Detlef G. Müller**, Eusèbe Renaudot, Biographisch-Bibliographisches Kirchenlexikon, Band 8, Herzberg, 1994, էջ 34-44):

[30] **E. Renaudot**, Perpétuité de la foi de L'Église Catholique, t. III, ed. J.-P. Migne, Paris, 1841, u. 42-43.

կել է Ռիչարդ Գոթհայլը[31], իսկ կազմած «Գիրք Թարգմանչի» արաբերեն-ասորերեն բառարանը լույս է տեսել Պոլ Լագարդի ջանքերով[32]:

Մար Եղիա Բար Շինայան Արևելքի եկեղեցու՝ ԺԱ. դարի նշանավոր հեղինակներից է: Նրա գրվածքները հիմնականում կանոնական իրավունքի, քերականության, պատմության և աստվածաբանության վերաբերյալ ուսումնասիրություններ են: Այս հեղինակի կենսագրական հիմնական տեղեկությունները քաղում ենք իր իսկ հեղինակած «Ժամանակագրությունից»: Համաձայն այդ երկի՝ նա ծնվել է 975 թ. փետրվարի 11-ին, իսկ 994 թ. սեպտեմբերի 15-ին դարձել է հոգևորական: 1002 թ. փետրվարի 15-ին օծվելով եպիսկոպոս՝ նշանակվել է Բեթ Նուհադրայի թեմի (գտնվել է Գազարթայի և Ուրմիայի միջև՝ Տիգրիս գետից դեպի արևելք ընկած հատվածում) առաջնորդ: 1008 թ. դեկտեմբերի 26-ին դարձել է Մծբին քաղաքի մետրոպոլիտ[33]: Վիճահարույց է նրա մահվան թվականը. ըստ Լ. Հորսթի՝ նա մահացել է 1049 թ. մայիսի 7-ին[34], իսկ ըստ Լ.-Ժ. Դելապորտի՝ մոտ 1056 թ.[35]:

Ժ. դարավերջն ու ԺԱ. դարասկիզբը, ըստ Ա. Մեցի բնութագրման, «իսլամական Վերածննդի» ժամանակաշրջանն էր, երբ խալիֆայությունը, որպես միապետություն, սկսել էր անկում ապրել, իսկ իրական իշխանությունը փոխանցվում էր թյուրքական ցեղերին. նույն ժամանակաշրջանում իսլամական կրոն են ներթափանցում նաև այն վերածնող շարժումներ ու միտումներ: Նման պայմաններում արևմտյան ասորիների և մելքիտների ծավալած գործունեությանը հաղորդվել է լրացուցիչ ուժգնություն, որով և պայմանավորված է եղել վերոնշյալ համայնքների ու Արևելքի եկեղեցու միջև եղած հակասությունների սրումը: Մար Եղիայի երկերում հստակ նշմարելի է այն լարվածությունը, որով նա խոսում է Արևելքի եկեղեցու և նրա աստվածաբանական ընդդիմախոսների միջև առկա տարաձայնությունների մասին:

Մար Եղիա Բար Շինայայի աստվածաբանական հիմնական աշխատությունը՝ «Հավատի ճշմարտացիության ապացույցների գիրքը», բաղկացած է չորս մասից: Առաջինը նվիրված է Սուրբ Երրորդությանը (ընդդեմ մուսուլմանների) և Քրիստոսին (ընդդեմ հրեաների): Երկրորդ մասը բովանդակում է հակոբիկյանների ու մելքիտների որդեգրած աստվածաբանական դիրքորոշումների հերքումներ. այս հատվածում համառոտ

[31] **R. Gottheil**, A treatise on Syriac Grammar by Mar Elias of Sobba, Berlin, 1887.
[32] **P. Lagarde**, Praetermissorum libri duo, Göttingen, 1879.
[33] Տես **L.-J. Delaporte**, La Chronographie d'Élie bar-Šinaya, Paris, 1910, էջ I-II:
[34] Տես **L. Horst**, նշվ. աշխ., էջ XXIV:
[35] Տես **L.-J. Delaporte**, նշվ. աշխ., էջ I-II:

չարադրված է նաև տիեզերաժողովների պատմությունը[36]*, որտեղ մասնավոր ուշադրությամբ ընդգծված են Եփեսոսի ժողովի գումարման հետ կապված կանոնական խախտումները: Ըստ նրա՝ մինչ ճամփորդության ընթացքում գտնվող եպիսկոպոսների ժամանումը՝ Նեստորը չէր ցանկանում ներկայանալ, ինչը տրամաբանական էր: Առանց արևելյան եպիսկոպոսների մասնակցության բացված ժողովը չէր կարող ողջ Եկեղեցու կարծիքի արտահայտման հավակնությունն ունենալ*[37]*:*

Երրորդ և չորրորդ բաժիններում ներկայացված է «արևելյանների» ջատագովությունը, այսինքն՝ Արևելքի եկեղեցու վարդապետությունը:

Մար Եղիայի վերոնշյալ երկում բուռն քննարկվում է նաև Մարիամի համար գործածվող «Աստվածածին» (Θεοτόκος) *եզրի կիրառելիության հարցը: Եթե Մար Բաբայը Սուրբ Կույսի առնչությամբ համապատասխան մեկնությունների հավելման միջոցով հնարավոր էր համարում* «ܝܠܕܬܐ ܐܠܗܐ» *(Yaldāth Alāhā - Մայր Աստծո) եզրի կիրառումը, ապա Մար Եղիայի կարծիքով՝ դա հակոբիկյան եզր է, որի անզգույշ գործածությունը «բոլոր չարիքների և կյուրեղյան ամբարշտության»*[38] *հիմքն է: Այն, որ Մարիամին տրված «Yaldāth Alāhā» մակդիրը, ըստ Մար Եղիայի, քրիստոսաբանական անճշտություն է բովանդակում, չի նշանակում, թե դրանից հրաժարումը նվազեցնում է Ամենասրբուհի Կույսին մատուցվող հարգանքը. նա՛ է մեր Տիրոջ ծնողը: Եփեսոսի ժողովին նվիրված իր դատողություններում Մար Եղիան հետևողականորեն ընդգծում է այն հանգամանքը, որ Նեստորը մերժել է «Աստվածածին» եզրի բովանդակած «աստվածային բնության մայր» իմաստը:*

Սուրբ Գրքից քաղած բազմաթիվ տեղիներով հեղինակը փորձում է ցույց տալ, որ ծնվել ու մահացել է ոչ թե Աստված, այլ՝ Քրիստոս՝ մարդացած Աստված[39]*: Նրա համար կարևոր են նաև աննշան մանրուքները: Նա իր հակառակորդներին մեղադրում էր հատկապես, որ նրանք Եբրայեցիներին ուղղված թղթի Բ. 9 համարում առկա* «ὅπως χωρὶς *(առանձին)* θεοῦ ὑπὲρ παντὸς γεύσηται θανάτου» *արտահայտությունը չեն փոխարինել* «ὅπως χάριτι *(ըստ շնորհի կամ շնորհով)* θεοῦ ὑπὲρ παντὸς γεύσηται θανάτου» *ընթերցումով*[40]*: Հարկ ենք համարում նաև նշել, որ Արևելքի*

---

[36] Տես **L. Horst**, նշվ. աշխ., էջ 24-40:
[37] Անդ:
[38] Անդ, էջ 56:
[39] Անդ, էջ 64-69:
[40] Հետաքրքիր է, որ Սուրբ Գրքի համապատասխան հատվածի հայերեն ընագրում հայոց մեծ թարգմանիչները պահպանել են վերոնշյալ ընթերցվածի երկրորդ տարբերակը (ծանոթ. թարգմ.):

եկեղեցում ընդունված տարբերակը հայտնի է եղել թե՛ Որոգինեսին և թե՛ Հերոնիմոսին[41]*: «Հավատի ճշմարտացիության ապացույցների գիրքը» դիտարկել է նաև Ժ. Ասսեմանին իր աշխատության՝ «De Scriptoribus Syris Nestorianis» խորագիրը կրող գլխում*[42]*:*

Զենք կարող հստակ ասել, թե Մար Եղիայի ջատագովական երկերը բովանդակում են ինչ-որ նոր ու էական գաղափարներ, որոնք կօժանդակեն Արևելքի եկեղեցու որդեգրած քրիստոսաբանական դիրքորոշման ընկալմանը: Բերված օրինակները բավարար են՝ տեսնելու համար, որ նա տվյալ դարաշրջանին հատուկ ջատագովական ոգով սուր քննադատության է ենթարկում աստվածաբանական այն դրույթները, որոնք պատրաստ էին ընդունել իրենից առաջ ու հետո ապրած՝ այդ ավանդության մյուս ներկայացուցիչները: Այդ քննադատությունն առաջին հերթին ուղղված էր «Աստվածածին» (Θεοτόκος) *եզրի դեմ, որը, համապատասխան ճշտումներից հետո, ընդունում էին Մար Բաբայն ու Մար Եղիան. «Մարիամին կոչում ենք ծնող Աստծո* («ܬܘܠܕܬ ܐܠܗܐ - Θεοτόκος)*, որն Աստծուց է՝ առանց բնությունների միախառնման և առանց կատարյալ բնությունների հատկությունների փոփոխման»:*

Հունահռոմեական ավանդության համատեքստում սույն եզրի կիրառումը, ի վերջո, լիովին ընդունելի է համարվել Արևելքի եկեղեցու կողմից:

Մար Աբդիշո Բար Բրիխա
Մետրոպոլիտ Մծբինի և Հայոց

Մար Աբդիշոն (?-1290-1318 թթ.) Արևելքի եկեղեցու վերջին հեղինակներից է, ով իր աշխատությունների շարադրման ընթացքում կիրառել է դասական ասորերենը: 1290 թ. հոգևոր բանաստեղծությունների և պոեմների իր հավաքածուն՝ «Եդեմական դրախտ»-ը շարադրելիս նա արաբ բանաստեղծների հետևողությամբ կիրառել է միապաղաղ հանգավորման եղանակը: 1312 թ. իր հեղինակած «Մարգարիտ» աշխատությունն ընթերցողների լայն շրջանակներին հասանելի դարձնելու նպատակով ստեղծում է դրա արաբերեն տարբերակը: Նրա այս ձեռնարկն այնքան մեծ հաջողությամբ է պսակվում, որ Արևելքի ասորական եկեղեցու կաթողիկոս-պատրիարք Մար Յահբալլահ Գ.-ն (1281-1317 թթ.) խնդրում է Մար Աբդիշոյին կազմել աստվածաբանության մի ժողովածու՝ նախատեսված «[ընդհա-

[41] Անդ, էջ XVII, 46, 66:

[42] **J. S. Assemanus**, Bibliotheca Orientalis, t. III, 1: De Scriptoribus Syris Nestorianis, Romae, 1725, էջ 303-306 (այսուհետ՝ “Bibliotheca Orientalis”, t. III, 1):

նուր] կիրառման, աշակերտների խրատման ու մտածողության խթանման, ինչպես նաև Քրիստոսի բոլոր հավատացյալների օգտի և ուսուցման համար»[43]*: Այս գիրքը, որը հայտնի է «Մարգարիտ. գիրք քրիստոնեության ճշմարտացիության մասին» խորագրով, համառոտ վերաշարադրված է Ժ. Ասսեմանիի երկում*[44]*, որից հետո այն գրեթե ամբողջությամբ թարգմանվել է լատիներեն և 1838 թ. հրատարակվել կարդինալ Անջելո Մայիի կողմից*[45]*: Վերոնշյալ երկն անգլերենի է փոխադրել և առաջաբանով ու հավելվածով 1965 թ. Էրնակուլամում (Քերալա՝ Հնդկաստան) հրատարակել Արևելքի եկեղեցու կաթողիկոս-պատրիարք Մար Իշայ Շիմուն ԻԳ.-ը:*

Արևելքի եկեղեցու աստվածաբանության պատմության ուսումնասիրման տեսանկյունից հույժ կարևոր այս աշխատությունը բաղկացած է հինգ մասից՝

ա. Աստծո, Նրա գոյության, միասնության, հավիտենականության, անդրանցականության, եռամիասնության մասին.

բ. Արարչագործության մասին. այստեղ ամենայն մանրամասնությամբ դիտարկված են աշխարհի, մարդու արարման, Օրենքի ու աստվածային պատիժների հարցերը, ինչպես նաև Քրիստոսի վերաբերյալ առկա մարգարեությունները.

գ. Մարդեղության մասին.

դ. Խորհուրդների մասին.

ե. Եկեղեցական կենցաղի ու բարեպաշտության մասին (տոներ, կիրակի և ուրբաթ օրերի հետ կապված հարցեր, պահք, աղոթք ու ողորմություն):

«Մարդկությանը ճշմարիտ ճանապարհով ուղղորդելու համար, - գրում է կաթողիկոսը, - մարգարեություններն արդեն բավարար չէին: Անհրաժեշտ էր, որ Աստված Ինքը գար, բայց քանի որ Աստված Իր բնությամբ անտեսանելի է, ուստի Իր բնակության համար Նա առավ մարդկային բնություն և տաճար ու բնակարան դարձրեց նրան: Հավիտենական ու անբաժանելի միությամբ Նա իր աստվածային բնությանը միաց-

[43] **Mar O'dishoo, Metr. of Suwa (Nisibin) and Armenia**, The book of Marganitha (The Pearl) on the Truth of Christianity (թարգմանությունը, համապատասխան հատվածների վերաբերյալ հայրաբանական մեջբերումները, Արևելքի եկեղեցու պատրիարքների անվանացանկը և սուրբգրային ու եկեղեցական բնույթի գրվածքների ցանկը՝ Արևելքի եկեղեցու կաթողիկոս-պատրիարք Մար Իշայ Շիմուն ԻԳ.-ի. տես բնագրի նախաբանում), Ernakulam (Kerala), 1965 (այսուհետ՝ "The book of Marganitha (The Pearl) on the Truth of Christianity"). հմմտ. "Voice from the East" - ܩܠܐ ܕܡܕܢܚܐ, vol. 8, թ. 2 (April/June), 1989, էջ 15:

[44] Տես "Bibliotheca Orientalis", t. III, 1, էջ 352-360:

[45] Տես **A. Mai**, Scriptorum veterum nova collectio, t. X, Romae, 1838, էջ 317-366:

րեց մահկանացու բնությամբ մեկին, բաժնեկից դարձրեց Իր Տերությանը, իշխանությանն ու զորությանը: Միության (ܢܩܝܦܘܬܐ-nqīpūtā) միջոցով աստվածայինը լուսավորեց մարդկային բնությունն այնպես, ինչպես արևի շողն է փայլեցնում մաքրագույն մարգարիտը. մարդկային բնությունը դարձավ իրեն իսկ լուսավորող բնության նման, իսկ Աստված Իր ընդունած բնության փայլատակման ճաճանչների ներքո դարձավ տեսանելի այնպես, որ մեղավոր բնությունը որևէ տեսակի փոփոխություն չբերեր Արարչի բնությանը»[46]*:*

«Հրեշտակապետի միջոցով Սուրբ Կույսի ավետման պահին Աստված Կույսի արգանդում անքակտելիորեն միավորվեց առանց տղամարդու միջամտության՝ Իր իսկ ձեռամբ արարվածի հետ»[47]*:*

«Եփեսոսի ժողովում բոլոր մասնակիցները համամիտ էին այն հարցում, որ Քրիստոս կատարյալ Աստված և կատարյալ մարդ է, և խնդիրը միայն այն էր, թե ինչպե՛ս էր տեղի ունեցել Նրա բնությունների միությունը և ի՛նչ բառերով պետք է նկարագրվեր այն: Կյուրեղն ասում էր, որ Կույսին պետք է անվանել «Աստվածամայր», և մերժում էր բոլոր նրանց, ովքեր միությունից հետո Քրիստոսի մեջ տարանջատում էին աստվածային ու մարդկային բնությունները: Նեստորը կոչ էր անում չանվանել նրան ո՛չ «մարդու Մայր», որ չնմանվեր Պողոս Սամոսատցուն ու Փլոտինոսին, որոնց համար Քրիստոս մարդ էր՝ մարգարեներից մեկը, ո՛չ էլ «Աստվածամայր»՝ չնմանվելու համար Սիմոնին ու Մենանդրոսին, որոնք հերքում էին Աստծո կողմից մարմին առնելու իրողությունը և պնդում, թե Քրիստոսի մարդեղացումը տեղի է ունեցել ո՛չ թե իրապես, այլ՝ երևութապես: Այս ամենի փոխարեն նա առաջարկում էր կիրառել «Քրիստոսամայր» եզրը, քանի որ այն օգտագործել են թե՛ մարգարեները, թե՛ առաքյալները, և դրանով բնորոշվում է բնությունների միությունը... Տարաձայնությունները շարունակվեցին մինչև Մարկիանոսի՝ Քրիստոսի բարեկամի կայսերական գահակալումը, որը, ըստ իր խոհեմության, ՈԼԲ. եպիսկոպոսների մասնակցությամբ մի մեծ ժողով գումարեց Քաղկեդոնում... Այդ ժողովը վավերացրեց Քրիստոսի մեջ երկու բնությունների դավանությունը և երկու կամքերի դավանության տեսքով ընդունեց յուրաքանչյուր բնության հատկությունների տարբերությունն ու մերժեց բոլոր նրանց, ովքեր խոսում էին բնությունների միախառնման մասին, քանզի հունարենում այլևս տարբերություն չկար «Knōmā»-ի (ասոր.՝ ܟܢܘܡܐ, հուն.՝ ὑπόστασις) և «parsōpā»-ի (ասոր.՝ ܦܪܨܘܦܐ, հուն.՝

[46] "The book of Marganitha (The Pearl) on the Truth of Christianity", part III, ch. I.
[47] Անդ, part III, ch. II:

πρόσωπον) *միջև. այս ժողովում [ներկաները] դավանեցին մեկ «Knōmā», (Անձ) Քրիստոսի մեջ: Ժողովական որոշումներին ընդդիմացողները պետք է զրկվեին իրենց աթոռներից, այդ պատճառով պառակտում եղավ, և ի հայտ եկան դավանաբանական երեք հիմնական ուղղություններ: Առաջինի ներկայացուցիչները, որոնք Քրիստոսի մեջ դավանում են մեկ «Knōmā», և մեկ բնություն, հակոբիկյաններն են. նրանք այդպես կոչվում են Հակոբ Բարադեոսի* (ܝܥܩܘܒ) *անվամբ, որն ասորիների ու հայերի մեջ այդ վարդապետության տարածման գործում ունեցել է որոշիչ դերակատարում: Երկրորդ ուղղության ներկայացուցիչները, որոնք Քրիստոսի մեջ դավանում են երկու բնություն և մեկ «Knōmā», մելքիտներն են, այսինքն՝ «արքայի հովանավորյալները». այդպես կոչվելու պատճառն այն է, որ նրանց դավանաբանությունը հռչակվել և պահպանվել է կայսերական իշխանությամբ: Նրանց խմբին են պատկանում նաև «հոռոմները», որոնք հայտնի են «ֆրանկներ» անվամբ (ներառում է «հյուսիսային» բոլոր ժողովուրդներին): Վերոնշյալ դավանաբանական ուղղությունների հետևորդներն օգտագործում են «Աստվածածին» եզրը. հակոբիկյանները նաև «Երեքսրբյան»-ին հավելում են «որ խաչեցար վասն մեր» արտահայտությունը: Երրորդ ուղղությունը, որի ներկայացուցիչները Քրիստոսի մեջ դավանում են երկու բնություն և երկու «Knōmā», հայտնի է «նեստորական» անվամբ: Իրականում նրանց հարկավոր է անվանել «արևելյաններ», այսինքն՝ Արևելքի եկեղեցու հավատարիմ հետևորդներ, քանի որ Նեստորը չի եղել նրանց պատրիարքը և նույնիսկ չի տիրապետել նրանց լեզվին, բայց երբ նրանք տեղեկացան, որ նա վարդապետում է մեկ Քրիստոսի՝ Աստծո Որդու երկու բնությունների և երկու «Knōmā»-ների մասին, ուղղակի հրաժարվեցին նրան նզովելուց, քանզի այդպիսին էր նաև նրանց դավանաբանությունը: Նեստորն է հետևել նրանց, այլ ոչ նրանք՝ Նեստորին»*[48]:

Մար Աբդիշոյի գիրքը նոր դրույթներ չի ներմուծում Արևելքի եկեղեցու՝ վաղուց արդեն հղկված քրիստոսաբանական համակարգում: Ավելի շուտ այն մի «քրիստոնեական» է, որտեղ առանց ավելորդ ջատագովության շարադրված են իր Եկեղեցու ավանդական աստվածաբանության, խորհրդաբանության ու եկեղեցական փորձառությանն առնչվող հիմնահարցերը:

Ռուսերենից թարգմանեց և ծանոթագրեց
ՅՈԼԱԿ ՍՐԿ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ

[48] Անդ, part III, ch. IV:

AURELIO FERNANDES
ԱՈՒՐԵԼԻՈ ՖԵՐՆԱՆԴԵՍ

ԲԱՐՈՅԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ[1]

Աստվածաբանական ներածություն

ԳԼՈՒԽ Զ.
ԲԱՐՈՅԱԿԱՆ ԽԻՂՃ

Խղճի մեծությունը. *Խիղճն ամենաազնվականն է մարդու մեջ: Եթե ազատությունը մարդու գոյության բաղկացուցիչ տարրն է, ապա խիղճը բնորոշում է նրա բուն էությունը: Դեռևս Որոգինեսը գրում էր. «Հոգու հոգին խիղճն է»: Իսկապես, խիղճն ասես մարդկային էակի հինգերորդ բաղադրիչն է: Ասվում է, թե այն մարդու «ամենաներքին միջուկն» է, «Աստծո սրբարանը», «մարդու խորանը», «այն վայրը, որտեղ Աստված խոսում է նրա հետ...»: Ահա թե ինչու խիղճը «սրբազան» որակ է ձեռք բերել:*

Ժողովրդական ողջախոհությունը ճանաչում է խղճի այս սրբազնությունն ու արժանապատվությունը, դրա համար էլ որևէ անձի արժեքը որոշվում է ըստ նրա խղճի: Այստեղից էլ ծագում է մարդուն բնորոշող գովեստը՝ «Հոգով ու խղճով մարդ է», կամ կշտամբանքը՝ «Խիղճ չունի»: Այս որակումները որոշում են անհատի բարոյական արժեքները:

Խղճի կարևորությունն արտացոլվում է այնպիսի արտահայտություններում, որոնք պահանջում են ճանաչել և հաշվի առնել նրա իրավունքները, ինչպես օրինակ՝ «արգելում եմ որևէ մեկին խառնվել իմ խղճի գործերին», «պահանջում եմ հարգել իմ խիղճը», «իմ խիղճն արգելում է ասել այս կամ այն», «պետք է վարվեմ՝ ըստ իմ խղճմտանքի»: Այս արտահայտությունները անկեղծորեն և անմիջականորեն մարդը մտաբերում է այն դեպքերում, երբ պետք է սրտի վրա ազդող որոշումներ կայացնի:

Ըստ անձնական խղճի այս մեծության՝ Մարդու իրավունքների հռչակագրերը ճանաչում են «խղճի ազատությունը»՝ որպես հիմնարար իրա-

[1] Թարգմանության նախորդ հատվածները տես «Էջմիածին», 2016, Թ., էջ 25-57, 2016, ԺԱ., էջ 53-98:

վունքներից մեկը, որն ընկած է բազում այլ իրավունքների հիմքում: Այս ճանաչումից է բխում «խղճի առարկության» կամ «ըստ խղճի մերժման» իրավունքը՝ ցանկացած արտաքին միջամտության դեմ՝ լինի անձնական, թե պետական մակարդակով: Խղճի «ազատությունն» ու «առարկության իրավունքը» ճանաչվել են ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հռչակագրում (հոդ. 18), ինչպես նաև Վատիկան Բ. եկեղեցական ժողովի՝ Կրոնի ազատության հռչակագրում[2]*:*

"Gaudium et Spes" սահմանադրությունը ընդարձակ նկարագրում է բարոյական կյանքում խղճի կարևորագույն դերը. «Խիղճը մարդու ամենագաղտնի կենտրոնն է, սրբարանը, որտեղ նա մենակ է Աստծո հետ, և իր ձայնը լսելի է դառնում: Այդպես հիանալի ձևով բացահայտվում է խղճի առջև Աստծո և մերձավորի հանդեպ տածած սիրո օրենքը: Խղճի նկատմամբ հավատարմությամբ է, որ քրիստոնյաները, այլ մարդկանց հետ միասին, պետք է միացյալ ուժերով փնտրեն ճշմարտությունը և ճիշտ ու արդար լուծումները՝ բոլոր խնդիրները, որ ծագում են թե՛ անձնական, թե՛ հասարակական կյանքի ընթացքում: Որքան ավելի է հաղթում ուղիղ ու արդար խիղճը, այնքան ավելի են անհատներն ու հասարակական խմբերը հեռանում կույր վճիռ կայացնելուց և ձգտում գործել բարոյականության առարկայական նորմերի շրջանակներում: Այդուհանդերձ, հաճախ է պատահում, որ խիղճը մոլորվի՝ անհաղթահարելի մի չիմացության պատճառով՝ չկորցնելով, սակայն, իր արժանապատվությունը: Ինչը չենք կարող ասել այն մարդու մասին, որ ամենևին համակված չէ ճշմարիտն ու բարին փնտրելու մտահոգությամբ, և կամ երբ մեղքի սովորությունը կամաց-կամաց կուրացնում է նրա խիղճը»[3]*: Եկեղեցական ժողովի այս տեքստի միտքը հետևյալն է.*

Խիղճը՝ մարդու սրբարանը, ամենաներանձնական բանն է:

Խղճի մտոք է, որ Աստված խոսում է մարդու հետ:

Խիղճը հավատացյալի համար բացահայտում է Աստծո պատվիրանը:

Ուղիղ, արդարամիտ խիղճը բարոյական կյանքի հավատարմության ամենաբարձր երաշխավորն է:

Խիղճը չի կորցնում իր արժանապատվությունը, երբ գործում է անհաղթահարելի չիմացության պայմաններում:

Խիղճը բարոյալքվում է, երբ մարդը գիտակցորեն է մեղք գործում:

Խղճի սահմանումը. Կաթոլիկ Եկեղեցու քրիստոնեականը խիղճը սահմանում է այսպես. «Բարոյական խիղճը գիտակցական դատողություն է, որով

[2] LR, 1-2, տես GS, 79:
[3] GS, 16

մարդկային անձը ճանաչում է որևէ կոնկրետ արարքի բարոյական որակը, որ նա պետք է գործի, գործում է կամ արդեն գործել է»[4]*:*

Այս սահմանումը պարզորոշ նշում է, որ խիղճը բանական-գործնական դատողություն է, որը գնահատում է որևէ գործողության բարի կամ չար լինելը: Ինչպես տեսական գիտակցությունը գնահատում է սպեկուլյատիվ ճշմարտության՝ ճշմարիտ կամ սուտ լինելը, այնպես էլ մարդն ընդունակ է գործնական դատողություններ անել: Սկզբունքը հստակ է. քանի որ մարդը** ճանաչում է և գործում, **ապա բացի մտավոր որոշ դրույթների ճշմարիտ կամ սուտ լինելու մասին տեսական դատողություններ անելու կարողությունից, նա ընդունակ է նաև իր արարքների բարոյական արժեքի վերաբերյալ տեսական և գործնական դատողություններ անել: Խիղճն այդ գործնական բանականության դատողությունն է:

Հետևաբար, խղճի գործառույթն անհատի անձնական արարքները դատելն է՝ չափելով դրանց որակը. այսինքն՝ բարի են, թե չար:

Խղճի բաժանումը. Ելնելով խղճի կարևորությունից՝ հարկավոր է տարբերակել դրա բազմազան կողմերը: Այստեղ կթվարկենք ամենաընդհանուրները.

ա) *Ելնելով այն պահից, երբ դատողությունն արված է. Կաթոլիկ Եկեղեցու քրիստոնեականի* ***սահմանումն ընդգրկում է խղճի այս երեք ձևերը.***

- Նախորդող. ***երբ խիղճը նախորդում է գործողությանը, այսինքն՝ արարքը գործելուց առաջ է որոշվում՝ այն «բարի» է, թե «չար»:***

- Ուղեկցող. ***երբ խիղճն ուղեկցում է գործողությանը կատարման ամբողջ ընթացքում:***

- Հաջորդող. ***երբ բարոյական գնահատականը տրվում է արարքը կատարելուց հետո:***

բ) *Երբ խոսքը վերաբերում է նորմին, կամ օրենքին.* ***կիրառվող օրենքի հետ կապված՝ խղճի*** *ճիշտ կամ սխալ* ***լինելը:***

- «Ճիշտ» խիղճը ***համընկնում է օրենքին կամ նորմին:***

- «Սխալ» խիղճը ***խոտորվում է օրենքի կամ նորմի սահմանածից:***

«Սխալ» խղճի ***դեպքում կա երկու հնարավոր տարբերակ: Սխալը «հաղթահարելի» է. սա պատահում է, երբ հեշտորեն կարելի է շտկել սխալը, երբ հնարավոր է առարկայորեն իմանալ օրենքի բովանդակությունը: «Հաղթահարելի չիմացության» մեջ գտնվող խիղճը մեղավոր է: Ընդհակառակն, երբ մարդ գործում է «անհաղթահարելի չիմացության» պայմաններում, չի մեղանչում, եթե հնարավոր միջոցներ է ձեռնարկել՝ իմանալու համար, թե ինչն է թույլատրված և ինչը՝ արգելված:***

[4] CEC, 1778.

*գ) Ելնելով բուն դատողությունից. **խիղճը վստահ է կամ կասկածավոր:***

*- «Վստահ» խիղճը **դատում է հաստատակամորեն, առանց տատանվելու:***

*- «Կասկածավոր» խիղճը **կասկածներ ունի գործվող կամ չգործվող արարքի՝ ինչ-ինչ տվյալների վերաբերյալ, գործողությունը կարգադրող կամ արգելող օրենքի գոյության, այսինչ կամ այնինչ օրենքին ենթարկվելու պարտավորության վերաբերյալ և այլն: Ի դեպ, «կասկածը» կարող է լինել դրական կամ բացասական.***

*- Դրական կասկածը **ծնվում է կասկածելու ծանրակշիռ պատճառների առկայության դեպքում:***

*- Բացասական կասկածը **ծնվում է առանց որևէ պատճառի:***

*դ) Ելնելով դատողություն անելու սովորական ձևից՝ **խղճի տարբեր տիպեր կարող են նկատի առնվել: Ստորև ներկայացնում ենք ամենահաճախակիները.***

*- «Նրբանկատ» խիղճ, **որ փորձում է ամեն պահի և ամենափոքր արարքներում անընդհատ ճիշտ դատել. ինչն է կարելի և ինչն է արգելված՝ արարքը կատարելու կամ չկատարելու համար:***

*- «Բծախնդիր» խիղճ, **որը մեղք է գտնում այնտեղ, որտեղ դրա լինելու ոչ մի պատճառ չկա:***

*- «Լքված կամ տկարացած» խիղճ, **որ փնտրում է ամենափոքր առիթն անգամ՝ չկատարելու այն, ինչ սահմանված է:***

*ե) Ելնելով դատողություն անելու պատասխանատվությունից՝ **հարկավոր է տարբերակել «ուղիղ» և «խոտոր» խիղճերը.***

*- «Ուղիղ» խիղճը **ենթարկվում է բանականության կարծիքին. «Այս դատողությամբ վարվող մարդն անվանվում է զգուշավոր»[5]:***

*- «Խոտոր» խիղճը **չի լսում բանականության ձայնը: Այդպես վարվող մարդը գործում է անզգուշորեն և հանդուգն:***

Խղճի տարբեր տեսակները կապված են օրենքի կամ բարոյական նորմի հետ ունեցած հարաբերությանը: Մենք այդ մասին կխոսենք հաջորդ՝ յոթերորդ գլխում: Այժմ միայն պետք է ասենք, որ խիղճը դատում կամ գնահատում է՝ ելնելով օրենքի սահմանումից. այն ոչ հռչակում է, ոչ էլ արարում է բարիք կամ չարիք, այլ դրանք ածանցում է օրենքով թույլատրվածից կամ արգելվածից: Այսպիսով, կարող ենք ձևակերպել օրենքի և խղճի միջև հարաբերությունը. խիղճը մարդու վարքագծի մերձավոր նորմն է, օրենքը՝ հեռավոր:

[5] CEC, 1780.

Բարոյական սկզբունքներ. Գործնական դատողություններ անելիս խիղճն ունի որոշ հատկություններ: Ճիշտ վարքագիծն ուղղորդող այս բարոյական սկզբունքները կարող են ամփոփվել հետևյալ կերպ.

ա) Պետք է միշտ վարվել իսկական, ճշմարիտ խղճով: Երբեք օրինավոր չէ վարվել՝ որևէ արարքի օրինականության վերաբերյալ կասկածավոր խիղճ ունենալով, եթե սխալ գործելու հիմնավորված վախ ունենք: Հակառակ դեպքում՝ պետք է հարկավոր միջոցները ձեռք առնել՝ կասկածը փարատելու համար: Ամբողջապես բացասական կասկածը չպետք է հաշվի առնել գործելու պահին, անգամ անկարևոր պատճառի առկայության դեպքում:

Անհաղթահարելիորեն սխալ խիղճը մեղք չի գործում, եթե թույլ է տալիս անել կամ անում է որևէ բան, որ ինքնին արգելված է:

Պետք է հաշվի առնել անհաղթահարելի սխալի մեջ գտնվող խղճի թելադրանքը, եթե ոչ՝ կարող ենք վարվել սեփական խղճին հակառակ և այդպիսով մեղք գործել:

բ) Հաղթահարելի սխալված խղճով վարվելը մեղք է:

Խիղճն ազատ է: Ոչ ոք իրավունք չունի բռնանալու նրան: Աստված ինքն էլ հարգում է անձի ազատությունը: Այնուամենայնիվ, մարդը ազատ չէ՝ իր խիղճը չձևավորելու խնդրում, նա պարտավոր է անհրաժեշտ միջոցները ձեռնարկել՝ բարոյապես ուղիղ և ճիշտ խիղճ զարգացնելու համար:

Ինչպես արդեն նշեցինք, այս սկզբունքները հիմնված են նաև բարոյական նորմի և խղճի միջև եղած հարաբերության վրա: Իրոք, խիղճը դատողություն անելու պահին չի սահմանում, թե ինչն է «լավ» կամ «վատ», այլ դա ածանցում է ըստ նրա, ինչ սահմանված կամ արգելված է օրենքով:

Խղճի խայթ. Պետք է փաստենք, որ որոշ ժամանակակիցներ ժխտում են խղճի գոյությունը: Եվս մեկ անգամ մենք գործ ունենք պատմական անհամարժեքության հետ (այս մասին խոսել ենք ազատության թեմային անդրադառնալիս)[6]: Ինչպե՞ս կարող է պատահել, որ որոշ մարդիկ այդպիսի եռանդուն համառությամբ ժխտեն խիղճը մի դարաշրջանում, որում այն դրվատվել և արժևորվել է աննախադեպ կերպով: Ելնելով Նիցշեի այն դրույթից, որ «խիղճը սարսափելի հիվանդություն է», որոշ մարդիկ խղճի արմատները տեսնում են միայն կրոնական նախապաշարումների սահմաններում: Ըստ այդմ՝ նրանք ժխտում են խիղճը և՛ տեսականորեն, և՛ գործնականորեն:

Մեր անձնական փորձառությունը վկայում է մեզանից յուրաքանչյուրի ներսում խղճի գոյության մասին: Սա խղճի գոյության ամենահամոզիչ ապացույցն է և բոլոր ժամանակների ու բոլոր մշակույթների

[6] Տես, «Էջմիածին», 2016, ԺԱ, էջ 66:

խոր համոզմունքը: Բոլորս էլ ճանաչում ենք ինքներս մեզ «քննելու» մեր ունակությունը, որ մեզ թույլ է տալիս «հասկանալ», թե ինչ ենք անում, դատել մեր արարքների բարի կամ չար լինելը: Եվ եթե ճիշտ է, որ ինտելեկտուալ «քննությունը» տեսական ճանաչողության պատճառն է, ապա առավել ևս՝ անձնական վարմունքի «քննությունը» մեզ թույլ է տալիս ճանաչել մեր կատարած կամ կատարելիք գործողությունների բարի կամ չար լինելու վերաբերյալ դատողությունների իրողությունը:

Աստվածաշնչում խղճի գոյությունը անժխտելի փաստ է: Մարդու վարքը միշտ առճակատվում է իր խղճին: Ըստ աստվածային Հայտնության՝ խիղճն այն աստիճան է արմատավորված մարդու մեջ, որ նույնիսկ նույնացվում է սրտի հետ: Օրինակ, Առակաց գրքում հանդիպում ենք. «Որդիս, իմ օրենքը մի մոռացիր, և թող քո սիրտը պահի իմ պատվիրանները (...) Դրանք պարանոցիդ կապիր և սրտիդ տախտակին գրիր» (Առ. Գ. 1, 3):Աստվածաշունչն ասում է նաև՝ «Ապրված գիտե մարդու մտքինը»[7](Սիրաք ԽԲ. 19), և իր չար արարքին հանդիման՝ մեղանչողը կներվի «իր խղճի զղջմամբ» (Իմաստ. ԺԷ. 11):

«Խիղճ», «խղճմտանք» բառը երեսուն անգամ օգտագործված է Նոր Կտակարանում՝ իր բոլոր կողմերով. գովաբանվում է բարի խիղճը (Հմմտ. Ա. Տիմ. Ա. 5), հիշեցվում է, որ պետք է հարգել սեփական և ուրիշների խիղճը (Հմմտ. Ա. Կորնթ. Ժ. 25-29), քրիստոնեական խիղճը հակադրվում է հեթանոսական խղճին (Հմմտ. Հռոմ. Բ. 15), հորդորվում է հարգել թույլերի խիղճը (Հմմտ. Ա. Կորնթ. 7-13) և այլն: Սուրբ Պողոսն ասում է նաև. «Ինքս էլ ձիգ եմ անում, որ Աստծո և մարդկանց առաջ միշտ անմեղադիր խղճմտանք ունենամ» (Գործք ԻԴ. 16): Ահա թե ինչու է նա խորհուրդ տալիս հավատացյալներին մեղք չունենալ իրենց խղճի վրա (Եբր. Ժ. 2), որպեսզի «ճշմարտության հայտնությամբ մենք մեզ ներկայացնենք բոլոր մարդկանց խղճմտանքին՝ Աստծո առաջ» (Բ. Կորնթ. Դ. 2):

Անհատական «խղճի ազատություն» և հավաքական «խղճի ազատություն».

Մեր խիղճն ու նրա ներքին անձեռնմխելիությունը պաշտպանելու համար մենք սովորաբար օգտագործում ենք երկու արտահայտություններ, որոնք ոչ թե միանշանակ են, այլ ավելի շուտ՝ տարնշանակ: Մենք առանց տարբերակելու ասում ենք՝ «խղճի ազատություն»՝ եզակի, անհատական մակարդակով, և «խղճի ազատություն»՝ հոգնակի, հավաքական իմաստով:

ա) Անհատական մակարդակով խղճի ազատությունը վկայակոչվում է՝ բոլոր տեսակի նորմերից, այդ թվում՝ նաև Աստծո օրենքից դուրս ելնելու

[7] Բնագրում Աստվածաշնչի ֆրանսերեն մեջբերումը հետևյալն է. «Աստված ճանաչում է մեր սրտի խորքերը» (ծնթ. թրգմ.):

և ըստ սեփական հաճույքի վարվելու նպատակով: Այս իմաստով «խղճի ազատությունը» պաշտպանելի չէ, և չենք կարող այն պահանջել որպես իրավունք, որովհետև անհատական խիղճը բացարձակ չէ, քանի որ ենթարկվում է բարոյական նորմերին և պարտավոր է միշտ հնազանդորեն ընդունել Աստծո նպատակները:

բ) Հավաքական մակարդակով խղճի ազատությունը հղվում է յուրաքանչյուրի խղճի արժանապատվությանը և պետք է հարգվի: Այն պահանջում է ճանաչված լինել բոլորի կողմից, բայց պետք է նաև իրավաբանորեն երաշխավորված լինի, այնպես, որ հնարավոր լինի այն պաշտպանել հասարակական իշխանությունների, անգամ՝ պետության դիմաց:

«Խիղճը» և «ճշմարտությունը». Մենք արդեն տեսանք, որ խղճի գործառույթը որևէ արարքի բարի կամ չար լինելու վերաբերյալ գործնական վերաբերմունք ցուցաբերելն է: Ըստ այդմ՝ ինչպես տեսական դատողությունն է հարաբերության մեջ առարկայական ճշմարտության հետ, այնպես էլ խիղճն է հարաբերության մեջ գործնական ճշմարտության հետ: Այս առումով՝ գործնական ճշմարտությունն առարկայական բարոյական բարու և չարի ճանաչողությունն է: Այլ կերպ ասած՝ այնպես, ինչպես գիտակցությունը բացահայտում է տեսական ճշմարտությունը (օրինակ՝ «ծառի» գաղափարը), այդպես էլ, զուգահեռաբար, խիղճը ճանաչում է բարոյական ճշմարտությունը, երբ, օրինակ, դատում է, որ գողությունը մեղք է արդարության հանդեպ: Հետևաբար, ինչպես իրականությունն է նախորդում գաղափարին, այնպես էլ առարկայական բարոյական բարին ու չարն են նախորդում խղճին: Այսպիսով, «անարդարությունը» նախապայման է բարոյական գնահատման համար այնպես, ինչպես «ծառը» նախորդում է տեսական ճանաչողությանը: Հետևաբար, եթե խիղճը չի հարգում այն, ինչն առարկայորեն բարի է կամ չար, ապա խղճի գործնական դատողությունը սխալական է, քանի որ կեղծում է իրերի իրողության մասին ճշմարտությունը: Հովհաննես Պողոս Բ. պապն այսպես է խոսում այդ մասին.

«Բարոյական բարությունը ոչ այլ ինչ է, քան ճշմարտության մեկ այլ անվանում, երբ վերջինս որոնվում է գործնական իսելամտության միջոցով: Հնարավոր չէ ո՛չ մթագնել ճշմարտության գործնական էությունը, ո՛չ էլ ընդդիմանալ դրան՝ առանց խոչընդոտելու, ի վերջո, նաև ճշմարտության տեսական ասպեկտների ընկալումը»[8]:

Խիղճ-ճշմարտություն հարաբերության մեջ խիղճը չի կարող ստեղծել բարին ու չարը: Այն կարող է միայն ճանաչել, բացատրել և դատել դրանք: Ահա թե ինչու բարոյագիտական սուբյեկտիվիզմները սխալվում

[8] “Discours aux scientifiques”, 8 mai 1993.

են՝ պնդելով, թե խիղճը «ստեղծում» է բարու և չարի հղացքները, այնինչ՝ խիղճը միայն բացահայտում և գնահատում է դրանք որպես այդպիսին: "Veritatis Splendor" շրջաբերականն այսպես է արտահայտվում այդ սխալմունքի վերաբերյալ. «Անհատական խղճին վերագրվել են բարոյական դատողության բարձրագույն ատյանի արտոնություններ, ըստ որոնց՝ այն կատեգորիկ և անսխալական կերպով սահմանում է բարին և չարը: Մեփական խղճին հետևելու դրույթին անտեղի կերպով հավելվել է, որ բարոյական դատողությունը ճիշտ է հենց միայն այն բանով, որ գալիս է խղճից»[9]:

Այս տարնշանակության հիմքում եղած սխալը «ճշմարտության» կեղծ գաղափարն է: Իրոք, ժխտվում է բարու և չարի վերաբերյալ ընդհանրական ճշմարտության գոյությունը, և փոխարենն առաջարկվում է, որ խիղճն է դրանք ստեղծում՝ ըստ գործած արարքների: Այս պատճառով է շրջաբերականը մանրամասնում, որ «Մարդու գիտակցությանը հասու՝ բարու մասին ընդհանրական ճշմարտության գաղափարի կորստից հետո խղճի գաղափարն ինքն էլ անխուսափելիորեն փոփոխության է ենթարկվել. խիղճն այլևս չի դիտարկվում իր սկզբնական իրողությամբ, այսինքն՝ ինչպես անձի մտավոր գործողություն, որի դերը բարու ընդհանրական իմացության կիրառումն է որոշակի իրավիճակում՝ այդպիսով վերաբերմունք արտահայտելով տվյալ դեպքում և տվյալ պահին ճիշտ վարքագիծ ընտրելու նկատմամբ: Հակում է նկատվում՝ չարի և բարու չափանիշները բոլորովին անկախ ու ինքնագլուխ կերպով սահմանելու արտոնությունը վերագրել անհատական խղճին, և վարվել ըստ այդ «խղճի մտոք»: Այս մոտեցումը նույնանում է անհատամետական (individualiste) բարոյագիտության հետ, որի համար յուրաքանչյուրն ունի իր սեփական ճշմարտությունը՝ տարբեր մյուսների ճշմարտությունից»:[10]

Խիղճը չի ստեղծում ճշմարտությունը, այն ընդամենն ունի ճշմարտությունը բացահայտելու ի բնե կարողություն: Ահա թե ինչու, քանի դեռ ցանկացած մարդ օգտվում է իր բանականությունից, նա ավել կամ պակաս հստակությամբ տարբերակում է չարն ու բարին: Խիղճն անշեջ լույս է, որ բնությունն ինքն է մեզ շնորհել: Այստեղից էլ գալիս է սեփական խիղճն ըստ կարելվույն ձևավորելու, կրթելու անհրաժեշտությունը, քանի որ այն անթերի չէ իր դատողություններում և ճշմարտությունը ճանաչելու կարիք ունի:

Խղճի կրթություն. Բարոյական գնահատական տալու գործում խղճի ունեցած մեծ և վճռական դերից է բխում յուրաքանչյուր մարդու համար

[9] VS, 32.
[10] Անդ:

հավուր պատշաճի իր անհատական խիղճը կրթելու, ձևավորելու կարևորությունն ու պարտավորությունը: "Veritatis Splendor"-ը հայտնում է, որ «Հիսուսն ակնարկում է խղճի խեղաթյուրման վտանգը, երբ զգուշացնում է, թե «Մարմնի ճրագը աչքն է, եթե քո աչքը պարզ է, քո ամբողջ մարմինը լուսավոր կլինի, իսկ եթե քո աչքը պղտոր է, քո ամբողջ մարմինը խավար կլինի: Եթե քո մեջ եղած լույսը խավար է, ապա խավարը՝ որչափ ևս»[11] *(Մատթ. Զ. 22-23):*

Պետք է ի գիտություն ընդունել հետևյալ փաստը. անհատն ի ծնե չունի բարոյական «չարի» և «բարու» ընկալումները: Այդուհանդերձ, նա դրանք դրսից չի ստանում, քանի որ իր խելքն է ըմբռնում՝ ինչն է լավ և ինչը՝ վատ, և ըստ այդմ խնամքով ձևավորում-մշակում է այդ գաղափարները՝ բնական օրենքի լույսի ներքո և հատկապես՝ Հոգու օրենքի և քրիստոնեական մտածողության շնորհիվ:

Կարելի է այստեղ համեմատության եզրեր անցկացնել ճշմարտության նկատմամբ տեսական դատողության՝ մտքի դերի և «չարի» ու «բարու» նկատմամբ գործնական դատողության՝ խղճի դերի միջև: Իրոք, այնպես, ինչպես մարդը ծնվելիս մտքեր ու գաղափարներ չունի, որովհետև «ի ծնե» մտքեր ու գաղափարներ գոյություն չունեն, և դրանք ձեռք է բերում իր գոյության ընթացքում, այդպես էլ կարող ենք պնդել, որ խղճի ներգործությունը գոյություն ունի՝ ըստ «չարի» և «բարու» գաղափարների գոյության:

Արդ, ինչպես որ երեխան ի ծնե մտքեր չունի, բայց ունի դրանք ձեռք բերելու մտավոր մեծ կարողություն, այնպես էլ խիղճն անշեջ լույս ունի, որ նրան ընդունակ է դարձնում՝որսալու բարոյական գաղափարները:

Կարելի է ավելի հեռուն տանել այս համեմատությունը: Երեխայի գիտակցությունն ունի ճանաչողության տարբեր աղբյուրներ: Ավելի կոնկրետ և հակիրճ լինելու համար՝ ներկայացնենք ամենաանմիջականները. ծնողները, ուսուցիչները և անձնական փորձառությունը (իր տխուր փորձից ելնելով՝ նա գիտե, որ կրակն այրում է), այնուհետև իր հետագա մտածողությունը, որ ճանաչում է ճշմարտություններ՝ դրանք ածանցելով այլ ճշմարտություններից (այս վարժանքն առավել հատուկ է մտավորական անձանց):

Նմանապես, երեխան, ելնելով «օրենքից, որ Աստված դրել է նրա մեջ», հարստացնում է իր բարոյական արժեքները՝ կամ ծնողների և ուսուցիչների դաստիարակության միջոցով, կամ՝ որովհետև չարն ու բարին արձագանք են գտնում նրա հոգու խորքերում, կամ էլ նա սովորում է մտորել բնական օրենքի պահանջների շուրջ և հատկապես՝ Սուրբ Հոգու ներգոր-

[11] VS, 63.

ծության չնորհիվ, որ նրան օգնում է բացահայտել մկրտության ժամանակ ստացած ներքին օրենքը:

Բոլոր մարդիկ և հատկապես՝ քրիստոնյաները, պարտավոր են կրթել ու դաստիարակել սեփական խիղճը: *Կաթոլիկ Եկեղեցու քրիստոնեականն* ***այս խոսքերով է արտահայտվում դա.***

«Խիղճը պետք է տեղեկացված լինի, իսկ բարոյական դատողությունը՝ լուսավորված: Լավ կրթված ու ձևավորված խիղճն ուղիղ է և ճշմարիտ: Այն ձևակերպում է իր դատողություններն ըստ բանականության և համաձայն Արարչի իմաստությամբ ներշնչված իրական բարիքի: Խղճի դաստիարակությունն անվերապահորեն անհրաժեշտ է այն մարդկանց, ովքեր ենթակա են բացասական ազդեցությունների, ինչպես նաև՝ իրենց սեփական դատողությունը նախընտրելու և հեղինակավոր ուսմունքները չընդունելու մեղքի գայթակղությանը»[12]*:*

Ճիշտ խիղճ դաստիարակելու միջոցները. Որոշ յուրահատուկ միջոցներ օգնում են ձևավորել ճիշտ խիղճ: Դրանք նման են այն միջոցներին, որոնք ծառայում են միտքը կրթելուն[13]*:*

ա) Բարոյախոսական ուսմունքի ընդունումը. ***Երեխան պետք է հնազանդվի ուսուցմանը՝ իր վարքագիծն ըստ ծնողների և ուսուցիչների ուսուցանած կանոնների կարգավորելու համար: Ինչ վերաբերում է չափահասներին, ապա նրանք պետք է ուշադրություն դարձնեն Եկեղեցու հոգևոր իշխանության բարոյախոսական ուսմունքներին:***

բ) Քրիստոնեական կյանքի իմացությունը. ***Ճիշտ խղճի դաստիարակությունը ենթադրում է բարոյական չափանիշների ձևավորում՝ ելնելով քրիստոնյայի բարոյական կենսաձևից, որ հաղորդում են աստվածաշնչյան ուսմունքը, ավանդույթը և հոգևոր իշխանությունը:***

գ) Մտածողությունը. ***Այս առումով հարկ է նշել սեփական խղճի ձայնին ենթարկվելու կարևորությունը.*** *«Յուրաքանչյուրի համար կարևոր է բավականաչափ ներկա լինել ինքն իր մեջ՝ սեփական խղճի ձայնին ունկնդրելու և հետևելու համար: Ներանձնության այս պահանջն առավել ևս անհրաժեշտ է այնքանով, որքանով կյանքը մեզ հաճախ թույլ չի տալիս խորհել, քննել և անկեղծորեն դատել ինքներս մեզ»*[14]*:*

դ) Ներանձնական քննությունը. ***Ներանձնականացման գործողությունն իրականացնելու համար հարկավոր է խղճի քննություն կատարել: Ինչպես որ վերլուծությունները մտավոր ճանաչողության օբյեկտիվության երաշխիքի չափանիշներն են, այնպես էլ խղճի քննությունը թույլ է տալիս***

[12] CEC, 1783.
[13] Անդ, 1783-85:
[14] CEC, 1779.

ձեռք բերել ամուր և հաստատուն չափանիշներ՝ անձնական գոյության բարոյականության վերաբերյալ:

ե) *Ապաշխարության խորհուրդը.* ***«Խղճի քննության» ճգնակեցական կիրառումը կարևոր է՝ ապաշխարությանն ու խոստովանությանը լավագույնս նախապատրաստվելու համար, որն իրականացվում է ամբողջ կյանքի առավել խոր և ընդհանրական քննության միջոցով: Այստեղ ևս կարելի է մտավոր կյանքի հետ համեմատություն կատարել. առավել լայնածավալ իմացություններ ունենալուն և դասավանդվող առարկաների ամբողջությունը յուրացնելուն օգնում են ոչ թե ընթացիկ մասնակի քննությունները կամ պարբերական ստուգողականները, այլ տարեվերջի քննությունները, հասունության վկայականը: Այսպիսով, խիղճը, որ սովորություն ունի հաճախ քննելու ինքն իրեն՝ խոստովանության մեջ իր բարոյական վիճակի մասին խոսելու համար, օգտվում է բարոյական ճշտավարության ամուր չափանիշներ ձեռք բերելու անփոխարինելի միջոցից:***

զ) *Հոգևոր տնօրինությունը.* ***Վերջապես, խիղճը ձեռք է բերում ամուր չափանիշներ, երբ կարողանում է օբյեկտիվորեն խոսել մեկ ուրիշի հետ, ով նրան օգնում է հաղթահարել սուբյեկտիվիզմներն ու քմահաճույքները: Եվ, ինչպես պրոֆեսորի հետ խորհրդակցելն է օգնում որևէ կոնկրետ թեմայի վերաբերյալ ընդլայնելու իմացության սահմանները, այնպես էլ հոգևոր վարժապետին դիմելը մեծ նեցուկ է՝ բարոյական ճշմարտության բարձր մակարդակի հասնելու համար:***

Ի վերջո, ուղիղ խիղճ ունենալու համար հարկավոր է վարժվել առաքինի արարքներ գործելուն: Բավական չէ միայն բարու մասին իմանալ, հարկավոր է նաև բարու հետ «համաբնականության»[15] հասնել, ինչը ձեռք է բերվում աստվածաբանորեն սահմանված գլխավոր առաքինությունների կիրառմամբ: Ահա թե ինչ է ասում այս մասին *"Veritatis Splendor"-ը.*

«Հիսուսի՝ վերոնշյալ խոսքերի մեջ մենք գտնում ենք նաև ***խիղճը կրթելու*** *և այն առ ճշմարտությունն ու բարին շարունակաբար դարձի բերելու կոչը: Նման ձևով պետք է կարդալ Առաքյալի հորդորը՝ այս աշխարհի մտածելակերպին չհարմարվելու, այլ մեր վերաբերմունքը վերափոխելով՝ փոխվելու մասին (Հռոմ. ԺԲ. 2): Իրականում, դեպի Տերը և դեպի սերը բարին դարձած «սիրտն» է խղճի* ***ճշմարիտ*** *դատողության աղբյուրը»*[16]*:*

---

[15] Ֆրանսերեն բառեզրն է connaturalité, որ նշանակում է երկու առարկաների միջև համաձայնություն, համապատասխանություն, ներդաշնակություն:

[16] VS, 64.

Անձնական խղճի ձևախեղումն ու այլասերումը. Ինչպես մարդկային բոլոր մեծ իրողությունները, բարոյական խիղճը նույնպես ենթակա է խորը ձևախեղումների, անգամ՝ այլասերության: Պատճառները բազում են: Ճիշտ է, որ վերջիններս ամբողջությամբ բխում են խղճի սկզբնական սխալ դաստիարակությունից, բայց նույնիսկ չիտակ խիղճը ժամանակի ընթացքում կարող է խոտորվել՝ տարբեր պատճառներով: Առավել հաճախակի պատահող դեպքերը նշված են *Կաթոլիկ Եկեղեցու քրիստոնեականի* ***մեջ.*** *«Քրիստոսի և Նրա Ավետարանի չիմացությունը, ուրիշների մատնանշած վատ օրինակը, կրքերին գերի լինելը, խղճի՝ սխալ ընկալված անկախության հավակնությունը, Եկեղեցու և նրա ուսմունքի հեղինակության մերժումը, դարձի գալու և գթության պակասը կարող են լինել բարոյական վարքագծում դատողության խոտորման պատճառ»*[17]*:*

Խղճի ձևախեղման այս ռիսկերը, որոնց հետևում է անձնական վարքի այլափոխումն ու այլասերումը, պահանջում են, որպեսզի բոլորը, և հատկապես՝ քրիստոնյաները, ուշադիր լինեն իրենց անհատական վարքագծի նկատմամբ: Սրա համար հարկավոր է ամբողջ կյանքում ըստ արժանվույն կարևորել անձնական խղճի դաստիարակության միջոցով ձեռք բերվածը: Գործնականում, որպեսզի խիղճն աստիճանական այլասերման չենթարկվի, հարկավոր է ճանաչել հոգևոր իշխանության առաջարկած վարդապետությունը և հավատարիմ մնալ դրան: *"Veritatis Splendor"* ***շրջաբերականն այս մասին ասում է.***

«Խիղճը կրթելու գործում քրիստոնյաներին ***մեծապես օգնում են Եկեղեցին և հոգևոր իշխանությունը****: (...) Եկեղեցին միշտ և բացառապես խղճին ծառայելու պատրաստակամության մեջ է՝ օգնելով վերջինիս չքշվել՝ ըստ մարդկային հերյուրանքների «թխված» պատահածին վարդապետությունների քամիներից, չշեղվել մարդկային բարու մասին ճշմարտությունից, այլ հատկապես դժվարին ինդիրներում վստահորեն հասու լինել ճշմարտությանը և մնալ դրա մեջ»*[18]*:*

Եթե ճիշտ է, որ խիղճն անձի արժանապատվության արտացոլանքն է, ապա անձը պետք է աչալրջորեն հետամուտ լինի իր խղճի կրթությանն այնպես, որ վերջինս կարողանա միշտ առաջնորդվել բարոյական կյանքի սկզբունքներով: Իրավ է, որ որոշ հանգամանքների բերումով՝ մարդն ստիպված է հերոսական կեցվածք դրսևորել: Սակայն այս հանգամանքները հաղթահարելի են, եթե նա ամենօրյա կյանքում հավատարիմ է եղել իր կայացրած սովորական վճիռներին:

Երբեմն դժվար է վճիռ կայացնել նաև նորմալ իրավիճակներում, քանի որ միշտ չէ, որ հեշտ է գիտակցել սեփական անելիքը: Այդ ժամանակ

[17] CEC, 1792.
[18] VS, 64.

պետք է խորհուրդ հարցնել, աղոթել և գործողություններում զգուշություն կիրառել:

Խղճի մտոք վճիռների կայացումը կարգավորվում է համընդհանուր սկզբունքներով: *Կաթոլիկ Եկեղեցու քրիստոնեականը* ***նշում է հետևյալ սկզբունքները.***

ա) *«Մի քանի կանոն կիրառելի են բոլոր պարագաներում:*

- Երբեք թույլ չի տրվում չարիք գործել՝ արդյունքում բարիք ստանալու ակնկալիքով:

- Ոսկե կանոնը. «Այն ամենը, ինչ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես և դուք արեք նրանց...» (Մատթ. Է. 12):

- Գթասրտությունը միշտ պետք է դրսևորվի մերձավորի և նրա խղճի նկատմամբ հարգանքի միջոցով. «Լավ է խուսափել (...) անելու մի բան, որով քո եղբայրը կարող է գայթակղվել, սայթաքել կամ տկարանալ» (Հռոմ. ԺԴ. 21):[19]

Այս չափանիշներով ճիշտ կերպով դաստիարակված խիղճը կարող է հեշտորեն զարգանալ առօրյայում և բարձրացնել անձին այն մակարդակին, որ նրան հարիր է՝ ըստ իր արժանապատվության և ըստ իր աստվածային կոչման:

Իր հերթին, չիտակ և ուղիղ խիղճն ամենաուժեղ հակաթույնն է՝ բարոյական խեղաթյուրումների դեմ, ինչպիսիք են՝ անբարո, բծախնդիր կամ վարանոտ խիղճը: *«Անբարո»* ***խիղճը սխալմամբ կարծում է, որ վատ արարքները մեղք չեն կամ ծանր չեն:*** *«Բծախնդիր»* ***խիղճը կարծում է, թե այս կամ այն արարքը մեղք է՝ առանց որևէ հիմնավոր պատճառի: Իսկ*** *«վարանոտ»* ***խիղճը չի համարձակվում գործել՝ վախենալով մեղանչել՝ ինչպես այս կամ այն արարքը կատարելու, այնպես էլ՝ չկատարելու դեպքում:***

ԳԼՈՒԽ Է.
ԲԱՐՈՅԱԿԱՆ ՕՐԵՆՔ

Ինչ է օրենքը. Սահմանում. Ըստ դասական սահմանման՝ *«Օրենքը բանականության համակարգումն է՝ հանուն ընդհանուրի բարօրության, որ հռչակվում է համայնքի պատասխանատվությունն ստանձնած անձի կողմից»*[20]*:*

Օրենքը բնութագրող որակները բխում են այս սահմանումից ու հավասարապես կիրառելի են նաև բարոյական օրենքի նկատմամբ.

---

[19] CEC, 1789.

[20] Տես CEC, 1976, **Թովմա Աքվինացի,** 1-2, 90, 4:

- Խոսքը վերաբերում է «բանականության համակարգմանը», ուստի օրենքն ինքնին պատկանում է «բանականության» տիրույթին և կախված չէ օրենսդրի ցանկությունից: «Բանականություն» ասելով՝ օրենքի ոլորտից օտարվում է կամայականության կամ «վոլունտարիզմի» ցանկացած դրսևորում: Այդպիսով, կամայականությունը մերժում են և՛ օրենքը հռչակողը, և՛ օրենքն ընդունողը: Երկուսն էլ ենթարկվում են օրենքի «բանական» բնույթին: Օրենքն ունի բանական բնույթ, եթե այն պաշտպանում է անձի անօտարելի արժեքները կամ քաղաքացիների ճիշտ համակեցությունը:

- «Համակարգում հանուն ընդհանուրի բարօրության». օրենքը, այսպիսով, կոչված է ստեղծելու հասարակական այնպիսի միջավայր, որտեղ խրախուսվում է համընդհանուր բարօրությունը: Վերջինս մասնավոր՝ անհատական բարօրությունների հանրագումարը չէ, այլ՝ հանրային իրավիճակ, որը թույլ է տալիս անհատներին, ընտանիքներին և այլ միջակա ինստիտուտներին (հաստատություններին) հասնել սեփական կատարելությանը:

- Օրենքը պարտադիր դառնալու համար պետք է հաստատվի նրա կողմից, ով տվյալ համայնքում հեղինակություն է վայելում և իշխանություն ունի: Ուստի, միայն օրինական «ղեկավարը», առաջնորդն իրավունք ունի օրենքներ սահմանելու և դրանք պարտադրելու բոլոր հպատակներին:

- Օրենքը պարտադիր է, եթե այն «հռչակվել» է, այսինքն՝ պաշտոնապես ընդունվել է հպատակների կողմից: Եկեղեցու ընդհանրական օրենքները հռչակվում են "Acta Apostolicae Sedis" պաշտոնական պարբերաթերթում: Օրենքը պարտադիր չէ, քանի դեռ չի հռչակվել՝ ներառյալ նաև «vacatio legis»-ի (օրենսդրական անհրաժեշտ ժամանակը)՝ իրավական ուժի մեջ մտնելու ժամանակը:

Նկատի առնելով բնութագրող այս մանրամասները՝ օրենքը դիտարկվում է որպես մեծագույն երևույթ, քանզի այն անհատին դնում է իրավական գոյավիճակում՝ այլ քաղաքացիների հետ համակեցության պայմաններում: Միայն օրենքի միջոցով անհատի արժանապատվությունն ու հասարակական կյանքը կարող են լինեն ներդաշնակության մեջ: Եվ միայն օրենքի ուժով է անհատը պաշտպանված զգում՝ սեփական իրավունքները կիրառելով: Օրենքն ուղղորդում է անհատին, թե ինչպես պետք է իրականացնի մյուսների հանդեպ ունեցած պարտավորությունները, և առավել դյուրին է դարձնում դրանց իրագործումը:

Օրենքի պայմանները. Ըստ սահմանման՝ օրենքը պետք է ունենա մի շարք որակներ, որոնք «օրինական» կդարձնեն օրենքը որպես այդպիսին. այլ կերպ այն չի կարող խղճի մտոք պարտադրվել քաղաքացիներին: Որևէ օրենք, որպեսզի պարտադիր լինի, պետք է ունենա հետևյալ հատկությունները.

ա. Պետք է լինի արդարացի. ***Այն, ինչ հանձնարարվում կամ արգելվում է օրենքով, պետք է «արդարացի» լինի: Այլ կերպ ասած՝ օրենքը պետք է պաշտպանի քաղաքացիների իրավունքներն ու դյուրին դարձնի պարտականությունների կատարումը:***

բ. Պետք է կարգադրի բարին. ***Հարկ է, որ այն, ինչ հանձնարարվում կամ պարտադրվում է օրենքով, լինի բարի կամ առնվազն չեզոք: Օրենքը չի կարող չարը հանձնարարել: Եթե այն բարոյական չարիք է պարտադրում, լինի անհատի կամ ընդհանուրի բարօրության համար, ուրեմն անարդար օրենք է, ավելին՝ այն օրենք չէ:***

գ. Պետք է հարկադրի անհրաժեշտը. ***Օրենքի բովանդակությունը պետք է անհրաժեշտություն կամ առնվազն օգտակարություն ենթադրի անհատների և հանրույթի համար: Օրենքը չպետք է պարտադրի քաղաքացիներին անել բաներ, որոնք կարևորություն չեն ներկայացնում հանրույթի համար:***

դ. Պետք է հանձնարարի իրականանալին. ***Օրենքը ուժ ունի, եթե հանձնարարում է իրականանալին: Եթե կարգադրվածն անհնար կամ չափազանց դժվար է իրականացնել, ուրեմն՝ օրենքը կորցնում է իր նորմատիվ ուժը:***

Եթե օրենքը չի ներառում վերոնշյալ հատկությունները, ապա զուրկ է օրինականությունից, և ոչ ոք պարտավոր չէ հետևել դրան. ըստ հին ասույթի՝ *«Lex injusta nulla lex»* ***(Անարդար օրենքն օրենք չէ): Այլ խոսքով՝ քաղաքացին պարտավորված չէ ենթարկվել այդ օրենքին կամ կատարել դրա կարգադրությունը, քանզի այն օրենք չէ:***

Օրենքի տեսակներ. Օրենքի բաժանումները դասական են: Բարոյախոսական աստվածաբանության դասագրքերը հիշատակում են օրենքի տարբեր տեսակներ՝ *հավիտենական* ***օրենք,*** *բնական* ***օրենք,*** *դրական* ***օրենք: Վերջինս կարող է լինել աստվածային կամ մարդկային՝ ըստ օրենսդրի (Աստված կամ մարդ): Մարդկային օրենքը իր հերթին կարող է լինել*** *եկեղեցական* ***կամ*** *աշխարհիկ՝* ***համապատասխանաբար՝ եթե այն թելադրված է եկեղեցական նվիրապետության կամ քաղաքացիական իշխանության կողմից:***

Բարոյախոսական աստվածաբանության մեջ «նոր օրենքը» կամ «Ավետարանի օրենքը» կամ «Հոգու օրենքը» հույժ կարևոր է: Այս տարբեր անվանումները ցույց են տալիս այդ «նոր օրենքի» կարևորությունը քրիստոնեական վարքագծի համար:

Հավիտենական օրենք. Ս. Օգոստինոսը և Ս. Թովմա Աքվինացին այսպես են սահմանում այն. «Հավիտենական օրենքն Աստծո բանականությունը կամ կամքն է, որ պատվիրում է պահպանել բնական կարգը և չխաթարել այն»:

«Հավիտենական օրենք»-ը քրիստոնեական ընկալում է, որ բխում է այն ըմբռնումից, թե Աստված՝ աշխարհի արարիչը, աշխարհը չի թողել քաոսային ուժերի կամքին: Աշխարհում այնպիսի կատարյալ կարգ է տիրում, որ մարդը չի կարող խախտել: Անհավատներն այն անվանում են «տիեզերական կարգ»: Ինչևէ, ամեն դեպքում, անհնար է անտեսել այս համընդհանուր կարգը (անգամ եթե խոսքը վերաբերում է «տիեզերական քաոսին»), որ տիրում է ինչպես մակրոտիեզերքում, այնպես և միկրոտիեզերքում:

Վատիկանի Բ. ժողովը *"Dignitatis humanae"* ***վերտառությամբ կրոնական ազատության հռչակագրում այսպես է բացատրում հավիտենական օրենքը.*** *«Մարդկային կյանքի բարձրագույն նորմը հենց աստվածային օրենքն է՝ հավիտենական, առարկայական և ընդհանրական, որի միջոցով Աստված, իմաստության ու սիրո նպատակամղվածությամբ, կարգավորում, ուղղորդում և տնօրինում է բովանդակ աշխարհը՝ իր հայեցողությամբ դասավորելով մարդկային հանրության ուղիները: Իր այդ օրենքով Աստված մարդուն մասնակից է դարձնում այնպես, որ աստվածային նախախնամության բարեբախտ կարգավորությամբ վերջինս կարողանա մշտապես ավելի ու ավելի հասու լինել անանցանելի ճշմարտությանը»*[21]*:*

Բնական օրենք. Աստվածաբաններն այն սահմանում են որպես «բանական էակի մասնակցություն հավիտենական օրենքին»:

Բնական օրենքը հատուկ է մարդ արարածին՝ բոլոր մարդկանց ընդհանրապես և յուրաքանչյուրին անհատապես՝ որպես մտավոր և ազատ էակի: Այս պատճառով այն չպետք է ընկալել որպես անշունչ նյութին կամ կենդանիներին վերաբերող հավերժական օրենք: Բնական օրենքը ո՛չ ֆիզիկական (բնագիտական) օրենք է, ո՛չ էլ կենսաբանական՝ կիրառելի մարդու նկատմամբ, ինչպես ֆիզիկական օրենքն է բնության և կենսաբանականը՝ կենդանի արարածների համար: Բնական օրենքը գլխավորապես մարդկային օրենք է: Ահա այս պատճառով է Ս. Թովմա Աքվինացին գրում. *«Բոլոր արարածների մեջ միայն բանական արարածն է յուրահատուկ կերպով ենթարկված աստվածային նախախնամությանը, որովհետև նա կիսում է այդ նախախնամությունը՝ լինելով նախախնամ ինչպես իր, այնպես և այլոց հանդեպ: Հետևաբար՝ նա մասն է կազմում նաև հավերժական բանականության. վերջինս բնականորեն նրան դրդում է գործողության և վերջնական ճիշտ նպատակի: Արդ, «բնական օրենք» ենք անվանում բանական էակի այս մասնակցությունը հավիտենական օրենքին»*[22]*:*

---

[21] DH, 3.

[22] **Թովմա Աքվինացի**, II-II, 91, a. 2:

Այդուհանդերձ, նկատելի է, որ որոշ շրջանակներում մտքի շփոթ կա այս առնչությամբ: Բացի այդ՝ բազմաթիվ փիլիսոփաներ և իրավագետներ մերժում են այս ընկալումը: Բարոյախոսներից ոմանք քննադատում են բնական օրենքի որոշակի աղերսը ֆիզիկական և ֆիզիոլոգիական օրենքի հետ. բնական օրենքը, իբրև թե, համադասական է օրենքին՝ մարդու, նյութեղեն մարդու կամ կենսական մարդու համար: Այս պարագայում Եկեղեցու հոգևոր իշխանության կողմից բնական օրենքի ճիշտ բացատրությունն անհրաժեշտություն է դառնում: Ահա թե ինչ է ասում այս մասին *"Veritatis Splendor"-ը. «Ասփված մարդկանց մասին հոգում է այլ կերպ, քան մնացյալ էակների. ոչ թե «արտաքնապես»՝ ֆիզիկական բնության օրենքներով, այլ «ներքնապես»՝ բանական գիտակցությամբ, որը, ճանաչելով Ասփծո հավիտենական Օրենքը բնական լույսի միջոցով, ի զորու է մարդուն ցույց փալ ազատ վարվեցողության ճիշտ ուղղությունը»*[23]*:*

Բնական օրենքը, այսպիսով, անձի՝ որպես բանական և ազատ էակի օրենքն է: ***Ուստի, հղման առանցքը ոչ թե հանածոների ֆիզիկական օրենքն է կամ բույսերի ու կենդանիների կենսաբանական օրենքը, այլ՝ Աստծո կողմից տղամարդու և կնոջ մեջ դրված հատուկ օրենքը, որը նրանց թույլ է տալիս ճանաչել բարին ու չարը: Փաստորեն, մարդկային բնությունը ոչ թե տարորոշվում է ֆիզիկական կամ քիմիական տարրերի, չնայած դրանք առկա են մարդու մեջ, այլ որակվում է որպես հոգևոր էակին հատուկ բնություն: Կամ ինչպես նկատում է*** *"Veritatis Splendor"-ը՝ «Արդ, կարելի է հասկանալ բնական օրենքի իրական իմաստը. այն վերաբերում է մարդուն հատուկ եզակի բնությանը, «մարդկային անձի բնությանը», որը հենց ինքը անձն է՝ հոգու և մարմնի, հոգևոր ու կենսաբանական բնույթի հակումների միասնությամբ և յուրահատուկ այն բոլոր բնույթների մեջ, որոնք անհրաժեշտ են վերջնանպատակին հասնելու համար: «Բնական բարոյական օրենքն արտահայտում և կարգադրում է նպատակները, իրավունքներն ու պարտականությունները, որոնք հիմնվում են մարդու հոգևոր ու մարմնական բնության վրա: Այդ պատճառով այն չի կարող ընկալվել իբրև զուտ կենսաբանական նորմ, այլ պետք է սահմանվի որպես բանական կարգ, համաձայն որի՝ մարդը կոչված է Արարչի կողմից տնօրինելու և կարգավորելու իր կյանքն ու գործողությունները, հատկապես՝ տնօրինելու սեփական մարմինը»*[24]*:*

Հետևաբար՝ բնական օրենքն այլ բան չէ, քան ճանաչելի (մտավոր) լույս՝ Աստծո կողմից ներշնչված բանական էության մեջ: Այդ օրենքը, ուրեմն, աստվածային իմաստության արտահայտություն է:

---

[23] Տե՛ս VS, էջ 43:
[24] VS, 50.

Բնական օրենքը բարոյագիտական ավանդույթում. «Բնական օրենքը» բացառապես չի պատկանում բարոյախոսական աստվածաբանությանը, այլ բոլոր մշակույթների ժառանգությունն է: Օրինակ՝ հունական գրականությունը մշտապես հաստատում է այդ օրենքի գոյությունը: Հեղինակները հոժարությամբ են մեջբերում Սոֆոկլեսի բնագիրը, որը հետագայում Անտիգոնեին կշնորհի «բնական օրենքի հերոսուհու» տիտղոսը, քանզի, բախվելով արքայի դրական օրենքին, որը նրան արգելում էր հուղարկավորել եղբորը, նա դիմում է բնական օրենքին. վերջինս գերակա է արքայի՝ իր հորեղբոր օրենքի նկատմամբ:

*«Չէի կարծում, անշուշտ, որ քո հրովարտակներն այնքան ուժ կունենան, որ թույլ կտան մահկանացուին խախտել աստվածային օրենքները՝ չգրված, բայցև անձեռնմխելի օրենքները: Դրանք ոչ թե այսօր կամ երեկ, այլ միշտ՝ ի սկզբանե են ուժի մեջ, և ոչ ոք չի տեսել դրանց ստեղծումը: Չենթարկվել այդ օրենքներին՝ արդյո՞ք չի նշանակում մարդու իշխանության երկյուղից դրդված՝ ենթարկվել աստվածների զայրույթին» (**Սոֆոկլես, «Անտիգոնե»**):*

Ավելի ուշ հռոմեական իրավական միտքը բնական օրենքը դիտարկում է այնպես, ինչպես գրում է փիլիսոփա և իրավագետ Ցիցերոնը. *«Անշուշտ, գոյություն ունի իրական օրենք. դա ուղղամիտ, արդարամիտ բանականությունն է: Այն հարիր է բնությանը, բնորոշ է բոլոր մարդկանց, անսասան է և հավիտյան... Որևէ մեկը չի կարող այն ամբողջությամբ ժխտել. ո՛չ սենատը, ո՛չ ժողովուրդը չեն կարող մեզ ազատել այդ օրենքի իշխանությունից: Անօգուտ է փնտրել մեկ այլ մեկնաբան՝ այդ օրենքը բացատրելու կամ մեկնաբանելու համար: Այն նույնն է թե՛ Աթենքում, թե՛ Հռոմում, նույնը կլինի հիմա և հետո: Միով բանիվ՝ այդ եզակի, հավերժական և անխախտ օրենքը կգործի բոլոր ազգերի համար և բոլոր ժամանակներում: Եվ բոլորի համար ընդհանուր աստված է, որ դաստիարակ ու առաջնորդ կլինի բոլորին: Նա է ստեղծել այդ օրենքը, մեկնել և տվել մեզ: Ով կհրաժարվի նրան ենթարկվել, ստիպված կլինի փախչել ինքն իրենից, քանզի արհամարհել է մարդկային բնությունը, կկրի ամենադաժան պատիժները, նույնիսկ այն դեպքում, երբ կխուսափի այն ամենից, ինչ համարվում է չարչարանք»*[25]:

Այստեղ չենք շարադրի այդ ընկալման պատմական մանրամասնները: Այդուհանդերձ, հարկ ենք համարում մեջբերել բնագիրը Է. Կանտի, ով կարևորել է բարոյական վարդապետությունն ու բարոյական կյանքը. *«Երկու բան են սիրտս լցնում հիացմունքով ու ակնածանքով, որ մշտապես թարմանում և աճում են այնչափ, որչափ միտքս աստիճանաբար կապվում է դրանց և զբաղվում դրանցով՝ աստղալից երկինքն իմ գլխավերևում ու բարոյական օրենքն իմ ներսում: Ես կարիք չունեմ պարզապես փնտրելու և ենթադրելու այս*

[25] **Ցիցերոն**, Վասն հանրապետութեան, Գ., էջ 22-23:

երկուսը... ես դրանք տեսնում եմ իմ առջև ու անմիջապես կապում իմ գոյության գիտակցությանը: Առաջինն սկսում է արտաքին զգայական աշխարհում իմ զբաղեցրած տեղից... Երկրորդն սկսում է իմ անտեսանելի ես-ից, իմ անհատականության մեջ և ինձ ներկայացնում մի աշխարհում, որն իրապես անսահման է, բայց որտեղ միայն բանականությունը կարող է ներթափանցել»[26]*:*

Քրիստոնեական ավանդույթը հաճախ է խոսում այս օրենքի մասին: Որպես օրինակ մեջբերենք Տերտուղիանոսի և Գրիգոր Մեծ պապի բնագրերից. *«Մարդը միակն է շնչավոր բոլոր արարածների մեջ, որ կարող է պարծենալ Աստծո օրենքն ստանալուն արժանանալու համար. նա բանականությամբ օժտված էակ է՝ ընդունակ հասկանալու, տրամաբանելու և իր վարքագիծը կարգավորելու՝ օգտվելով իր ազատությունից և բանականությունից՝ հնազանդ Նրան, ով այդ ամենը տվել է իրեն»*[27]*:*

«Ամենակալ Արարիչը մարդուն ստեղծել է որպես բանական էակ՝ բացարձակապես տարբեր մտրազուրկ արարածներից: Ուստի, մարդը չի կարող չգիտակցել իր արարքները, քանզի բնական օրենքի ուժով նա ստիպված է իմանալ՝ իր գործերը բարի՞ են, թե՞ չար... Հետևաբար՝ ովքեր հրաժարվում են ճանաչել աստվածային սկզբունքները, ճիշտ պատկերացում ունեն իրենց արարքների մասին, այլապես ինչո՞ւ են ամաչում իրենց վատ արարքներից»[28]*:*

Ավանդույթի հետ համամիտ և համաձայն՝ Եկեղեցու հոգևոր իշխանությունը հաստատագրել է այս վարդապետությունը: Ստորև ներկայացնենք մի քանի օրինակ հոգևոր իշխանության վերջին հրապարակումներից. *«Գիտակցության խորքում մարդը բացահայտում է մի օրենք, որ ինքը չի ստեղծել իր համար, բայց որին պարտավոր է ենթարկվել: Այդ ձայնը, որ չի դադարում նրան ստիպել՝ սիրելու և կատարելու բարին, խուսափելու չարից, անհրաժեշտ պահին հուժկու արձագանքում է նրա սրտի ամենանվիրական անկյունում՝ հորդորելով՝ «...արա՛ այսինչը, խուսափի՛ր այնինչից»: Դա Աստծո կողմից մարդու սրտում արձանագրված օրենքն է, և մարդու արժանապատվությունն այդ օրենքին հնազանդվելն է. այդ օրենքն է, որ կդատի նրան»*[29]*:*

«Այս ամենն առավել հստակ հայտնվում է նրան, ով համարում է, որ մարդկային կյանքի բարձրագույն նորմը հենց ինքը՝ աստվածային օրենքն է՝ հավիտենական, առարկայական և համատիեզերական, որի միջոցով Աստված, իմաստության ու սիրո նպատակամղվածությամբ, կարգավորում, ուղղորդում և տնօրինում է բովանդակ աշխարհը՝ իր հայեցողությամբ դասավորելով մարդկային հանրության ուղիները: Իր այդ օրենքով Աստված մարդուն մասնակից է դարձ-

[26] **Է. Կանտ**, Գործնական բանականության քննադատություն, II:
[27] **Տերտուղիանոս**, Ընդդեմ Մարկիոնի, Բ., էջ 4:
[28] **Գրիգոր Մեծ**, Բարոյախոսություն Հոբի, ԻԷ., էջ 25:
[29] GS, 16.

նում այնպես, որ աստվածային նախախնամության բարեբախտ կարգավորությամբ վերջինս կարողանա մշտապես ավելի ու ավելի հասու լինել անանցանելի ճշմարտությանը... Իր խղճի միջնորդությամբ է, որ մարդն ընկալում ու ճանաչում է աստվածային օրենքի անվերապահ կարգադրությունները»[30]*:*

«Որևէ հավատացյալ չի ցանկանա ժխտել, որ Եկեղեցու հոգևոր իշխանությանն է պատկանում նաև բնական բարոյական օրենքի մեկնությունը: Հիրավի, անվիճելի է, ինչպես բազմիցս հայտարարել են մեր նախորդները, որ Հիսուս Քրիստոս, իր աստվածային իշխանությունը հաղորդելով Պետրոսին և առաքյալներին ու նրանց ուղարկելով ուսուցանելու իր պատվիրանները բոլոր ազգերին, նրանց հաստատում է որպես բարոյական ողջ օրենքի իրական պահապաններ և մեկնիչներ. ոչ միայն ավետարանական, այլ նաև բնական օրենքի, որոնք դարձյալ Աստծո կամքի արտահայտությունն են, և դրանց հավատարմորեն հետևելը նույնպես անհրաժեշտ է փրկության համար»[31]*:*

Եվ վերջապես հարկ է նշել, որ իրավունքի վրա բնական օրենքի գործած ազդեցությունից հետո որոշ փիլիսոփաներ և իրավագետներ կրկին վերադառնում են բնական իրավունքի գաղափարին՝ բացարձակ այլ իրավունք հիմնելու համար: Ահա նշանավոր իրավաբաններից մեկի վկայությունը. *«Չնայած բարդություններին՝ կա մի ընդհանուր հայտարար: Բնական իրավունքի ցանկացած գաղափար ձգտում է օգտվել անհատական ընտրության իրավունքից կամ պայմանականություններից, որտեղ հիմնային չափանիշները կարգավորում են մարդկանց միջև հարաբերությունները և հետամուտ են արդարադատությանը՝ որպես բանականության տրամաբանական կամ բարու բարոյագիտական արտահայտություններ: Բնական իրավունքի հարցը միայն փիլիսոփաներին և իրավագետներին հետաքրքրող զուտ տեսական հարց չէ... այլ՝ խորապես գոյաբանական ու հասարակական խնդիր: Քանի որ իրավունքը նախանշված է բնության և մարմնավորված մարդու մեջ, ապա իրավունքի գործնական կիրառումը անկասելիորեն մնում է մշտապես արդիական խնդիր: Բնական իրավունքի փիլիսոփայությունն ամփոփված է երեք հիմնական դրույթներում՝*

Դրական իրավունքի նկատմամբ քննադատական դիրքորոշում որդեգրելու հնարավորություն.

Հույս տածել արդար իրավունքի հանդեպ.

Իրավական պաշտպանության կենտրոն համարել մարդուն»[32]*:*

Այս տվյալները թույլ են տալիս մեզ հանգել հետևյալ եզրակացությանը. բարոյախոսական աստվածաբանությունը կարիք ունի վերակիրա-

[30] DH, 3.
[31] Paul VI, HV, 4.
[32] **A. H. Gil**, De nuevo sobre derecho natural, Persona y Derecho, 12 (1985), p. 13-65.

ռելու բնական իրավունքը՝ այն ճիշտ մեկնաբանելով, զտելով ֆիզիկական ու կենսաբանական տարրերից: Հարկավոր է նաև չընկնել «բնապաշտության» (նատուրալիզմի) թակարդը, ինչը բնորոշ է վերջին շրջանի բարոյագիտական տեսություններին, քանզի կաթոլիկ բարոյախոսության հղման աղբյուրը միայն բնական օրենքը չէ, այլ՝ Հիսուս Քրիստոսին հետևելն ու նրան նմանվելը: Եթե բարոյախոսական աստվածաբանությունը հաշվի չառնի բնական օրենքի դրույթները, այն միշտ կմնա թերի և չի կարողանա լրացնել այս պակասն անգամ աստվածաշնչյան տվյալներով: Իրոք, բնական օրենքում մարդաբանությունն ու բնազանցությունը հանդիպում են իրար, որն անհրաժեշտ է մարդկային անձի բարոյականության գիտական մշակման համար: Ինչպես գրում է Հովհաննես Պողոս պապը՝ «Միայն նրանք, որոնք ժխտում են անձի ճշմարտության գոյությունը, մարդու անանց բնությունը, որ արմատապես հիմնված է ամենայն իրականության չափ հանդիսացող արարչագործ Իմաստության վրա, կարող են ժխտել այս արժեքի նորմերի գոյությունը: Հետևաբար՝ հարկավոր է, որ բարոյագիտական միտքը առավել խորությամբ հիմնվի իրական մարդաբանության վրա, իսկ վերջինս հենվի արարչագործության բնազանցության վրա, որը քրիստոնեական ցանկացած մտքի կենտրոնում է: Բարոյագիտության ճգնաժամը մարդաբանության ճգնաժամի ամենաակնառու ապացույցն է, ճգնաժամ, որն իր հերթին իսկապես առաջացել է բնազանցական մտքի մերժման հետևանքով: Այս երեքի՝ բարոյագիտության, մարդաբանության և բնազանցության փարանջատումը լրջագույն սխալմունք է: Դա է ողբերգականորեն ցույց տվել մշակույթի պատմությունը»[33]:

Դրական օրենք. *«Դրական օրենքը» օրենսդրական իշխանություն ունեցող որոշակի օրենսդրի կողմից հռչակված օրենքն է: Այն միաժամանակ և՛ «աստվածային» է, և՛ «մարդկային»: Մարդկային դրական օրենքն իր հերթին լինում է «եկեղեցական» և «քաղաքացիական»:*

1. Աստվածային օրենքի հեղինակն Աստված է: Տասը պատվիրանները աստվածային օրենքներ են Հին Կտակարանում, իսկ սերը օրենք է Նոր Կտակարանում:

2. Եկեղեցական օրենքի հեղինակը Եկեղեցու նվիրապետությունն է: Այս օրենքները, որոնց ենթակա է, օրինակ, պսակադրությունը, հավաքված են եկեղեցական Կանոնագրքում:

3. Քաղաքացիական օրենքի հեղինակն օրինականորեն ձևավորված ժողովրդական իշխանությունն է: Այս օրենքի օրինակներ են տարբեր երկրներում գործող Քաղաքացիական օրենսգրքերը, հարկային օրենքները և այլն:

---

[33] **Jean-Paul II**, Discours au congrès international de monde (11 mai 1986).

Դրական բոլոր օրենքները պետք է հաշվի առնեն հավիտենական օրենքի ու բնական օրենքի պահանջները: Դրական որևէ օրենք չպետք է գանց առնի դրանք: Հաճախ դրական օրենքները՝ ինչպես աստվածային, այնպես և եկեղեցական, բնական օրենքի բացատրությունները կամ կիրառությունն են: Սա վերաբերում է նաև քաղաքացիական օրենքին: Այդուհանդերձ, քաղաքացիական համակեցությունը պահանջում է օրենքների հանրագումար, որոնք բնական օրենքի հետ անմիջական առնչություն չունեն, քանզի կարգավորում են հանրային կյանքի երկրորդական ոլորտները, որոնք անկախ են բնական օրենքից, սակայն չպետք է վերջինիս հակառակ գնան: Կաթոլիկ եկեղեցու քրիստոնեականն *ուսուցանում է.* «Լինելով Արարչի հույժ բարի գործ՝ բնական օրենքն ամուր հիմքեր է տալիս, որոնց վրա մարդը կարող է կառուցել իր ընտրություններն ուղղորդող բարոյական կանոնների շենքը: Այն նաև դնում է մարդկային հասարակության կրթության համար անհրաժեշտ բարոյական հիմքը: Վերջապես, այն տրամադրում է քաղաքացիական օրենքի համար անհրաժեշտ հիմք՝ վերջինս իրեն կցելով կամ մերժողությամբ, որը եզրահանգումներ է անում բնական օրենքի սկզբունքներից, կամ դրական և իրավական հավելումներով»[34]:

Նոր օրենքը կամ Ավետարանի օրենք. Այս «նոր օրենքը» էականորեն Սուրբ Հոգու շնորհն է, որ ստացել ենք Քրիստոսի միջոցով. այն մեզ դրդում է գործել հավատի լույսի ներքո, որի շարժիչ ուժը գթությունն է: Այս օրենքը մեր արարքների անօտարելի և գործուն ուղեցույցն է, բայց այն նաև «արտաքին օրենք» է, որն ամփոփված է Սուրբ Գրքում և քրիստոնեական Ավանդության մեջ: «Նոր օրենքը» հաստատում է բնական օրենքը՝ ներառելով նոր ուսմունք և նոր խրատներ՝ շնորհի ու վերջինիս բերած նորոգ կյանքի վերաբերյալ:

Այս օրենքը հատուկ է միայն քրիստոնեական բարոյախոսությանը: Նման բացառիկության առանցքն այն իրողությունն է, որ մկրտվածը համարվում է նորոգ մարդ: Հիրավի, հաշվի առնելով մարդաբանության և բարոյագիտության միջև առկա փոխադարձ հարաբերությունն ու նկատի առնելով, որ մկրտությունը հավատացյալին հաղորդում է «նոր կյանք ի Քրիստոս»՝ ակնհայտ է, որ քրիստոնեական գոյությունը պետք է առաջնորդվի մի օրենքով, որն ուղղորդում է հոգևոր նոր կյանքը, ինչպես հայտարարում է Ավետարանը: Այստեղից՝ «նոր օրենք», «Սուրբ Հոգու օրենք», «Ավետարանի օրենք» և գործածվող այլ անվանումները:

Այս օրենքի բովանդակությունը հարիր է քրիստոնյայի՝ սեփական կյանքը Ավետարանի, մասնավորապես Երանիների *(Մատթ. Ե. 17, Զ. 1-24)*

[34] CEC, 1959.

և սիրո նոր պատվիրանի (Հովհ. ԺԵ. 12) բարոյական պահանջներին ենթարկելու պարտավորությանը: Այս «նոր օրենքի» բարոյախոսական հարստությունն այնքան մեծ է, որ կարող է բարոյախոսական աստվածաբանության բացատրման միջոց համարվել: "Veritatis Splendor" շրջաբերականը Նոր Կտակարանի տարբեր բնագրերի հիման վրա զարգացնում է դրանց բովանդակությունը. *«Եկեղեցին ամենայն երախտագիտությամբ ընդունում է Հայտնության ամբողջ ամբարը և պահում այն սիրով՝ վերջինիս վերաբերվելով կրոնական ակնածանքով՝ Աստծո օրենքը Ավետարանի լույսի ներքո հարազատ կերպով մեկնելու իր առաքելության ընթացքում: Բացի այդ՝ Եկեղեցին իբրև պարգև է ստանում Նոր օրենքը, որն Աստծո օրենքի «կատարումն» է՝ Հիսուս Քրիստոսի և Հոգու մեջ: Սա «ներքին օրենք» է (Հովհ. ԼԱ. 31-33)՝ «գրված ոչ թե թանաքով, այլ՝ կենդանի Աստծո Հոգով, ոչ թե քարեղեն տախտակների վրա, այլ՝ սրտի մարմնեղեն տախտակների վրա» (Բ. Կորնթ. Գ. 3), կատարելության և ազատության օրենք (Բ. Կորնթ. Գ. 17): Այն «Հիսուս Քրիստոսով կյանք տվող Հոգու օրենք է (Հռոմ. Ը. 2)»*[35]*:*

Իր հերթին՝ *Կաթոլիկ եկեղեցու քրիստոնեականը* ***բացատրում է բազմաթիվ անվանումները, որոնք տրվում են այս օրենքին բովանդակության հարստության համար.*** *«Նոր օրենքը» կոչվում է նաև «սիրո օրենք», որովհետև այն պատվիրում է գործել Սուրբ Հոգուց ներշնչված սիրուց և ոչ երկյուղից դրդված. «շնորհի օրենք», քանզի հավատի ու սուրբ ծեսերի միջոցով այն շնորհի ուժ է տալիս գործելու համար. «ազատության օրենք», որովհետև այն մեզ ազատում է Հին օրենքի ծիսական ու իրավական պահոցներից, դրդում է գործելու անկաշկանդ և անմիջականորեն՝ գթասրտության մղումներով, ազատում է ծառայի կարգավիճակից, «ով չգիտի, թե ինչ է անում իր Տերը», բարձրացնելով Քրիստոսի բարեկամի աստիճանին՝ «որովհետև այն բոլորը, ինչ իմ Հորից լսեցի, հայտնեցի ձեզ» (Հովհ. ԺԵ. 15), կամ՝ ժառանգորդ որդու կարգավիճակին (Գաղ. Դ. 1-7, 21-31, Հռոմ. Ը. 15)»*[36]*:*

Քրիստոնյան կարող է հասնել բարոյական լիարժեք կյանքի, եթե իր *վարքագիծը* ***համապատասխանեցնի իր*** *էությանը:* ***Իսկ դրան հասնելու ուղին ցույց է տալիս այս նոր՝ Հոգու օրենքը:***

Օրենքների կատարմանն առնչվող բարոյական սկզբունքներ. Դյուրին չէ ձևակերպել բարոյական այն սկզբունքները, որոնք պետք է կարգավորեն քրիստոնյայի բարոյական վարքագիծը: Դրանք բազմաթիվ են, որոնք կամփոփենք հետևյալ տասը կետերում.

[35] VS, 45.
[36] CEC, 1972.

1. Բոլոր մարդիկ ծնված օրվանից ենթակա են բնական օրենքի պահանջներին. ըստ տեսաբանների՝ այդ օրենքն ունի հետևյալ առավելությունները՝ այն «օբյեկտիվ» է, «համընդհանուր» և «անսասան»:

2. Մարդու ընդհանրական իրավունքներն ու պարտականությունները, որոնք պահպանվում և պաշտպանվում են իրավականորեն, հիմնված են բնական օրենքի վրա:

3. Բնական օրենքից բխող նորմերը պարտավորեցնում են խիղճը:

4. Բնական օրենքն ընդգրկում է «առաջնային» (մի՛ սպանիր) և «երկրորդական» (սեփականության իրավունք) սկզբունքներ: Առաջնային սկզբունքները ոչ մի բացառություն չեն ընդունում:

5. Տասը պատվիրանների բարոյական պարտավորությունները վերաբերում են բոլոր մարդկանց՝ քրիստոնյա կամ ոչ քրիստոնյա: Այդուհանդերձ, որպես «սկզբունք» կամ «բարոյական օրենք», դրանք պարտադիր են Աստծուն հավատացողների համար, ով հռչակել է այդ պատվիրանները:

6. Եկեղեցու նվիրապետությունը կարող է հրապարակել խղճի մտոք համընդհանուր պարտադիր նորմեր բոլոր հավատացյալների համար:

7. Բոլոր մկրտվածները՝ սկսած յոթ տարեկանից և գիտակից տարիքում լինելու դեպքում, պարտավոր են կատարել Եկեղեցու օրենքները, բացի այն օրենքներից, որոնք նախատեսում են այլ տարիք:

8. Զուտ ներքին արարքները ենթակա են միայն Եկեղեցու իշխանությանը:

9. Քաղաքացիական արդարացի օրենքները խղճի մտոք պարտավորեցնում են բոլոր քաղաքացիներին:

10. Քաղաքացիական օրենքի առարկա կարող են լինել արտաքին արարքները և միայն այնպիսիները, որոնք նպաստում են հանուրի բարօրությանը՝ դրանք կատարելով կամ չկատարելով:

Ազատություն, խիղճ և օրենք. Վերջին գլուխներում հայտնի է դառնում, թե որքան դժվար է ներդաշնակել բարոյականության երեք հիմնարար բաղադրիչները՝ ազատությունը, խիղճը և օրենքը: Երեքն էլ սերտորեն ազդեցված են, բայց եթե ճշգրտորեն չսահմանվի դրանցից յուրաքանչյուրի դերը, ապա դրանց ամբողջացումը կարող է խնդիրներ առաջացնել: Ահա թե ինչու, հաճախ է պատահում, որ սխալ մեկնաբանության պատճառով ազատության և խղճի դերը նսեմացվում է հանուն նորմի, կամ նվազեցվում է օրենքի կարևորությունը՝ այն ստորադասելով ազատության ու խղճի գործադրմանը: Սա առաջացնում է խնդիրներ, որոնք խոչընդոտում են բարոյական գիտության հստակ ընկալմանը: Ուստի, հարկ

է անմիջապես նշել, որ չկա որևէ հակադրություն ազատության և օրենքի, ինչպես նաև օրենքի ու խղճի միջև:

Ազատություն և օրենք. Ոմանք այնքան են չափազանցնում անհատական ազատությունը օրենքի հանդեպ, որ պնդում են, թե օրենքը չի սահմանում՝ ինչն է «լավ» և ինչը՝ «վատ», այլ ազատ անհատն է ստեղծում բարոյական այս երկու որակումները: Այս սխալը բացահայտված է "Veritatis Splendor" շրջաբերականում. «Ստրծո օրենքը չի նվազեցնում մարդու ազատությունը, առավել ևս չի վերացնում այն, այլ ընդհակառակը, պաշտպանում և առաջ է մղում: Սակայն գնալով բացարձակ այլ ուղղությամբ՝ ժամանակակից մշակույթի որոշ միտումներ բազմաթիվ հոսանքներ են առաջացրել բարոյագիտության մեջ, որոնք խորհրդածության կենտրոնում են դնում ազատության և օրենքի միջև եղած ենթադրական հակադրությունը: Սա վերաբերում է, օրինակ, այն ուսմունքներին, որոնք անհատներին կամ հասարակական խմբերին վերագրում են չարն ու բարին որոշելու կարողություն. մարդկային ազատությունն, իբրև թե, կարող է «ստեղծել արժեքներ» և գերակայություն ունենալ ճշմարտության նկատմամբ, ընդհուպ՝ ճշմարտությունը կարող է համարվել ազատության ստեղծած իրողություն: Վերջին միտքը ենթադրում է բարոյական այնպիսի անկախություն, որ փասփացի նշանակում է ազատության բացարձակ ինքնիշխանություն»[37]:

Իրականում, ազատության և օրենքի հարաբերությունն ընդդիմադիր հարաբերություն չէ, քանի որ երկուսը փոխադարձաբար հղում են միմյանց: Եթե, ինչպես նշեցինք, մարդու միտքը սխալական է, և կամքը կարող է խորտակվել իր կրքերի ուժի ազդեցությամբ, ապա օրենքը դիտարկվում է որպես անհրաժեշտ օգնություն, որ անձն իմանա, թե ինչ պետք է անի ու հաստատվի նորմի սահմանած բարու մեջ: Նմանապես՝ հաշվի առնելով, որ մարդկային ազատությունը սահմանափակ է՝ այդ սահմանափակումներից մեկն օրենքն է, քանզի նախազգուշացնում է անհատին, թե ինչ վտանգներ են սպառնում, եթե նա ընտրի ամենադյուրինն ու ամենաօգտավետը: Բուն իմաստով՝ բարոյական օրենքն ազատության սահմանափակում չէ, այլ ավելի շուտ այն ցույց է տալիս անձին, թե որ ուղղությամբ պետք է գնա՝ այդ ազատությունն առարկայորեն, խելամիտ կիրառելու համար: Ինչպես երթևեկության կանոնները չեն բռնանում վարորդի կամքին, այլ օգնում են առանց վթարների հասնելու նպատակակետին, այնպես և աստվածային օրենքը չի սահմանափակում մարդկային ազատությունը, այլ ուղղորդում է այնպես, որ մարդն իր կյանքն ապրի դեպի փրկություն տանող ճանապարհով:

[37] VS, 35.

Խիղճ և նորմ. Հակադրության իմաստով չպետք է հասկանալ նաև խիղճ-օրենք հարաբերությունը: Մեր օրերում ամենատարածված սխալի էությունը խղճի արժևորումն է այն աստիճան, որ վերջինս համարվում է գերակա օրենքի հրամայականների նկատմամբ, և բարոյախոսները պաշտպանում են «լոկ խղճի բարոյականության» տեսակետը: Այս հեղինակները մեղադրում են նախորդող բարոյախոսական աստվածաբանությանը խղճի դերը բավարար չափով հաշվի չառնելու մեջ, քանի որ, նրանց կարծիքով, երբեմնի բարոյախոսները խիղճը սահմանում էին իբրև «մարդկանց կյանքում յուրաքանչյուր առանձին դեպքի համար համընդհանուր նորմերի ինքնաբերաբար կիրառում միայն» և մոռանում էին արարքների գնահատման գործում նրա վճռական դերի մասին: Այլ կարծիքներ չլինելու դեպքում կարելի էր նաև ընդունել այս տեսակետը, սակայն վերջինս քարկոծողները այնքան են չափազանցնում խղճի դերը, որ պնդում են, թե այն է արարքների բարոյական գնահատման ստեղծողը: Այս մոլորությունը ցույց է տրված "Veritatis Splendor" շրջաբերականում. «Խղճի ստեղծարար բնույթը շեշտադրելու իրենց ցանկության մեջ որոշ հեղինակներ խղճի արարքներն անվանում են «վճիռներ», ոչ թե «վերաբերմունք». իբրև թե միայն անկախ, «ինքնակամ» որոշումներ կայացնելով՝ մարդն ի վիճակի կլիներ հասնելու բարոյական հասունության»[38]:

Այստեղ գործ ունենք ժամացույցի օրենքն անվիճելիորեն ստուգելու իրողության հետ. օրենքի կարևորությունը ի հաշիվ խղճի չափազանցնող բարոյախոսական մի աստվածաբանությանը փոխարինում է մեկ այլ աստվածաբանություն, որն ուռճացնում է խղճի դերը՝ օրենքի կարևորությունը նսեմացնելով:

Իրականում խիղճն ու օրենքը չպետք է իրար հակադրվեն, այլ գործեն ներդաշնակ ամբողջականության մեջ: Ավելին՝ խիղճը կարիք ունի նորմերի, որպեսզի ճիշտ որոշումներ կայացնի: Նախևառաջ, ինչպես նշեցինք, խիղճը չի հեղինակում բարու և չարի ստորոգումները (կատեգորիաները), այլ միայն վավերացնում է դրանք: Սա նշանակում է, որ խիղճը օրենքի միջոցով բացահայտում է, թե ինչն է լավ և ինչը՝ վատ, որպեսզի հետո արժեհամակարգային վերաբերմունք ցուցաբերի իր գործած արարքների նկատմամբ: Այս առումով՝ օրենքը «նեգատիվ» ժապավենն է, որը չափում է բարին ու չարը: Խիղճը իր հերթին գործնական դատողություն է կատարում, ինչը նրան թույլ է տալիս եզրակացնել, որ այսինչ արարքը բարի է, քանզի համահունչ է օրենքի բովանդակությանը կամ, ընդհակառակը, չար է, որովհետև վկայում է, որ չի իրագործվել ըստ նորմի հանձնարարականների:

[38] VS, 55.

Ամփոփելով՝ նշենք, որ խիղճն ու օրենքը ներդաշնակության մեջ են, որովհետև, ինչպես նշում է մեջբերյալ շրջաբերականը, խիղճը հետևում է Աստծո օրենքին, որը «բարոյականության համընդհանուր և օբյեկտիվ նորմն է»: Այնուամենայնիվ, խիղճը պասիվ չէ, այն գործնական վերաբերմունք է ցուցաբերում իր արարքների նկատմամբ՝ համաձայն օրենքի սահմանումների: Նրա դերը նաև նորմատիվ է: Հեղինակներն անվանում են «մոտակա սուբյեկտիվ նորմ»: Այդ է պատճառը, որ, ինչպես ուսուցանում է Կաթոլիկ եկեղեցու քրիստոնեականը, «մարդը պետք է միշտ հնազանդվի իր խղճի հաստատակամ դատողությանը»[39]: Այսուհանդերձ, օրենքն է օգնում մարդուն ցուցաբերել այդ «հաստատակամ դատողությունը» իր անելիքի կամ չանելիքի վերաբերյալ, եթե ցանկանում է ունենալ մարդուն արժանի վարքագիծ:

Ֆրանսերենից թարգմանեց
ՆԱԶԵՆԻ ՂԱՐԻԲՅԱՆԸ

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

AA = Apostolica auctoritute
CÉC = Catéchisme de l'Eglise catholique
CIC = Code de droit canonique
DH = Dignitatis humanae
Denz-Hün = Denzinger-Hünermann
DV = Dei Verbum
GS = Gaudium et spes
HV = Humanae Vitae
LG = Lumen Gentium
MM = Mater et Magistra
OT = Optatam totius
PH = Persona humana
RP = Reconciliatio et poententia
SC = Sacrosanctum concilium
S.Th = Summa Theologiae
VS = Veritatis Splendor

[39] CEC, 1800.

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԵՅՐԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ
փիլիսոփայական գիտ. դոկտոր, ԵՊՀ

ԱՐԻՍՏՈՏԵԼՅԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Արիստոտելի ծննդյան 2400-ամյակի առթիվ

ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպությունը (UNESCO) ***2016 թ. հռչակել էր «Արիստոտելի հոբելյանական տարի»: Արիստոտելի ծննդյան 2400-ամյակը առիթ է մեկ անգամ ևս գնահատելու հույն հանճարի դերը համաշխարհային տեսական, ի մասնավորի՝ փիլիսոփայական մտքի զարգացման գործում: Արիստոտելը մեծ ազդեցություն է գործել նաև հայ փիլիսոփայական մտքի, այդ թվում՝ միջնադարի նշանավոր աստվածաբան-փիլիսոփա Գրիգոր Տաթևացու փիլիսոփայական հայացքների վրա:***

Միջնադարյան հայ փիլիսոփայության մեջ Արիստոտելի փիլիսոփայության (ընդանցություն, գոյաբանություն, իմացաբանություն, հոգեբանություն, տրամաբանություն, քաղաքագիտություն, բարոյագիտություն, գեղագիտություն) գաղափարների, հարցադրումների ու մոտեցումների ազդեցությունը տեսնում ենք ոչ միայն նրա երկերի անմիջական մեկնաբանողների (Դավիթ Անհաղթ, Անանուն մեկնիչ, Վահրամ Բաբունի, Պետրոս Արագոնացի, Հովհան Որոտնեցի)[1], այլև այն մտածողների (Անանիա Շիրակացի, Գրիգոր Մագիստրոս, Հովհաննես Սարկավագ Իմաստասեր, Հովհաննես Պլուզ Երզնկացի, Բարդուղիմեոս Բոլոնիացի,

[1] Հայ փիլիսոփայության մեջ Արիստոտելի ուսմունքի ազդեցության մասին տես «Արիստոտելը և հայ փիլիսոփայությունը» (Հոդվածների ժողովածու), Երևան, 1980:

Գրիգոր Տաթևացի և այլք) աշխատություններում, ովքեր թեև չեն գրել արիստոտելյան երկերի մեկնություններ, սակայն աստվածաբանական-փիլիսոփայական զանազան հարցերի քննարկման ընթացքում օգտվել են արիստոտելյան փիլիսոփայության գիտանոցից: Այս փաստը ինքնին վկայում է հայ իրականության մեջ արիստոտելյան փիլիսոփայության հեղինակության և տարածվածության մասին: Տաթևի համալսարանի ուսուցչապետ Ս. Գրիգոր Տաթևացին[2] *(1346-1409 թթ.) նույնպես չի գրել Արիստոտելի երկերի մեկնություններ (եթե հաշվի չառնենք Կեղծ-Արիստոտելի «Յաղագս առաքինութեան» գրքի մեկնությունը), սակայն, ի տարբերություն նման մյուս մտածողների, նա արտագրել ու խմբագրել է իր ուսուցիչ Հովհան Որոտնեցու (1315-1388 թթ.)՝ Արիստոտելի «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» երկերի մեկնությունները (հավանաբար նաև որոշ հարցերում միջամտել է՝ հավելել, ճշգրտել ու ամբողջացրել, համենայն դեպս, իր աշխատություններում նա մեծապես օգտվում է այդ մեկնություններից), ի մոտո ծանոթ է եղել միարարական շարժման ներկայացուցիչների՝ Ֆրանցիսկյան ու Դոմինիկյան միաբանությունների լատին մտածողների (Բարդուղիմեոս Բոլոնիացի, Պետրոս Արագոնացի) ինքնուրույն երկերին և նրանց ու հայազգի համադավանակիցների կողմից թարգմանված եվրոպական աստվածաբանական-փիլիսոփայական գրականությանը (Ալբերտ Մեծ, Թովմա Աքվինացի), որտեղ մանրամասնորեն ներկայացված էր արիստոտելյան փիլիսոփայությունը:*

ԺԳ. դարը եվրոպական փիլիսոփայության պատմության մեջ հայտնի է որպես «արիստոտելյան կորպուսի» վերահայտնագործման ու յուրացման դար. եթե դարասկզբին Կաթոլիկ եկեղեցին դժվարությամբ էր համակերպվում Արիստոտելի փիլիսոփայական երկերի թարգմանության ու համալսարաններում դասավանդման հետ, ապա դարի երկրորդ կեսին արդեն Եկեղեցու հովանավորությամբ, քրիստոնեական վարդապետության և արիստոտելականության համադրման ճանապարհով, ստեղծվում են փիլիսոփայական-աստվածաբանական «հավաքումներ» և հավաքաբանական-համադրական ուսմունքներ (Ալբերտ Մեծ, Թովմա Աքվինացի): Արիստո-

---

[2] Գրիգոր Տաթևացու փիլիսոփայական հայացքների մասին տես **С. Аревшатян**, Философские взгляды Григора Татеваци, Ереван, 1957. նույն հեղինակի՝ «Գրիգոր Տաթևացի», «Հայ մշակույթի նշանավոր գործիչները (V-XVIII դդ.)» գրքում, Երևան, 1976. **Հ. Գաբրիելյան**, Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հ. 2, Երևան, 1958. նույն հեղինակի՝ «Հայ փիլիսոփայության պատմություն», Երևան, 1976, **Ն. Թովմասյան**, Գրիգոր Տաթևացու սոցիալ-տնտեսական հայացքները, Երևան, 1966. **Վ. Զալոյան**, Հայոց փիլիսոփայության պատմություն, Երևան, 1975. **M. Krikorian**, Grigor of Tatev. A Great Scholastic Theologian and Philosopher (XIVth c.). «Հայկազեան հայագիտական հանդէս», հ. Թ., Բէյրութ, 1981, էջ 71-80. **Ս. Զաքարյան**, Հայ իմաստասերներ (Գրիգոր Տաթևացի), Երևան, 1998:

տելականությունը, ի դեմս նաև լատինական ավեռոիզմի, դառնում է եվրոպական փիլիսոփայության առաջատար ուղղություններից մեկը:

Արիստոտելյան գաղափարների միջոցով աստվածաբանության փիլիսոփայականացման ու փիլիսոփայության աստվածաբանականացման սխոլաստիկական, հավաքաբանական ու համադրական այդ ոճը բնորոշ էր նաև ԺԴ. դարի հայ, ի մասնավորի Տաթևի դպրոցի փիլիսոփայությանը: Ինչպես Արիստոտելի եվրոպացի հետևորդները, այդ թվում Թոմմա Աքվինացին, այնպես և Տաթևի դպրոցի ուսուցչապետեր Հովհան Որոտնեցին ու Գրիգոր Տաթևացին, առաջնորդվելով «պարտիմք բանական արուեստիւ ներածիլ ի մակացութիւն աստուածաբանական իմաստից»[3] **կամ** *«ոչ է պարտ զանց առնել զիմաստս փիլիսոփայիցն»*[4] **նշանաբանով, փորձում են արիստոտելյան փիլիսոփայությունը համադրել քրիստոնեության հետ, արիստոտելյան փիլիսոփայության դրույթները, հասկացություններն ու փաստարկները օգտագործել՝ հիմնավորելու համար կրոնաաստվածաբանական, եկեղեցական վարդապետության սկզբունքներն ու տեսական-իմաստասիրական գաղափարները: Արիստոտելի փիլիսոփայության ազդեցությունը, բնականաբար, համեմված կամ լրացված քրիստոնեական դրույթներով, տեսանելի է Գրիգոր Տաթևացու արարչաբանական-բնազանցական, գոյաբանական, իմացաբանական, տրամաբանական, բարոյագիտական ու հասարակագիտական հայացքներում:**

1. Արիստոտելյան բնազանցության (առաջին փիլիսոփայության, աստվածաբանության կամ մետաֆիզիկայի) առարկան գերզգայական ու գերբնական գոյն է, աստված, որին Ստագիրացին անվանում է նաև առաջնաշարժիչ, սկզբնապատճառ, ձևերի ձև ու մտածողություն մտածողության մասին: Այն ամբողջությամբ աննյութական է և գոյություն ունի (ի տարբերություն նյութի) ոչ թե հնարավորությամբ, այլ մշտապես ներգործությամբ: Գրիգոր Տաթևացու Աստվածը ոչ թե արիստոտելյան անդեմ փիլիսոփայական հիմնագոյացությունն է, այլ բացարձակ Եռանձնավորություն՝ օժտված կամքով ու բանականությամբ, Արարիչ, ով ոչնչից ստեղծում և նախախնամում է ամբողջ գոյը: Չնայած այդ երկու ըմբռնումների էական տարբերություններին, այդուհանդերձ, Գրիգոր Տաթևացին փորձում է նաև արիստոտելյան հասկացություններով (հիմ-

---

[3] «Յովհաննու Որոտնեցւոյ քաջ հռետորի եւ արդիւնաբան բարունապետի, արարեալ ի բան մարգարէին, որ ասէ. «Արդարութիւն Տեառն ուղիղ է եւ ուրախ առնէ զսիրտս, պատուիրանք Տեառն լոյս են եւ լոյս տան աչաց, երկիւղ Տեառն սուրբ է եւ մնայ յաւիտեան». **Ս. Հովհան Որոտնեցի**, Մեկնողական-իմաստասիրական ճառեր, քնն. բնագր., առաջ. և ծանոթ.՝ Ա. Մինասյանի, Ս. Էջմիածին, 2009, էջ 207:

[4] **Գրիգոր Տաթևացի**, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 246:

նագոյացություն, աննյութական գոյ, սկզբնապատճառ, ներգործությամբ գոյ, բանականությամբ օժտված գոյ և այլն) բնութագրել Աստծուն: Աստվածիմացության դրական (կատաֆատիկ) մեթոդի համաձայն՝ Աստծուն կարելի է վերագրել հաստատական հատկություններ և առաջին հերթին՝ «գոյացություն» հասկացությունը, որովհետև, ըստ գոյացության արիստոտելյան սահմանման, «գոյացութիւն է ինքն ինքեամբ էացեալ եւ ոչ կարօտեալ յայլս հաստատողի»[5]: Աստված գոյացություն է, որովհետև ինքնաբավ է՝ «միայն է ինքն ինքեամբ, եւ ոչ յայլմէ հաստատեալ»: Սրանով ավարտվում է Աստծո՝ իբրև գոյացության և մյուս՝ գոյացություն համարվող իրողությունների ընդհանրությունը: Եթե վերջիններս բաղկացած են նյութից ու տեսակից, ընդհանուր (սեռատեսակային), անհատական, պատահական հատկություններից, ապա Աստված պարզ, աննյութական, հատկություններ չունեցող գոյացություն է: Աստված տեսակ է առանց նյութի, գոյացություն՝ առանց հատկությունների, իսկ եթե Նրան վերագրում ենք հատկություններ, դա անում ենք ցույց տալու համար Նրա գերազանցությունն ու առավելությունը մյուս գոյացությունների նկատմամբ:

Աստծուն բնութագրելիս Գրիգոր Տաթևացին նախապատվությունը տալիս է աստվածիմացության ժխտական մեթոդին՝ ընդսմին գործածելով արիստոտելյան բնազանցության հասկացությունները, փորձում տրամաբանական կապ տեսնել ժխտական վերագրումների միջև: Անշուշտ, դա չի նշանակում, թե աստվածիմացության հարցում Գրիգոր Տաթևացին չի դիմում փիլիսոփայության կամ բանականության (բանական քննության) վրա հիմնված փաստարկների օգնությանը, որոնք հիմնականում վերցված են արիստոտելյան փիլիսոփայությունից: Իսկ աստվածիմացության պարագայում դիմել արիստոտելյան փիլիսոփայությանը՝ նշանակում է արժևորել բանականությունն ու բարձրացնել նրա հեղինակությունը, համադրել արիստոտելյան գաղափարները քրիստոնեական վարդապետության հետ՝ նշանակում է միասնություն տեսնել հավատի և բանականության, հավատի տեսության ու «բնական քննության» միջև: Բանականությունը ինքնին չի բացահայտում վերնագույն ճշմարտություններ, բայց կարող է նպաստել հայտնութենական ճշմարտությունների ընկալմանն ու յուրացմանը: Հակադրվելով այն տեսակետին, ըստ որի՝ Աստծո գոյությունը հնարավոր չէ բանականությամբ ապացուցել՝ Գրիգոր Տաթևացին նշում է, որ դա «ընդդէմ է բանից իմաստնոց, զի Պղատոն եւ Արիստոտէլ եւ այլքն՝ հաւատք ոչ ունէին, բայց բանական քննութեամբ կացուցին թէ Է Աստուած»[6]: Գրիգոր Տաթևացու կարծի-

---

[5] Անդ, էջ 170:

[6] **Գրիգոր Տաթևացի**, Գիրք որ կոչի Ոսկեփորիկ, Կ. Պոլիս. 1746, էջ 29:

քով՝ արարված իրերի իմացության միջոցով կարելի է հիմնավորել Արարչի գոյությունը, շարժման, պատճառահետևանքային կապերի, կեցության աստիճանների (բարի, կատարյալ, ճշմարիտ իրողություններ) ուսումնասիրության միջոցով պատկերացում ունենալ անպատճառ Պատճառի, Սկզբի, Միակի, Առաջնաշարժիչի, Կարգավորիչի, բարեգույն, կատարելագույն ու ճշմարտագույն Էակի՝ Աստծո մասին, որովհետև *«յամենայն արարածս զԱստուած գտանեմք իբրև հայելի» եւ «արարածք գոչեն թէ Աստուած է»*[7]*:*

Ըստ Գրիգոր Տաթևացու՝ Աստծո կեցության տիեզերաբանական ապացույցները համապատասխանում են մարդկային բանականության բնույթին, որովհետև վերջինս սովորաբար *«միջնորդութեամբ նիւթոյ հասանէ յանմիւթն, որպէս տեսեալ գիր՝ իմանամք զօրութիւն նորա. եւ տեսեալ զորակ եւ զքանակ՝ իմանամք զգոյացութիւն իրին»*[8]*:* ***Գրիգոր Տաթևացին գործածում է Արիստոտելից եկող և միջնադարում Թովմա Աքվինացու կողմից վերաձևակերպված տիեզերաբանական ու նպատակաբանական ապացույցներ՝ հիմնված պատճառի, շարժման, սկզբի, միակի, անհրաժեշտության և պատահականության, հնարավորության և ներգործության, կեցության աստիճանների համեմատության և գոյավորի նպատակահարմարության վրա, որոնք միասին վերցրած՝ վկայում են գոյի ռացիոնալիստական կառուցվածքի և փորձնական ճանապարհով դա ճանաչելու արիստոտելյան սկզբունքների վրա: Այդ ապացույցներն ունեն միևնույն կառուցվածքը՝ բոլոր դեպքերում միտքն ընթանում է «հետևանքներից դեպի պատճառ»՝ համաձայն արիստոտելյան մեթոդի կամ աներևույթը երևութականների միջոցով ճանաչելու աստվածաշնչյան սկզբունքի: Այսպես, ըստ շարժման վրա հիմնված ապացույցի՝ այն ամենը, ինչ շարժվում է, շարժման մեջ է դրվում մեկ ուրիշի կողմից՝ լինի դա բնությամբ, բռնությամբ թե հոժարությամբ: Ոչ մի բան չի կարող միաժամանակ լինել թե՛ շարժման աղբյուր և թե՛ շարժման ենթակա: Հետևաբար, այն ամենը, ինչ շարժվում է, շարժվում է ինչ-որ մեկի կողմից: Իսկ այդ շղթան չի կարող անվերջ լինել, ուստի պետք է ընդունել անշարժ մի շարժիչ, որը հենց Աստված է: Ըստ պատճառի վրա հիմնված ապացույցի՝ ամեն մի իրի առաջացման համար անհրաժեշտ է պատճառ, բայց ինչպես շարժման, այնպես և պատճառների շղթան չի կարող անվերջ լինել՝*** *«եւ այսպէս բացաքայլութեամբ յանհունս՝ ոչ է գիտութիւն: Արդ պիտոյ է անպատճառ պատճառ բոլորից պատճառաւորաց, որ Նա ինքն է Աստուած»*[9]*:*

---

[7] Անդ, էջ 40-41:

[8] **Գրիգոր Տաթևացի**, Գիրք հարցմանց, էջ 113:

[9] **Գրիգոր Տաթևացի**, Գիրք որ կոչի Ոսկեփորիկ, էջ 20:

Մեկ այլ փաստարկի համաձայն՝ ոչ մի իր չի կարող իր սկիզբը լինել, ուստի բոլոր սկիզբների համար անհրաժեշտ է մի անսկիզբ սկիզբ, որը հենց Աստված է: Քննադատելով այն տեսությունները, որոնք ընդունում են երկու և ավելի սկիզբների գոյությունը և փորձում այդ առնչությամբ վկայակոչել Արիստոտելին, Գրիգոր Տաթևացին կարծում է, թե «Արիստոտէլի բանն ոչ օգնէ նոցա», որովհետև առաջին սկզբի հետ կապված՝ «Արիստոտէլ հաստատէ թէ մի՛ է սկիզբն: Եւ Աւէոօիս ասէ, որ ոք յառաջին հասարակաց սկիզբն ներհակ դնէ՝ անգէտ է, վասն այնորիկ Մանի որ երկու առաջին սկիզբն է եղեալ, յոյժ յիմար է եղեալ»[10]: Այս միակ սկիզբը նաև գոյավորի միակ կարգավորիչն ու կառավարիչն է: Եթե տիեզերքում գոյություն ունենային մի քանի կարգավորիչներ, կտիրեր խառնաշփոթություն և անիշխանություն: Այս առնչությամբ Գրիգոր Տաթևացին բերում է Արիստոտելից վերցրած զորքի օրինակը: Զորքի կարգավորվածությունը կարող է լինել կա՛մ զորքից, կա՛մ զորավարներից, կա՛մ զորագլխից: Զորքից չի կարող լինել, որովհետև «բազում են զօրքն եւ զանազանք. եւ բարք իւրաքանչիւրոյ յայտուկ. եւ կամք: Եւ ոչ կարէ լինիլ ի բազում զօրագլխոց, վասն զի ըստ այնմ որ բազումք են եւ զանազանք իւրաքանչիւրոցն յայտուկ կամք, ոչ կարէ լինիլ որ մի հասարակաց կարգ լինի բազում կամքն: Ապա ուրեմն պարտ է որ ի միոյ զօրագլխէ լինի կարգեալ»[11]: Եվ այդ միակ կարգավորիչն ու կառավարիչը Աստված է, ով իմաստուն կերպով կառավարում է իր արարած աշխարհը:

Ըստ Գրիգոր Տաթևացու՝ Աստծո գոյությունը կարելի է նաև ապացուցել թե՛ կեցության աստիճանների և թե՛ արարածներին Աստծո հետ համեմատելու ճանապարհով: «Հետևանքներից դեպի պատճառ»՝ ուսումնասիրության արիստոտելյան մեթոդը կամ փորձնական ճանապարհով Աստծո կեցության ապացուցումները կարևոր նշանակություն ունեին միջնադարյան փիլիսոփայության համար. դրանք բարձրացրին ոչ միայն բնական քննության, բանականության ու փիլիսոփայության հեղինակությունը, այլև գրքային մտածողության գերիշխանության պայմաններում կարևորեցին երկրային, զգայական-մարմնական, բնական երևույթների արժեքը՝ որպես իմացության առարկայի՝ հիմք նախապատրաստելով հետագա դարերի փիլիսոփայական-աշխարհայացքային հեղաշրջման համար:

2. Արարչակարգը և գոյավորի կառուցվածքը բացատրելիս Գրիգոր Տաթևացին նախ հենվում է արարչագործության գաղափարի, այնուհետև՝ նյութի ու ձևի, հնարավորության և իրականության, առաջնային ու երկրորդային գոյացությունների, էական և պատահական գոյերի

[10] Անդ, էջ 71:
[11] Անդ, էջ 83-84:

մասին արիստոտելյան ուսմունքի վրա: Աստված զուտ ներգործություն է, իսկ նյութը՝ չգոյ, բայց հնարավորությամբ գոյ: Գրիգոր Տաթևացին տարբերակում է հնարավոր գոյի կամ ոչնչի երկու տեսակ՝ ա. բացարձակ ոչինչ կամ հնարավոր գոյ, որն առանց ներգործության է, բ. ոչինչ կամ հնարավոր գոյ, որը ներգործությամբ է: Աշխարհը արարվում է հենց հնարավոր գոյից կամ ոչնչից, որը ներգործությամբ հանդերձ է:

Արարչագործության ընդունումը Գրիգոր Տաթևացին յուրօրինակ ձևով զուգակցում է աշխարհի հավերժության մասին արիստոտելյան մտքի հետ: Նա, բնականաբար, չի պաշտպանում աշխարհի հավերժության (տվյալ դեպքում՝ աշխարհի չարարվածության, Աստծո հետ նյութի համագոյության) մասին արիստոտելյան դրույթը, սակայն չի էլ պնդում, որ արարված աշխարհն ապականացու է: Աշխարհը ներգործությամբ գոյություն ունի մինչ արարչագործությունը՝ Աստծո մտքում, այսինքն՝ աշխարհը հավերժակից է Աստծուն ոչ թե որպես ինքնակա նյութական գոյացություն, այլ որպես աննյութական և անփոփոխ հարացույց: Ինչպես արհեստավորը (քանդակագործը) քարի վրա պատկեր դրոշմելուց առաջ նախ իր մտքում նկարում է այդ պատկերը և ըստ այդմ քանդակում, այնպես և Արարիչը նախապես իր մտքում ունի արարվելիք աշխարհի պատկերը: Այս իմաստով «կրկին է սկիզբն լինելութեան աշխարհի». նախ՝ երբ դա առկայում է Աստծո մտքում, ինչպես տաճարի գաղափարը ճարտարապետի գլխում, երկրորդ՝ արարվում է, այսինքն՝ կառուցվում է տաճարը: Եթե ճարտարապետի մտքում տաճարը գոյություն ունի հնարավորությամբ, հետո՝ ներգործությամբ, ապա «զօրութեամբ լինելութիւն աշխարհիս՝ առ Աստուած ներգործութեամբ է»[12]: Աստծո մեջ հնարավորությամբ ոչինչ չի կարող լինել, որովհետև հնարավորությամբ գոյը ենթադրում է փոփոխություն, մինչդեռ Աստված անփոփոխ էություն է: Աշխարհի հավերժությունը նախ և առաջ պայմանավորված է աստվածային նախատեսության հավերժությամբ: Աշխարհն անհրաժեշտաբար իր լինելությունն ստանում է համապատասխան աննյութական հարացույցի, որովհետև «անկա՛ր է ոչ երեւիլ սկիզբն լինելութեան աշխարհի. ըստ այնմ՛ որ էր ի նախագաղափար տրեսութիւնն Աստուծոյ»[13]: Այս իմաստով հավերժական է նաև արարված աշխարհը: Աստված հավերժական ու միշտ ներգործությամբ գոյ է, ուստի աշխարհն ստեղծել է մշտնջենական, իսկ մշտնջենականը անհրաժեշտ գոյ է, որը երբեք չի կարող վերածվել չգոյության. «...արար զաշխարհս գործ մշտնջենաւոր. եւ մշտնջենաւորն հարկաւոր է. եւ

[12] Անդ, էջ 169:
[13] Անդ, էջ 164-165:

հարկաւորն ի գոյն կարէ, եւ ի չգոյն անկար: Յաղագս որոյ աշխարհի գոյացեալ. երբեմն մշտնջենաւոր գոյութեամբ, անգոյանալ երբէք ոչ կարէ»[14]:

Աշխարհի հավերժությանը վերաբերող հաջորդ փաստարկը կապված է Աստծո ամենակարողության հետ: Աստված ամենակարող է, իսկ Նրա կամքը՝ անփոփոխ. եթե Նա ցանկանա վերացնել աշխարհը, կնշանակի՝ Նրա կամքը փոխվեց, ինչն անհնար է: Հետևաբար՝ աշխարհը չի կարող վերածվել չգոյի: Ըստ Գրիգոր Տաթևացու՝ աշխարհի հավերժության գաղափարը բխում է նաև Աստծո հավերժության ու անփոփոխության բնույթից. *«Եւ որպէս ինքն Աստուած մնացական է եւ յաւիտենական. նոյնպէս եւ աշխարհս գործ փառաց նորա՝ մնացական է յաւիտեան: Զի թէպէտ ըստ մասին անցանի եւ ապականի, սակայն ըստ բոլորին անանց է եւ յաւիտենից»*[15]: ***Աշխարհի հավերժությունը նշանակում է նաև նյութական տարրերի՝ հողի, օդի, ջրի, կրակի հավերժություն: Առանձին իրերն առաջանում և քայքայվում են, սակայն դրանց հիմքում ընկած տարրերը չեն ոչնչանում: Գրիգոր Տաթևացին պաշտպանում է տիեզերքի կարգավորվածության, երկրակենտրոնության, չորս տարրերի փոխհարաբերության, շարժման, պատճառահետևանքային կապերի, նպատակահարմարության, բնության (նյութի, մարդու, հոգու) աստիճանական զարգացման*** *(«...բնութիւնն յանկարծակի ոչ կարէ ներգործել, այլ սակաւ սակաւ հեւրևելով յանկարարէն ելանէ ի կատարեալն»*[16]*)* ***և այլ բնական երևույթների արիստոտելյան բացատրությունները:***

Գրիգոր Տաթևացին պաշտպանում է Ստագիրացու հյուլեաձևական տեսությունը, ըստ որի՝ բոլոր իրերը բաղկացած են նյութից և տեսակից (ձևից), որտեղ նյութը հանդես է գալիս որպես անհատականացնող սկիզբ, իսկ ձևը ապահովում է տվյալ տեսակի գոյերի ընդհանրությունը: Առանձին իրերը ձևի և նյութի միասնություն են: Ձևերը (միջնադարյան փիլիսոփայության լեզվով՝ ընդհանրականները (ունիվերսալիաները) գոյություն ունեն ոչ թե իրերից դուրս, այլ իրերի մեջ՝ որպես դրանց էություններ կամ գոյացական հատկություններ: Այս հարցում համեմատելով Պլատոնի և Արիստոտելի հայացքները՝ Տաթևացին նշում է, որ հույն մտածողների միջև գոյություն ունի թե՛ տարաձայնություն և թե՛ համաձայնություն. *«...փարաձայնին. զի Պղատոն տեսեալ զստորնայինքս փոփոխական, ասաց զհանուրն փոփոխական եւ զատեալ ի սոցանէ ըստ իրին եւ ըստ իմացմանն: Իսկ Արիստոտէլ ասաց զընդհանուրն լինել ի զգալիսս ըստ իրին եւ զատեալք ըստ իմացմանն: Այլ համաձայնին, զի երկուքն նախքան զբազումն, ի գիտութիւն Աս-*

[14] Անդ, էջ 162:
[15] **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Զմեռան հատոր, Կ. Պոլիս, 1740, էջ 272:
[16] **Գրիգոր Տաթևացի**, Գիրք հարցմանց, էջ 255:

փուծոյ ասեն զոլ»[17]*:* ***Ընդհանրականների (ունիվերսալիաների) հիմնահարցը լուծելիս Գրիգոր Տաթևացին միանշանակ հետևում է Արիստոտելին, ըստ որի՝ ձևերը ներգործությամբ և առանց նյութի գոյություն ունեն աստվածային բանականության մեջ, ներգործությամբ ու նյութապես՝ առանձին իրերի մեջ, աննյութապես և հնարավորությամբ՝ մարդկային մտքում: Սա ընդհանրականների հիմնահարցի լուծման չափավոր ռեալիստական տեսակետ է: Գրիգոր Տաթևացին ևս ընդունում է ընդհանրականների՝ եռակի գոյության բանաձևը.*** *«Ընթհանուրն եւ .ե. [5] ձայնքդ է նախ քան զբազումն ի տեսութեանն Ասփուծոյ. եւ ի բազումն ի յէութեան տեսեալ. եւ ի վերայ բազմաց, զի կայանայ յիմացականս մեր, զի իմացականն առանց երևակայութեանց նիւթ նոցա եւ մարմնաւորաց առնէ զընթհանուրն»*[18]*:* ***Աստծո բանականության մեջ գոյություն ունեցող ընդհանուր գաղափարները կամ նախատիպերը հավերժական են, անփոփոխ և աննյութական, որոնք, միավորվելով նյութականի հետ, ապահովում են արարչակարգի կայունությունն ու կարգավորվածությունը, գոյաձևերի՝ տեսակների ու սեռերի անփոփոխությունը և հավերժությունը: Ընդհանուր գաղափարները, որպես այդպիսին, գոյություն ունեն Աստծո բանականության մեջ, իսկ իրականության մեջ գոյություն ունեն միայն առանձին գոյացություններ, որոնք օժտված են սեռատեսակային և անհատական հատկություններով: Անհատ իրերից առանձին ու անկախ ընդհանուրի գոյությունը բացառվում է.*** *«Արդ՝ ի կարճոյ գիտելի է, զի հանուրն ոչ է ենթակայացեալ եւ զատեալ ի զգալեացս, որպէս ասէն պղատոնականքն»*[19]*:* ***Յուրաքանչյուր առանձին գոյացություն անհատական, եզակի է այն իմաստով, որ իր հատկություններով տարբերվում է մյուս գոյացություններից***[20]***: Սոկրատեսն ու Պլատոնը իրար նման են, որովհետև երկուսն էլ ունեն մարդուն ներհատուկ հատկանիշներ, բայց իրարից տարբերվում են այդ հատկանիշների որակական ու քանակական աստիճաններով: Առհասարակ, հատկություններն իրերից անբաժանելի են: Նույնիսկ, երբ ասվում է, թե առանձին գոյացությունն առաջնային է, իսկ «պատահումն»՝ երկրորդային, դա չի նշանակում, որ առանձին գոյացությունը և դրա հատկությունները գոյություն ունեն իրարից անկախ: Գրիգոր Տաթևացին նշում է, որ անհատի հատկությունների ամբողջությունը կազմում է նրա «բնությունը»: Նա առանձնացնում է երկու կարգի «բնություն»՝ ընդհանուր և***

---

[17] **Գրիգոր Տաթևացի**, Համառօտ տեսութիւն ի գիրս Պորփիւրի, Մադրաս, 1793, էջ 333:

[18] **Գրիգոր Տաթևացի**, Լուծմունք համառաւտ ի տեսութիւն Դաւթի, Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետ՝ ՄՄ), ձեռ. թիվ 1695, էջ 33ա:

[19] **Գրիգոր Տաթևացի**, Համառօտ տեսութիւն ի գիրս Պորփիւրի, էջ 334:

[20] Տես **Գրիգոր Տաթևացի**, Ի լուծումն Պարապմանց Սրբոյն Կիւրեղի, ՄՄ, ձեռ. թիվ 10051, էջ 52բ, էջ 103ա:

մասնավոր, որոնք տարբերվում են գոյաեղանակով՝ ընդհանուր բնությունը գտնվում է մտածողության մեջ, իսկ մասնավորը՝ առանձին իրերի մեջ: Եթե իրականում նույն բնությունը ներհատուկ լինի մի քանի անհատների, ապա կստացվի, որ միևնույն բանը միաժամանակ գոյություն ունի իրարից տարբեր անհատների մեջ: Գրիգոր Տաթևացին Արիստոտելի նման վճռականապես մերժում է ընդհանուրի՝ իբրև թվով մեկ բնության գոյությունը միևնույն տեսակի անհատների մեջ[21]*: «Մարդը», որպես այդպիսին, գոյություն չունի ոչ միայն իրերից անկախ, այլև առանձին մարդկանց մեջ:*

Ընդհանրականների հիմնահարցի շրջանակում հայ մտածողը դիտարկում է նաև առաջնային և երկրորդային գոյացությունների մասին արիստոտելյան ուսմունքը: Գրիգոր Տաթևացին պաշտպանում է Արիստոտելի այն տեսակետը, ըստ որի՝ առանձին, անհատ գոյացությունները հիմնագոյացություն են և այս իմաստով առավելություն ունեն երկրորդային գոյացությունների նկատմամբ («Իսկ անհատն է առաւել եւ իսկագոյն եւ առաջին գոյացութիւն, որ է առանձնական եւ մասնաւոր...»[22]*), իսկ երկրորդային գոյացությունները՝ սեռատեսակային հատկությունները, սեռերն ու տեսակները ածանցյալ և կախյալ գոյեր են: Անհատը հիմնագոյացություն (սուբստանցիա) է, այսինքն՝ ունի ինքնաբավ կեցություն, նրա գոյությունը կախված չէ որևէ այլ գոյից: Գրիգոր Տաթևացու համոզմամբ՝ գոյաբանական-ծագումնաբանական առումով սեռերն ու տեսակները, որպես բնական բազմություններ, կարող են առաջանալ միայն անհատ գոյացությունների հիմքի վրա: Այս իմաստով անհատը (մեկը, միակը) առաջնային է ցանկացած բազմության, տվյալ դեպքում՝ տեսակի և սեռի նկատմամբ, որովհետև բազմությունը գոյանում է միակից: Այս տեսական դրույթը Գրիգոր Տաթևացին օգտագործում է գաղափարական-դավանաբանական պայքարում՝ հիմնավորելու համար Հայոց եկեղեցու և հայոց ազգի առանձին ու ինքնուրույն ապրելու իրավունքը. «Դարձեալ՝ յայտնապէս ասել ոչ է հարկ՝ թէ ամեն բազում պատրուական է քան զմին. զի ահա գոյացութիւն մի է եւ պատրահումն բազում. եւ արեգակն մի է եւ աստեղք բազում. եւ գլուխն մի է եւ անդամք բազում: Որ եւ պատրուական է վարդապէտն քան զաշակերտն. եւ զօրաւարն քան զզօրս. եւ կառաւարն քան զկառն եւ այլն: Նմանապէս եւ ազգս հայոց թէպէտ մի է, կարէ պատրուական զոլ բազմաց... Եւ լաւ է մի ակն պատրուական քան զբազումն քարինս անպիտան»*[23]*: Գրիգոր Տաթևացին, Արիստոտելի և Հովհան Որոտնեցու նման, առաջնային և երկրորդային գոյացությունների առաջնության*

---

[21] Տե՛ս **Аристотель**, Сочинения в 4-х томах, т. 1, Москва, 1976, էջ 220:
[22] **Գրիգոր Տաթևացի**, Գիրք հարցմանց, էջ 550:
[23] Անդ, էջ 551:

հարցը լուծում է տարբեր կերպ՝ կախված դրանց նշանակություններից ու գործառույթներից: Օրինակ՝ մի առիթով նա գրում է, թե երկրորդային գոյացությունները առավել են առաջնայիններից, որովհետև՝ ա. ընդհանուրը պատվական է, քան մասնավորը, բ. ընդհանրությունը առաջնային է զանազանության նկատմամբ, գ. «...զի հասարակն է միութիւն. եւ զանազանն բազմութիւն. եւ նախ է մին քան զբազումն»[24]:

Այսպիսով, տեսակների ու սեռերի՝ իբրև բնական բազմությունների գոյությունը պայմանավորված է անհատների գոյությամբ: Դա նշանակում է, որ տվյալ տեսակի մեջ մտնող անհատների վերացմամբ վերանում է նաև տեսակը, կամ՝ եթե վերանում է տեսակը, ուրեմն վերանում են տվյալ տեսակի մեջ մտնող բոլոր անհատ գոյացությունները: Զնայած դրան՝ Գրիգոր Տաթևացին պաշտպանում է արիստոտելյան և աստվածաշնչյան այն միտքը, որ անհատ գոյացությունները առաջանում ու ոչնչանում են, իսկ ընդհանուր գոյերը՝ սեռերն ու տեսակները, մնում են անփոփոխ: Աշխարհում տեղի են ունենում փոփոխություններ, բայց աշխարհն ինքը մնում է անփոփոխ:

3. Իմացաբանության մեջ Գրիգոր Տաթևացին նույնպես հետևում է Արիստոտելին՝ վերջինիս ուսմունքը հարմարեցնելով քրիստոնեական վարդապետության ճանաչողական սկզբունքներին: Ըստ այդմ՝ նա իրարից տարբերակում է բնական կամ բանական քննությունը և հավատի տեսությունը, որոնց ակունքը աստվածային իմաստությունն է: Բնական քննության մեջ մտնում են իմացության զգայական և բանական աստիճանները, որոնք պատվանդան են իմացության բարձրագույն մակարդակի՝ հավատի տեսության համար: Հավատը հաղթահարում է բնական քննության սահմանափակությունները և ավելի խորը գիտելիք տալիս աստվածային իրողությունների մասին: Իմացության (և իմաստության) նպատակը Աստծո ճանաչողությունն է ըստ մարդկային կարողության[25]: Արիստոտելի իմացաբանության մեջ հավատքը տեղ չունի, ուստի նրա ազդեցությունը միջնադարյան մտածողների վրա սահմանափակվում է բնական քննության՝ զգայական, փորձնական ու բանական իմացության շրջանակներում:

Արիստոտելի իմացաբանությունը որոշ իմաստով համապատասխանում է հյուլեական գոյաբանությանը. ինչպիսին գոյն է (գոյը բաղկացած է նյութից ու ձևից, այսինքն՝ մտահասու և զգայահասու շերտերից), այնպիսին էլ իմացության կառուցվածքն է (զգայական և բանական աստիճաններ):

---

[24] **Գրիգոր Տաթևացի**, Լուծմունք համառաւտ ի տեսութիւն Դաւթի, ՄՄ, ձեռ. 1695, էջ 35ա, էջ 66բ:

[25] Տես **Գրիգոր Տաթևացի**, Գիրք որ կոչի Յորայ լուծմունք, ՄՄ, ձեռ. թիվ 1019, էջ 48բ:

Հետևելով Արիստոտելին՝ Գրիգոր Տաթևացին կարծում է, որ մարդու ճանաչողության գործիքը հոգին է, որը բնությամբ միասնական է, բայց ունի երեք զորություն՝ բուսական, կենդանական և բանական: Օժտված լինելով բանական հոգով, այսինքն՝ իմանալի ու մտահասու գոյերը ճանաչելու ունակությամբ՝ մարդը դրանով իսկ տարբերվում է մյուս արարածներից: Ըստ Գրիգոր Տաթևացու՝ մարդու իմացությունն ստացական է, որովհետև հոգին չունի բնածին գաղափարներ ու գիտելիքներ, ունակություններ և բարիքներ: Հայ մտածողը մարդկային հոգին նմանեցնում է «անգիր պնակիտի» կամ «լուացած մագաղաթի», որը ժամանակի ընթացքում՝ մարդու իմացական գործունեության ծավալմանը համընթաց, լցվում է գիտելիքներով ու շնորհներով: Մարդը ծնվում է «մաքուր» հոգով ու մարմնով՝ «բնականապէս մերկ եւ դատարկ եմք յամենայն բարեաց. ի մարմնաւորէն եւ ի հոգևորէն. զի ոչ ունիմք զգեստ բնական որպէս կենդանեաց. եւ ոչ զէն. եւ ոչ այլ ինչ: Նոյնպէս եւ ըստ հոգւոյն՝ ոչ ունիմք սրբութիւն, իմաստութիւն եւ ոչ այլ ինչ, այլ զամենայն յետոյ ստանամք»[26]: Ինչպես գոյաբանության, այնպես և իմացաբանության մեջ Գրիգոր Տաթևացին գործածում է արիստոտելյան «հնարավորությամբ գոյ» ու «ներգործությամբ գոյ» հասկացությունները: Մարդը հնարավորությամբ օժտված է ճանաչելու կարողությամբ, որը վերածվում է իրականության զգայական ու բանական ունակությունների աստիճանական դրսևորման ընթացքում:

Արիստոտելի նման՝ Գրիգոր Տաթևացին կարծում է, որ զգայական ճանաչողությունն սկսվում է այն պահից, երբ արտաքին իրերն ազդում են զգայարանների վրա՝ առաջ բերելով համապատասխան զգայություններ ու զգայական պատկերներ: Վերջիններս ընդհանուր առմամբ ճիշտ են արտապատկերում իրականությունը, սակայն ունեն սահմանափակություններ (օրինակ՝ գիտելիք չեն տալիս ընդհանուրի մասին, մինչդեռ իմացության խնդիրն ընդհանուրի բացահայտումն է), որոնք հաղթահարվում են իմացության բանական աստիճանում: Եթե զգայարաններով ճանաչվում են իրերի արտաքին, նյութական, պատահական, անհատական, երևութական կողմերը, ապա բանականությամբ՝ ներքինը, անմարմնականը, էութենականը, խորքայինը, ընդհանուրը և ամբողջը: Բանականությունը չտկում է զգայական իմացության թերությունները, սակայն նա ևս ունի իր սահմանափակությունները: Օրինակ՝ թեև բանականությամբ հնարավոր է ապացուցել Աստծո կեցությունը, այնուհանդերձ, եղական ու չափավոր «բանական աչքով» անհնար է հասու լինել աստվածային անեղ և անսահման, վերբանական իրողություններին. «...գիտութիւն մտացն հետեւի բնութեան իրաց եւ ի վեր քան զբնութիւն ոչ ինչ տեսանէ. զի ուր բնութիւն ոչ հա-

[26] **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Ամառան հատոր, Կ. Պոլիս, 1741, էջ 105:

սանի, անդ եւ միտք ոչ հասանի: Այլ հաւատքն տեսանէ ի վեր քան զքնութիւն որպէս է Ասպուած...»[27]: ***Բանականությունը, որի առարկան երկրային իմանալի իրողություններն են, հիշողության մեջ ամրագրում է զգայական պատկերները, այնուհետև վերացարկման ու ընդհանրացման ճանապարհով ստեղծում ընդհանուր հասկացություններ, ձևակերպում դատողություններ և մտահանգումներ, որոնց միջոցով ճանաչում է կեցության հատկությունները, դրանով իսկ հիմք ստեղծում գործնական բանականության (իմաստության) համար: Իր ուսուցիչ Հովհան Որոտնեցու նման***[28] ***Գրիգոր Տաթևացին կարծում է, որ արիստոտելյան տասը կատեգորիաները բավարար են կեցությունը բնութագրելու համար: Ընդհանուր հասկացությունների միջոցով գիտությունը (փիլիսոփայությունը) իրերի ուսումնասիրության հիման վրա ձևակերպում է մտքեր, հարաբերական ճշմարտություններ, որոնք վերաբերում են երկրային իրողություններին և բավարարում են մարդու տեսական-գործնական պահանջմունքները: Գրիգոր Տաթևացին ընդգծում է արիստոտելյան այն միտքը, որ հասկացություններն իրենց հիմքերն ունեն իրականության մեջ, որ դրանք հետևում են իրերին և ոչ թե հակառակը.*** *«...զի բանն զիրն ոչ կարէ ճշմարտել, այլ իրն զբանն ճշմարտէ. յորժամ գոյ կամ՝ ոչ գոյ, որպէս ասէ՝ ի հարկէ գոլ զէակն յորժամ է. եւ ոչ գոլ յորժամ ոչ է»*[29]: ***Կեցության ու մտածողության հարաբերակցության շրջանակում Գրիգոր Տաթևացին պաշտպանում է ճշմարտության արիստոտելյան ուսմունքը, ըստ որի՝ դատողությունը ճշմարիտ է, եթե համապատասխանում է իրականությանը (երբ*** *«իրն ու ձայնն հաւասարին միմեանց»,* ***կամ՝*** *«ճշմարիտ է գոլն որ է. եւ ոչ գոլն որ ոչ է»*[30]), ***և կեղծ՝ եթե չի համապատասխանում իրականությանը (երբ*** *«իրն ու ձայնն ոչ հաւասարին միմեանց»): Ճշմարտության համապատասխանության տեսությունից բխում է, որ զգայություններն ու միտքը հայելանման արտացոլում են իրականությունը՝*** *«...որպէս հայելին մաքուր՝ տպաւորէ յինքն զկերպարան իրաց զինչ եւ իցէ. նոյնպէս եւ միտքն պարզ՝ տպաւորէ յինքն զամենայն իմացուածս...»*[31]:

---

[27] Անդ, էջ 72:

[28] Հովհան Որոտնեցու կարծիքով՝ *«...տասն սեռականագոյն սեռքն զբոլոր գոյքս պարունակէ: Եւ որ զսա ուսանի, զբոլորիցն ունի գիտութիւն...»* («Յովհաննու Որոտնեցւոյ Վերլուծութիւն «Ստորոգութեանց» Արիստոտէլի», համահավաք տեքստը, առաջ. և ծանոթ.՝ Վ. Չալոյանի, թարգմ. գրաբարից ռուսերեն՝ Ա. Ադամյանի և Վ. Չալոյանի, խմբ.՝ Ս. Արևշատյան, Երևան, 1956, էջ 2):

[29] **Գրիգոր Տաթևացի**, Գիրք հարցմանց, էջ 9:

[30] Անդ, էջ 28:

[31] **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Ամարան հատոր, էջ 444: Տաթևացին կարծում է, որ *«կրաւորական է բնութիւն մարդոյս որպէս հայելի, զի յինչ իրս որ մերձենայ, զնոյն կերպարանէ յինքեան»* (անդ, էջ 312):

4. Արիստոտելյան գաղափարների վրա են խարսխված նաև Գրիգոր Տաթևացու հասարակագիտական, քաղաքագիտական ու բարոյագիտական հայացքները: Արիստոտելի նման Գրիգոր Տաթևացին կարծում է, որ մարդն իր էությամբ հասարակական-քաղաքական էակ է: Մարդու ֆիզիկական-անատոմիական կառուցվածքը, մարմնական ու մտավոր հատկությունները ցուցանում են, որ նա ի բնե (ըստ Արիստոտելի) և ի վերուստ ու ի ծնե (ըստ Գրիգոր Տաթևացու) նախատեսված է հասարակական համատեղ կյանքի համար: Մարդու բնությունն այնպիսին է, որ նա չի կարող գոյատևել առանց մյուս մարդկանց, չի կարող առանց նրանց բավարարել իր կենսական պահանջմունքները՝ «...իւրաքանչիւրքս՝ առ մարմնաւոր պէտս հարկաւորացն չեմք բաւական, այլ կարօտիմք միմեանցս»[32]: Աստված մարդկանց ստեղծել է կարիքավոր, որպեսզի համատեղ կյանքով, իրար փոխօգնելով ու լրացնելով հայթայթեն գոյության միջոցներ, միմյանց միջև հաստատեն եղբայրության և վստահության հարաբերություններ, մտածեն բոլորի բարօրության մասին: Դրա մասին է վկայում թե՛ մարդու ֆիզիկական կառուցվածքը (մարդը ունի աչքեր՝ ուրիշներին տեսնելու համար, ականջներ՝ ուրիշներին լսելու համար, ձեռքեր՝ առնելու ու տալու համար և այլն) և թե՛ գոյակերպը (մարդիկ համահավաք բնակվում են քաղաքներում ու գյուղերում, որովհետև ունեն «առ միմեանս կարօտութիւն, եւ վասն զի արուեստիւք զմիմեանց պէտս լնումք, ի միոյն՝ զկերակուրն գտանելով, եւ ի միոյն՝ զգեստն, եւ յայլմէ զբնակութիւն»[33]):

Ի ծնե բոլոր մարդիկ հավասար են, քանզի միևնույն Աստծո ստեղծագործության արգասիք են, սակայն հասարակության մեջ գոյություն ունի սոցիալական անհավասարություն ու շերտավորվածություն, որովհետև մարդիկ իրար հավասար չեն ո՛չ ունեցվածքով, ո՛չ գիտելիքներով, ո՛չ էլ ընդունակություններով ու հմտություններով: Դա հասարակության «բնական» վիճակն է, քանի որ Աստծո կամքը ստեղծված և նախախնամության տակ գտնվող սոցիալական խավերը՝ թագավորները, դատավորները, իշխանները, զինվորականները, արհեստավորները, հողագործները, մշակներն ու ռամիկները[34], իրենց տարբերություններով հանդերձ, կոչված են իրար հետ համագործակցելու, իրար լրացնելու և միմյանց կարիքները հոգալու: Պաշտպանելով բոլոր մարդկանց հավասարության մասին քրիստոնեական գաղափարը՝ Գրիգոր Տաթևացին միաժամանակ գործառութային տեսանկյունից ընդունում է սոցիալական անհավասարությունը:

[32] **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Ճմերան հատոր, էջ 121:

[33] **Գրիգոր Տաթևացի**, Մեկնութիւն Սաղմոսաց (համառոտ տարբերակ), աշխատ.՝ Ա. Քյոշկերյանի, Երևան, 1993, էջ 86-87:

[34] Տես **Գրիգոր Տաթևացի**, Գիրք որ կոչի Սաղմոսի քաղուածք, ՄՄ, ձեռ. 1019, էջ 36բ:

Ըստ նրա՝ հասարակությունը մի կենդանի օրգանիզմ է, որի յուրաքանչյուր անդամ կատարում է իրեն վերապահված դերը: Աշխատանքի այս բաժանումը սոցիալական ներդաշնակության ապահովման նախադրյալն է: Այդպիսի հասարակությունը խարսխված է արդարության սկզբունքի վրա: Ելնելով սոցիալական աստիճանակարգության և անհավասարության աստվածային բնույթից՝ Գրիգոր Տաթևացին միևնույն ժամանակ մարդկանց այս կամ այն խավին պատկանելը չի դիտում որպես բնածին ու «հավերժական», որպես առավելություն կամ թերություն: Ի տարբերություն Արիստոտելի, ով ստրուկ կամ իշխան լինելը պայմանավորում էր նաև մարդու բնությամբ, Գրիգոր Տաթևացին սոցիալական վիճակը համարում է պայմանական ու փոփոխական: Առանձին մարդու սոցիալական կարգավիճակը փոփոխական է, որովհետև նախ՝ նա անձնիշխան է, ունի ընտրություն անելու հնարավորություն, երկրորդ՝ կյանքը հարափոփոխ է և լի այնպիսի պատահականություններով, որ նույնիսկ ջրկիրը կարող է դառնալ թագավոր (նկատի ունի բյուզանդական Մորիկ կայսրին):

Հասարակությունը չի կարող գոյատևել առանց իշխանության, պետության և օրենքի (Գրիգոր Տաթևացին նկատի ունի ոչ միայն քաղաքական, այլև աստվածային օրենքները[35]: Ըստ մարդու հոգեմարմնական կառուցվածքի՝ նա տարբերակում է պետության և իշխանության երկու տիպ՝ աշխարհիկ (մարմնական) ու հոգևոր: Աշխարհիկ իշխանությունը քաղաքացիներին հնազանդեցնում է քաղաքական օրենքներով, իսկ հոգևոր իշխանությունը՝ հոգևոր օրենքներով): Այս իմաստով պետությունն առաջանում է անհրաժեշտաբար՝ մարդկանց կյանքը քաղաքական օրենքներով կարգավորելու և կազմակերպելու համար: Անիշխան հասարակությունը դատապարտված է կործանման, իսկ, ընդհակառակը, օրենքներով կարգավորվող և կառավարվող երկիրը անհրաժեշտաբար բարգավաճում ու հզորանում է: Մարդկային օրենքները պետք է հետևեն բնական-աստվածային օրենքներին ու լավագույնս կարգավորեն մարդկանց գործողությունները: Օրենքների նպատակը ընդհանուրի բարօրության ապահովումն է, «զի բոլոր բարին լաւ է՝ քան զմասնաւորն»[36]: Այս հարցում հետևելով Արիստոտելին՝ նա նշում է, թե «որքան բարին հասարակ է՝ բարեգոյն է. որպէս մին տան բարին առաւել բարի է քան մին մարդոյն, մին քաղաքին, քան

[35] *«Այլեւ օրէնքն Աստուծոյ է մեզ ի ճանապարհ կենցաղոյս. եւ յորժամ թողումք՝ թիւրիմք եւ մոլորիմք: Այլեւ օրէնքն օգնական է մեզ որպէս սիւն տան. յորժամ թողումք զօրէնս, խափրի հոգեւոր շինուածս մեր»* (**Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Ամարան հատոր, էջ 11):

[36] **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Ձմերան հատոր, էջ 452:

մին տան, եւ մին թագաւորութեան բարին՝ մեծ է քան մին քաղաքին»[37]*:* ***Ելնելով այն մտքից, որ*** *«օրէնքն վասն մարդոյս է»* ***և ոչ թե մարդը օրենքի համար՝ հայ մտածողը կարծում է, որ մարդկային օրենքները հարաբերական ու պայմանական բնույթ ունեն, ուստի չպետք է լինեն վերացական և կախված հանգամանքներից՝ ժամանակի ընթացքում պետք է փոփոխվեն.*** *«...աւրէնք հեւրևի ժամանակին. եւ ժամանակն տիրէ օրինացն, զի կարէ ժամանակ փոփոխել զաւրէնսն, խորտել եւ ընտրել...»*[38]*:*

Արիստոտելի նման Գրիգոր Տաթևացին պետության առաջացումը բացատրում է մարդու՝ հասարակական-քաղաքական էակ լինելու հանգամանքով: Աստված մարդուն ստեղծել է որպես սոցիալական էակ, ուստի սոցիալ-քաղաքական միավորումների (ընտանիք, ազգ, պետություն) ստեղծումը համապատասխանում է մարդու բնության պահանջներին: Հետևելով Արիստոտելին՝ Գրիգոր Տաթևացին կարծում է, որ ընդհանուր բարիքին լավագույնս ծառայում է կառավարման ճիշտ ձևերից մեկը՝ միապետությունը: Ելնելով արարչակարգի և պետության կառուցվածքի օրգանիստական տեսությունից՝ նա կարծում է, որ ինչպես մարդու օրգանիզմը կառավարում է գլուխը, այնպես և պետությունը պետք է կառավարվի միապետի (իշխանի, թագավորի) կողմից: Այս իմաստով նա միապետին վերապահում է անսահմանափակ լիազորություններ և իրավունքներ. *«...որպէս գլուխն մի է բոլոր մարմնոյն եւ բարձրացեալ ի վերայ ամենայն անդամոցն եւ ի նմանէ իջանեն ամենայն կենդանութիւնք եւ զգայութիւնք եւ շարժումն ի բոլոր օդուածս մարմնոյն. Նոյնպէս եւ իշխանն մի է ի մէջ մարդկան. եւ բարձրացեալ փառօք եւ մեծութեամբ. եւ գլուխ նստեալ ամենայն մարդկան. եւ նմանէ գոյ ի մարդ հրաման եւ շարժումն. մահ եւ կեանք. շէն եւ աւեր. եւ ամենայն նորա հրամանաւն կարգաւորի ընդ երկիր»*[39]*:* ***Թեև կառավարման գործում Գրիգոր Տաթևացին մեծ դեր է վերապահում իշխաններին, այնուհանդերձ, նա կողմնակից չէ միահեծան ղեկավարման տարբերակին.*** *«Եւ որպէս գլուխն մարմնոյն է պիտանի, նոյնպէս եւ մարմինն ի գլխոյն: Այսպէս եւ առաջնորդն եւ հեւրևեալքն՝ միմեանց պիտանիք են. ի շինութիւն երկրի, ի խորհուրդ, ի պատերազմ, ի խաղաղութիւն եւ յայլսն: Եւ առաւել քան զամենայն պիտանաւորութիւն՝ ունին առ միմեանս զժողովիլն ի խորհուրդ. եւ ապա համաձայն նորին խորհրդով՝ կարել շինութիւն աշխարհի»*[40]*:*

Եթե Պլատոնը կարծում էր, որ պետությունը պետք է կառավարեն ճշմարիտ կեցության մասին գիտելիք ունեցող փիլիսոփաները (իմաս-

[37] Անդ, էջ 290:
[38] **Գրիգոր Տաթևացի**, Նորին մեկնութիւն Առակացն Սողոմոնի, ՄՄ, ձեռ. 1695, էջ 373ա:
[39] **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Ամարան հատոր, էջ 422:
[40] Անդ, էջ 423:

տունները), ապա Արիստոտելը գտնում է, որ պարտադիր չէ՝ կառավարողները լինեն փիլիսոփաներ: Իշխողները կարող են պետությունը կառավարել իմաստունների օգնությամբ: Այս տեսակետը պաշտպանում է նաև Գրիգոր Տաթևացին: Թագավորը, իբրև մարդ, բնությամբ ամենագետ ու ամենակարող չէ, ուստի կարիք ունի իմաստուն խորհրդատուների: Ավելին՝ Գրիգոր Տաթևացու համոզմամբ՝ եթե պետության նպատակը բոլորի բարօրությունն է, ապա կառավարմանը պետք է մասնակցեն բոլորը: Ինչպես օրգանիզմի անդամները օգնում և փոխլրացնում են միմեանց, այնպես և տարբեր խավերի պատկանող մարդիկ պարտավոր են *«ի խորհուրդն կցորդիլ միմեանց եւ զուղիղն գտանել. եւ որպէս կարօտ են միմեանց ճորտ եւ պարոն, հարուստ եւ աղքատ, վարդապետ եւ աշակերտ, նոյնպէս միտքն կարօտ է առաջնորդի եւ խորհրդակցի: Եւ իմաստուն մարդն՝ հանապազ խնդրէ իւր խորհրդակից եւ օգնական մտացն իւրոց»*[41]***: Կառավարման գործում մասնակցության սկզբունքը բոլորին պատասխանատու է դարձնում երկրի ապագայի համար, իսկ որոշումներ ընդունելու ժամանակ նվազագույնի հասցնում սխալվելու հավանականությունը:***

Հասարակությունը բազմաթիվ անհատների, տարբեր ու հակադիր շահեր ունեցող մարդկանց բազմություն է, որի կառավարումը միապետից պահանջում է անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ: Գրիգոր Տաթևացու կարծիքով՝ երկրային իշխանությունը, գտնվելով աստվածային նախախնամության տակ, չի տրվում պատահական, անտաղանդ մարդկանց: Աստված *«ի մէջ մարդկան զհանճարեղն ընտրէ»* ***և*** *«դնէ իշխան եւ տէր ամենայն մարդկան»:* ***«Հանճարեղ» կառավարողը (թագավորը, իշխանը) նա է, ով՝ ա. գիտի երկիրը շենության ու խաղաղության մեջ պահելու արվեստը, բ. գիտի պատվել բարեգործին և պատժել չարագործին, գ. դատական գործերը վարում է արդարությամբ ու ճշտությամբ և ոչ անիրավությամբ, դ. օժտված է բարոյական և սոցիալական առաքինություններով՝ խոհեմությամբ, իմաստությամբ, գթասրտությամբ, մարդասիրությամբ, քաղցրախոսությամբ և այլն***[42]***: «Հանճարեղ» կառավարող կարող է լինել ոչ միայն իշխանական ծագում ունեցողը, այլև առհասարակ այն մարդը, ով*** *«զիւր բարան կարէ ուղղել. եւ զտունն կարէ շինել. եւ որ զբարան եւ զտունն կարգաւորէ. այնպիսին կարէ զքաղաք եւ զերկիր կարգաւորել եւ առաջնորդել...»*[43]***:***

Գրիգոր Տաթևացու համոզմամբ՝ իշխանները Աստծո կողմից կարգվում են ոչ թե սեփական բարեկեցությունը ապահովելու համար, այլ ծա-

[41] Անդ:
[42] **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Ձմերան հատոր, էջ 159:
[43] **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Ամարան հատոր, էջ 95:

ռայելու «ընդհանուր բարիքին»: Այս կերպ Գրիգոր Տաթևացու քաղաքագիտական պատկերացումները միահյուսվում են բարոյագիտության հետ: Ճիշտ է, հայ մտածողի բարոյագիտական հայացքները գերազանցապես խարսխված են քրիստոնեական բարոյականության սկզբունքների վրա, այնուհանդերձ, որոշ հարցերի քննարկման ժամանակ նա օգտագործում է արիստոտելյան դրույթներ, հատկապես՝ եթե դրանք չեն հակասում կրոնական սկզբունքներին: Մարդու անձնիշխանության, հոգու կատարելագործության, կյանքի իմաստի և նպատակի, երանության, առաքինությունների, մարդու գործունեության տեսական ու գործնական կողմերի միասնության հետ կապված հարցեր քննարկելիս Գրիգոր Տաթևացին նախ անդրադառնում է արիստոտելյան տեսակետներին՝ քննադատելով կամ ընդունելով դրանք, երկրորդ՝ արիստոտելյան դրույթների օգնությամբ հիմնավորում կամ ամբողջացնում է իր ըմբռնումները: Օրինակ՝ Արիստոտելի նման՝ Գրիգոր Տաթևացին համոզված է, որ մարդու արարքը բարոյական է, եթե այն ազատ կամքի հետևանք է: Ընտրություն կատարել՝ նշանակում է գործել գիտակցաբար: Բարոյականությունը միահյուսված է անձնիշխանության և բանականության հետ, մեկը առանց մյուսի հնարավոր չէ պատկերացնել: Արարիչը մարդկանց բնության տերն է, իսկ մարդիկ՝ իրենց գործերի, ուստի մարդիկ պետք է սեփական գործերի համար պատիվ կամ պատիժ կրեն: Քննադատելով մարդու անձնիշխանությունը ժխտող տեսությունները՝ Գրիգոր Տաթևացին հենվում է նաև Արիստոտելի այն մտքի վրա, որ գոյություն ունեն ներգործության երկու սկիզբ՝ բնություն և ազատ կամք, որ մարդը գործում է (ընտրություն է կատարում) ոչ թե ըստ բնության (անհրաժեշտաբար), այսինքն՝ երկնային լուսատուների ազդեցությամբ, այլ՝ ըստ իր ազատ կամքի: Դրա ապացույցն այն է, որ բնությամբ գործելու դեպքում մարդիկ պետք է «առաւել զճշմարիտն ընտրէին եւ սակաւ զչարն», սակայն կյանքում տեսնում ենք հակառակը՝ մարդիկ ավելի հաճախ են սխալվում և ավելի շատ չարիք գործում: Բացի դրանից, շարունակում է հայ մտածողը, ըստ Արիստոտելի՝ «ինչ ի հարկէ բնութեանն է՝ ոչ վարձք առնումք եւ ոչ մեղք»[44]*: Փաստորեն, այս հարցում Գրիգոր Տաթևացին որևէ հակասություն չի տեսնում հեթանոս, «արտաքին» իմաստասեր Արիստոտելի և քրիստոնեական վարդապետության միջև:*

5. Թե՛ արիստոտելյան և թե՛ քրիստոնեական բարոյագիտության մեջ մարդկանց վարքի կարգավորման գործում մեծ նշանակություն է տրվում առաքինություններին: Դա նկատի ունենալով՝ արիստոտելյան բարոյա-

[44] Տես **Գրիգոր Տաթևացի**, Գիրք որ կոչի Ոսկեփորիկ, էջ 55-57:

գիտությունը հաճախ անվանում են «առաքինության բարոյագիտություն»: Գրիգոր Տաթևացին փորձում է ընդհանրության եզրեր տեսնել առաքինության արիստոտելյան և քրիստոնյա վարդապետների սահմանումների ու դասակարգումների միջև: Նա առանձնացնում է առաքինության երեք տեսակ՝ բարոյական (սրանք բնորոշ են թե՛ մարդկանց և թե՛ կենդանիներին), ստացական («մեր կամաւ ստանամք զայս եւ գործեմք»[45]) և շնորհական կամ աստվածային (հույս, հավատ, սեր): Եթե աստվածային առաքինությունները տրվում են մարդուն որպես շնորհ, ապա մյուս առաքինությունները, ինչպես ուսուցանում էր Արիստոտելը, կա՛մ բնորոշ են մարդու բնությանը կա՛մ մարդը ձեռք է բերում իր կյանքի ընթացքում՝ դաստիարակության և իմացության ճանապարհով: Հետևելով Արիստոտելին՝ Գրիգոր Տաթևացին առանձնացնում է նաև տնտեսական, քաղաքական և բարոյական առաքինություններ՝ կարծելով, որ տնտեսական, քաղաքական առաքինությունները առանց բարոյականի չեն կարող կատարյալ լինել: Հիմնական առաքինությունները (խոհեմություն, արիություն, ողջախոհություն և արդարություն) զարդարում, ուղղում և կարգավորում են ինչպես հոգու մասերը, այնպես և մարդու գործողությունները: Օրինակ՝ խոհեմություն առաքինությունը, որը առհասարակ «ուղղում» է բարոյական, տնտեսական, քաղաքական առաքինությունները, դրսևորվում է սրտի, լեզվի ու գործի մեջ: Սրտի խոհեմությունն այն է, որ մարդ գիտի անցյալը, ներկան և հանդերձյալը, լեզվինը՝ «որ չափաւորէ ի բանս», գործինը՝ որ խուսափում է չարից և ընտրում բարին[46]:

Առաքինի լինել նշանակում է խուսափել ծայրահեղություններից և ընտրել ոսկյա միջինը («...պարտ է մեզ հետեւողացս ուղղութեան յերկու չարաչար ծայրիցն փախչիլ, եւ միջին ճանապարհն անխոտոր պահել»[47]): Պլատոնի և Արիստոտելի նման Գրիգոր Տաթևացին առաքինությունների բնույթն ու գործառույթները բացատրելիս գործածում է «արդարություն» և «չափ, չափավորություն» հասկացությունները: Առաքինությունները, ըստ Գրիգոր Տաթևացու, «կարօտ են արդարութեան, զի արդարութիւն հաւասարաբաշխութիւն լսի որ պահէ զսոսա ի միջին չափին հաւասար, եւ ոչ թողու յաւելուլ եւ պակասել, զի երկուսին ծայրքն չար են, եւ միջինն՝ արդարութին է եւ բարի...»[48]:

---

[45] **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Ամարան հատոր, էջ 102:

[46] Տես **Գրիգոր Տաթևացի**, Համառոտ լուծումն առաքինութեանցն Արիստոտէլի, ՄՄ, 1695, էջ 255բ:

[47] **Գրիգոր Տաթևացի**, Գիրք որ կոչի Ոսկեփորիկ, էջ 118:

[48] **Գրիգոր Տաթևացի**, Մեկնութիւն Սաղմոսաց (համառոտ տարբերակ), էջ 83: «Արդարություն» հասկացության մասին տես նաև **Գրիգոր Տաթևացի**, Հաւաքեալ քաղուածոյ մեկնութիւն սրբոյ Աւետարանին Մաթէոսի, ՄՄ, ձեռ. 1295, էջ 75ա:

Չափի պահպանումը թե՛ պետության և թե՛ մարդու բարեկեցության երաշխիքն է, որովհետև չափի խախտումը բարոյապես վնասում է մարդուն («անչափ մեծութիւն եւ անչափ աղքատութիւն հաւասարապէս վնասեն մարդուն...»[49]): Բարոյական առաքինությունները ինքնանպատակ չեն. դրանք միջոցներ են կյանքի բարձրագույն նպատակին՝ երանությանը հասնելու համար: Ըստ Գրիգոր Տաթևացու՝ եթե ստոիկների համար երանությունը առաքինությունների, էպիկուրականների համար մարմնական հաճույքների ձեռք բերման մեջ է, իսկ ճեմականների համար «երանութիւն կայանայ ի ճանաչումն ճշմարտութեան», ապա քրիստոնյայի համար երանությունը ճշմարիտ կեցության՝ Աստծո հայեցողության մեջ է: Այդ նպատակին հասնելու համար մարդը պետք է մեկտեղի բանականությունն ու կամքը, գիտելիքն ու գործը, օրինապահությունն ու բարոյականությունը, բանական քննությունն ու հավատը, տեսական ու գործնական իմաստությունը: Տեսական և գործնական ոլորտները, գիտելիքն ու կամքը սերտորեն կապված են իրար հետ, մեկը պայմանավորում է մյուսի գործունեությունը՝ գործնականը առաջնորդվում է տեսականով, իսկ տեսականը՝ հզորանում գործնականով: Տեսական իմաստությամբ մարդը բացահայտում է ճշմարտությունը, իսկ գործնականով՝ կարգավորում իր վարքը, մասնավորապես «զաղտեղութիւն մեղացն սրբէ»: Գիտելիք ունենալը դեռևս առաքինություն չէ, որովհետև առաքինի լինել նշանակում է գործել ըստ գիտելիքի:

6. Այսպիսով, վերը ասվածը թույլ է տալիս եզրակացնել, որ Տաթևի համալսարանի ուսուցչապետ Գրիգոր Տաթևացին թեև անմիջականորեն չի մեկնել Արիստոտելի երկերը, այնուհանդերձ, սնվելով բնագրերից ու տարբեր աղբյուրներից՝ բնագանցական-արարչաբանական, աստվածաբանական, գոյաբանական, իմացաբանական, քաղաքագիտական ու բարոյագիտական տարբեր հարցերի քննարկման ժամանակ հենվում է արիստոտելյան գաղափարների վրա՝ շարունակելով զարգացնել դեռևս վաղ միջնադարում հայ փիլիսոփայության մեջ ձևավորված արիստոտելյան ավանդույթը: Հետևելով միջնադարյան սքոլաստիկական փիլիսոփայման եղանակին՝ Գրիգոր Տաթևացին փորձում է Արիստոտելի փիլիսոփայությունը համադրել քրիստոնեության հետ, արիստոտելյան փիլիսոփայության դրույթները, հասկացություններն ու փաստարկները օգտագործել հիմնավորելու համար կրոնա-աստվածաբանական և եկեղեցական վարդապետության սկզբունքները:

[49] **Գրիգոր Տաթևացի**, Գիրք որ կոչի Ոսկեփորիկ, էջ 434:

РЕЗЮМЕ

В средневековой армянской философии влияние идей Аристотеля можно видеть не только непосредственно у комментаторов его трактатов, но и у тех мыслителей, в том числе у Григора Татеваци (1346 -1409), которые, хотя и не комментировали его труды, однако активно использовали арсенал аристотелевской философии. Татеваци продолжает развивать аристотелевскую традицию, сформировавшуюся еще в раннем средневековье. При обсуждении метафизических, онтологических, гносеологических, психологических, этических и политических проблем он пытается объединить рациональную философию Аристотеля с христианским вероучением, использовать аристотелевские принципы и понятия для обоснования догматов церкви и богословия.

SUMMARY

The article shows that Aristotle enjoyed great authority in the Armenian medieval philosophy, and we can see the influence of his ideas not only on the works of immediate interpretors of his writings, but also of thinkers, including Gregory of Tathev (1346 -1409), who though did not write commentaries on the works of Aristotle, however, used the arsenal of the Aristotelian philosophy. Gregory of Tathev continues to develop the Aristotelian tradition shaped in the Armenian philosophy as early as in the Early Middle Ages. During the discussion of metaphysical, ontological, epistemological, ethical and political issues, he tries to juxtapose the Aristotelian philosophy with Christianity, to use Aristotelian philosophical theses, concepts and arguments to substantiate the principles of religious-theological and ecclesiastical doctrines.

ՊԵՏՐԱ ԿՈՍՏԱԼՈՎԱ
Ph. D., Պրահայի պետական համալսարան

ՕՍՄԱՆՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԱՐՏԱՅՈԼՈՒՄԸ ԼՎՈՎԻ ԺԷ. ԴԱՐԻ ՀԱՅ ՋԱՆԱՊԱՐՀՈՐԴ ՍԻՄԵՈՆ ԼԵՀԱՑՈՒ ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ[1]

Սիմեոն Լեհացու «Ուղեգրութիւն»-ը ԺԷ. դարի կարևորագույն հայկական պատմական սկզբնաղբյուրներից է: Այն պատկերացում է տալիս դարաշրջանի ամենօրյա իրականության մասին և տեղեկություն է հաղորդում Լեհաստանի և Լիտվայի դրության, Օսմանյան Կայսրության և նրան ենթակա բալկանյան երկրների (Մոլդովա, Վալախիա), ինչպես նաև Արևելյան Միջերկրայքի և Սև ծովի տարածաշրջանների վերաբերյալ: Հեղինակը, լինելով լեհ-լիտվական պետության մեջ գործող Հայ Առաքելական Եկեղեցու անդամ, հատկապես հետաքրքրված էր օսմանյան քաղաքներում հայերի, ինչպես նաև այլ քրիստոնյաների կենսապայմաններով, որոնք ուղղորդվում էին Օսմանյան պետության կողմից, ինչպես նաև հետաքրքրված էր հիշյալ քրիստոնյա համայնքների հատուկ կարգավիճակով՝ համեմատության մեջ դնելով նրանց Լեհաստանում բնակվող հայերի հետ: Նա գրեթե տաս տարի ճանապարհորդել է Օսմանյան կայսրությունում (1608-1618)՝ սևեռուն նպատակ ունենալով ուխտի գնալ Երուսաղեմ, Հռոմ և Փոքր Ասիայում գտնվող Մշո Ս. Հովհաննես Մկրտիչ (Սուրբ Կարապետ) վանք:

Սիմեոն Լեհացու աշխատությունը կարելի է բնութագրել որպես ճանապարհորդական ուղեգրություն կամ հուշագրություն, որն ուղեկցվում

[1] Պետրա Կոստալովան հայագիտական հետազոտությունների մագիստրոս է, Պատմության և ազգագրության Ph.D. (Պրահայի Շարլ համալսարան, Մոնպելիեի Պոլ Վալերի համալսարան), այժմ՝ Չեխ համալսարանի հոգեբանության դեպարտամենտի, Պրագայի հասարակագիտության Չեխ համալսարանի պրոֆեսորի ընթերակա: Մասնագիտացումն է ազգագրությունը, կարծրատիպերը և հավաքական հիշողության հետազոտությունը. տարածաշրջանային հետաքրքրությունների կենտրոնում են Հայաստանի լեզուն և պատմությունը:

է պատմական, աշխարհագրական, տնտեսագրական, ինչպես նաև այցելած վայրերի ժողովրդագրությանը վերաբերող տեղեկատվությամբ (երբեմն բավական մանրամասն), որոնք հագեցված են անձնական և ինքնակա (սուբյեկտիվ) տպավորություններով և զգացմունքներով: Սիմեոնի ճանապարհորդությունը սկսվել է Լվովից (Լեհալիտվական պետության կամ Ռեչ Պոսպոլիտայի հարավ-արևելք), իսկ հետո նա Բալկաններով (Դանուբի գետաբերանից՝ Մոլդովա, Ռումինիա և Բուլղարիա ուղղությամբ) հասել է Ստամբուլ/Կոստանդնուպոլիս[2]: Նա, դպրի և սաղմոսերգուի պաշտոն վարելով, հանգրվանեց Ստամբուլում՝ Հայ Առաքելական Եկեղեցու պատրիարք Գրիգոր Կեսարացու մոտ (նստավայրը՝ Վլանկա թաղամաս): Մի քանի ամիս անց նա այցելեց Մարմարա ծովի շրջակայքը, այնուհետև Վենետիկով ուղևորվեց Հռոմ: Ստամբուլ վերադառնալուց հետո նա ուխտագնացության մեկնեց Մուշ (Մալաթիա, Սեբաստիա, Եվդոկիա, Խարբերդ, Դիարբեքիր/Ամիդ ուղիով), շարունակելով ուխտը՝ Կահիրեով և Գազայով գնաց Երուսաղեմ, վերջապես տուն վերադարձավ Հալեպով և հայկական Կիլիկիայով (Մարաշ, Զեյթուն): Լեհաստանի Լվով քաղաք վերադառնալուց հետո Սիմեոնը շարունակեց աշխատել հայկական դպրոցներում, որպես դպիր, սաղմոսերգու և ուսուցիչ՝ ժառանգություն թողնելով իր «Ուղեգրություն» մատյանը: Ճամփորդությունը նկարագրող իր գիրքը պարունակում է նաև տարեգրություն և հիշատակարան, որոնք կարևոր պատմական սկզբնաղբյուրներ են Օսմանյան Կայսրությունից Սիմեոնի վերադարձին հաջորդած (1618-1636 թթ.) ժամանակաշրջանի համար:

Հեղինակի անհատականությունը և կենսափորձը զգալի ազդեցություն են թողել աշխատության վրա, բայց ոչ այնպես, ինչպես Կենտրոնական Եվրոպայի (Քրիստոֆ Հարանթ, Օլդրիխ Պրեֆատ ևն.) կամ Արևմտյան Եվրոպայի (Բուսբեկք, Վիլամոնթ ևն.) ժամանակակից այլ ճանապարհորդների պարագայում: Թեպետ երկն ունի որոշ ընդհանուր գծեր և նմանություններ վերջիններիս հետ, որոնք բխում են Օսմանյան Կայսրության ընդհանուր պատկերից, այնուամենայնիվ, այն արևելագետի ընդհանուր հայացք

[2] Նրա ճամփորդական ուղեգիծը (Կրակով - Սանդոմիերց) բնորոշ է Կենտրոնական Եվրոպայից անցնող ուխտավորներին, որոնք կտրում են Գալիցիա/Հալիչի շրջանը (Լվով քաղաք), մտնում են Պրուտի և Դնեստրի հովիտ և Դանուբի գետաբերան (Չերնիվցի, Սուչեավա, Գալատի ևն): Ճանապարհորդներն անցնում են Բալկանյան լեռները (Ռիլա) Նադիր Դերբենտով (հայտնի լեռնանցք հյուսիսային Բուլղարիայում) և շարունակում Via Egnatia ճանապարհի մի հատվածով դեպի Կոստանդնուպոլիս: Հաստատուն ուղեցույցները շատ էին. ամենահայտնի ճանապարհը, արևելյան Բալկանների միջով, կոչվում էր “via tartarica” (թաթարների ուղի) կամ Վալախյան/մոլդովական ճանապարհ: Մանրամասների համար տես **L. Rădvan**, At Europe’s Borders: Medieval Towns in the Romanian Principalities, Leiden, 2010, էջ 331:

չէ Արևելքի երկրների մասին, ինչպես նկարագրված է Է. Սաիդի աշխատությունում[3]*: Ավելի ուշ շրջանի՝ արևմուտք և արևելք հասկացությունների միջև եղած պարզունակ՝ երկակի հակադրությունը, «թարգմանված» իբրև ռացիոնալ (ի հակադրություն խառնաշփոթի), չեն համապատասխանում Սիմեոնի Ուղեգրությունների ոգուն, որը ժամանակակից շահագրգռված անձի վկայություն է լեհահայերի, Օսմանյան կայսրության իրականության մասին: Սիմեոնը իր կյանքի մեծ մասն անցկացրել է «արևելքի» անմիջական սահմանգծում՝ հաճախակի հատելով այն: Զպետք է մոռանանք, որ լեհ-լիտվական դաշնության ճանապարհորդները, Ֆրանգստանից (Արևմտյան Եվրոպա) եկողների կողմից ընկալվում էին թե՛ «ուրիշ» և թե՛ «արևելցի»: Սիմեոնի աշխատությունն ընթերցողին ներկայանում է իբրև սեփական ճանապարհորդության հարուստ փորձի խճանկար, որն ընկալվում է Լեհաստանում բնակվող փոքրամասնություններից մեկի՝ հայ գործչի պատկերացումների ամբողջություն, մարդու, ով ճանապարհորդել է Օսմանյան Կայսրությունում՝ որպես օտարերկրացի և հյուր:*

Այս պատկերը, որը կենտրոնացված է Երուսաղեմի շուրջ Սիմեոնի մտապատկերի և այլ համայնքների կարծրատիպային պատկերացումների վրա, առնչվում է հայերենով գրված հիմնական սկզբնաղբյուրների բնագրային վերլուծությանը: Մեր հիմնական աղբյուրը Սիմեոն Լեհացու աշխատությունն է (տպված 1936 թ. Ներսես Ակինյանի կողմից)[4]*, որը համեմատել ենք Կենտրոնական և Արևելյան Փոքր Ասիայի, ինչպես նաև Բիթլիս/Բաղեշի պատմական դպրոցից սերված հայկական այլ սկզբնաղբյուրների հետ, որպեսզի «ուրիշի» կարծրատիպում ձևավորենք զարթոնքի դարաշրջանի սկզբի հայրենիքի և հայկական սփյուռքի պատկերը: Սիմեոնի ուղեգրությունը և քաղաքների նկարագրությունը համեմատելի են այդ ժամանակաշրջանի՝ Արևմուտքից և Կենտրոնական կամ Արևելյան Եվրոպայից սերող այլ ճանապարհորդների աշխատությունների հետ, քանի որ դրանք առնչվում են աշխարհի մասին նրա ընկալմանը*[5]*:*

---

[3] Մանրամասների համար տես. **E. Saïd**, L'orientalisme: L'Orient créé par l'Occident, Paris, 1980: Թեպետ հեղինակի տեսակետը կարելի է ճիշտ համարել միայն ուշ շրջանի՝ ԺԸ. և ԺԹ. դարերի համար:

[4] «**Սիմէոն դպրի Լեհացւոյ** Ուղեգրութիւն, Տարեգրութիւն եւ Յիշատակարանք» (Ուսումնասիրեց եւ հրատարակեց Հ. Ն. վ. Ակինեան Մխիթարեան ուխտէ, Վիեննա, 1936 [Ազգային Մատենադարան, հտ. ՃԽՍ] (Այսուհետև՝«Սիմէոն դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն»):

[5] Մանրամասների և համեմատությունների համար տես **Laurent D'Arvieux**, Voyage dans la Palestine… fait par ordre du Roi Louis XIV, Amsterdam, 1718. **Corneille le Brun**, Voyages de Corneille le Brun par la Moscovie, en Perse et aux Indes Orientales, Amsterdam, 1718. **Ogier Ghiselin de Busbecq**, Ambassades et Voyages en Turquie et Amasie de M. Busbecquis, Paris, 1646. **Առաքել Դաւրիժեցի**, Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ **Լ. Ա. Խան-**

Հայերը Լվովում. Ներկայիս Ուկրաինայի, Մոլդովայի և արևելյան Լեհաստանի (Լեհ-լիտվական պետություն կամ Ռեչ Պոսպոլիտա) տարածքում գտնվող հայկական սփյուռքը սկսել է ձևավորվել ԺԴ. դարում: Հայկական ավանդույթը պնդում է, որ գաղթի առաջին ալիքը (բյուզանդական և սելջուկյան հարձակումների պատճառով) սկսվում է դեռևս ԺԱ. դ. Բագրատունյաց Անիի դարաշրջանում[6]: Հյուսիսարևելյան Փոքր Ասիայից, Հայաստանից և Հյուսիսային Այսրկովկասից գաղթած հայերն այդ ժամանակ բնակվում էին հարավային Ռուսաստանի, հատկապես՝ Ղրիմի (այստեղ այսօր էլ կա հայկական եկեղեցի) տարածքում: Կաֆան կամ Թեոդոսիան՝ նախկին ճենովական գաղութը, այն տարածքներից մեկն էր, ուր հայ վաճառականներն առևտրի համար նախընտրելի պայմաններ էին գտել՝ կապեր հաստատելով այլուր բնակվող հայերի հետ և օգտագործելով Դանուբի երկայնքով (Բրասովի, Բրայլայի կամ Ակկերման-Կետատեա Ալբայի նավահանգիստներով)[7] ընկած քարավանային ճանապարհները՝ այսպես կոչված "via tartarica"-ն ևն.: Առևտրականների (նրանց կոչում էին խոջա, աղա կամ տօլվաթվոր) այս ցանցը ներառում էր Սև ծովի շրջանը, Արևելյան Միջերկրականի և Արևելյան Եվրոպայի տարածքը: Կարճ ժամանակ անց՝ Օսմանյան բանակի կողմից Ղրիմի միացումից հետո (1475 թ.), հայ առևտրականների արտոնությունները նվազեցին, և նրանք սկսեցին տեղափոխվել (Պրուտ, Դնեպր, Դնեստր և Սերետ գետերով) առևտրական այլ քաղաքներ ու դրամաշրջանառության կենտրոններ, Սիմեոնի խոսքով՝ շահրիստաններ:

լարյանի, Երևան, 1990 (գրախ. **Լ. Դ. Դանեղյան**, ՊԲՀ, 1990, 4, էջ 242-247 - Ա. Բ.). «Մանր Ժամանակագրություններ». XIII - XVIII դդ. (Կազմեց Վ. Ա. Հակոբյան, հ. Ա. - Բ., Երևան, 1951-1956. **Kryštof Harant z Polžic a Bezdružic**, Cesta z království českého do Benátek, odtud do země Svaté (Ճամփորդություն չեխական թագավորությունից Վենետիկ, այնուհետև՝ Ս. Երկիր), in Cesty do Svaté země, (ed.), Praha, 1948. **Martin Kabátník**, Cesta z Čech do Jeruzaléma a do Egypta (Ճամփորդություն Բոհեմիայից Երուսաղեմ և Եգիպտոս), in Jak staří Čechové poznávali svět (výbor ze starších českých cestopisů 14.-17. století), (ed.), Praha 1985. **Oldřich Prefát z Vlkanova**, Cesta z Prahy do Benátek, a odtud potom po moři až do Palestiny (Ճամփորդություն Պրահայից Վենետիկ և հետո այնտեղից Պաղեստին) in Cesty do Svaté země, (ed.,) Praha, 1948. **Vavřinec Slížanský**, Nový popis cesty do Jeruzaléma a Svaté země 1660-1661 (Դեպի Երուսաղեմ և Սուրբ Երկիր ճամփորդության նոր նկարագրություն), Boskovice, 2009. **Jean Thévénot**, Voyages de Mr. De Thévénot en Europe, Asie et Afrique, Amsterdam, 1727. **Pietro Della Valle**, Relation d'un voyage fait au Levant, Paris, 1665. **Jacques De Villamont**, Les Voyages du Seigneur Villamont, Paris, 1610. **Václav Vratislav z Mitrovic**, Příhody Václava Vratislava z Mitrovic (Վացլավ Վրատիսլավ Միտրովիչցու արկածները), ed., Praha, 1950:

[6] Տես **G. Dédéyan** et al., Histoire du peuple arménien, Toulouse, 2008, էջ 436:

[7] Տես **L. Ellington**. Eastern Europe: An Introduction to the People, Land and Culture, ABC Clio 2004, էջ 750:

Լվովը կարևոր շահրիստաններից[8] և առևտրի կենտրոններից մեկն էր Լեհ-լիտվական դաշնությունում, որը գտնվում էր Վոլին և Հալիչ շրջանում (հայտնի՝ Կարմիր Ռուսաստան անվամբ): Լվովը գտնվում էր Ղրիմի ճանապարհից (via tartarica), Դանուբի հովտից, Կրակովից, Նովգորոդից, Աստրախանից, բալթյան նավահանգիստներից և այլ տեղերից եկող քարավանային և առևտրական ուղիների խաչմերուկում: Այն հիմնադրվել է իբրև լեհական թագավորության քաղաք՝ ենթակա լինելով լեհ միապետերի անմիջական որոշումներին: Թագավորները ազատել են քաղաքը ապրանքի պահեստավորման տուրքերից, ազատ առևտրի իրավունքով մեծ հնարավորություններ են տվել վաճառականներին, ինչպես նաև որոշակի արտոնություններով հրապուրել են օտարերկրյա առևտրականներին: Լվովի հայկական գաղութը բավական լավ էր տեղավորվել: Գաղթի այլ թիրախներ էին դարձել Կամիանեց Պոդոլսկը, Սուչեավան, Ստանիսլավ-Իվանո-Ֆրանկիվսկը, Լուտսկը, Զամոսցան և այլ քաղաքներ: Հայկական սփյուռքն այստեղ բարգավաճել է ԺԴ.-ԺԶ. դարերի ընթացքում (1585 թ. հայերն հրավիրվեցին Սիմեոն Լեհացու ծննդավայրում՝ Զամոսցայում բնակվելու)[9]: Որոշ լեհական և ուկրաինական քաղաքների տեղանվանական ուսումնասիրություններում դեռևս չեշտվում է հայկական ներկայության հետքը («Հայկական կացարան»-ը, «Հայկական ամրոց»-ը Կամիանեցում ևն.)[10]: Հայ բնակիչները լեհ թագավորների և մագնատների կողմից բնակության էին հրավիրվում, որովհետև նրանք հայտնի էին և համարվում էին ազդեցիկ ու հմուտ վաճառականներ, քանի որ օժանդակում էին տարածքի տնտեսական բարգավաճմանը: Նրանց անվտանգությունը երաշխավորվում էր թագավորական արտոնություններով: Հայ բնակչությունը այսպիսով ազատված էր լեհական թագավորական իշխանության քաղաքացու կարգավիճակից (որպես Մագդեբուրգի տեղական ինքնավարության օրենքի հպատակ). ավելին, այս կարգավիճակով նրանք կեցությամբ լիովին կախված էին համարվում միապետի որոշումներից այնպես, ինչպես դա կարգավորվում էր հրեական համայնքի դեպքում: Հայերը, ինչպես հրեաները[11], ենթադրվում է, պետք է վճարէին ավելի բարձր հարկեր

[8] Պարսկերենից եկող եզր, որ նշանակում է քաղաքների քաղաք, գլխավոր քաղաք, մայրաքաղաք:

[9] Տես **A. Pawińsky**, Dzieje zjednoczenia Ormian polskich z kościolem rzymskim w XVII wieku, Varsawa, 1876, էջ 21:

[10] Տես **E. Schütz**, An Armenian-Kipchak Chronicle on the Polish-Turkish Wars, Revue des Études Arméniennes 1968, էջ 455-457:

[11] Տես **G. D. Hundert**, Jews in Poland-Lithuania in the Eighteen Century, California, 2004, էջ 20-22. Հմմտ. **B. D. Weinryb**, The Jews of Poland: A Social and Economic History of the Jewish Community in Poland 1100-1800, Jewish Publication Society 1973, էջ 75-79:

և տուգանքներ: Լվովի բազմազգ և բազմակրոն մոտեցումները կարող են ընդգծվել Հայոց "Statuta"-ի (Կարգավիճակագրի, Դատաստանագրքի) լատիներեն տարբերակի մի մեջբերումով, որը հաստատվել է լեհ թագավոր Կազիմիրի կողմից ԺԴ. դարի կեսերին. "gentibus Ormenis, Iudeis, Saracenis, Ruthenis... Thartaris"[12]*: Գտնվելով կաթոլիկ, ուղղափառ և իսլամ աշխարհների խաչմերուկում, ինչպես նաև հուդայականության և Հայ Առաքելական Եկեղեցու հաճախակի առնչության դաշտում, բազմազգ լինելու Լվովի երևույթն այնքան էլ զարմանալի չէ: Լինելով առևտրի խաչմերուկ և միջմշակութային սահման, բնորոշ "esprit de frontière"*[13]*-ին, Հարավային Ռուսաստանի, Սկանդինավիայի, Բալթյան շրջանների և Օսմանյան Կայսրության առևտրականները հանդիպում էին Լվովի գլխավոր հրապարակում՝ գնելով և վաճառելով մուշտակեղեն, մեղր և չորացրած ձուկ (ներկրված լինելով հյուսիսից, մուշտակեղենը՝ որպես դեկորատիվ հագուստի տեսակ, համարվում էր Օսմանյան տուրքի մի մաս) և հարավից ներկրված շքեղ ապրանքներ (գինի, մետաքսե գործվածքներ, դիպակ ևն.):*

Հայ առևտրական խոջաները սովորաբար մենաշնորհ ունեին այն ապրանքների նկատմամբ, որոնք գալիս էին հարավից, ինչպես օրինակ, Ղրիմի և Վլախական (իտալական) գինին. նրանք անփոխարինելի էին զարդերի և մարգարիտների առևտրում: Մեծ առևտրային «ֆակտորիաները» (համքարություն), որոնք ղեկավարվում էին տանուտերի[14]*՝ հայկական ազդեցիկ ընտանիքների անդամների կողմից, մասնագիտացած էին շքեղ «արևելյան» հագուստների՝ «ալթէմպաս»-ի (շատ ճոխ ձևավորված գործվածք, դիպակ), «չամլիթ»-ի կամ «մուխայէր»-ի (այծ-ցփսի լավագույն բրդից կտոր)*[15] *ներկրմամբ: Նրանք գերազանցում էին արհեստներում՝ աշխատելով ոսկերիչ, դրամահատ, ակնագործ, զինագործ, դերձակ, կոշկակար, աղաղորդ (կաշեգործ) ևն. (Հայ խոջաները հաճախ այդ համքարությունների գլխավորներն էին): Շատ հայտնի էին հատկապես հայկական թրերը, սրերը (հայտնի իրենց բարձր որակով) և, այսպես կոչված, բուլավաները՝ լեհ, լիտվացի, ուկրաինացի և կազակ զինվորական առաջնորդների (hetmans) արարողական գավազանները կամ գայիսոնները*[16]*: Կովկասից ներկրվող թրերից ու սրերից բացի, դեկորատիվ զանգակները, որպես «արժեքավոր ապրանքներ», նույնպես մեծ պահանջարկ ունեին*

---

[12] «Հայ, հրեա, սարակինոս, ռուտենացի... թաթար ազգերին» (լատ.):

[13] Շրջագիծ (ֆր.):

[14] Նշանակում է ազգապետ, ընտանիքի, տնտեսության ղեկավար (հայերեն):

[15] Տես **K. Stopka**, Ormianie w Polsce dawnej i dzisiejszej, Kraków, 2000, էջ 46:

[16] Տես **E. Domanska**, The Orientalization of a European Orient: Turkquerie and Chinoiserie in Sixteenth and Seventeenth Century Poland, Taiwan Journal of East Asian Studies, 2004, էջ 78:

հատկապես լեհ ազնվականության շրջանում: Հայկական առևտրի ապրանքներից էին նաև համեմունքները (պղպեղ, զաֆրան, դարչին, չաման), խավիարը (ձկնկիթ), լիմոնը, արմավը ևն.: Հայերը հայտնի էին որպես ապրանքի որակի և գների մասնագետներ, իբրև բանակցություններ վարող անձինք, ովքեր ի վիճակի էին հեշտորեն կողմնորոշվել և գտնել իրենց ճանապարհը սահմանամերձ տարածքում:

Ռինեկի (հրապարակ, շուկա) մոտ գտնվող հայկական թաղամասի կենտրոնը ծաղկում է հատկապես ԺԴ.-ԺԷ. դարերում, երբ Լեհաստանում ապրող հայերի քանակը հասնում է մոտավորապես 300000[17] *և ավելի, չնայած ամբողջական թիվը զգալիորեն տատանվում էր՝ կախված քաղաքական և տնտեսական իրադրությունից և, հետևաբար, հայ քաղաքաբնակ սփյուռքի ակտիվ շարժունությունից: Սիմեոնի մանկության տարիներին Ռինեկում (Լվովի գլխավոր հրապարակը), ընդհանուր հաշվարկով, միջազգային առևտրում մասնագիտացած 38 մեծ խանութներից 22-ը պատկանում էին հայ առևտրականներին*[18]*: Լեհաստանում ապրող հայերը ոչ միայն առևտրականներ էին և Հայ Առաքելական Եկեղեցու հովանավորներ, այլև ծառայում էին Լեհ-լիտվական դաշնության թագավորներին և խոշոր կապիտալիստներին՝ իբրև դիվանագետներ և պաշտոնական թարգմանիչներ (“tercimans”)*[19]*: Նրանք նվիրակների միջոցով և տաղանդավոր ուսանողներին տրված կրթաթոշակների շնորհիվ մշտական կապ էին պահում Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ (նստավայրը՝ Էջմիածին/Վաղարշապատ): Լեհահայ անվանվող Լեհաստանի հայկական համայնքը համարվում էր հարուստ և կրթված. խոջաները սովորաբար Առաքելական Եկեղեցու և լեհ թագավորների հայտնի նվիրատուներ էին: Կազիմիր Մեծ (ԺԴ. դար) և Սիգիզմունդ Գ. (ԺԶ. դար) թագավորները հայ համայնքի համար արտոնություններ էին սահմանել, որով գոյացել էր ինքնավարության որոշակի աստիճան ունեցող համայնք՝ սեփական հավատքն ազատորեն դավանելու, իր ներկայացուցիչների, ծերերի խորհուրդի և առաջնորդ-նախագահի (voyt) կողմից դատվելու իրավունքով: Ծերերի խորհուրդը նստում էր առաքելական արքեպիսկոպոսի նստավայրում. «Եւ մեծ Դարպաս մի հոգեւոր դատաստանի. ուր ամէն հինգշաբթի նստին ԺԲ. աղայ հետ եպիսկոպոսին եւ աւագիրիցուն. քննեն իմանան հաս, չհաս. այլ եւ դատ եւ իրաւունք առնեն եւ դատաստան հաս ու չհաս. զի ունին էմրեր (=հրամանագիր-Ա.Բ.)*

---

[17] Տե՛ս **G. Dédéyan**, Histoire du peuple arménien, էջ 438:

[18] Հմմտ. **E. Nadel-Golobič**, Armenians and Jews in medieval Lvov: Their role in oriental trade, 1400-1600, Cahiers du monde russe et soviétique, 1979, թ. 20, էջ 363:

[19] Տե՛ս **S. W. F. Barącz**, Żyvoty slawnych Ormian w Polsce, Lvov, ed. W. Manieckiego, 1856, էջ 235:

կաթողիկոսաց եւ Լէհու թագաւորաց»[20]: Առաջնորդի և ծերերի խորհրդի կողքին տեսնում ենք 40 աղաների (աղբար) խորհուրդը, որ մասնակցում էր կտակի, ամուսնական համաձայնագրերի և այլ որոշումների կայացմանը: Հայկական դատաստանը հետևում էր Մխիթար Գոշի «Գիրք դատաստանի»-ի ձևափոխված տարբերակին, մինչդեռ դատավորները (ըստ 1572-1619 թթ. հայկական դատարանի գլխավոր գրագիր Մինաս Թոխաթեցու) ենթադրվում է, որ «գտնելու են ճշմարիտն ու սուտը՝ պատժելով մեղավորին և ազատելով անմեղին... կայացնելով արդար վճիռներ՝ սահմանված հարուստի և աղքատի, ընկերոջ ու թշնամու համար»[21]: «Այլ եւ ուրիշ եւ զատ դատաստան ունին եւ սուր, որ զհայ գողս եւ զաւազակս կազեն (=պատժեն) եւ գլխատեն. եւ ոչ ոք կարէ դատել զՀայք, միայն Հայոց դատաւորքն»[22], - հավաստում է Սիմեոնը:

Հայ առաջնորդին հաջորդաբար փոխարինում են երեցփոխան ավագ քահանաները: Այս դրությունը պահպանվեց մինչև 1784 թ. Ժոզեֆ Հաբսբուրգ կայսեր բարեփոխումները (և նույնիսկ մինչև 1938 թ.)[23]: Լեհ թագավորներն ու խոշոր դրամատերերը պատասխանատու էին դեպի իրենց երկիր հայերի գաղթի խթանման կամ սահմանափակման համար, որի հետևանքը քաղաքային համայնքների հաստատումն էր: Արդյունքում հիմնվում էին քաղաքային համայնքներ, որի անդամները, վստահություն չունենալով բնակության համար ընտրված երկրի նկատմամբ, ավելի կախված էին արտաքին փոփոխություններից և միապետի կամքից, քան մյուսները: Թագավորական գանձատուն բերվող գումարների դիմաց հայերը շարունակաբար պահանջում էին վերահաստատել իրենց արտոնությունները. գործնականում այդ գումարները լեհ թագավորների համար ֆինանսական զգալի աղբյուր էին ծառայում: Հայերեն կամ ղփչաղերեն (հյուսիսարևմտյան թյուրքերեն) խոսող հայ գաղթականների նոր ալիքը 1550-1570 թթ. Մոլդովայից, իսկ 1671-ին՝ Կամենեցից (Պոդոլիայի օսմանյան նվաճումից հետո) հասավ Լվով՝ նոր շունչ բերելով սփյուռքին[24]: Հայ պանդուխտների (փախստական) մշտական ներգաղթը գալիս էր ներքին Անատոլիայից, ուր օսմանյան իշխանությունների դեմ ապստամբած ջա-

[20] «Սիմէոն դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն», էջ 337:
[21] Տես **Stopka**, Ormianie w Polsce..., էջ 31:
[22] «Սիմէոն դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն», էջ 338:
[23] Տես **Ya. Dachkévytch**, L'établissement des Arméniens en Ukraïne, Revue des Études Arméniennes, 1968/5, էջ 329-366:
[24] Տես **Ya. Dachkévytch**, L'établissement des Arméniens en Ukraïne, էջ 329-366. հմմտ. **R. Hovannisian** (ed.), Armenian People from Ancient to Modern Times: Foreign Dominion to Statehood, Palgrave Macmillan 1997, vol. 2, էջ 66:

լալիները ավերում էին հայկական գյուղերն ու քաղաքները[25]: Իտալացի ճանապարհորդ Մ. Գռացիանիի հավաստմամբ՝ Լվովում ապրող հայերը ԺԷ. դարի Բ. կեսին գիտեին միայն պատարագի լեզու գրաբարը (եկեղեցու կանոնավոր պատարագների շնորհիվ), բայց ոչ մայրենի լեզուն՝ հայերենը. «Լվովի (հայկական) եկեղեցիներում երգվող երգերը գրված են հայերենով... բայց միայն նրանց քահանաներն են հասկանում դրանք... մյուս հայերը խոսում են սկյութերեն (ղփչաղերեն) լեզվով...»[26]:

Սիմեոնի ծնողները, ծնունդով Ղրիմի Կաֆայից, Զամոսցա են եկել 1585 թ. թագավորական կանցլեր Յան Զամոյսկու հրավերով[27]: Այնուհետև Սիմեոնն ուսանել է Լվովում՝ դառնալով գրիչ-նոտար (հայտնի՝ իբրև Սիմեոն դպիր Լեհացի)[28], սաղմոսերգու, սարկավագ և արքեպիսկոպոսի գրասենյակի ծառայող: 24 տարեկանում սեփական նախաձեռնությամբ որոշում է մեկնել հեռավոր ուխտագնացության, որը տևում է տաս տարի: Այդ ընթացքում նա որպես գրիչ աշխատում է Կ. Պոլսի Հայ Առաքելական պատրիարքի նստավայրում, Երուսաղեմի հայոց Առաքելական պատրիարքի նստավայրում և այլուր: Նրա Ուղեգրությունը, որ հիմնված է բուն ճափորդական օրագրի վրա, գրված է հայերեն (միջին հայերեն, երբեմն՝ թյուրքերենի, արաբ-պարսկական և լեհական փոխառությունների խառնուրդով): 1618 թ. Լվով վերադառնալուց հետո Սիմեոնը դառնում է Մելիքսեդեկ աթոռակից կաթողիկոսի և 1628 թվականին՝ նրա ձեռամբ Լվովի նոր արքեպիսկոպոս օծված Նիկոլայ Թորոսովիչի հակառակորդներից ու քննադատներից մեկը: Թորոսովիչը հակված էր կաթոլիկների կողմը, որոնց աջակցում էին լեհ ազնվականությունը, բյուրգերներն ու պապը: 1630 թ. նա հրապարակայնորեն հայտարարեց իր կաթոլիկ հավատքի մասին և փորձեց ողջ հայ համայնքը նույնպես կաթոլիկ դարձնել, ինչի արդյունքում «հայերին պատճառելով շատ տառապանքներ»[29]՝ ըստ Սիմեոնի հասակակից պատմիչ Առաքել Դավրիժեցու: Բացի Ուղեգրությունից՝ Սիմեոնը նաև «Ընդդեմ Նիկոլայ»-ի հայտ-

---

[25] Այս շարժման մասին տես **Մ. Կ. Ջուլալյան**, Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ (XVI-XVII դարեր), Երևան, 1966 (- Ա.Բ.):

[26] Տես **Stopka**, Ormianie w Polsce..., էջ 20:

[27] **Ya. Dachkévytch**, L'établissement des Arméniens en Ukraïne, էջ 329-366:

[28] Սիմեոնի կյանքի մանրամասները տես **Ya. Dachkévytch**, L'établissement des Arméniens en Ukraïne, էջ 329-366. **Ya. Dachkévytch**, Matériaux pour l'histoire des colonies arméniennes en Ukraïne, se trouvant dans les bibliothèques de Cracovie et de Wroclaw, Revue des Études Arméniennes 1970/7, էջ 451-470. **Ya. Dachkévytch**, Les Arméniens à Kiev, Revue des Études Arméniennes 1973-1974/10, էջ 306-358. 1975-76/11, էջ 323-375). **Ya. Dachkévytch**, Simeon dpir Lehaci - Qui est il ? Revue des Études Arméniennes 1977/12, էջ 347-364:

[29] Տես **Առաքել Դաւրիժեցի**, Գիրք պատմութեանց, էջ 191:

նի հիշատակարանի հեղինակն է: Նա գրում է. «Ապայ սկսաւ անգոսնել, արհամարհել զհաւատն մեր՝ հերձուածող եւ բաժանող կոչելով զՀայք: Յետոյ խլեալ եւ յափշտակեալ զեկեղեցիս եւ զվանորայս ի ձեռաց մերոց... Այլ եւ զքահանայս ցրուեաց, զոմանս հալածելով, զայլս ի բանտ եւ ի կապանս մատնելով, զկէսս շխթայս ածելով եւ զուղղափառսն մատնելով, հարկանելով, տուգանելով եւ ազգ եւ ազգ զրզվելով...»[30]*: Սիմեոնի մահից շատ չանցած (հավանաբար 1639 թվականին)՝ Եվրոպան հայտնվեց պառակտված կրոնական պատերազմի միջավայրում, և Լվովի հայերի կաթոլիկ կուսակցությունը սկսեց հաղթել, իսկ հակառակորդներին աքսորեցին Մոլդավիա: Այսպիսով, Սիմեոնի երկը Լեհաստանում Հայ Առաքելական Եկեղեցուն պատկանող հայերի գրական ժառանգության վերջին՝ ամենակարևոր նմուշներից է:*

Սիմեոնի ճափորդությունն ու օսմանահպատակ հայերը. Երիտասարդ Սիմեոնը ճամփորդություն ձեռնարկեց մի պարզ ցանկությամբ. «իրականացնել սրտի ու մտքի երազանքը», «այցելել սուրբ վայրեր... և անհավատների և հեթանոսների երկրներ»: Նա ոգեշնչված էր Իբն Բատուտայի (ԺԴ. դար) կամ Էվլիյա Չելեբիի (ԺԷ. դար) և այլ ճանապարհորդների օրինակով[31]*: Նրա ճանապարհորդությունը տևեց 1608-1618 թթ.: Սիմեոնի Ուղեգրության մեջ հիշատակված կարևոր քաղաքների շարքում, բացի Երուսաղեմից, որին կանդրադառնանք ավելի ուշ, հատուկ տեղ են զբաղեցնում Ստամբուլ/Կոստանդնուպոլիսը, Կահիրեն, Վենետիկը և Հռոմը: Սիմեոնը Բալկաններով (Լվով-Սուչեավա-Կալատի՝ այսօրվա Ուկրաինայով, Մոլդավիա, Ռումինիա և Բուլղարիա ճանապարհով) ճամփորդում է Ստամբուլ (Կ. Պոլիս), այնուհետև անցնում է Մարմարա ծովի շրջակայք, կենտրոնական ու արևելյան Անատոլիա և Հայաստան (Կեսարիա, Սեբաստիա, Թոքաթ, Խարբերդ, Մուշ, Դիարբեքիր): Նա ժամանում է Երուսաղեմ Կահիրեից (Սինայի միջով), այնուհետև վերադառնում է Ստամբուլ օսմանյան Սիրիայի առևտրական քաղաքների (Դամասկոս, Համա, Հալեպ) և Կիլիկիայի (Մարաշ և Զեյթուն) միջով: Նրա ընտրած ուղին հատուկ է կենտրոնական և Արևելյան Եվրոպայի կողմերից եկած ճափորդներին: Մեկ այլ հնարավոր և հաճախադեպ ճանապարհ էլ Բալկաններով տանում էր Բուդին (Բուդապեշտ) և Սերբիայի Բելգրադ: Հիշատակված բոլոր ուղիներին կարելի էր տեսնել ուխտավորների ու առևտրականների համար նախատեսված իջևանատներ (քարվանսարա): Սիմեոնը հաճախ էր մնում տեղի հայկական ընտանիքների տանը, ընկերակցում*

[30] «Սիմէոն դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն», էջ 411:
[31] Տես **R. Dankoff**, An Ottoman Mentality: the World of Evliya Çelebi, Leiden, 2006, էջ 20:

հայ առևտրականների քարավաններին կամ «խազնա»-ին (Կոստանդնուպոլսի տարբեր թեմերից գանձվող տարեկան տուրք, գանձարան): Նրա նկարագրություններում նշմարելի են օտարերկրացին ու քրիստոնյան, օսմանյան կայսրության փոքրամասնության ներկայացուցիչը, նույնիսկ եթե նա իրեն ամբողջապես նույնացնում է օսմանյան հայերի հետ:

Օսմանյան կայսրության ողջ տարածքով Սիմեոնի հայրենակիցները ստեղծում են "milet-i Ermeni" (Առաքելական հավատամքին պատկանող հայ ժողովուրդ)՝ մուսուլմանների տարածքում ապրող "dhimi"-ի կամ ոչ մուսուլմանի կարգավիճակ: Կաթոլիկ միջավայրից եկած Սիմեոնը ուրույն տեսակետ ուներ օսմանյան հասարակության ու նրա շերտերի վերաբերյալ. «Եւ թէ հաշուես ի Պուղտանայ (=Մոլդավիա) մինչեւ Ստամպօլ, պութուն Ուռումէլին (=ողջ Օսմանյան կայսրությունից - Ա.Բ.) մինչեւ մեծն Վանատիկ, նա չկայ քաղաք, գեղ կամ չֆտլիկ (=ագարակ), որ հայ չկենայ. որ վասն ծովացեալ մեղաց մերոց ցիրուցան եղեալ եմք ի վերայ երկրի որպէս զփոշի...»[32]: Մուսուլմանների կողմից նվաճված ու նրանց կողմից կառավարվող տարածքում ոչ մուսուլման էակի ապրելն իսկ փաստում է հայերի ստորադաս՝ "dhimmi" (=ոչ մուսուլման, ենթակա ժողովուրդ - Ա.Բ.) կամ «պաշարված» մտածելակերպի մասին[33]: "Dhimi" (ենթակա ժողովուրդ) կարգավիճակը երբեմն մոտենում էր Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի ճորտի կարգավիճակին[34]: Նրանց կյանքը լի էր արգելքներով ու սահմանափակումներով (չնայած նրանց իրավունքները պաշտպանում էին շարիաթը և սուլթանների ֆիրմանները (հրովարտակ)[35], իսկ պարտականություններն առավել դժվարին էին): Ոչ մահմեդականները պարտավոր էին հագնել կապույտ տուրբաններ (=գլխին փաթաթելու շոր - Ա.Բ.) և, այսպես կոչված, գոտիներ (zunnars)[36], որոնցով էլ տեսանելի էին դառնում որպես «ուրիշներ» և «ներքին թշնամիներ»: Ոչ մահմեդականներին թույլ չէր տրվում ամուսնանալ մուսուլմանների հետ, նրանց հավատքի հասարակական դրսևորումները խեղդվում էին (եկեղեցիների գմբեթները ցածր պետք է լինեին մզկիթների աշտարակներից, որոշ բացառություններով[37], եկեղեցիներում արգելվում էին զանգերը), նրանք պարտավոր էին

---

[32] «Սիմէոն դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն», էջ 8:

[33] Տես **B. Ye'or**, Islam and Dhimmitude: Where Civilizations Collide, Madison, 2002, էջ 104:

[34] Տես **B. McGowan**, Economic Life in Ottoman Europe - Taxation, Trade and the Struggle for Land 1600-1800, Cambridge, 1981, էջ 45, 53:

[35] Տես **O. Peri**, Christianity under Islam in Jerusalem: The Question of the Holy Sites in Early Ottoman Times, Leiden, 2001, էջ 51-53:

[36] Տես **P. Bearman**, L'encyclopédie de l'islam, Leiden, 1991-2005, էջ 617:

[37] Tchengeli kilise կամ Ս. Կարապետը (հայտնի իբրև Մշո Սուլթան) գտնվում է Մուշ քաղաքի մոտակայքում, (Չանլի կամ Չենգելի կիլիսե է կոչվում թուրքերեն կամ քրդերեն), **R. G.**

բարձր հարկեր և ռազմատուգանքներ վճարել, չէին կարող ծառայել օսմանյան բանակում և ոչ էլ բյուրոկրատական ապարատում, սահմանափակվում էր նրանց սեփականությունը և ունեցվածքը: Նրանք պարտավոր էին, առանց բացառության, Բարձր Դռանը վճարել պաշտոնական հարկերը, իսկ անպաշտոնները՝ աղաներին և բեյերին, տեղական իշխողներին: Սիմեոնի բառերով. «...քրիստոնէից չի տային ձի հեծնալ, ոչ ջորի, ոչ լաւ չուխայ (=կոշիկ) ագանիլ, ոչ այգի, ոչ տուն մեծ. այլ զամենայն յափշտակէին ի ձեռաց... Ի Ստամպոլ սակաւ մի ունին մխիթարութիւն քրիստոնեայք եւ վայելչութիւն, զի ունին եկեղեցիք պայծառ, տօնախմբութիւն ձայնիւ. հեծնուն ձի եւ ջորի, ագանին եուզչլայ (100-ական), եթմիշչլայ (70-ական) չուխայ. ուտեն, ըմպեն, ուրախ լինին. ունին մեծամեծ տունս, էգիս (=այգի) եւ դրախտս (=պարտեզ) եւ այլն. զոր յԱնատոլին ընաւ զայս ոչ երեւի...»[38]: Մեկ այլ տեղ Սիմեոնը գրում է. «Եւ այսպէս տառապանաց եւ նեղութեան մէջ են ազգն հաւատացելոց, վասն այն խափանեալ են ժամակարգութիւնք, եւ կործանեալ եկեղեցիք, քահանայք չիվարեալք եւ տարակուսեալք՝ թողեալ զուսումն եւ խափանեալ զժամ եւ զաղօթքն, ի հոգ եւ ի տառապանս միշտ եւ հանապազ. եւ թէ երբեմն երթան յեկեղեցին՝ փութապէս եւ արագ կատարեն եւ փախչին՝ զի մի եկեալ գտցեն զնոսա յեկեղեցւոջ: Զի այն աշխարհն քահանայք իբրեւ զգզիր են, զամենայն ինչ նոքա հոգան, թէ խարաճ (=հարկի տեսակ), թէ փաթերակ (=փորձանք) եւ թէ այլ ինչ. եւ շուպաշուն (=ոստիկան, գավառապետ), ղատուն (=դատավոր), չավուշի (=հարյուրապետ), ավնի (=ոստիկան), չօպնի (=հովիվ) քահանայք պիտի տեղ տան եւ կերակուր, զէրէցն ծեծեն, փետեն, թէ մեզ գիտ շուտ. այլ եւ տօշակ, եօրղան (=վերմակ) եւ այլն: Նոյնպէս եւ ժողովուրդն ոչ թէ ժամ երթալ, այլ եւ զԱստուած մոռացել են ի բազում հոգոց եւ հարկապահանջութեանց, նօմօսաց (=օրենք) եւ այլ տրոց. զի օր մի հանգստութիւն չունին կամ խաղաղ ականջ: Թէպէտ ցած եւ փոքր դռներ ունին եւ խա//ւարչտին տներ եւ գետնափոր, սակայն չեն անդորր, այլ գան իջնուն, զըզվեն եւ տառապեցուցանեն. թող զայն որ իֆդիրայ (=զրպարտություն), շլթախ (=նենգություն, անօրինական հարկագանձում), զրկանք, յափշտակութիւն եւ անիրաւութիւն անցին ի գլուխս նոցա: Եւ ո՞վ կարէ լաւ տուն շինել, կամ ձի եւ ջորի պահել կամ լաւ գտակ կամ բաբուչ (=մուճակ, կանացի կոշիկ) ունել. այլ բօսդալ (=սանդալ, հողաթափ), չարուխ եւ հին ու մին չուլ (=հնոտի) ագանին...»[39]: Քրիստոնյաները հաճախ վիրավորանք-

Hovannisian (ed.), Armenian Baghesh/Bitlis and Taron/Mush, Costa Mesa , 2001, էջ 53:

[38] «Սիմէոն դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն», էջ 193:

[39] Նույն տեղում, էջ 271-272:

ների ու ծաղը ու ծանակի թիրախ էին դառնում: Սիմեոնը գանգատվում է. «Այլ եւ հայհոյեն զհաւատացեալս "Նասրանի (=նազովրեցի, քրիստոնյա), զարսլուլ (=համառ), քէլբ (=շուն), խինծիր (=խոզ)" ասելով, զոր Տաճիկք "կավուր" (=անհավատ) եւ "տինսիզ" (=անհավատ) միայն ասեն...»[40]: Սիմեոնն իրեն նույնացնում է օսմանյան հայերի հետ. նրանց կյանքի դժվար պայմաններն էլ ընկալում է որպես անեծք ու ազգի ողբերգական ճակատագիր: Այնուամենայնիվ, կային դեպքեր, երբ նրանք մասամբ ազատվում էին "dhimmi"-ի ստորադաս կարգավիճակից[41]: Պետք է ենթադրել, որ այս ստորադաս պայմաններից մասնակիորեն ազատված էին հարուստ առևտրականները, որոնց կարևորությունը հայ համայնքում հստակորեն հիմնված է այն փաստի վրա, որ այս խոջաները (հիմնականում Հալեպի, Վանի ու Պարսկաստանի Իսպահան քաղաքին մոտակա Նոր Ջուղայի) վճարում էին Երուսաղեմի պատրիարքարանի պարտքերն ու նպաստում այդ հոգևոր կենտրոնի հետագա զարգացմանը: Հարուստ հայ խոջաները սովորաբար ունեին մեծ պալատներ և հոգում էին դրանց ապահովությունը. կազմակերպում էին հասարակական և թանկարժեք տոնախմբություններ Երուսաղեմից նոր վերադարձած ուխտագնացների ու մահտեսիների (Քրիստոսի մահվան և հարության վայրի այցելու) համար:

Երուսաղեմ Սուրբ քաղաքի պատկերը. Սիմեոնը մանրամասնորեն նկարագրել է Սուրբ քաղաքը, ինչը ցույց է տալիս, որ նա ընկալել է Երուսաղեմն՝ իբրև իր սուրբ ուխտագնացության իրականացում: Եթե Կահիրեն նրա համար «արևելյան քաղաքի» խորհրդանիշ է՝ իրեն բնորոշ խառնաշփոթով, կեղտոտությամբ և գերբնակեցվածությամբ, ապա Երուսաղեմը ներկայանում է իբրև «Աստծուց տրված» սուրբ քաղաք: Համանման կերպով էլ ներկայանում է Ստամբուլը, որի պատկերում պարզորոշ արտացոլվում է վաղ քրիստոնյա կայսրերի փառքը և սուրբ պատրիարքների վաղեմի նստավայրը: Սիմեոնի բնագիրը թույլ է տալիս ընթերցողին գաղափար կազմել տվյալ ժամանակաշրջանում (1617 թ. սեպտեմբեր-ապրիլ) Երուսաղեմի պատկերի մասին: Որպեսզի պարզաբանի իրավիճակը, հեղինակը մանրամասն անդրադառնում է քաղաքին, նրա թաղամասերին, էթնո-կրոնական համայնքներին և նրանց փոխհարաբերություններին: Սիմեոնի բնագրում (բացի Երուսաղեմի, նրա քրիստոնեական թաղամասերի

---

[40] Սիմեոնի հիասթափությունն առաջացել է անատոլիական քաղաք Մալաթիայի (Մելիտինե) դրության հետ համեմատությունից, որտեղ քրիստոնյաներն անվանվում էին միայն "Yesayikuli" (Հիսուսի ծառաներ), որը որոշակիորեն պարզ տիպական անվանում է ուրիշի կրոնի: Քրիստոնյաները օսման թուրքերի կողմից գռեհկորեն անվանվում էին "gavur", այսինքն՝ անհավատ, տես «Սիմէոն դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն», էջ 270-271:

[41] Տես **P. Mansel**, Constantinople. La ville que désirait le monde, Paris, 1994, էջ 36:

և հատկապես պատրիարքարանի նկարագրությունից) ներկայացվում է նաև իր ժամանակի հայկական պատրիարքության պատմությունը, քաղաքի մերձակայքի սրբավայրերի նկարագրությունը, ուխտագնացության ավանդույթը, ինչպես նաև՝ գլխավոր տոնակատարությունները:

Միաստվածության հետևորդ քրիստոնյաների, հրեաների և մահմեդականների (մուսուլման) տեսանկյունից անհերքելի էր Երուսաղեմ և այլ սրբավայրեր այցելության, ուխտագնացության և սուրբ գործեր կատարելու կարևորությունը: Երուսաղեմի ուխտագնացության հայկական ավանդույթը սկսվել էր եկեղեցու գոյության վաղ շրջանից: Սիմեոնն, այսպիսով, հասավ կատարյալ ուխտի իր երազին, որի մասին նա մտորել էր դեռ Լվովում: Սիմեոնի՝ Երուսաղեմի նկարագրությունից պարզորոշ ուրվագծվում է մի փաստ՝ քաղաքի կարևորությունը և նրա յուրահատուկ կարգավիճակը՝ իբրև սուրբ քաղաք: Երուսաղեմը անակնկալի է բերում է իր այցելուին քրիստոնեական ուխտագնացության քաղաքի արտակարգ կերպարանքով: Գլխավոր քրիստոնեական տոները, ինչպես օրինակ Սուրբ Զատիկը, ուղեկցվում են ճոխ տոնակատարություններով և համայնքային (քրիստոնյա և մահմեդական) երթերով, որոնք տեղի են ունենում բարձրաստիճան օսմանյան պաշտոնյաների ներկայությամբ: Սուրբ վայրերը բաժանված էին, և գոյակցությունը դառնում էր ավելի կարևոր հատկապես մեծ կրոնական տոների (Զատիկ, Ծնունդ) ժամանակ: Սուրբ գերեզմանի եկեղեցում կար 12 մատուռ, ինչպես Սիմեոնն է նշում՝ «12 ազգ» կամ 12 կրոն (հայեր, հույներ, ղպտիներ, եթովպացիներ, ասորիներ և բազմատեսակ կաթոլիկներ). միաժամանակ, նույնքան էլ պատարագներ էին կատարվում: Ուխտավորների շրջապտույտը թափորով էր, և դրանց հերթագայությունը երաշխավորում էին մահմեդական պահակախմբերը: Գլխավոր տոների՝ Սուրբ Զատկի և Ծննդի տոնակատարությունը վերահսկվում էր շեյխերի, մահմեդական դատավորի, ոստիկանապետի, կառավարչի և այլոց կողմից, մինչ քրիստոնյաները ներկայացված էին իրենց պատրիարքներով և հիմնական թարգմանիչներով: Հայկական Առաքելական համայնքը ներկայացնում էր Հայոց պատրիարքը կամ Պարոնտերը (Գրիգոր Գանձակեցին), ում հեղինակությունը կարևոր էր ինչպես Երուսաղեմի հայկական համայնքի, այնպես էլ այն հայերի համար, ովքեր գաղթում էին ներքին Փոքր Ասիայից ու Հայաստանից (Ջալալիների մշտական խռովությունների պատճառով) և բազմաթիվ ուխտագնացների համար, ովքեր տարբեր երթուղիներով գալիս էին տեսնելու Սուրբ վայրերը:

Մեծ տոների ժամանակ ուխտավորների բազմության մուտքը քաղաքի դարպասներից սահմանափակ էր, մինչ առաջին օրենքների հրապա-

բակումը, որոնցով, անշուշտ, կարգավորվում էր ոչ մահմեդականների՝ "dhimmi"-ների նկատմամբ վարքագիծը: Այնուամենայնիվ, Օսմանյան Բարձր Դուռը փորձում էր հավասարակշռել քրիստոնյաների և մահմեդականների միջև եղած լարվածությունը՝ վստահելով քրիստոնյա ուխտավորներին (արաբ. mustam'in), տալով նրանց անվտանգության երաշխիք (արաբ. aman) ու սրբավայրերը հաճախելու իրավունք[42]՝ նախքան մահմեդականների կողմից դառ ալ-հարբի (արաբ. dar al-harb = արաբ. պատերազմի երկիր) նվաճումը: Կարելի է ասել, որ ինչպես դրսից եկած քրիստոնյա ուխտավորների, այնպես էլ տեղացի ոչ-մահմեդական "dhimmi"-ների վիճակն ավելի կայուն է եղել Երուսաղեմում, քան այլուր[43]: Այստեղ բնակվող քրիստոնյաները և հրեաները չէին վախենում դիմել շարիաթի դատարաններին, անգամ այն դեպքում, երբ նրանք հաճախակի մեղադրվում էին իրենց վանքերում զենք թաքցնելու և օսմանների դեմ ապստամբություն կազմակերպելու մեջ (ըստ Սիմեոնի՝ անգամ Հայ Առաքելական Եկեղեցու պատրիարքն է ձերբակալվել այս մեղադրանքով)[44]: ԺԶ. դարի ընթացքում սրբավայրերի կառավարման բացառիկ իրավունքներ տրվել էին Ֆրանցիսկյան միաբանությանը (որի շահերը պաշտպանում էր Ստամբուլի Գալաթա թաղամասի ֆրանսիական հյուպատոսը): ԺԷ. դարում օսմանները հակվեցին Ուղղափառ հույների և Առաքելական հայերի կողմը, Բարձր Դուռը օսմանյան պաշտոնյաներ սկսեց նշանակել հայ և հույն ազգերի (milet) համար[45]: Միջկրոնական բախման երկու կողմերն էլ անհրաժեշտ փաստաթղթեր ունեին սրբավայրեր մուտք գործելու և իրենց իրավունքը հաստատելու համար: Ամենավիճարկված վայրերն էին Ս. Հարության և Բեթղեհեմի Ս. Ծննդյան եկեղեցիները:

Սինայի միջով երկարատև ճամփորդությունից հետո Սիմեոնը ժամանեց Երուսաղեմի դարպասներ: Նա Կահիրեից մեկնեց "khazna"-ն (տարեկան հարկ, գանձարան) ուղեկցող և Մեքքա գնացող ուխտավորների

[42] Տես **O. Peri**, Christianity under Islam in Jerusalem, էջ 51-53:

[43] Տես **D. Zeevi**, An Ottoman Century: The District of Jerusalem in the 1600s, New York, 2012, էջ 4-20:

[44] Սիմեոնի այցելության ժամանակ մուսուլմանների և քրիստոնյաների միջև փոխադարձ անվստահության մթնոլորտը սրվել էր խաչակրության երկյուղի պատճառով: Երուսաղեմի սրբավայրերի պաշտոնական պաշտպանությունը ստանձնել էր սուլթանը, սակայն սրբավայրերի մեծ հռչակը պայմանավորված էր նաև քրիստոնյաների ներկայությամբ: Օսմանյան իշխանությունները քրիստոնյա ուխտավորների մեծ կարևորությունը և նրանց անվտանգությունը կապում էին միմյանց. նկատի ունենալով Պաղեստինում բնակեցված քրիստոնյա կաթոլիկ համայնքներից (իտալական և ֆրանսիական ծագման, 1614-1630 թթ) կազմված «հինգերորդ շարասյան» օգնությամբ Պաղեստինի հնարավոր նվաճումը Լիբանանի էմիրի կողմից:

[45] Տես **Zeevi**, An Ottoman Century, էջ 17:

քարավանով: Անցնելով Գազայով և Ռամլայով՝ նա ցամաքով հասնում է Երուսաղեմ: Նրա անվտանգությունն ու կարգավիճակը երաշխավորված էր "amân"-ով. մի կարգավիճակ, որը տրամադրվում էր սուրբ վայրեր այցելող քրիստոնյա ուխտավորներին, ովքեր օգտագործում էին պաշտոնական ճանապարհները և վճարում էին բոլոր տուրքերը: Քաղաք, գրական լեզվով ասած՝ «նոր աշխարհ», մուտք գործելու վճարները մտնում էին ճամփորդական ծախսերի մեջ, ի հակադրություն Սինայի միջով անցնող երկար, դժվար և վտանգավոր ճանապարհի: Օսմանյան հսկողության տակ գտնվող այլ քաղաքների համեմատությամբ՝ Երուսաղեմում մահմեդական կենսակերպը մասամբ անտեսված էր, մինչդեռ քրիստոնեականն ընդգծված էր: Ուխտավորների քարավանները[46] պաշտոնապես դիմավորվում էին Պատրիարքի դեսպանի, հաճախ նաև տեղի եպիսկոպոսների, քահանաների և պաշտոնական թարգմանիչների կողմից: Բոլոր հայ ուխտավորներն այդ ժամանակ թափոր էին կազմում, հագնում էին իրենց շուրջառները և շարականներ երգելով՝ Ս. Հակոբ վանքի ճանապարհով քաղաք էին մտնում: Հայ ուխտավորները կարող էին մնալ Ս. Հակոբի վանքում, մինչդեռ մյուսները ստիպված էին օթևան գտնել իջևանատներում կամ իրենց վանքերում (հունական կամ ֆրանցիսկյան): Կաթոլիկ ուխտավորները պարտավոր էին գիշերն անցկացնել Սիոն լեռան Ս. Փրկիչ վանքում: Դեպի սրբավայրեր տանող պաշտոնական երթուղուց դուրս ուխտավորները որևէ տեղ չէին կարող միայնակ գնալ. «Այստեղ պահպանվում է այն սովորույթը, որ ուխտավորներից ոչ ոք Սիոն լեռան մենաստանից դուրս որևէ տեղ չպետք է գնա... առանց հայր վերակացուի գիտության... ուրեմն՝ միայն խմբով, որովհետև միայնակ գնալը չափազանց վտանգավոր էր, և վերակացուն թույլ չէր տա նրանց» - գրում է ԺԶ. դարի կեսերի չեխ ճանապարհորդ Օլդրիխ Պրեֆատը[47]: «Մենք չենք կարող շարունակել մեր ճանապարհը, քանի որ վտանգ էր սպառնում մեր կյանքին... որովհետև նրանք մերժում են մեր քրիստոնեական հավատքը»,- նշում է Քրիստոֆ Հարանտը՝ ճանապարհորդ, ով այցելել էր Երուսաղեմ հենց ԺԶ. դարի վերջում[48]: Այնպես որ, ուխտավորները կարող էին ընկալել Ս. քաղաքը բացառապես աստվածաշնչային

---

[46] Չեխ ճանապարհորդ Վավրինեկ Սլիզանսկին Ռամլայում հանդիպել է հայերից և հույներից բաղկացած քարավանի. տես **Vavřinec Slížanský**, Nový popis cesty do Jeruzaléma a Svaté země 1660-1661, Boskovice, 2009, էջ 35:

[47] Տես **Oldřich Prefát** Cesta z Prahy do Benátek, a odtud potom po moři až do Palestiny in Cesty do Svaté země, (ed.), Praha, 1948, էջ 48:

[48] Տես **Kryštof Harant**, Cesta z království českého do Benátek, odtud do země Svaté, in Cesty do Svaté země, (ed.), Praha, 1948, էջ 187:

պատմություններով: Երուսաղեմի առօրյա կյանքը նրանց տեսադաշտում չէր, քանզի թույլատրված էր նրանց տեսնել միայն մի փոքր, սոսկ «թույլատրելին» և իրականության աղավաղված բեկորը: Քաղաքի կենտրոնից հեռու բազմաթիվ աստվածաշնչյան վայրեր դժվար էր տեսնել, և օսման փաշան (սանջակի փաշա) ուխտավորներին այնտեղ էր ուղարկում միայն տուրքի գանձումից հետո և զինված ուղեկցորդով: «Մենք չկարողացանք գնալ այնտեղ բազմաքանակ արաբների մեծ վտանգի պատճառով, ...ովքեր ուխտավորների հետ վարվելու շատ ահավոր սովորություն ունեն»,- գրում է Քրիստոֆ Հարանտը[49]*: Այսպիսով, այլ աշխարհ բացահայտելու հնարավորությունը բավական սահմանափակ էր, հատկապես եթե հաշվի առնենք, որ վանքը պատասխանատու էր ուխտավորների, նրանց ապահովության և անվտանգության համար: Վանքը նաև փնտրում էր թարգմանիչներ և քաղաքի ուղեկցորդներ՝ «տուլմաչներ... կամ թերջիմաններ (=թարգմանիչ), որոնք գիտեին հունարեն և իտալերեն... նրանց համար, ովքեր թարգմանության կարիք ունեին»*[50]*: Հայտնի թարգմանիչների շարքում կային հույներ և տեղացի հայեր*[51]*: Որոշ ուխտավորներ մինչ մահ մնում էին Ս. Երկրում, որը համարվում էր փրկության հիմնական ուղի:*

Ինչպես նշվեց վերևում, ոչ մահմեդականները (հայ - Ermeni և հույն - Rumi ազգ - millet - ները) ունեին երաշխավորված և սովորաբար լավ պաշտպանված կրոնական իրավունքներ, այնպես որ, ուխտագնացությունը մահմեդական աշխարհում չպետք է ընկալվի որպես զարմանալի երևույթ, որտեղ "dhimmi"-ների (մահմեդական տիրապետության տակ գտնվող տարածքներում ապրող այլակրոն) պայմանները սահմանափակված էին, իսկ ոչ մահմեդական հավատքի դրսևորումները՝ սովորաբար ոչ արտահայտիչ: Պետք է հաշվի առնել, որ ազգի (milet) կարգավիճակը ԺԷ. դարում այն հիմնական ճկուն համակարգն էր, որի գործադրումը արտահայտվում էր տարբեր երանգներով՝ յուրահատուկ աշխարհագրական դիրքով կամ որոշակի պատմական ժամանակաշրջանով, տեղական պաշտոնեությամբ ևն: Երուսաղեմի քրիստոնեական թաղամասերը կամ ուխտագնացության գլխավոր նպատակակետերը համարվում էին քրիստոնեական եզակի սրբավայրեր, իսկ նրանց համբավը կապված էր քրիս-

---

[49] Տես **Kryštof Harant**, Cesta z království českého do Benátek, odtud do země Svaté, էջ229 և 238:

[50] Տես **Oldřich Prefát**, Cesta z Prahy do Benátek, a odtud potom po moři až do Palestiny in Cesty do Svaté země, (ed.), Praha, 1948, էջ 49:

[51] Տես **R. Hovannisian**, **S. Payaslian**, Armenian Constantinople, Costa Mesa, 2010, էջ 187. հմմտ. **S. Aslanian**, From the Indian Ocean to the Mediterranean: The Global Trade Networks of Armenian Merchants from New Julfa, California, 2011, էջ 38:

տոնյաների երկարաժամկետ ներկայության հետ: Առանց ուխտավորների, կրոնական մեծ տոներից դուրս, Երուսաղեմը նկարագրվում է որպես ամայի քաղաք: Ամենահայտնի սրբավայրերը գտնվում էին քաղաքի ներսում, իսկ դրանց շրջակայքը ավելի պատրաստված էր ուխտավորների այցելությանը, ովքեր գալիս էին այստեղ իրենց հստակ ծրագրով (եթե անգամ բոլոր վայրերի վերակառուցումը խիստ կրճատված և սահմանափակ էր "dhimmi"-ի կարգավիճակով, և հնարավոր էր միայն հատուկ թույլտվությամբ կամ Օսմանյան սուլթանի ֆիրման/բերաթով (=հրամանագիր) և բոլոր տուրքերի վճարումից հետո): Ըստ Սիմեոնի նկարագրության՝ ավելի հեռավոր վայրերում ավերակներ էին. «...եւ ամէն եկեղեցիքն քար է. բայց ժամ չասի. ոչ քահանայ ունի. զի քաղաքէն հեռու է եւ արպնոց...» (թեպետ ամեն եկեղեցի քարից է, սակայն ժամերգություն չի կատարվում. քահանա էլ չկա, քանի որ քաղաքից հեռու է և արաբների բնակավայր...)[52]*: Բազմաթիվ Ս. եկեղեցիների (օրինակ՝ Ս. Հարության) դռներ փակվել էին մուսուլման շեյխերի կամ քրիստոնեական հավատին պատկանող տարբեր պահակների (ֆրանկ կամ հույն) կողմից: Ուխտավորների հաճախակի այցելություններին արժանացած շատ հայտնի վայրերն էին դարձել «ուխտագնացության պարտադիր երթուղիներ» (ըստ Սիմեոնի՝ «Սուրբ վայրերի հաջորդական ցանկ»), ինչպիսիք էին Ս. Հարության Տաճարը Երուսաղեմում, Ս. Ծննդյան եկեղեցին Բեթղեհեմում, Ս. Աստվածածնի եկեղեցին Գեթսեմանում: Ուխտավորներին արգելվում էր առանց թույլտվության (tezkere) մտնել սրբավայր:*

Մուտքի այդքան թանկ վճարը հարստանալու միջոց էր մուսուլման ղեկավարների համար (շեյխերի, ոստիկանապետերի, պահակների, կառավարիչների, դատավորների և այլոց համար) և, իհարկե, Բարձր Դռան եկամտի գլխավոր աղբյուրներից էր: Ամեն ուխտավոր սկզբում վճարում էր միայն իր համար՝ ստանալու սեփական "tezkere"-ն (=թույլտվություն): Այնուհետև մուտքի վճարները խմբերից գանձվում էին վանքերում, ուր բնակվում էին ուխտավորները: Վճարների գանձումից հետո ուխտավորներին կոլեկտիվ կերպով թույլ էին տալիս պահակների հսկողության ներքո մտնել եկեղեցի: Բոլոր Սուրբ վայրերը շրջելուց հետո ուխտավորները (որոնց միշտ ուղեկցում էին արհեստավարժ ուղեկցողները՝ ապահովելով փորձագիտական բացատրություն) ստանում էին «Սուրբ վայրերի ուխտավորի»՝ մահտեսիի կոչում: Ուխտավորները, բարեհաջող ավարտելով իրենց ուխտագնացությունը, ճանապարհվում էին տուն՝ ողջույններով և

[52] «Սիմէոն դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն», էջ 266: Նոր Բեթղեհեմ, Զաքարիայի տան դեպքում:

ծափահարություններով. նրանք տուն էին տանում որոշ հուշանվերներ, դաջվում էին, որը խորհրդանշում էր իրենց ճամփորդությունը:

Դեպի Երուսաղեմ ուխտագնացությունն, անկասկած, թանկարժեք ձեռնարկ էր՝ հասանելի միայն հարուստ ազնվականներին կամ նրանց, ովքեր երկար ժամանակ գումար էին կուտակել (ինչպես օրինակ Սիմեոնի դեպքում, ով նոտար էր աշխատել Ստամբուլում և Երուսաղեմում): Այն ուխտավորները, ովքեր գնացել են Երուսաղեմ առանց անհրաժեշտ դրամական միջոցների՝ ամբողջությամբ կախված են եղել իրենց դավանակիցներից կամ նրանց ողորմությունից. «Իսկ դառն աղքատքն որ մնացին ի դուռն (Ս. Հարութեան - Պ.Կ.), լան եւ ողբան եւ խնդրեն զի մուծցեն զնա: Իսկ նոքա (իմա, շեյխերը, սուբաշիները, քադիները - Պ.Կ.)// ասեն թէ Ոչ. իրեք կամ երկու ոսկի տվէք. իբրեւ երդնուն թէ չունիմք եւ ոչինչ, ապա մերկացուցանեն եւ ոչ գտանեն, ապա առաքեն եւ կոչեն զթարճիմանն (=թարգմանիչ) եւ ասեն. Զինչ տայք՝ տուք, զի մի զրկեսցին ի լուսոյն: Եւ նա գնացեալ ասէ Պարոնտէրին. եւ Պարոնտէրն յորդորէ զխոճայնին (=վաճառական), աղաչէ եւ խնդրէ վասն սիրուն Քրիստոսի, թէ Մի թողուք զնոսա ի դուրս մնալ, այլ ըստ կարողութեան ձերոյ տվէք որ նոքա այլ տեսնեն զլոյսն...»[53]: Քրիստոնյա ուխտավորների տնտեսական օգուտն Օսմանյան իշխանության աչքում ավելի քան ակնհայտ էր, թե՛ հիմնական սրբավայրեր մուտքի և թե՛ դեպի Հորդանան «հարկադրված» ուխտագնացության դեպքում: Ըստ Սիմեոնի՝ «...թէ վա՛յ այն մարդուն ով չգնայ հետ պարոնին [=մահմեդական կառավարիչ - Պ.Կ.] ի Յորդանան...»[54]: Ուխտավորներից պահանջվում էր մասնակցելով՝ մուծել «պաշտոնական» տուրքը և հետևաբար վճարելով՝ ազատվել «ապստամբ արաբների» գերությունից: Կառավարչի 200 ձիավորներ ապահովում էին պաշտպանությունն ընդդեմ քոչվորների և դառնում մի տեսակ անվտանգ միջանցք՝ ստիպելով ուխտավորներին գնել անգամ ջուրը «ապստամբների» հետ երկար բանակցությունների ընթացքում. «...սկսան ժողովել դաֆար (=տուրք - Պ.Կ.)... ով չուներ՝ ծեծէին, վիրավորէին. այլ եւ վա՛ր առեալ՝ Ծ.Կ. չաբրազ զարնէին (խաչաձև փակել, չափրաստով կողպել) տապանն (=աքացի էին տալիս 50 - 60 անգամ - Պ.Կ.)... եւ մարդիկ ի շողոյն թալկացեալք (=ծեծից հոգնած - Պ.Կ.) լինէին. եւ փախչելոյ ճար չկայր. զի յամենայն կողմանց անցս ճանապարհին կալեալ էին...»[55]: Այսպիսով, ուխտավորների երթը իրականում տեղի մուսուլման իշխանների

[53] Նույն տեղում, էջ 286-287:
[54] Նույն տեղում, էջ 262:
[55] Նույն տեղում, էջ 264:

համար դարձել էր ցանկալի ապրուստի միջոց, իսկ տուրքերի և հարկերի գանձումը կարող է դիտվել որպես փրկագնի տեսակ: Ս. Հարության մուտքի համար պաշտոնական (Բարձր Դռան հաստատած) գինը Սիմեոնի այցելության ընթացքում հասել էր 8-9 ոսկե դրամի, ֆրանկների (Եվրոպայից եկածների)[56] համար՝ 15, և 4 ոսկե դրամ՝ այլ ուխտավորների համար, բացառություն կազմելով ավելի բարձրաստիճան կրոնական պաշտոնյաներին: Հարյուրավոր ուխտավորներ գալիս էին Երուսաղեմ ամեն տարի[57]. բազմություն հավաքվում էր հատկապես մեծ տոների ժամանակ:

Հայերը Երուսաղեմում. Երուսաղեմում ապրում էր մի քանի բնիկ հայ ընտանիք, լինում էին նաև հայ ուխտավորներ, որոնք ամեն տարի գալիս էին ծովով կամ էլ Գազայի ճանապարհով՝ Եգիպտոսից. ըստ Սիմեոնի՝ այսպես կոչված Մըսրրի երկրից: Սիմեոնը Երուսաղեմում հաշվել է միայն 12 բնիկ հայ ընտանիք կամ տնտեսություն. բոլորն «աղքատ... ջուլֆայ են եւ գօտէգործ. թէսմայ եւ գուստիկ բանին ուխտաւորացն համար...» (աղքատ... ջուլհակներ, գոտիագործներ էին, ովքեր պատրաստում էին մանյակներ, իրանակալներ... ուխտավորների համար)[58]: Ըստ նրա՝ ամեն տարի մեծ տոներին ժամանող հայերի թիվը մի քանի հարյուրից հասնում էր մինչև հազարի, սակայն, ամենայն հավանականությամբ, այս թիվը չափազանցված է (այլ հեղինակներ խոսում են մի քանի տասնյակ հայ ուխտավորի մասին, որոնց թիվը տատանվում էր՝ կախված ապահովության պայմանների փոփոխություններից): Տեղացի հայերը, հավանաբար, արտադրում և վաճառում էին ապրանքներ, որոնցից իր հետ տուն էր տարել չեխ ճանապարհորդ Քրիստոֆ Հարանտը: Վերջինս գրում է. «Տերողորմյաներ... խաչեր... գնված տարբեր հոսանքներին պատկանող քրիստոնյաներից և բերված նրանց վանքերից... հատուկ խաչեր՝ պատրաստված փայտից, փորագրված... և ծածկված փոքրիկ աստղերով, որ

---

[56] Հիշյալ ժամանակաշրջանի (սկսած ԺԶ. դարի վերջից մինչև ԺԷ. դարի սկիզբը) Երուսաղեմի չեխ այցելուների հետ համեմատությունը տես **P. Sugar**, Southeastern Europe Under Otoman Rule 1354-1804, Washington, 1996:

[57] **O. Peri**, Christianity Under Islam in Jerusalem…, էջ 178:

[58] «Սիմէոն դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն», էջ 260-262: Երուսաղեմում ապրող քրիստոնյաների թիվը և գլխահարկի (jizya) վճարումը 1690/1691 թվականի տվյալներով հաշվվում է գլխահարկ մուծող 622 տնատեր՝ հաշվի չառնելով կանանց, երեխաներին, տարեցներին, անաշխատունակներին և կրոնականներին (հիշատակված խմբերը ոչ մուսուլման բնակչության մեջ հաշվառման ենթակա չեն և չեն հարկվում): Մարդահամարի տվյալները փաստում են, որ Երուսաղեմի քրիստոնյա բնակչությունն զգալիորեն աճել է Սիմեոնի կյանքի տարիներին: Տես **Peri**, Christianity Under Islam in Jerusalem…, էջ 13:

հպվել են Սուրբ տեղերին... դրանք տվեցինք մեր ընկերներին մեր երկրում, որպեսզի պատվենք նրանց և հիշենք... Ս. քաղաքը»[59]:

Երուսաղեմի Հայոց Պատրիարքության ազդեցությունը նկատելի էր: Նույնիսկ համեմատած Օսմանյան Էրմենի միլլեթի պաշտոնական գլուխ Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության[60] *և Կիլիկիայի Հայոց Կաթողիկոսության հետ*[61]*, Երուսաղեմի Հայոց պատրիարքության ազդեցությունը որոշվում էր իր մեծ հեղինակությամբ՝ կապված սրբազան վայրերի կարգավիճակի և մեծ համբավ ունեցող Սրբոց Հակոբյանց վանքի կալվածքների հետ: Երուսաղեմում հայ կյանքի կենտրոնն էր Հայկական թաղամասը (մինչ օրս Երուսաղեմի Հին քաղաքի ավանդական չորս թաղամասերից մեկը), որի սիրտը Սրբոց Հակոբյանց վանքն էր. համալիր, որը, համաձայն Սիմեոնի, հնարավորություն էր տալիս իրենց ձիերով տեղավորել ավելի քան հազար ուխտավորի: Օլդրիխ Պրեֆատը Հայկական թաղամասը նկարագրում է հետևյալ կերպ. «Գեղեցիկ... եկեղեցի, որը կրում է Ս. Հակոբի անունը, վայր, ուր գլխատվեց Տիրոջ առաքյալ Հակոբ Մեծը (=Տեառնեղբայր - Ա.Բ.)»*[62]*: Քրիստոֆ Հարանտը նշում է, որ Սուրբ Հակոբը «բավական մեծ եկեղեցի է՝ կառուցված քարից, որը պահում է... իր իշխանության տակ քրիստոնյա հայերին... Այնտեղ է մատուռը... կամարակապ և նկարազարդ... արևելյան կողմում տեղակայված է քարե խորանը, ...ուր գլխատվել է Տիրոջ առաքյալ Սուրբ Հակոբ Մեծը Հերովդես թագավորի հրամանով... այնուհետև Սրբոց Հակոբյանց վանքից 335 քայլ այն կողմ կա մի պատ և փոքր եկեղեցի ներսում, որտեղ մի ժամանակ Կայափայի տունն էր կանգնած»*[63]*: Սիմեոնն ավելացնում է. «Եւ կայ ի Սուրբն Յակոբ :ՅԿԵ: (=365) տուն վիմաշէն եւ քարուկիր: ...Ունի քառասուն հոր ջրի. եւ բոլորն շուրջաբնակի քարէ պարիսպք, բարձր եւ լայն. եւ մեծ դուռ երկաթի որպէս քաղքի. եւ դռան վերեւն երեքյարկեան դարպաս, կաթողիկոսարան: Եւ ամէն փողոց անուն մի ունի»*[64]*: Վավրինեկ Սլեզանսկին, ճանապարհորդ, ով այցելել է Երուսաղեմ Սիմեոնից 40 տարի հետո, խոսում է «Սուրբ Հակոբի հին եկեղեցու մա-*

---

[59] Տես **Kryštof Harant**, Cesta z království českého do Benátek, odtud do země Svaté, in Cesty do Svaté země, (ed.), Praha, 1948, էջ 167-240:

[60] Այդ ժամանակ Կ. Պոլսի պատրիարքն էր Գրիգոր Կեսարացին (1601-1608, 1611-1621, 1623-1626):

[61] Այդ ժամանակ Կիլիկիա/Սսի կաթողիկոսն էր Հովհաննես Դ. Այնթաբցին (1601-1621):

[62] Տես **Oldřich Prefát**, Cesta z Prahy do Benátek, a odtud potom po moři až do Palestiny in Cesty do Svaté země, (ed.), Praha, 1948, էջ 43:

[63] **Kryštof Harant,** Cesta z království českého do Benátek, odtud do země Svaté, in Cesty do Svaté země, (ed.), Praha, 1948, p. 208.

[64] «Սիմէոն դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն», էջ 249:

սին, որը պատկանում է հայերին: Մի հայ՝ ծննդով քրիստոնյա, մեզ ներս ուղեկցեց, իսկ մի լեհ (?) տարավ մեզ ներս փոքր երկաթյա դռնով (քանի որ սովորաբար այնտեղ, ուր կա ցանկացած տիպի երկաթյա դուռ, քրիստոնյաներն ապրում են դրանց հետևում)»[65]*:*

Սիմեոնի համար Երուսաղեմի Հայկական թաղամասը Կարգի՝ Առաքելական եկեղեցու կարգ ու կանոնի մարմնավորումն է. «Զոր մեծ կարգ եւ սահման տեսի ես յայնժամ անդ, ժամն եւ արտաքս: ...Որ ամէն օր անխափան ամենայն ժամ կառնեն...»[66]*: Երուսաղեմը Աստծո քաղաքի խորհրդանիշն է, Առաքելական եկեղեցու և առաքյալների ժամանակի փառքի արտացոլումը, անեղծ ավանդույթների և մաքրության բուն էությունը: «Եւ մեզ պարտ էր անդ մնալ, քան թէ դառնալ եւ ափսոսալ»*[67]*,- գրում է Սիմեոնը Սուրբ քաղաքի՝ աշխարհում միակ վայրի մասին, որտեղ քրիստոնյաները կարող են ապրել իրենց Աստծո ներկայության մեջ:*

Պարոնտեր կոչված պատրիարք Գրիգոր Գանձակեցին (1613-1645)[68]*, ում պաշտոնական գրագրությունը վարել է Սիմեոնը՝ որպես նոտար (Սիմեոնի ընկեր՝ պատրիարքական նվիրակ Ղուկաս եպիսկոպոսի երաշխավորությամբ), կարողացավ բարելավել Հայոց Պատրիարքության համբավը և ամրապնդել նրա դիրքերը: Երուսաղեմի Հայոց Առաքելական աթոռի դիրքը վերջապես կայունացավ Պատրիարքության պարտքի մարմամբ, որն (ըստ Սիմեոնի) արդյունք էր «նախկին պատրիարքների անփութության» և ջալալիների հարձակումների պատճառով ուխտավորների թվի նվազման: Պատրիարքը ֆինանսապես կախում ուներ ուխտավորներից, և ինչպես Սիմեոնն է բացատրում, «Սորա ժամանակ ճէլալիք ելան. ճանփնին կապեցաւ. ժողովուրդն որն աղքատացաւ, որն կորաւ. Երուսաղէմ ուխտաւոր չեկաւ. վասն այն պարտքն շատացաւ, զուլումն աւելցաւ. :ԽՌ: (40000) ղուռուշ պարտք եղաւ... ամենայն գրաւեցան յանօրինաց...»*[69]*: Ըստ Սիմեոնի՝ «... եւ ի ժամ լուսոյ բխման չերեւէր հայի սուրբ Յարութիւնն վասն ամօթոյ եւ նախատանաց, զի ոչ տեղիք ունէաք եւ ոչ անօթք եւ ոչ զգեստ: Զայս ամենայն կրեալ ազգս Հայոց շուարեալ, տարակոյս եղեալ նկուն (=խոցելի) դարձաւ...»*[70]*: Հայ վաճառականները (սկսած Ամիդցի խոջա Ենկիից) հավաքվեցին Հալեպում՝ քննարկելու և հավաքելու պարտքը. «...վասն սուրբ*

---

[65] **Vavřinec Slížanský**, Nový popis cesty do Jeruzaléma a Svaté země 1660-1661, Boskovice, 2009, p. 52-53.

[66] «Սիմէոն դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն», էջ 249-250:

[67] Նույն տեղում, էջ 299:

[68] Երուսաղեմի պատրիարք (Պարոն-Տէր), Գրիգոր Դ. (1613-1645):

[69] «Սիմէոն դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն», էջ 273:

[70] Նույն տեղում, էջ 275:

Երուսաղէմայ պարտուց... որ :ԽՌ: (40 000) ղուռուշ է... եւ ժողովեալ բազում գանձս, ավելի քան զպարտսն...»[71]*: Այսպիսով, Առաքելական եկեղեցու դրությունը կարծես թե տեսանելիորեն բարելավվեց Գրիգորի՝ պատրիարք ընտրվելուց հետո, որովհետև մինչ այդ՝ «Ծննդեան օրն գնացաք ի Բեթղէհէմ. եւ չունէաք խաչ՝ ջուր օրհնել...»*[72]*:*

Դատելով Սիմեոնի նկարագրած իրադարձություններից՝ նույնիսկ Պարոնտեր Գրիգորի, ասկետականության և ճգնակեցության այս իդեալի դիրքը հեռու էր կայուն լինելուց. Հայոց Պատրիարքը բանտարկվել էր Երուսաղեմի օսմանյան կառավարչի կողմից՝ զենք մթերելու մեղադրանքով (պատրվակը մոգոնել էին շեյխերը Սուրբ Հակոբյանց վանքի վերակառուցման ժամանակ): «Սա վասն շինութեան սուրբ եկեղեցեաց, վանօրէից բազում զզվանս եւ ազգի ազգի դժուարանս եւ նեղութիւն կրեաց ի շէխէրուն, պարոնէն... բազում անգամ բանտ մտանելով, յոլով անգամ ի շղթայս եւ յերկաթս պրկելով... եւ վճիռ մահու ի վերայ նորա հատանելով»[73]*: Սիմեոնի՝ Երուսաղեմ ժամանելուց մեկ տարի առաջ (1616) մուֆթին (մուսուլմանների բարձրագույն հոգևոր առաջնորդը) բռնագրավել էր Համբարձման եկեղեցին և կողքին մզկիթ կառուցել՝ ի հեճուկս բոլոր քրիստոնեական բողոքների (մինչդեռ նախկինում Հայոց Պատրիարքը, խնդրագրեր գրելով Ստամբուլ և կաշառք վճարելով, միշտ կարողացել էր փրկել եկեղեցին): Պատրիարքը պետք է տարեկան վճարեր երկու հազար ղուրուշ (արծաթյա դրամ) և ստիպված էր գնել բանտարկյալների ազատությունը՝ նրանց համար փրկագին վճարելով: Այնուամենայնիվ, անգամ հարուստ հայ վաճառականների և ուխտավորների ֆինանսական առատաձեռն օգնությամբ, Պատրիարքարանի հնարավորությունները սահմանափակ էին: Նրա դիրքը Բարձր Դռան հանդեպ որոշվում էր քաղաքականապես և տնտեսապես, հատկապես՝ ֆինանսական միջոցների մակարդակով: Պատրիարքի յուրաքանչյուր քայլ ուղեկցվում էր գումար վճարելով*[74]*: Նա պետք է թանկարժեք նվերներ ուղարկեր կառավարչին և այլոց*[75]*: Բոլոր հայկական վանքերը ստիպված էին բարձր հարկեր վճարել անվտանգություն ապահովողներին, հարկահավաքներին, տեղական կառավարչին, ոստիկանապետին, շեյխերին («ավնի, չօպնի, պարոնի, սուպաշու, շէխերուն»)*[76]*: Տուրքերն ու հարկերը (ինչպես նաև ոչ պաշտոնական bakhsish-նվերները) պահանջում էին ողջ տարվա ընթացքում. «...բոլոր տարին...*

[71] Նույն տեղում, էջ 276-277:
[72] Նույն տեղում, էջ 275:
[73] Նույն տեղում, էջ 281:
[74] Նույն տեղում, էջ 283:
[75] Նույն տեղում, էջ 261:
[76] Նույն տեղում, էջ 261:

անիրաւ անօրէնքն բուխթան (=ցորեն) եւ իֆդիրայ (=զրպարտության տուգանք) ֆառնեն, եւ ճօռումէն (=բազմապատկեն)՝ հարիւրով, հազարով...»[77]: Քրիստոնյաները մուսուլմաններին պետք է վճարեին թանկարժեք նվերներ և տոնակատարության դրամ՝ որպես իրենց շնորհակալության արտահայտություն քրիստոնեական արարողությունները հանդուրժելու և ուխտավորներին Սուրբ վայրեր մուտք գործելու թույլտվության համար, մինչդեռ քրիստոնեական թաղումները տեղի էին ունենում լռության մեջ և առանց աղոթքների, ինչպես հրեաների թաղումները Լեհաստանում. «Այլ եւ զմեռեալս չթողուն տանիլ պատվով... որպէս հրէայքն ի Լէհ...»[78]: Այսպես է Սիմեոնը նկարագրում օսմանյան հայերի հանդեպ խտրականությունը՝ համեմատելով այն իր ծննդավայրի բարքերի հետ:

Սիմեոնի՝ Լվով վերադառնալուց (1618) մի քանի տարի անց հայերի վիճակը Երուսաղեմում էապես բարելավվեց: ԺԷ. դ. կեսին Բարձր Դուռը սկսեց բարեհաճորեն վերաբերել Հայոց Առաքելական և Հույն Ուղղափառ պատրիարքություններին՝ ի հեճուկս ֆրանցիսկյանների: Հետագայում, հայերի և հույների միջև կրոնական պայքար սկսվեց սուրբ վայրերի պատկանելության խնդրի շուրջ: Վիճահարույց վայրերն, իհարկե, Սուրբ Հարության և Սուրբ Ծննդյան տաճարներն էին: Հայերը նույնիսկ ժամանակավորապես կորցրին Սուրբ Հակոբ եկեղեցին: Ինչպես գրում է հայ ժամանակագիր Վարդան Բաղիշեցին, «Եւ ի վերայ այս դառնութեան զոր կրեցաք, եհաս մեզ գուժ կրկնակի եւ տրտմութիւն անհնարին... մինչ զի վիմեղէն սրտիցն անգամ շարժիլ յողբս եւ յարտասուս. քանզի ազգն Հոռոմոց երկաբնակաց քաղկեդոնականաց, որ յիսկզբանց անտի մինչև ցայժմ թշնամի են մեզ, եւ հակառակ կրօ//նից եւ ուղղափառութեան մերում... կրկին թափեցին թոյնս դառնութեան իւրեանց... զի ըստ նախանձու զոր ունէին ի վաղուց, պատրաստեցին մեզ որոգայթ գաղտնի... մտին առ թագաւորն սուլտան Մահմէտ, եւ ետուն երկու հարիւր հազար ղուրուշ, այսինքն՝ հարիւր հազար դահեկան կարմիր, եւ աղաչեցին զթագաւորն, զի տացէ նոցա զեկեղեցին Հայոց, զվանս սրբոյն Յակոբայ... որ էր ի ձեռս մեր... եւ ահա եղաք հաւասար հողոյն եւ այլ նուազագոյն...»[79]: Հայերի համար այս ողբերգական իրադարձությունը տեղի է ունեցել 1657 թ.՝ Սիմեոնի ճամփորդությունից 40 տարի անց: Հայ-հունական եկեղեցական բախումները չդադարեցին անգամ վանքը հայերին վերադարձվելուց հետո:

---

[77] Նույն տեղում, էջ 261:

[78] Նույն տեղում, էջ 270:

[79] «**Վարդան** Բաղիշեցու Ժամանակագրությունը» (ԺԷ. դ.), «Մանր ժամակագրություններ». XIII-XVIII դդ., հ. Բ., Կազմեց Վ.Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 397-398 (- Ա.Բ.):

Մեկ այլ պայքար գլուխ բարձրացրեց Ավագ Շաբաթ օրվա Ճրագալույցին, ամենակարևոր սրբարան (Սուրբ Հարության մատուռ՝ Տիրոջ գերեզման) մտնելու համար: Զատկական տոնակատարությունները պետք է ընկալել որպես քրիստոնեական Երուսաղեմի ողջ տարվա ծիսակատարությունների գագաթնակետ: Առանց ուխտավորների՝ Երուսաղեմը դատարկ է, բայց Զատկի ժամանակ այն լի է մարդկանցով, փաստում է Սիմեոնը[80]*, ավելացնելով, «...է Երուսաղէմ որպէս վանք»*[81]*: Ուխտավորների մեծամասնությունը ժամանում է հատուկ այս առիթով, և Պատրիարքի դրամական միջոցների մեծամասնությունը մուտք է գործում այս տոնի կապակցությամբ: Զատկական շաբաթվա ընթացքում, սկսած Ծաղկազարդից, Քրիստոսի չարչարանքները խորհրդանշաբար վերապրվում են: Պատրիարքական փոխանորդը, ավանակի վրա նստած, իջնում էր Ձիթենյաց լեռից՝ անցնելով Սուրբ Հակոբ վանքի կողքով, մինչ քրիստոնյաները ողջունում էին նրան՝ ծածանելով արմավենու և խուրմայի ճյուղեր: Ավագ հինգշաբթի Սուրբ Հարության տաճարում տեղի էր ունենում Ոտնլվայի արարողությունը, այնուհետև քրիստոնյաները հսկում էին կատարում Գեթսեմանի այգում՝ այսպիսով հիշատակելով Հիսուս Քրիստոսի վերջին օրերը՝ մինչև Խաչելություն: Թափորը Ուրբաթ առավոտյան գնում էր Գողգոթա և այցելում սրբավայր, որտեղ գերեզմանում ամփոփել են Հիսուսի մարմինը: Շաբաթ գիշեր լույս կիրակի Զատկական ամենակարևոր տոնակատարությունն էր, քանի որ բոլոր ուխտավորները փորձում էին մուտք գործել Սուրբ Հարության տաճար՝ սպասելով Սուրբ Լույսի հայտնվելուն: Սիմեոնը մասնակցել է Զատկական բոլոր տոնակատարություններին և այսպիսով կատարել իր ուխտը: Նա ներկա է եղել Հարության տաճարում շաբաթ օրվա երեկոյան աղոթքներին, երբ բոլոր եկեղեցիների պատրիարքները հաջորդաբար մտնում էին Տիրոջ Գերեզմանի մատուռ: Թեպետ Սիմեոնը չի նշում Հույն Ուղղափառ Պատրիարքի առաջնային դիրքը, բայց հենց նա էր առաջինը մտնում Սուրբ Հարության տաճար և հայտնվում վառված ճրագով: 1630 թ. ուղղափառ-հույների գլխավորությունը փոխարինվեց Հայոց Առաքելական եկեղեցու առաջնությամբ, իսկ 1657 թ. հայ և հույն պատրիարքները մտան միասին*[82]*: Հայերի դիրքը չէր դադարում ուժեղանալ մինչև ԺԷ. դարի կեսը. 1654 թ. Հայոց Պատրիարքությունը գնեց սրբավայրերի հասանելության իրավունքը բոլոր միաբնակ (միաֆիզիտ) եկեղեցիներից (Հակոբիկ, Ղպտի, Եթովպ), մինչ հույները ձեռք բերեցին վրացիների և սերբերի բաժինները*[83]*:*

[80] Տես «Սիմէոն դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն», էջ 262:
[81] Նույն տեղում:
[82] Տես **O. Peri**, Christianity under Islam in Jerusalem..., էջ 118:
[83] Այս պայքարում բյուզանդական եկեղեցու շահերն արտահայտված են մի շարք վավե-

Սիմեոնը ներկայացնում է Զատկական տոնակատարությունների նկարագրությունը, որոնք այդ տարի տոնվել են առանձին և տարբեր ժամերի (Հայոց, Ուղղափառ և Կաթոլիկ Զատիկներ): Նա նշում է, որ իր ուխտագնացության Զատկի օրը հազարից ավելի ուխտավորներ հավաքվել և կերակրվել են Սուրբ Հակոբի վանքում. «...զի էին աւելի քան զհազար հոգի. ի վերայ տանեաց նստան եւ սուրբ Յակոբայ էրդիքն (=տանիք). կերաք գառն, հէրիսայ եւ խորու. եւ խմեցաք զանուշ գինին»[84]:

Ուրիշի (Others) կարծրատիպը և ներհամայնքային կյանքը Երուսաղեմում. Այլ համայնքների (Others) մասին Սիմեոնի կարծրատիպերը, որպես կանոն, ձևավորվել են կրոնական հիմքի վրա և չեն տարբերվում նրան ժամանակակից այլ հայ հեղինակների կարծիքներից: Այստեղ հայ պատմագիտական ավանդույթը հանդես է գալիս որոշ ընդհանուր հատկանիշներով՝ հիմնված ընդհանուր պատմական հիշողության վրա, ուղեկցվելով տեղական պատկերացումներով: Համեմատենք Սիմեոնի՝ Արևմտյան Անատոլիայում և Հայաստանում կամ Կովկասում գրած բնագիրը ժամանակակից հայերեն ժամանակագրությունների հետ:

Տաճիկները կամ օսմանցի թուրքերը (մուսուլման դաս) սովորաբար (պատերազմներին, սովին և համաճարակներին զուգահեռ) ներկայացվում էին իբրև անխուսափելի չարիք, հալածված և ընտրյալ հայ ժողովրդի վրա հարձակվող: Նրանք դառնում են որպես հավերժ վտանգ և սպառնալիք քրիստոնյաների համար, ստիպում էին նրանց Իսլամ ընդունել՝ քանդելով եկեղեցիները և առևանգելով կանանց: Կյանքը «մուսուլմանական լծի տակ» կարող էր հասկացվել որպես Աստծո պատիժ «մեր մեղքերի պատճառով», «որովհետև մենք մոռացել ենք Աստծո պատվիրանները», «որովհետև մենք հեռացել ենք ուխտից», մերժելով՝ օտարվել ենք Աստծուց: Մուսուլմանի կերպարը ներկայանում է «քարսիրտ, վատ մարդկանցով», սովորաբար կոպիտ և անփոփոխ բացասական բնորոշ գծերով: Նրանց կարծրատիպը ելակետային է այլ էթնոկրոնական համայնքների հետ համեմատությունների համար:

րագրերում: Երուսաղեմի սրբավայրերի համար Հունաց և Հայոց Եկեղեցիների պայքարը բավական երկարատև է եղել: Այդ պայքարի դրվագներից մեկն իր աշխատությունների մեկում ներկայացրել է բյուզանդագետ Հր. Բարթիկյանը. տես **Պարթենիոս** Աթենացու Պաղեստինի Կեսարիայի մետրոպոլիտի Պատմություն հունաց և հայոց տարաձայնության (Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի և տարածաշրջանի քրիստոնյա համայնքների ենթակայությանը վերաբերող), հունարեն բնագիրը **Ա. Պապադոպուլոս-Կերամևվսի**, առաջաբանը, թարգմանությունն ու ծանոթագրությունները՝ Հր. Մ. Բարթիկյանի, Երևան, 2008 (- Ա.Բ.):

[84] «Սիմէոն դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն», էջ 292-293:

Հավանաբար այն պատճառով, որ Սիմեոնը մեծացել է կաթոլիկ միջավայրում, մուսուլմանների նկատմամբ նրա կարծրատիպերը ավելի բացասական են և տեսանելիորեն ուղղված մահմեդականների դեմ, քան Մեծ Հայքի, այսպես կոչված, բաղեշյան դպրոցի ժամանակագիրների երկերում, ովքեր երկար ժամանակ ապրել են մուսուլմանների անմիջական հարևանությամբ: Սիմեոնի վկայությունների համաձայն՝ քրիստոնյաների և մահմեդականների միջև հարաբերությունները լարված էին. դրանք ուղեկցվում էին փոխադարձ անվստահությամբ՝ վերադասի ու ստորադասի միջև պարտադրված կախվածությամբ: Սիմեոնը ողբում է «տանջանքների և խոշտանգումների մեջ անցնող կյանքը». քրիստոնյաները անիծված էին, վիրավորված և նվաստացած այստեղ՝ Երուսաղեմում, նույնիսկ ավելի շատ, քան Օսմանյան Անատոլիայում. «Նրանք անվանում են մեզ (քրիստոնյաներիս)... շներ, խոզեր...»[85], մինչդեռ Մալաթիայում մուսուլմանները «մեզ չեն անվանում գյավուր, բայց միայն Իսա քուլի (Հիսուսի ծառա)» («...կաւուր անգամ ոչ ասեն մեզ, այլ Էսայի եւ Յիսակուլի...»)[86]: Քրիստոնյաները վախենում են եկեղեցի գնալ, քահանաները հալածվում են և մեղավոր են համարվում յուրաքանչյուր պատրվակով, հարկերն ու տուրքերը չափազանց բարձր են վճարում: Քրիստոնյաները սպասավորների դեր են կատարում, նրանք պետք է կարողանան առանց ուշացման կատարել մուսուլմանների յուրաքանչյուր պահանջ, հակառակ դեպքում խստագույնս տուգանվում և պատժվում են: Մշտական վախով ու ճնշումներով էր ուղեկցվում քրիստոնյայի կյանքը. նրանք ստիպված են բավարարվել «փոքր և մութ տներ»-ով, «նրանց չէր թույլատրվում ունենալ ձիեր, ջորիներ կամ գեղեցիկ զգեստներ» («Թէպէտ ցած եւ փոքր դռներ ունին եւ խա//ւարչտին տներ եւ գետնափոր... Եւ ո՞վ կարէ լաւ տուն շինել, կամ ձի եւ ջորի պահել կամ լաւ գտակ կամ գօտի գլուխն կապել...»)[87]: Մուսուլմանների այս ընդհանուր բացասական կերպարն ուղեկցվում է քրիստոնյաներին անիծելով, նրանց հավատքը, խաչը և սրբություններն այնպես հայհոյելով, որ հեղինակը չի կարող նույնիսկ արտաբերել դա կամ գրի առնել: Այդ պատճառով էլ մարդիկ չեն գնում պատարագների և իրենց դժբախտությունների պատճառով մոռանում են նույնիսկ Աստծուն, օրենքը («...ժողովուրդն ոչ թէ ժամ երթալ, այլ եւ զԱստուած մոռացել են ի բազում հոգոց եւ հարկապահանջութեանց, նոմօսաց (=օրենք) եւ այլ տրոց...»)[88]: Այլ բացասական կարծրատիպերի համեմատությամբ՝ օսման-

[85] Նույն տեղում, էջ 271:
[86] Նույն տեղում, էջ 190:
[87] Նույն տեղում, էջ 271-272:
[88] Նույն տեղում, էջ 271:

յան թուրքերի (տաճիկների) կերպարը, այնուամենայնիվ, բացահայտում է որոշ դրական կամ հակասական գծեր: Սիմեոնն, օրինակ, գովում է տաճիկներին՝ իբրև կարգ պահպանողների և վերահսկիչների: Մահմեդականի կերպարն, այսպիսով, խստորեն բաժանված է երկու կարծրատիպի՝ թուրքի (հակասական) և արաբի (բացասական): Արաբների կարծրատիպային բացասական կերպարը ընդհանուր գծեր ունի այլ ժամանակակից ճանապարհորդների մոտ ևս. արաբները (հատկապես քոչվորները) արատավոր խուժանի, ավազակների և թալանչիների մարմնացումն էին: Արաբ գյուղացիները (ֆելլահները) Սիմեոնի կողմից ներկայացվում են որպես անիծյալ մարդիկ՝ դատապարտված Նոյի անեծքին (Քամին ուղղված)և օսմանյան թուրքերի հավերժ ստրկությանը:

Բաղեշյան դպրոցի հեղինակների ժամանակագրություններում ուղղափառ հույների կերպարը համարյա ամբողջությամբ բացասական է. «Նրանք խորամանկ, ճարպիկ, ուխտադրուժ, դավաճաններ են... ի սկզբանե հույները մեր թշնամիներն են, ...քանի որ նրանք նախանձում են մեզ» (Վարդան Բաղիշեցու Ժամանակագրություն)[89]: Մինչդեռ հույների կարծրատիպը, համաձայն Սիմեոնի վկայության, բավական դրական է. Երուսաղեմում հույները, դպտիները, ասորիները և հայերը ապրում են ներդաշնակության և սիրո մեջ: Նրանք իրար կնության են տալիս իրենց դուստրերին: Նրանք սովորաբար այցելում են միմյանց հարսանիքներին և թաղումներին, այսպիսով տիրում է խաղաղություն և ներդաշնակություն («Այլ եւ Հոռոմք, Խպտիք, Ասորիք եւ Հայք սէր ու միաբան են. աղջիկ տան եւ առնուն. այլ եւ նոքա մեր պսակն, թաղումն գան եւ հոգոյ հացն. եւ մերն նոցա գնան. եւ այսպէս կային միաբանութեամբ խաղաղ»)[90]: Այստեղ հույն ուղղափառ համայնքն ընդհանուր գծերով ներկայացված է ասորական հակոբիկ համայնքին բավական նման. վերջինս հայերի հետ կազմել է "millet"-ի Ermeni-ին: Սիմեոնը Երուսաղեմի հույներին նկարագրում է որպես «աղքատ մարդիկ». նրանց պատրիարքը «այնքան ծանր պարտքեր ուներ, որ ստիպված էր փախչել Երուսաղեմից... ինչ բախտավոր ենք, որ այդպես չեն ու հաստատ տեսանք մեր եկեղեցին» («...փախաւ հոռոմի պատրիարգն վասն պարտուց... գոհութիւն ու փառք Աստուծոյ, որ այսպէս չէն եւ հաստատ տեսաք զմեր եկեղեցին...»)[91]: Սիմեոնը չի նշում տարաձայնության որևէ դեպք ընդհանուր տարածքներում:

---

[89] Տե՛ս «Մանր Ժամանակագրություններ», հտ. II, 397-398:
[90] «Սիմէոն դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն», էջ 266:
[91] Նույն տեղում, էջ 293:

Հույների բացասական կեպարը Բուն Հայաստանի և Արևելյան Անատոլիայի հայ հեղինակների մոտ, հավանաբար, արդյունք է հայերի և հույների միջև փոխադարձ մրցակցության՝ թե՛ կրոնական, թե՛ գործնական և առևտրական դաշտում: Սիմեոնը, կրթված լինելով բազմազգ Լվովում, ավելի քիչ ճանաչում էր հույն, քան թե հրեա վաճառականներին, այսպիսով այս կարծրատիպային նկարագրությունը քիչ էր ազդված ուղղափառ աշխարհի հանդեպ բացասական վերաբերմունքից: Մյուս կողմից, հրեաների նկարագրությունը Սիմեոնի մոտ բավական բացասական է, ինչը հավանաբար արդյունք է լեհական առևտրային քաղաքներում ուղղակի մրցակցության և պայքարի մթնոլորտի: Նա չի հիշատակում նրանց իբրև «Ավագ եղբայրներ» (ինչպես Մովսես Խորենացու հայտնի երկում)[92], այլ՝ իբրև թշնամիներ, որոնք պետք է ապրեն սահմանափակումների և արգելքների տակ՝ պատժված ըստ արժանվույն. «Հռոմի պապի երկրում մի լավ օրենք կա ընդդեմ հրեաների... նրանց չի թույլատրվում բացել խանութ կամ կրպակ, նրանք կարող են միայն հնոտի վաճառել... Այստեղ նման չէ Լեհաստանին կամ Տաճկաստանին, որտեղ այս անհավատներն իրենց ձեռքն են վերցրել ամեն ինչ» («Կայր բարի սահմանք մի այլ աշխարհն Փափին եւ սաստիկ հրաման ի վերայ Հրէից...ո՛չ պախալ (=մանրավաճառ, նպարավաճառ լինել - Ա. Բ.), ո՛չ խանութ նստիլ, եւ ո՛չ այլ ինչ, բայց միայն հին ու մին ծախել... որպէս ի Լէհ կամ ի Տաճկաստան, զի զամենայն ինչ ի ձեռս իւրեանց ունին»)[93]: Սիմեոնը նշում է այն փաստը, որ որոշ հրեաներ Լեհաստանից հաստատվել են Երուսաղեմում, մինչդեռ Լեհաստանի հրեական սփյուռքը նյութապես աջակցում է նրանց:

Սիմեոնի վերաբերմունքը Հռոմի կաթոլիկների հանդեպ դրական է: Նրա արմատները Լեհաստանից են, և նա մեծացել է մի միջավայրում, որը խորապես կրել է կաթոլիկ կրոնի և դրա արտաքին դրսևորումների կնիքը: Քրիստոնեական հավատի բոլոր այս արտաքին դրսևորումները արգելված էին Օսմանյան Կայսրության տարածքում: Այդ է պատճառը, որ Սիմեոնն այդքան հիացած էր, երբ ժամանեց Սպլիտ (Օսմանյան Բալկաններով երկար ճանապարհորդելուց և Ստամբուլում մնալուց հետո)՝ զարմացած քաղաքի «զանգերով, խաչերով զարդարված բարձր զանգակատներով» («Մտեալ ի քաղաքն տեսաք փառաւոր եկեղեցիս եւ բարձր զանկակատունս վիմաշէն...»)[94]: Սիմեոնը գովերգում էր հատկապես ֆրանկների բարեպաշտությունը, բարեգործությունն ու ողորմությունը.

---

[92] **Moise de Khorène**, Historie de l'Arménie par Moïse de Khorène, Paris, 1993, p. 320-323.
[93] «Սիմէոն դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն», էջ 168-169:
[94] Նույն տեղում, էջ 53:

«Ֆրանկները (Երուսաղեմում) սիրում և դաշնակցում են հայերին, քանի որ տարին երեք անգամ Ս. Հակոբ են գալիս պատարագելու... առաջնորդը մեծ խնջույք է կազմակերպում... նրանք էլ պատվի և ընթրիքի են արժանացնում առաջնորդին» («Եւ Ֆռանկք մեծ սէր եւ դաշն ունին ընդ Հայս. զի տարին իրեք անգամ նոքա գան Սուրբ Յակոբ պատարագեն. եւ առաջնորդն մեծ խրախութիւն եւ ընթրիս առնեն նոցա... եւ նոքա մեր առաջնորդին պատիւ առնեն եւ ընթրիս»)[95]: Միակ բացառությունը Սիմեոնի վերաբերմունքն է եզուիտների նկատմամբ: Վենետիկում իր ունեցած փորձից, որտեղ եզուիտները դարձան Հռոմի Պապի և Սերենիսիմայի միջև ծագած վեճի թիրախ, նա բնութագրում է ճիզվիտներին բացասական գծերով («...չար, լիրբք, պըռի եւ պիզմ (=լիրբ)...»)[96]: Ճիզվիտները թեպետ Վենետիկի բաժնում ներկայացված են ամբողջապես բացասական գծերով, Հռոմում, ընդհակառակը, ներկայացված են որպես բարեպաշտության տիպար: Իհարկե, կաթոլիկի կերպարը Սիմեոնի երկում կտրականապես փոխվեց Լվով վերադառնալուց հետո՝ առաքելականների և կաթոլիկների միջև կրոնական պայքարի ընթացքում:

Սիմեոնի բնագրում հայկական ինքնակերպարը (ավտոկարծրատիպ), կապված կոնկրետ նյութի հետ, կարելի է բնութագրել բավական քննադատական, որոշ դեպքերում անգամ՝ բացասական: Սիմեոնը տվյալ ժամանակի «ողբերգական և տանջված» վիճակի համար մեղադրում է կամ այլազգիներին (մուսուլմաններ), կամ Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչներին, որոնք, ըստ նրա, քչացել են, քանի որ գիտուն մարդկանց պակաս կա մեր ժողովրդի մեջ («...ջնջեցան կարգաւորք եւ իմաստունք յազգս մեր. եւ որք կանն այժմս ամաչեմ կարգաւոր կոչել զնոսա»)[97]: Ըստ նրա՝ հայ ազգը մոռացել է Աստծո պատվիրանները, և «մենք չենք հիշատակում անգամ Աստծո անունը»: Սիմեոնը քննադատում է նաև կրթության պակասը հայ հոգևորականների և, ընդհանուր առմամբ, երիտասարդների շրջանում. «Մենք չունենք կրթության հանդեպ սեր: Մենք թողնում ենք, որպեսզի մեր երեխաները բարձրթողի մեծանան և նրաց անկիրթ անտերության ենք մատնում...» («...վասն զի բնաւ չունին սէր ուսման. վասն որոյ եւ զզաւակսն թողուն անձնապաստան եւ անփոյթ...»)[98]: Հայերի ողբալի վիճակն իբրև արդյունք է բացատրվում «ծովի չափ (մեծ) մեր մեղքերի» և ներկայացվում է որպես ազգային ողբերգական ճակատագրի մի տեսակ: Մյուս կողմից՝ հարկ է նշել, որ Առաքելական

[95] Նույն տեղում, էջ 266:
[96] Նույն տեղում, էջ 73:
[97] Նույն տեղում, էջ 112:
[98] Նույն տեղում, էջ 111:

Եկեղեցու անկման վերաբերյալ այս տեսակ ողբը բնորոշ է այդ շրջանի մի շարք կենտրոնների:

Ամփոփում. Ընդհանուր առմամբ կարելի է փաստել, որ Սիմեոն Լեհացու բնագիրը կարող է համարվել հայագիտության դաշտի կարևորագույն սկզբնաղբյուր և հատկապես հետաքրքիր՝ Օսմանյան կայսրությունում հայերի դերը պարզաբանող հետազոտողների համար: Քանի որ Սիմեոնը գալիս էր կաթոլիկ աշխարհից, որը հարևան էր Օրթոդոքս կայսրությանը, նա ուներ իր հատուկ տեսակետը Օսմանյան հասարակության և նրա շերտավորումների նկատմամբ: Իր ճամփորդության ընթացքում (1608-1618) նա մի քանի տարի անցկացրել է Օսմանյան կայսրության տարածքում, որի հետևանքով նրա բնագիրը կարելի է բնութագրել իբրև արժեքավոր սկզբնաղբյուր ոչ միայն պատմաբանների, այլ նաև ազգագրագետների և պատմական մարդաբանությամբ (անթրոպոլոգիայով) զբաղվողների համար: Սիմեոնի երկը Լեհաստանի Հայոց Առաքելական եկեղեցու գրական ժառանգության վերջին հուշարձաններից է, սակայն դրա կարևորությունը անուրանալի է սփյուռքի համար: Սիմեոնի Ուղեգրությունն արժեքավոր պատմական սկզբնաղբյուր է հատկապես ամենօրյա իրողությունների նկարագրության տեսանկյունից: Այստեղ պետք է հաշվի առնել, որ ձեռագիրը պատվիրված չի եղել որևէ բարձրազդեցիկ անձի կողմից. Սիմեոնը Ուղեգրությունները գրառել է անձնական նախաձեռնությամբ:

Առաջնակարգ պատմական սկզբնաղբյուրի տեսանկյունից Ուղեգրությունների կարևորագույն մասը արտացոլում է այնպիսի իրադարձություններ, ինչպիսիք են Ջալալիների շարժումը Արևելյան Անատոլիայում և, այսպես կոչված, Մեծ Փախուստը-Քոչը (օսմանյան թուրքերենով՝ "büyük kaçgün")՝ ջալալիների ավարառություններից պաշտպանվելու նպատակով գյուղացիների մասսայական գաղթը դեպի քաղաքներ: Սիմեոնի երկում շեշտադրված են փոքրամասնությունների (կրոնական, էթնիկական և լեզվական) անփոփոխ և մուսուլմանների մեջ ապրող dhimmi-ների (ոչմուսուլման ազգություններ) մշտական անապահով վիճակը: Նրա երկն արտացոլում է, այսպես կոչված, Արևմտյան Հայաստանի գյուղական բնակչության կյանքը, որը ներկայումս այլևս կորսված է: Սիմեոնի Ուղեգրությունները համեմատված են նույն ժամանակաշրջանի հատկապես Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի մի շարք հեղինակների նկարագրությունների հետ՝ կենտրոնանալով ուխտավորի կարգավիճակի, փոխակերպման նրա ընկալման և կարծրատիպային կերպարի վրա:

Ամփոփման մեջ պետք է ասել, որ Երուսաղեմի նկարագիրը Սիմեոն Լեհացու Ուղեգրություններում ազդվել է մի կողմից քրիստոնյաների

ամենասուրբ քաղաքի երևակայական պատկերից (դիտված Աստվածաշնչի պրիզմայով), իսկ մյուս կողմից՝ գագաթնակետ է՝ օսմանյան սանջակների և քաղաքների, ժամանակակից Երուսաղեմի գունագեղ նկարագրությամբ: Սիմեոնը ներկայացնում է իր ընթերցողին Երուսաղեմի և նրա մերձակայքի պատկերը, որը տարուբերվում է Պաղեստինի սուրբգրական պատկերի՝ կաթի և մեղրի «Ավետյաց երկրի» և սեփական աչքով տեսած ամենօրյա իրողությունների միջև: Երուսաղեմ քաղաքը Սիմեոնի համար խորհրդանշում է իր ամենանվիրական երազների իրականացումը. այն «հանձնվել էր անհավատներին... մեր մեղքերի պատճառով»: Այնուամենայնիվ, Երուսաղեմը պատկերված է իբրև Հայոց Կարգի բուն էություն, Հայոց Առաքելական Եկեղեցու աստիճանակարգ, և ամբողջական կանոն և երաշխիք սեփական գոյության:

Անգլերենից փոխադրեց
պ.գ.դ. ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆԸ[99]

[99] Շնորհակալությունս եմ հայտնում այս թարգմնության մեջ իրենց լուման դրած Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մատենադարանի աշխատակիցներ Աննա Նալբանդյանին, Արփինե Գրիգորյանին, Էլմա Վարդանյանին և Լուսինե Իսախանյանին, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող Քրիստինե Կոստիկյանին:

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ
ՀՀ մշակույթի նախարարության
«Պատմամշակութային ժառանգության
գիտահետազոտական կենտրոն»

ԿԵՆԴԱՆԱԿԵՐՊ ՊԱՏԿԵՐՈՎ ՔԱՌԱՆԻՍՏ ԿՈԹՈՂ ՈՒՋԱՆԻՑ

Ամփոփում. ***ՀՀ Արագածոտնի մարզի Ուջան գյուղի տարածքը հարուստ է պատմաճարտարապետական հուշարձաններով, որոնց շարքում իրենց տեղն ունեն առանձին կանգուն կոթողները[1]:***

Սկսած Ի. դարի 40-ական թթ.՝ ուսումնասիրողները հիշատակում են վաղմիջնադարյան կոթողի այն[2], որը սկզբում տեղափոխվել է Էջմիածնի թանգարան, իսկ հետո՝ Հայաստանի պատմության թանգարան[3]: ՀՀ հուշարձանների ցանկում առկա են արձանագրված երկու կոթողներ (համապատասխանաբար 2.109/3.2.3.1 և 2.109/12.1 ցուցիչներով):

---

[1] Շնորհակալություն ենք հայտնում ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի Արագածոտնի մարզային ծառայության պետի տեղակալ՝ Տ. Մանուկյանին՝ Ուջանում մեզ ուղեկցելու, նույն նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի արխիվային բաժնի պետ Հ. Կարապետյանին՝ արխիվային փաստաթղթեր տրամադրելու և լուսանկարչուհի Լ. Խաչատրյանին լուսանկարելու ու չափագրելու համար:

[2] **Գ. Հովսեփյան**, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Բ., Երևան 1987, էջ 155. **Լ. Ազարյան**, Վաղ միջնադարյան հայկական քանդակը, Երևան, 1975, նկ. 51-54. **Գ. Գրիգորյան**, Հայաստանի վաղմիջնադարյան քառանիստ կոթողներ, Երևան, 2012, պատկ. 57. **Ջ. Հակոբյան**, Հայկական վաղմիջնադարյան քանդակը (4-7-րդ դդ.), Երևան, 2016, էջ 73-74:

[3] **Գ. Գրիգորյան**, Վաղ միջնադարյան քառանիստ կոթողների վիճակը, Երիտասարդ արվեստաբանների երրորդ նստաշրջան, Երևան, 2009, էջ 51:

Ուլյան գյուղից մոտ 1 կմ հյուսիս գտնվում է «Ատամի արտեր» տեղավայրը, որտեղ փոքր ձորակի եզրին՝ երկու բլուրների միջև ընկած սարահարթում, առկա է փոքրիկ ամրոց, որը թվագրվում է զարգացած միջնադարով (Թ.-ԺԳ. դդ.)[4]: Այն ցուցակում (ցուցիչ՝ 2.109/8) հաշվառված է որպես դղյակ, որի կենտրոնական շինության հարավային ճակատի մոտ կանգնած է մեր խնդրո առարկա քառանիստ կոթողը և նրա պատվանդանը (նկ. 1)[5]:

Նկարագրությունը. Կոթողը կերտված է ամբողջական տուֆ քարից, որի բարձրությունը 141 սմ է, լայնությունը՝ 54 սմ, հաստությունը՝ 48 սմ: Դիմերեսին պատկերված է եղջերավոր կենդանու, հավանաբար խոյի երկրաչափական պատկեր, որի ներքնամասից սկսվում է նիզակաձև պատկեր՝ սլաքը դեպի ներքև: Այս ամենը պատկերված է մեկ ուղղությամբ, որի մեջ ակոսագծերով ամբողջ իմաստապատկերն է: Եղջյուրները և դունչը կլոր են, որոնց մեջ առկա են երեք եռանկյունիներ՝ կազմելով դեմքի առաջնային մասը: Ներքին եռանկյունին վերնամասում չի հատվում, այլ կլորանալով՝ վերարտադրում է աչքերը:

Դարձերեսը հարդարված է ավելի վատ և բավականին մաշված է[6]: Վերնամասում՝ կենտրոնական դիրքում, նշմարվում է առանձնացված շրջանակի մեջ ներառնված, դեպի ծայրերը շեշտակի լայնացող խաչապատկեր:

Աջ կողմում պատկեր չի երևում, իսկ ձախում՝ վերնամասում, կենտրոնական դիրքով նույն խաչապատկերից է, որից թեքությամբ երկու տարբեր ուղղություններով ճառագայթներ են արված: Անմիջապես տակից մինչև վերջ ձգվում է սլաքը՝ դեպի ներքև ուղղված նիզակի պատկերը:

Կոթողի աջ կողմում է գտնվում խորանարդաձև պատվանդանը՝ ձախ կողը կորացող է, տեղ-տեղ թերի մշակված, որի բարձրությունը 60 սմ է, լայնությունը՝ 78 սմ, հաստությունը՝ 72 սմ: Սրա վերնամասում փոս է արված՝ 25 սմ տրամագծով և 29 սմ խորությամբ: Պատվանդանի դիմերեսին հազիվ նշմարելի է ճառագայթաձև խաչապատկեր: Այն կենտրոնում ունի պարույր:

---

[4] Հուշարձանը հաշվառվել է ՀՍՍՀ մինիստրների խորհրդին առընթեր պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչության՝ հուշարձանների համահավաքի անձնագրող արշավախմբի կողմից 1983 թ., կազմող՝ Գ. Սարգսյան:

[5] Դղյակին վերաբերող նույն արխիվային փաստաթղթերում մենք հայտնաբերեցինք կոթողին և պատվանդանին վերաբերող լուսանկարներ, որոնցում կոթողը պառկած է (նկ. 2):

[6] Կոթողի պատկերները իրենց մանրամասնությամբ հաջողվեց տեսնել լուսանկարչական արտացոլիչ (ռեֆլեկտոր) սարքի միջոցով:





Նկ. 1. Ուջանի կոթողը. դիմերեսը և դարձերեսը
(գծագիրը՝ Լ. Խաչատրյանի, լուսանկարը՝ Լ. Մկրտչյանի, 2016 թ.)

Նկ. 2. Ուջանի կոթողի և նրա պատվանդանի արխիվային լուսանկարները
(լուսանկարը՝ Գ. Սարգսյանի, 1983 թ.)

Պատկերագրական առանձնահատկությունները. Ուջանի կոթողն իր պատկերագրության առանձնահատկություններով մտնում է վաղմիջնադարյան քառակող կոթողների՝ «Շիրակի խմբի» մեջ, որոնք անկյուններում ունեն որմնասյուներ և ավելի ոճավորված պատկերներ: Այս խմբում առկա են կենդանիների և կենդանագլուխ ֆիգուրների պատկերներ[7], սակայն մեր կոթողի դիմերեսին առկա պատկերը անզուգական է:

Արագածի հարավահայաց հատվածում կան այլ կոթողներ ևս, որոնք ունեն սլաքի պատկերներ: Քանդակագործության մեջ այսպիսի զարդերը Ա. Մնացականյանը համարում է «հայկական քանդակագործության հնագույն նմուշներից մեկը», որոնք պտղաբերության խորհրդանիշն են հանդիսանում[8]: Խորենացին վկայում է, որ Արշակ Ա.-ն Փոքր Ասիա կատարած հաղթական արշավանքի կապակցությամբ կանգնեցնում է քարե կոթող, որի վրա քանդակված է եղել նիզակ[9]: Այն, ըստ Ս. Բարխուդարյանի, հաղթության խորհրդանիշն է, որի ակունքները գնում են դեպի Վանի թագավորության Մուսասիրի տաճարի նիզակների պատկերագրությունը[10]: Եռանկյունաձև զարդերի առկայությունը քառանիստ կոթողների վրա ուրարտական պատկերագրության հետ է կապում նաև Գ. Գրիգորյանը[11]: Իսկ Լ. Ազարյանը սլաքը և եռանկյունաձև սեպի պատկերը համարում է աստվածայինի խորհրդանիշ և կապում Տիրի հետ[12]:

Ուջանի քառակող կոթողը հայկական վաղմիջնադարյան արվեստի կարևոր օրինակներից է: Այն առաջին հայացքից հիշեցնում է վիշապ քարակոթողներին բնորոշ ցլի կամ խոյի առաջնային պատկերները, ինչը պատահական չէ[13]. չէ՞ որ Արագածը վիշապ քարակոթողների տարածման էպիկենտրոններից է[14]:

---

[7] **Զ. Հակոբյան,** նշվ. աշխ., էջ 66-71:

[8] **Ա. Մնացականյան**, Հայկական զարդարվեստ, Երևան, 1955, էջ 74-75:

[9] **Մ. Խորենացի**, Հայոց պատմություն, II. Թ., Երևան, 1961, էջ 160:

[10] **Ս. Բարխուդարյան,** Հայաստանի կոթողային հուշարձանները, ՏՀԳ, 1960, թ. 7-8, էջ 59:

[11] **Գ. Գրիգորյան**, նշվ. աշխ., էջ 65:

[12] **Լ. Ազարյան**, նշվ. աշխ., էջ 66:

[13] Ի դեպ, Ուջանում արձանագրվել է նաև վիշապ քարակոթող, որը սակայն հետագայում չի մտել ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցուցակ, իսկ նրա գտնվելու վայրն առայժմ անհայտ է մնում (Հուշարձանը վկայագրել է Գ. Շառոյանը՝ 1989 թ., տես ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի արխիվի Ուջանի նյութերը):

[14] **Ա.Բոբոխյան, Ա.Ջիլիբերտ, Պ.Հնիլա**, Վիշապաքարերի հնագիտություն, Վիշապ քարակոթողները, Երևան, 2015, էջ 275-281:

РЕЗЮМЕ

Четырёхгранная стела из села Уджан является важным образцом армянского искусства раннего средневековья. Однако при наличии архивных данных в научном обороте до настоящего времени отсутствуют сведения об этом памятнике. На фронтальной стороне стелы геометрическое изображение барана, с которого начинается изображение стрелы. На обратной стороне изображен типичный для раннего средневековья крест, под которым расположена стрела. Аналогичное изображение креста присутствует и на боковой стороне. Ее база орнаментирована лучеобразным крестом и спиралью в центральной части.

SUMMARY

A tetrahedral monument in the village Ujan is an important sample of the Armenian Early Medieval art. However, in presence of contemporary records, in scientific literature there are no data on this monument so far. Geometrical image of a ram is located on its frontal side, with which the image of an arrow begins. On the reverse side, a cross typical of the Early Middle Ages is depicted, under which there is an arrow. A similar image of the cross is also present at the lateral face. Its base is ornamented with a radiating cross and spiral in the central part.

СОДЕРЖАНИЕ

ОФИЦИАЛЬНОЕ

Межцерковный визит Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина II к предстоятелям Евангелическо-Лютеранской и Православной церквей Финляндии 5

Доклад руководителя канцелярии св. Эчмиадзина епископа Аршака Хачатряна о деятельности Первопрестольного Св. Эчмиадзина за 2016 г., представленный на собрании Верховного духовного совета 20

РЕЛИГИЕВЕДЕНИЕ

Проповедь епископа Мушега Бабаяна, читанная в Кафедральном соборе Св. Эчмиадзина во время Святой литургии в воскресенье судьи..... 68

НИКОЛАЙ СЕЛЕЗНЕВ - Христосология Ассирийской церкви Востока 73

АУРЕЛИО ФЕРНАНДЕС - Основы этики. Богословское введение 87

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

СЕЙРАН ЗАКАРЯН - Идеи Аристотеля в философии Григора Татеваци 114

ПЕТРА КОСТАЛОВА - Описание находящихся под османским владычеством Армении и Иерусалима в путевых записях путешественника XVII в. Симеона Леаци.....135

СООБЩЕНИЯ

ЛЕВОН МКРТЧЯН - Четырехгранная стела из Уджана с зооморфным изображением 167

CONTENTS

OFFICIAL

Ecumenical visit of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the Heads of the Lutheran-Evangelical Church of Finland and the Orthodox Church of Finland 5

Report of His Grace Bishop Arshak Khachatryan, Chancellor of the Mother See of Holy Etchmiadzin on the activity of the Mother See of Holy Etchmiadzin carried out in 2016, presented during the meeting of the Supreme Spiritual Council 20

RELIGIOUS STUDIES

Sermon delievered by H.G. Bishop Mushegh Babayan during the Divine Liturgy celebrated at the Cathedral of Holy Etchmiadzin on the Sunday of the Judge 68

NIKOLAY SELEZNYOV - Christology of the Assyrian Church of the East 73

AURELIO FERNANDEZ - Basics of morality: theological introduction 87

HISTORICAL-PHILOLOGICAL STUDIES

SEYRAN ZAKARYAN – Aristotelian ideas in the philosophy of Gregory of Tathev 114

PETRA KOSTALOVA - Armenia and Jerusalem under the Ottoman rule in the travel accounts of Simeon of Poland, Armenian traveller of the 17th century from Lviv 135

ESSAYS

LEVON MEKERTCHYAN - A tetrahedral monument with zodiac images from Ujan 167

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի միջեկեղեցական այցելությունը Ֆինլանդիայի Լյութերական-Ավետարանական և Օրթոդոքս եկեղեցիների նվիրապետերին 5
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի զեկույցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2016 թվականի գործունեության վերաբերյալ՝ ներկայացված Գերագույն հոգևոր խորհուրդի ժողովում 20

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Դատավորի կիրակիին մատուցված Ս. Պատարագին 68
ՆԻԿՈԼԱՅ ՍԵԼԵԶՆՅՈՎ - Արևելքի Ասորական Եկեղեցու քրիստոսաբանությունը 73
ԱՈՒՐԵԼԻՈ ՖԵՐՆԱՆԴԵՍ - Բարոյախոսության հիմունքներ. աստվածաբանական ներածություն 87

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԵՅՐԱՆ ՋԱՔԱՐՅԱՆ - Արիստոտելյան գաղափարները Գրիգոր Տաթևացու փիլիսոփայության մեջ 114
ՊԵՏՐԱ ԿՈՍՏԱԼՈՎԱ - Օսմանյան տիրապետության տակ գտնվող Հայաստանի և Երուսաղեմի արտացոլումը Լվովի ԺԷ. դարի հայ ճանապարհորդ Սիմեոն Լեհացու ուղեգրությունում 135

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ - Կենդանակերպ պատկերով քառանիստ կոթող Ուշանից 167

ԱԲՀ - Առձեռն բառարան հայկազնեան լեզուի (Մ. Աւգերեան, Գր. Ճէլալեան), Վենետիկ, 1846 և 1865

ԱԺ - Արևելագիտական ժողովածու, Երևան

ԱԻ - Արևելագիտության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երևան

ԱՀ - Ազգագրական հանդէս (խմբ.՝ Ե. Լալայեան), հ. 1-26, Շուշի/Թիֆլիս, 1896-1916

ԱՖՏ - Աստվածաբանության ֆակուլտետի տարեգիրք, Երևան

ԲԵՀ - Բանբեր Երևանի համալսարանի, Երևան

ԲՀ - Բանբեր հայագիտության, Երևան

ԲՀԱ - Բանբեր Հայաստանի արխիվների, Երևան

ԲՄ - Բանբեր Մատենադարանի, Երևան

ԳԱԹ - Գրականության և արվեստի թանգարան, Երևան

ԳԻ - Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երևան

ԳՀՃ - Գէորգեան հոգևոր ճեմարան (աստուածաբանական համալսարան), Ս. Էջմիածին

ԴԱՆ - Դաշտային ազգագրական նյութեր

ԴՀՊ - Դիւան հայոց պատմութեան (խմբ.՝ Գ. Աղանեանց), հ. 1-13, Թիֆլիս, 1893-1917

ԴՀՎ - Դիվան հայ վիմագրության, Երևան

Ե(Լ)Ժ - Երկերի (լիակատար) ժողովածու

ԵՊԿ - Երևանի պետական կոնսերվատորիա

ԵՊՀ - Երևանի պետական համալսարան

ԷԱԺ - Էմինյան ազգագրական ժողովածու (խմբ.՝ Գ. Խալաթյանց, Կ. Կոստանյան), հ. 1-9, Մոսկվա, 1901-1913

ԷՊԱԹ - Էջմիածնի պատմաազգագրական թանգարան

ԼԻ - Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երևան

ԼՀԳ - Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան

ՀԱ - Հանդէս ամսօրեայ, Վիեննա

ՀԱԱ - Հայաստանի ազգային արխիվ, Երևան

ՀԱԲ - Հայերեն արմատական բառարան (Հ. Աճառյան), հ. 1-4, Երևան, 1971-1979

ՀԱԲՆ - Հայ ազգագրություն և բանահյուսություն, Երևան

ՀԱԲՌ - Հայոց անձնանունների բառարան (Հ. Աճառյան), հ. 1-5, Երևան, 1942-1962

ՀԱԹ - Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան, Սարդարապատ

ՀԱԻ - Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երևան

ՀԱՊ - Հայաստանի ազգային պատկերասրահ, Երևան

ՀԲԲ - Հայերեն բացատրական բառարան (Ստ. Մալխասյանց), հ. 1-4, Երևան, 1944-1945

ՀԺՀ - Հայ ժողովրդական հեքիաթներ, Երևան

ՀՀ - Հայագիտական հանդես, Երևան

ՀՀ ԳԱԱ - Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա, Երևան

ՀՀՀ - «Հասկ» հայագիտական հանդէս, Անթիլիաս

ՀՀՀԾ - Հայաստանի հնագիտական հուշարձանները, Երևան

ՀՀՀՍ - Հայկազեան հայագիտական հանդէս, Բեյրութ

ՀՀՄ - Հայաստանի հնագույն մշակույթը, Երևան

ՀՀՄԾ - Հին Հայաստանի մշակույթը, Երևան

ՀՀՑ - Հայագիտության հարցեր, Երևան

ՀՀԾՏԲ - Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան (Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան), հ. 1-5, Երևան, 1986-2001

ՀՊԹ - Հայաստանի Պատմության թանգարան, Երևան

ՀՊՀ - Հնագիտական պեղումները Հայաստանում, Երևան

ՀՊՀՑ - Հայոց պատմության հարցեր, Երևան

ՀՊՄՀ - Հայաստանի պետական մանկավարժական համալսարան, Երևան

ՀՍՀ - Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1-13, Երևան, 1974-1987

ՀՏ - «Հուշարձան» տարեգիրք, Երևան

ՄԱ - Մերձավոր Արևելք, Երևան

ՄԱԵԺ - Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Երևան

ՄՀ - Մատենագիրք Հայոց, Անթիլիաս

ՄՄ - Մաշտոցի անվան Մատենադարան, Երևան
ՄՊՎ - Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Երևան
ՄՑՀՁ - Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երևան
ՆՀԲ - Նոր բառգիրք հայկազեան լեզուի (Գ. Աւետիքեան, Խ. Սիւրմէլեան, Մ. Աւգերեան), h. 1-2, Վենետիկ, 1836-1837
ՆՀԺՊ - Նյութեր հայ ժողովրդի պատմության, Երևան
ՇՀՀԿ - Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. գիտական աշխատանքներ, Գյումրի
ՊԲՀ - Պատմաբանասիրական հանդես, Երևան
ՊԻ - Պատմության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երևան
ՊՄ - «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Երևան
ՎՀԵՊ - Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, Երևան
ՎՀՀ - «Վէմ» համահայկական հանդես, Երևան
ՏՀԳ - Տեղեկագիր հասարակական գիտությունների, Երևան
ՑՁՄՄ - Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երևան
ՔՀ - Քրիստոնյա Հայաստան, Ս. Էջմիածին
ՔՀՀ - «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002
ՕԱՀՀՄ - Օտար աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, Երևան
АГВ - Армянский гуманитарный вестник, Ереван
АО - Археологические открытия, Москва
АПА - Археологические памятники Армении, Ереван
АРА - Археологические раскопки в Армении, Ереван
ВВ - Византийский временник, Ленинград-Москва
ВДИ - Вестник древней истории, Москва
ВЕУ - Вестник Ереванского университета, Ереван
ВОН - Вестник общественных наук, Ереван
ДВ - Древний Восток, Ереван
ДКА - Древнейшая культура Армении, Ереван
ИАЭ - Институт археологии и этнографии, НАН РА, Ереван
ИАН - Известия Академии наук Армянской ССР, Общественные науки, Ереван
ИФЖ - Историко-филологический журнал, Ереван
КБС - Кавказско-ближневосточный сборник, Тбилиси
КВ - Кавказ и Византия, Ереван
КДА - Культура древней Армении, Ереван
КСИА - Краткие сообщения института археологии, Москва
КСИИМК - Краткие сообщения института истории материальной культуры, Москва
МАК - Материалы по археологии Кавказа, Москва
МИАН - Материалы по истории армянского народа, Ереван
МНМ - Мифы народов мира, Москва (ред. С. А. Токарев), 1991-1992
НАА - Национальный архив Армении, Ереван
СА - Советская археология, Москва
СМОМПК - Сборник материалов для описания местностей и племён Кавказа, т. 1-46, Тифлис, 1881-1915
СЭ - Советская этнография, Москва
ХВ - Христианский Восток, Санкт-Петербург
AJNES - Armenian Journal of Near Eastern Studies, Yerevan
AS - Anatolian Studies, Cambridge
AW - Antike Welt, Mainz am Rhein
BAR - British Archaeological Reports, International Series, Oxford
CAH - Cambridge Ancient History, Cambridge
IC - Iran and the Caucasus, Leiden
JANER - Journal of Ancient Near Eastern Religions, Leiden
JAOS - Journal of American Oriental Society, Michigan
JAS - Journal of Armenian Studies, Belmont
JSAS - Journal of the Society for Armenian Studies, Fresno
MDOG - Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft, Berlin
OrCh - Oriens Christianus, Leipzig
PO - Patrologia Orientalis, Paris-Brepols
RÉArm - Revue des études arméniennes, Paris
SMEA - Studi Micenei ed Egeo-Anatolici, Roma

Հրատարակում է
Գէորգեան հոգեւոր ճեմարանի
(աստուածաբանական համալսարան)
գիտխորհրդի երաշխաւորութեամբ եւ որոշմամբ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ազգային և Գիտությունների ազգային ակադեմիայի Հիմնարար գիտական գրադարանները ձեռնամուխ են եղել «Հայկական գիտատեղեկատվական հանգույցի» ձևավորման աշխատանքներին:

Այս հանգույցում ի մի են բերվում հայագետների և գիտության տարբեր բնագավառների ներկայացուցիչների հրատարակած հոդվածների, գրքերի ընտրանիները: Այս աշխատանքներին իրենց աջակցությունն են բերում Հայաստանյան և Սփյուռքի հայագիտական կենտրոնները, հրատարակչությունները, գրադարանները:

Հանգույցը հասանելի է http://www.flib.sci.am/arm/node/2 համացանցային հասցեով:

Օգտվողներին բոլոր նյութերը հասանելի են ազատ դիտման ու ներբեռնման կարգավիճակով:

Ունեցեք Ձեր ներդրումը համահայկական այս եզակի նախագծում՝ օգտվելով հանգույցից, տարածելով տեղեկատվություն դրա մասին, տրամադրելով թվայնացված նյութեր:

Հայաստանի ազգային գրադարան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷՆ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Ք. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ,
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ»
ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»
Republic of Armenia, Etchmiadzin, Editorial Office of the Journal "Etchmiadzin"

Web կայքի հասցեն՝ www.etchmiadzine.am
էլ. փոստ՝ etchmiadzinamsagir@gmail.com կամ mayratoriamsagir@gmail.com
Ամսագրի արխիւն ամբողջական կերպով՝ www.tert.nla.am

Հեռ. (+374-10) 517-296/174
Ստորագրուած է տպագրութեան՝ 25. 04. 2017 թ.

Չափսը՝ 70X100 1/16: Ծաւալը՝ 11 տպ. մամուլ: Թուղթը՝ օֆսէթ: Տպաքանակը՝ 400:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ